Վ. Ի. ԼԵՆԻՆԸ

327.2
L-45

ԵՎ

ԱՐԵՎԵԼՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

327.2 388
Լ-45

Վ.Ի.Լենինը և Մեր-
ձավոր ու Միջին Ա-
ռեվելքի ժողովուրդների...
Եր.,1969. գինը 1ռուբ.

6 XI.74	46		
√18	29/X 842		

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
СЕКТОР ВОСТОКОВЕДЕНИЯ

В. И. ЛЕНИН
и
НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНАЯ БОРЬБА НАРОДОВ БЛИЖНЕГО и СРЕДНЕГО ВОСТОКА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН • 1969

Տ2Ի.2
Լ-45

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ

ՄԵՐՁԱՎՈՐ ՄԻՋԻՆ ԱՐԵԼԵԼԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

388

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ · 1964

Պատասխանատու խմբագիր
Հ. Գ. ԻՆՃԻԿՅԱՆ

1—1—4

ՆԱԽԱԲԱՆ

Լենինիզմի գաղափարների և Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ազդեցությունը Արևելքի երկրների ու ժողովուրդների վրա անցած ավելի քան 50 տարիների ընթացքում եղել է մշտական հետաքրքրության և ուսումնասիրության առարկա թե՛ Սովետական Միությունում և թե՛ արտասահմանում։ Խնդրին մոտեցել են տարբեր նպատակներով ու տարբեր տեսանկյուններից, հաճախ խեղաթյուրելով կամ հակառակ դիրքերից ներկայացնելով պատմական իրադարձությունները։

Աշխարհի բազմաթիվ լեզուներով լույս է տեսել մեծաքանակ գրականություն՝ ուսումնասիրություններ, մենագրություններ, ժողովածուներ, գեղարվեստական երկեր և այլն։ Այս բոլորից բացի մեր երկրում սիստեմատիկ կերպով հրատարակվել են բազմաթիվ փաստաթղթերի ժողովածուներ՝ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի և սոցիալիստական շինարարության տարբեր էտապների մասին։

Չնայած այս ամենին, հիշյալ պրոբլեմը գտնվում է դեռևս գիտության աշխատողների, ժուռնալիստների, գրողների և այլոց հետաքրքրության կենտրոնում։ Եվ դա միանգամայն հասկանալի է։ Հոկտեմբերյան հեղափոխությունը, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, տեղական, ազգային-առանձնահատուկ, ռուսական երևույթ չէ միայն, այլ ունի միջազգային մեծ նշանակություն։

Վ. Ի. Լենինի ուսմունքի, մեր երկրում սոցիալիզմի հաղթանակի միջազգային նշանակությունը ոչ միայն նրանց ուղ-

ղակի ազդեցության մեջ է առանձին երկրների կամ ժողովրդական շարժումների վրա, այլև այդ երկրներում Սովետական Միության պատմական բազմապիսի և բազմահարուստ փորձի ուսանելի ու կիրառելի լինելու մեջ։ Հոկտեմբերյան հեղափոխության հիմնական գծերն ունեն «միջազգային կարևորություն կամ միջազգային մասշտաբով կրկնվելու պատմական անխուսափելիություն»,—ասել է Վ. Ի. Լենինը[1]։

Իսկապես, անցած կես դարի ազատագրական պայքարի պատմությունը ցույց է տալիս, որ Լենինյան գաղափարների հաղթանակը, Սոցիալիստական Հանրապետությունների Միության ստեղծման, ամրապնդման ու զարգացման մեծահարուստ փորձը խոր արձագանք է գտնում աշխարհի բոլոր ծայրամասերում։ Բանվորա-գյուղացիական պետության ստեղծումը և սոցիալիզմի կառուցումը մեր երկրում ոչ միայն փայլուն օրինակ է բանվոր դասակարգի առաջավոր դերի կենսագործման, այլև Ռուսաստանի բազմամիլիոն գյուղացիության ու կիսագաղութային ծայրամասերի ազգերի ու ժողովուրդների համատեղ պայքարի տեսակետից։

Ահա հենց այդ առումով էլ Վ. Ի. Լենինի ստեղծած Սովետական Հանրապետությունների Միության ազդեցությունը ավելի անմիջական ու տևական է եղել զարգացող երկրների ու ժողովուրդների և ընդհանրապես բազմազգ Արևելքի վրա։ Վերջիններիս զարգացման պատմական, քաղաքական, տընտեսական, ազգային, կրոնական և այլ յուրահատկությունները, անկասկած, իրենց կնիքն են դնում այդ շարժումների վրա։ Սակայն այդ երկրներում ագրարային, բանվորական, տնտեսական, ազգային մշակույթի և այլ կարգի հիմնական հարցերը լուծելիս նրանք, գրեթե միշտ, յուրովի են հաշվի առնում մեր երկրի փորձը։

Ինչպես վերը նշվեց, բոլոր այս խնդիրները ուսումնասիրության առարկա են հանդիսացել և դրանց մասին գոյություն ունի ստվար գրականություն։ Բայց կյանքը, նախկինում բավարար չափով չուսումնասիրված կամ նոր, անծանոթ երե-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 5։

վությունների ուսումնասիրության ճանապարհով, մատուցում է միշտ նոր նյութեր։ Արդ, աշխատելով չկրկնել հանրահայտը և հրապարակելով որոշ նորություններ, գիտությունների ակադեմիայի արևելագիտության սեկտորը ներկայացվող գրքում ցանկացել է լուսաբանել խնդրի առարկա կարևոր պրոբլեմը այնպիսի տեսանկյուններից, որոնք ավելի քիչ են ծանոթ հայ ընթերցողին։

Այսպես, գրքում քննության են առնվում՝ լենինյան դրությունները Արևելքի նշանակության, ազգային-ազատագրական պայքարի էտապների և օրինաչափությունների մասին, ժամանակակից նյութերի հիման վրա ցույց է տրվում այդ օրինաչափությունների իրականացումը արդի շրջանում, Վ. Ի. Լենինի և լենինիզմի գաղափարների ազդեցությունը արաբ ժողովուրդների ազգային-ազատագրական, հակաիմպերիալիստական շարժումների վրա, Հոկտեմբերյան հեղափոխության և հետհոկտեմբերյան առաջին տարիների ընթացքում, բացահայտվում է ազգային ինքնուրույնության համար քուրդ ժողովրդի մղած պայքարի պատմությունը, լուսաբանվում են իրանական պատմագրության մեջ արտացոլված հուժկու քաղաքական շարժումները Իրանում՝ Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո, երիտասարդ թուրքերի շարժման վերաբերյալ լենինյան գնահատականների լույսի տակ տրվում են նյութեր՝ այդ շարժման էության և պատմական նշանակության մասին։

Գիրքը նվիրվում է Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին։

ԳԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ

Հ. Գ. ԻՆՃԻԿՅԱՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԱՐԵՎԵԼՔԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մոտ հինգ դարի երկար ու ձիգ պատմություն ունի Արևելքի ժողովուրդների պայքարը կապիտալիզմի սկզբնավորմանը ցուցահեռ գոյացած գաղութային սիստեմի դեմ։ Արյունով ու արցունքով, բնիկների հերոսական կռիվների, անկրկնելի սխրագործությունների, մարդկային ազնիվ փոխհարաբերությունների, պարզամտության և անմիջականության զաղափարների խորտակման գնով է գրվել այն։ «Ոսկու և արծաթի հանքերի հայտնագործումն Ամերիկայում,—գրել է Կ. Մարքսը,—բնիկների բնաջնջումը, ստրկացումն ու ողջ-ողջ թաղումը հանքերում, Արևելյան Հնդկաստանը նվաճելու և կողոպտելու առաջին քայլերը, Աֆրիկան սևամորթներին որսալու արգելադաշտ դարձնելը,—ահա արտադրության կապիտալիստական դարագլխի արշալույսը»[1]։ Գաղութային քաղաքականության մեթոդներն ու ձևերը ժամանակի ազդեցության տակ կրեցին շատ լուրջ փոփոխություններ՝ բացարձակ գինված թալանին և ավազակային գործողություններին փոխարինեցին տեղական վարչության և ապա «ինքնավարության» օրգանների ստեղծումը, իմպերիալիզմի դրածոներից պառլամենտների անդամների և պրեզիդենտների ընտրությունը և վերջիններիս միջոցով ավելի կազմակերպված շահագործումը։ Սակայն էությունը մնաց նույնը՝ գաղութային

---

1 Կ. Մարքս. Կապիտալ, հատ. I, Երևան, 1954, էջ 783—784։

սիստեմը դարձավ կապիտալիստական առաջավոր երկրների հարստացման հիմնական աղբյուրը ու զարգացման կարևոր գործոնը, նպաստելով, ինչպես նշել է Մարքսը, «առևտրի և նավագնացության արագընթաց աճմանը», ապահովելով «արագ առաջացող մանուֆակտուրաների համար» վաճառահանման շուկա, որի մոնոպոլ տիրապետումը իր հերթին «ապահովում էր արագացած կուտակումը»[2]։ Եվրոպայի գըլխին տեղացող ոսկու անձրևը, դեպի կապիտալիստական աշխարհի բանկերը հոսող գանձերը անասելի կերպով հարստացրին գաղութատեր երկրներին և նրանց հասցրին զարգացման բարձր աստիճանի։

Այս հարստության -փշրանքները սնեցին ոչ միայն գաղութային քաղաքականությունը կենսագործող մեծ ու փոքր պաշտոնյաներին, այլև ստեղծեցին կապիտալիզմի գաղութային քաղաքականությունը ջատագովող մի ամբողջ գաղափարախոսություն և նրա պրոպագանդան ապահովողների հսկայական բանակ։ Ձևակերպվեցին տեսակետներ, հրատարակվեցին գրքեր՝ թե՛ քաղաքական և թե՛ գեղարվեստական, որոնց օգնությամբ փորձում էին համոզել, որ Արևելքի երկրները ապրում և զարգանում են յուրահատուկ պայմաններում, որ նրանք ենթակա չեն զարգացման պատմական ընդհանուր օրինաչափություններին։

Այսպես, կապիտալիստական աշխարհում տարածում գտավ բրիտանական իմպերիալիզմի փողհար Ռ. Կիպլինգի թևավոր արտահայտությունը՝ «Արևելքը Արևելք է, իսկ Արևմուտքը՝ Արևմուտք, նրանք երբեք չեն համընկնի»։

Սակայն բուրժուական հասարակարգի գոյության և զարգացման գիտական մարքսիստական մեկնաբանությունը ի հայտ բերեց նրա պատմականորեն անցողիկ բնույթը, անկման պատճառներից մեկը, պրոլետարական հեղափոխության կողքին, համարելով Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը։ Մարքսիզմի կլասիկները ցույց տվեցին, որ միշտ չէ Արևմուտքը հանդիսանում պրոգրեսի և քա-

---

2 Նույն տեղում, էջ 787։

պաքակրթության աղբյուր, իսկ Արևելքը՝ հետամնացության ու պահպանողականության խորհրդանիշ։ Պատմության քառուղիներում նրանք հաճախ փոխել են իրենց դերերը։ Հիշենք միայն, որ Արևմուտքի հասարակայնության թափթփուկների միջոցով են ոչնչացվել երբեմնի առաջավոր կուլտուրա ունեցող շատ ժողովուրդներ, որ Արևմուտքում են ձևավորվել և պատմության գիրկը անցել ինկվիզիցիան և մասամբ ֆաշիզմը, որ Արևմուտքն է ստեղծել հրեշավոր գաղութային սիստեմը, որի պատմական մեղքն է Արևելքի այսօրվա հետամնացությունը։ Ուրեմն պատմությունը ճիշտ հասկանալու և մեկնաբանելու համար, ինչպես իրավացի կերպով նշում է սովետական ականավոր գիտնական ակադեմիկոս Ն. Կոնրադը, անհրաժեշտ է ելնել «ամբողջ մարդկության պատմությունից և ոչ թե առանձին ժողովուրդների կամ երկրների։ Այնպիսի հասկացողություններ, ինչպես՝ «Եվրոպա», «Ասիա», «Աֆրիկա» և այլն—աշխարհագրական և ոչ թե պատմական հասկացողություններ են։ Լավագույն դեպքում նրանք պատկանում են պատմական աշխարհագրությանը։ Միանգամայն անհասկանալի են նաև այնպիսի հասկացողությունները, ինչպես «Արևելք» և «Արևմուտք»։ Լավագույն դեպքում նրանք ցույց են տալիս առանձին ժողովուրդների խմբեր, որոնք, սակայն, ունեն տարբեր, փոփոխվող բովանդակություն տարբեր ժողովուրդների մոտ»[3]։ Իսկ այս երևույթը արդեն պայմանավորված է տվյալ ժողովրդի աշխարհագրական տերիտորիայով և պատմական կապերով ու ազգային տրադիցիաներով։

Այսպիսով, մարքսիստական պատմագրությունը մեզ սովորեցնում է ուսումնասիրել մարդկության պատմությունը, ելնելով այն միակ ճիշտ տեսանկյունից, որ Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդները ընթացել են և ընթանում են սոցիալ-տնտեսական զարգացման այն ուղիով, որով անցել են Եվրոպայի և Ամերիկայի առաջավոր ժողովուրդները։

---

[3] Н. И. Конрад, Запад и Восток, изд. «Наука», М., 1966, стр. 473.

Սակայն ընդհանուր ու իրականությունից բխող այս ճիշտ եզրակացությունը չի բացասում նաև այն յուրահատկությունները (սեփականության և, ուրեմն, արտադրական հարաբերությունների «ասիական ձևերը», որոնք արժանացել են Մարքսի և Էնգելսի հատուկ ուշադրությանը), որոնցով չափազանց հարուստ են Արևելքի երկրները։ Կարևորը այստեղ այն է, որ մարքսիզմի հիմնադիրները, դեռևս անցյալ դարի կեսերին, ուսումնասիրելով գաղութային երկրների վիճակը, հանգել են այն եզրակացության, որ նրանց առջև ևս բացված է կապիտալիստական զարգացման ուղին։ Գաղութային սիստեմը դանդաղեցրեց այդ պրոցեսը Արևելքում, միաժամանակ արագացնելով այն Եվրոպայի երկրներում և ուժեղացնելով նրանց անհամաչափ զարգացումը։

Հսկայական փաստական նյութի հիման վրա Մարքսն ու Էնգելսը ապացուցում են այդ երևույթների փոխադարձ կապը և պայմանավորվածությունը, որի հետևանքով, որպես մեդալի մյուս կողմը, արդեն նրանց ժամանակաշրջանում նկատվում է գաղութային և բանվորական շարժումների միաձուլման դեպքեր, ընդհանուր շահագործողների դեմ համատեղ պայքարի տենդենցներ։

Բուրժուական կարգերի չատագովների փորձերին՝ ցույց տալ Արևմուտքի «քաղաքակրթող» դերը, նրանց «բարենպաստ» ազդեցությունը Արևելքի երկրների վրա, որոնք իբր դեռևս քնած են խոր քնով, Մարքսն ու Էնգելսը պատասխանում են մի շարք խստագույն մերկացումներով և ընդգծում, որ «արյան ու կեղտի» կույտեր կան Արևելքից բերած ամեն մի ֆունտ ստերլինգի վրա։

«Խորը երեսպաշտությունը,—գրում են նրանք,—և բուրժուական քաղաքակրթությանը հատուկ բարբարոսությունն են հառնում մերկ ձևով մեր աչքերի առջև, երբ մենք այդ քաղաքակրթությունը դիտում ենք ոչ իր տանը, որտեղ նա ընդունում է ակնածելի ձևեր, այլ գաղութներում, որտեղ նա երևան է գալիս առանց որևէ ծածկույթի»[4]։

---

[4] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 9, стр. 229.

Այդ երևույթը դառնում է ավելի ակնառու, երբ 18-րդ դարում Արևմտյան Եվրոպայում արդյունաբերական հեղաշրջումը, մեքենայական արտադրության ամրապնդումը հրամայական պահանջ են դնում գտնելու նոր շուկաներ, ընդլայնելու եղածները։ Գաղութային քաղաքականության ծանրության կենտրոնը արտատնտեսական ճնշումից փոխադրվում է տնտեսական ձևերի վրա, որոնք դառնում են կապիտալիզմի զարգացման նոր հսկայական աղբյուր։

Որպես տեսաբաններ և ժողովրդական տրիբուններ, նրանք ուշադրությամբ հետևում են եվրոպական երկրների գաղութային քաղաքականությանը, ազգային հարցի լուծման տարբեր ասպեկտներին և ճնշված ու կեղեքվող ժողովուրդների պայքարին՝ հանուն իրենց ազգային անկախության։ Կապիտալիստական հասարակարգի և նրա դաղափարախոսության դեմ մղած ակտիվ պայքարը, մասնավորապես տվյալ հարցում, Մարքսին և Էնգելսին հանգեցրին հեղափոխական այն եզրակացությանը, որ չի կարող ազատ լինել այն ժողովուրդը, որը կեղեքում է մյուս ժողովուրդներին։ Առաջավոր երկրների բանվորների ազատության և հավասարության դրոշի տակ տարած հաղթանակը, ինչպես նշել է Էնգելսը, «...այնպիսի հսկայական ուժ և այնպիսի օրինակ կտա, որ կիսաքաղաքակիրթ երկրները ինքնաբերաբար կհետևեն նրանց»[5]։

Այս կանխատեսումը իրագործվեց ավելի ուշ ժամանակաշրջանում, երբ իմպերիալիզմը ավելի ևս սրեց հակասությունները գաղութների և նրանց շահագործողների միջև, երբ պրոլետարական հեղափոխությունը դարձավ օրակարգի խնդիր։ Վ. Ի. Լենինը, ելնելով իմպերիալիզմի էությունից ու պայմաններից, ի հայտ բերեց նոր գաղութային քաղաքականության հատուկ կողմերն ու երևույթները, նշեց նրա ակտիվացումը գաղութներում և վերջիններիս տնտեսական ու քաղաքական նշանակության ուժեղացումը մետրոպոլիաների համար, հիմնավորեց կապիտալի երկրների պրոլետարիատի և գաղութային ու կիսագաղութային ժողովուրդների ազգային-ազա-

5 Նույն տեղում, էջ 298։

տագրական շարժումների միջև համաշխարհային հակաիմպերիալիստական ճակատ ստեղծելու անհրաժեշտությունը՝ առաջինի ղեկավարությամբ։

Լենինյան այդ դրույթից ծնվեց «Պրոլետարներ բոլոր երկրների և ճնշված ժողովուրդներ միացեք» կոչը։

Վ. Ի. Լենինը, ամբողջ աշխարհի աշխատավորության առաջնորդը և ուսուցիչը, հանդիսացավ ոչ միայն հիշյալ ուսմունքի ստեղծողը, այլև կենսականորեն անհրաժեշտ այդ միասնության կերտողը և միասնական պայքարի ոգեշնչողն ու ղեկավարը։

Միասնության գաղափարի, միասնական պայքարի ստրատեգիայի և տակտիկայի մեջ Լենինը պատշաճ տեղ է կանխատեսել Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումներին, իբրև միջազգային պրոլետարական պայքարի դաշնակցի։ Նա մեծագույն ուշադրությամբ և բարեխղճությամբ ուսումնասիրել է իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխության դարաշրջանի ազդեցությունը Արևելքի վրա և ցույց է տվել վերջինիս մեծագույն նշանակությունը և փոխադարձ ազդեցությունը իմպերիալիստական պետությունների քաղաքականության և պրոլետարական հեղափոխությունների վրա։

Ազգային-գաղութային խնդիրների ուսումնասիրությամբ Վ. Ի. Լենինը սկսել է զբաղվել դեռևս անցյալ դարի 90-ական թվականների վերջերին։ «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատության մեջ, հենվելով Մարքսի մտքերի վրա, նա բնորոշում է գաղութ հասկացողությունը քաղաքական և տնտեսական իմաստով (ազատ հողերի առկայություն և համաշխարհային առումով աշխատանքի բաժանում, համաշխարհային շուկայի գոյություն, որի հետևանքով գաղութներում տեղի է ունենում գյուղատնտեսական արտադրության մասնագիտացում)[6]։ Այս ժամանակաշրջանից սկսած մինչև Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը, Վ. Ի. Լենինը՝

6 Տե՛ս Վ. Ի. Լենին, Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում, հատ. 3, էջ 593։

հանուն մարքսիստական գաղափարախոսության զարգացման և տեսության անաղարտության պայքարել է մարքսիզմի տարբեր հակառակորդների դեմ, և այլ կարևոր պրոբլեմներին համընթաց մշակել և հարստացրել է իր ուսմունքը՝ ազգային-գաղութային հարցերի վերաբերյալ։

Գրականության մեջ արդեն նշվել է[7], որ հիշյալ հարցերի մասին Լենինի տեսակետները մինչև Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը ունեցել են զարգացման երեք էտապ։ Առաջինը՝ 1899—1907, մինչև 2-րդ ինտերնացիոնալի Շտուտգարդի կոնգրեսը, երբ նա հիմնավորում է գաղութային սիստեմի գոյությունը՝ ելնելով տնտեսական ասպեկտից, սակայն տալիս է Արևելքի երկրների ներքին վիճակը, խոսում «ասիական խոշոր հողատիրության», «շահագործման ասիական կամ թուրքական բարբարոսական ձևերի», «ասիական կառավարությունների» կամայականությունների մասին և այլն։ Նա ոչ միայն մեկնաբանում էր այս կամ այն երևույթը, այլև մշակում բանվորական կուսակցության տակտիկան ու ստրատեգիան Արևելքի ժողովուրդների շարժումների հանդեպ, խիստ քննադատության ենթարկելով նարոդնիկներին ու էկոնոմիստներին, էսեռներին ու մենշևիկներին և նրանց եվրոպական համախոհներին։

Երկրորդը (1907—1913), երբ ազգային-գաղութային հարցերը սրվում են՝ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին իմպերիալիստական պետությունների կողմից տարվող ներքին ու արտաքին քաղաքականության հետևանքով և դառնում են միջազգային ամենակենսական, արծարծվող հարցերի մի խումբ, որով զբաղվում են թե՛ պետական ու քաղաքական գործիչները և թե՛ հասարակական կազմակերպություններն ու կուսակցությունները։ Հրամայական անհրաժեշտություն է դառնում, մասնավորապես, միջազգային բանվորական շարժման համար ձևակերպել իր վերաբեր-

---

7 Ю. М. Гарушянц, О ленинском этапе в развитии историографии Востока, «Народы Азии и африки», 1965, № 6, стр. 155—164.

մունքը դեպի պատերազմի, խաղաղության, ազգային ու գաղութային քաղաքականության հարցերը։

Երրորդ էտապը (1914—1917) նշանավորվեց Վ. Ի. Լենինի կողմից իմպերիալիզմի տեսության մշակմամբ, որը դարձավ համաշխարհային հեղափոխական պայքարի և նրա մասը կազմող միասնական սոցիալ-քաղաքական և ստրատեգիական նպատակների ելակետը և հիմքը։

Այսպիսով, Վ. Ի. Լենինը փաստորեն մշակում է մարքսիստական արևելագիտության հիմնական դրույթները և հակադրվում այսպես կոչված «տրադիցիոն» բուրժուական արևելագիտությանը, որի հիմնական նպատակն էր օգնել իմպերիալիստական ուժերին շահագործելու գաղութային ժողովուրդներին՝ պատրաստելով տարբեր աստիճանի պրակտիկ գործիչներ ու գաղութային պաշտոնյաներ և գաղափարական արդարացում տալ տարվող գաղութային քաղաքականությանը։ Իհարկե, բուրժուական փորձված, Արևելքը գերազանցորեն ճանաչող արևելագետներին առարկելու համար հարկավոր էր ուսումնասիրվող օբյեկտը իմանալ նրանցից ոչ պակաս։

Վ. Ի. Լենինը իրեն հատուկ մեծագույն ջանասիրությամբ ուսումնասիրում է բազմալեզու վիճակագրական նյութեր, մամուլ, գրականություն, հետևելով հրատարակվող բոլոր նորույթներին, տալով իր մշակած աղբյուրների անհրաժեշտ գնահատականը։

Օրինակ. «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա» աշխատությունը գրելիս նա օգտվել է գլխավորապես եվրոպական լեզուներով հրատարակված 148 գրքից և 232 հոդվածից[8]։ Իսկ միայն 20-րդ դարի սկզբում Իրանի դեմոկրատական շարժումների մասին անդրադարձել է իր 18 աշխատություններում[9]։

---

8 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, Առաջաբանը։

9 Г. Б. Акопов. Ленин и некоторые вопросы национально-освободительного движения народов Востока, «Известия АН Туркмении», 1960, № 3, стр. 62.

Արևելքի վերաբերյալ իր եզրահանգումներում Վ. Ի. Լենինը ելել է հասարակական զարգացման պրոցեսի միասնության մարքսիստական հիմնական դրույթից։ Բազմաթիվ աշխատություններում նա ոչ միայն հերքել է Արևմուտքի «առավելությունների» պնդումները իմպերիալիզմի պնակալեզների կողմից, այլև ցույց է տվել Արևելքի բախտորոշ նշանակությունը հենց արևմտյան երկրների առաջընթացի համար։ Նա մեծ կարևորություն է տալիս գաղութային և կիսագաղութային երկրների բնական հարստություններին, հրսկայական մարդկային ռեսուրսներին (երկրագնդի աղգաբնակչության 70%), նրանց կուլտուրական ավանդներին, հեղափոխական պայքարի փորձին, դեմոկրատական վերափոխման ձգտումներին։ Այսպիսով նա գտնում է, որ հասարակական կյանքի բոլոր երևույթները օրինաչափ են աշխարհի բոլոր երկրների և ժողովուրդների համար։

Գաղութատիրության ջատագովներին նա խայտառակության սյունին է գամում, ցույց տալով, որ նրանք շատ բաներ անտեսում, չեն ցանկանում տեսնել այն առաջավորը, լավը, որը անհրաժեշտ է հենց Արևմուտքի համար։

«Պորտ-Արտուրի անկումը», «Դեմոկրատիան և նարոդնիկությունը Չինաստանում», «Կարլ Մարքսի ուսմունքի պատմական բախտը», «Ասիայի զարթոնքը», «Հետամնաց Եվրոպան և Առաջավոր Ասիան» և բազմաթիվ այլ գործերում Վ. Ի. Լենինը ցույց է տալիս, որ Ասիան դարձել է համաշխարհային, հսկայական հեղափոխական փոթորիկների նոր աղբյուր և այդ փոթորիկների «հակադարձ ազդեցությունը» Եվրոպայի վրա ակներև է, որ վերջինս Ասիայից մի շարք հարցերի դեմոկրատական լուծման օրինակներ պետք է վերցնի, որ Ասիան հեղափոխական իրադարձությունների այնպիսի թափ է վերցրել, որ Եվրոպան նրա հետևից սկսել է շարժվել, սակայն ոչ ասիական տեմպերով։

Չափազանց հետաքրքիր են Վ. Ի. Լենինի «Տեսությունը իմպերիալիզմի մասին»։ Կոնսպեկտավորելով այս կամ այն բուրժուական հեղինակին, նա ընդգծում է նրանցի կարևոր տեղերը, կամ ջախջախել հրակումներով ոչնչացնող գնահատա-

ԳՐԱԴԱՐԱՆ

կան տալիս հեղինակին, աշխատության այս կամ այն մասին, կամ ամբողջ գործին։ 1902 թվականին Լոնդոնում լույս տեսած Ջ. Գոբսոնի «Իմպերիալիզմ» գրքի կարևորագույն մասերը նա վերցրել է, կատարելով համապատասխան նշումներ և ընդգծումներ։ Մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ տեսություններում հանդիպում ենք հետևյալ տողերին. «Եվրոպայի իշխանությունը Ասիայի վրա բռնության օգնությամբ ու շահելու նպատակով և այդ իշխանության արդարացումը նրանով, որ իբր նա Ասիային քաղաքակրթում է և բարձրացնում հոգևոր կյանքի ավելի բարձր մակարդակի,—այս բանը պատմության կողմից, հավանաբար, նկատվի որպես իմպերիալիզմի անարդարացիության և ճիմարության թագ ու պսակը։ Այն, ինչ որ մեզ կարող է տալ Ասիան՝ դարերի փորձով հավաքած իր իմաստության անգին գանձերը, մենք հրաժարվում ենք վերցնել, իսկ այն շատը կամ քիչը, որ մենք կարող էինք տալ նրան, մենք փչացնում ենք մի բարբարոսությամբ, որով մենք այդ բաները կենսագործում ենք։ Ահա թե ինչ է արել և անում է իմպերիալիզմը Ասիայի համար»[10]։ Արևելքում աճող թալանը ցույց տալու համար նա օգտվում է Շուլցե Գևերնիցի «Բրիտանական իմպերիալիզմը և անգլիական ազատ առևտուրը 20-րդ դարի սկզբին» (Լայպցիգ, 1906) գրքից, խրստորեն քննադատելով հեղինակին, կոչելով նրան «մեծագույն սրիկա, գռեհկամիտ, կանտիական, կրոնի կողմնակից, շովինիստ», և, սակայն, նշում է, որ գրքում հավաքված են որոշ քանակով «չափազանց հետաքրքիր փաստեր անգլիական իմպերիալիզմի մասին և գրված աշխույժ, ոչ տխուր գիրք»։ Այդ փաստերից Լենինը բերում է հետևյալը. «Բրիտանիայի ժողովրդական եկամուտը 1865 թվականից մինչև 1898 թ. աճել է մոտավորապես երկու անգամ, իսկ «արտասահմանից ստացվող եկամուտը», նույն ժամանակաշրջանում՝ ինն անգամ»[11]։ Այս փաստը Լենինը ընդգծում է բազմաթիվ գծիկներով, կրկնում թվերը, գրում մշտապես օգտագործվող NB

---

10 В. И. Ленин, Полн. собр. соч., т. 28, стр. 387.

11 Նույն տեղում, էջ 427 և Երկեր, հատ. 22, էջ 376։

և մտցնում է իր աշխատության մեջ։ Այնուհետև նա ցույց է տալիս, որ իմպերիալիզմի զարգացմանը համընթաց, աճում է դրսից ստացվող եկամուտը և կապիտալիստական երկրների տիրող շրջանները աշխատում են հետզհետե ավելի ու ավելի ամրապնդել իրենց դիրքերը, ավելացնել իրենց շահույթը, որի փշրանքները, ինչպես հայտնի է, հասնում են նույնիսկ բանվորների մի մասին, ստեղծելով երկրի բարեկեցության պատրանքը, որի սոցիալ-քաղաքական նպատակը դասակարգային հակասությունների թուլացումն է։

Կոմինտերնի երկրորդ կոնգրեսում միջազգային դրության մասին արած զեկուցման մեջ Վ. Ի. Լենինը կանգ է առնում հետպատերազմյան իրավիճակի վրա և նշում է մի կողմից հեղափոխական շարժման, մյուս կողմից օպորտունիզմի աճը՝ բանվոր դասակարգի վերին խավերում։ Վերջին երևույթի քիչ թե շատ կայուն վիճակը Եվրոպայում նա բացատրում է այսպես. «Առաջավոր երկրներն ստեղծել և ստեղծում են իրենց կուլտուրան մի միլիարդ հարստահարված մարդկանց հաշվին ապրելու հնարավորությամբ»։ Նա ընդգծում է նաև, որ այդ երկրների կապիտալիստները գաղութներից «ստանում են շատ ավելի, քան կարող կլինեին ստանալ՝ որպես շահույթ իրենց երկրի բանվորներին կողոպտելուց»[12]։ Եվրոպական, հիմա նաև ամերիկյան համեմատաբար բարձր կենսամակարդակի հիմքում այդպիսով ընկած են աշխատավոր դասակարգերի շահագործումից առավել գաղութային գերշահույթի իմպերիալիստական կողոպուտի հետևանքով գոյացած անասելի հարստությունները։ Մարքսը մարգարեորեն նախատեսել էր այս բանը և ավելի քան մեկ դար առաջ արձանագրել, որ գաղութային սիստեմն այն «անծանոթ աստվածն» էր, որը բազմեց եկեղեցու սեղանի վրա, Եվրոպայի հին աստվածների կողքին և մի գեղեցիկ օր նրանց բոլորին մի հարվածով դուրս շպրտեց սրբատնից։ Գաղութային սիստեմը շահույթը հռչակեց որպես մարդկության վերջին և միակ նպատակը»[13]։

---

12 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 277։

13 Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 1, էջ 757։

Մեր օրերում էլ, զարգացող երկրների տնտեսական կախումը իմպերիալիստական տերություններից այնքան մեծ է, որ առաջինները ստիպված են լինում զիջել վերջիններին տարեկան մոտ վեց միլիարդ դոլլար՝ որպես շահույթ միայն դրամական ներդրումներից։ Զարգացող երկրները դեռևս չեն կարողանում ազատվել ֆինանսական այդ ահավոր օղակից, քանի որ նրանց պարտքերը շարունակում են աճել և 1967 թ. տվյալներով հասել էին մոտ 50 միլիարդ դոլլարի։ Տնտեսական կախման վերացումը զարգացող երկրների համար ամենահրատապ և գլխավոր հարցն է մնում։ Նման վիճակի պատմական խոր արմատները դտնվում են դեպի հինը գնացող գաղութային քաղաքականության գլխավոր գծի կիրառման մեջ՝ պահպանել գաղութային և կախյալ երկրներում ցեղական, նահապետական, ֆեոդալական կարգերը, արտադրողական ուժերի ցածր մակարդակը, ազգային, ցեղային, կաստային, կրոնական, մի խոսքով, պատմական անջատվածությունը և հետամնացությունը, կենսական ցածր մակարդակը և այդպիսով, տեղական հարստությունների արտահոսքը ապահովող ձրի բանվորական ուժը։

Սակայն հարստության ծարավը, գաղութների և կիսագաղութների տեսակարար կշռի աճը կապիտալիստական արդյունաբերության զարգացմանը համընթաց, գաղութատերերին ստիպում է որոշ չափով առաջ մղել արտադրողական ուժերը իրենց ենթակա երկրներում՝ կառուցել երկաթուղիներ, հաղորդակցության միջոցներ, ֆաբրիկաներ և գործարաններ, ստեղծել տեղական բանվոր դասակարգ ու բուրժուազիա։

Այս տենդենցը հատուկ է զարգացած կապիտալիզմի ժամանակաշրջանին և դառնում է իմպերիալիզմի կարևորագույն հատկանիշներից մեկը։ Վ. Ի. Լենինը այն կոչեց «կապիտալի արտահանում»։ Կապիտալը, հանուն իր ազդեցության տարածման, նվաճված տերիտորիաներում ստեղծում է նոր, ավելի բարենպաստ պայմաններ։ Կապիտալիստական հարաբերություններին համընթաց ժամանակակից քաղաքակրթությունը ինչ-որ չափով թափանցում է Արևելքի երկրները։

բուրժուական հասարակարգի դասակարգերի հետ ձևավորվում է ինտելիգենցիան։

Որոշ ժամանակահատվածում այս փոփոխությունները, այսպես ասած քաղաքակրթության մուտքը, զգալի չեն ժողովրդական մասսաների համար։ Առաջընթացի այս նշանները նրանք ընկալում են յուրովի, քանի որ հիշյալ պրոցեսը ղուգակցվում է աշխատավորության շահագործման ուժեղացմամբ։

Հնդկաստանի օրինակով Մարքսը ցույց է տվել, որ տեղի ժողովուրդը դեռևս «չի կարողանա ճաշակել նոր կարգի այն տարրերի հասունացման պտուղները, որոնք ցանել է այնտեղ բրիտանական բուրժուազիան, մինչև բուն Մեծ Բրիտանիայում ներկայումս տիրապետող դասակարգերը ետ չմղվեն արդյունաբերական պրոլետարիատի կողմից, կամ թե իրենք հնդիկները չդառնան բավականաչափ ուժեղ, որպեսզի դեն նետեն իրենցից անգլիական լուծը»[14]։

Հնդկաստանի պատմական բախտը այնպիսին էր, որ միջազգային և ներքին բարեհաջող պայմանների հետևանքով իրագործվեց Մարքսի նախատեսած ազատագրման երկրորդ ձևը։ Դրա համար, սակայն, պահանջվեց կապիտալիստական զարգացման երկար ու տանջալից ուղի։

Կապիտալի արտահանումը աճում է և, ինչպես տեսանք, իմպերիալիզմի ժամանակաշրջանում դառնում է օրինաչափ երևույթ։ Վ. Ի. Լենինը «Իմպերիալիզմը, որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա» աշխատության մեջ այն բացատրում է նրանով, որ որոշ երկրներում կապիտալիզմը «գերհասունացել է», որ կապիտալին՝ իր երկրի ներսում հողագործության անզարգացած լինելու և մասսաների աղքատության պայմաններում, պակասում են «շահութաբեր» զետեղման ասպարեզներ։

Մյուս կողմից, հետամնաց երկրներում «շահույթը սովորաբար բարձր է, որովհետև կապիտալները քիչ են, հողի գինը համեմատաբար մեծ չէ, աշխատավարձը ցածր է, հում

---

[14] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 9, стр. 228—229.

նյութեղեններն էժան են»։ Ի վերջո, նա նշում է մի չափազանց կարևոր, ներկա դեպքում մեզ հետաքրքրող, հանգամանք ևս։ «Կապիտալի արտահանման հնարավորություն,— գրում է Լենինը,—ստեղծվում է նրանով, որ մի շարք հետամնաց երկրներ արդեն ներս են քաշված համաշխարհային կապիտալիզմի շրջանառության մեջ, անց են կացված կամ սկսված են երկաթուղիների գլխավոր գծերը, արդյունաբերության զարգացման «տարրական պայմաններն ապահովված են և այլն»[15]։

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, երբ արդեն գաղութները և ազդեցության ոլորտները բաժանված էին, չկար որևէ ձևական արգելք արտահանելու կապիտալը, իրենց «սեփական» գաղութները, կապիտալիստական հարաբերությունները ստանում են զարգացման նոր խթան։ Արևելքի խոշորագույն երկրներում (Հնդկաստան, Եգիպտոս, Պարսկաստան, Թուրքիա, Չինաստան և այլն) երիտասարդ բուրժուազիան ծավալում է քաղաքական ակտիվ գործունեություն։ Ձևավորվում են նրա կուսակցությունները, հղկվում պահանջները և ճշտվում պայքարի նպատակները։ Ազգային ինքնուրույն պետության կազմավորումը, ազգային շարժումը թե՛ իմպերիալիստական երկրների դեմ և թե՛ արևելյան բազմազգ կայսրությունների ներսում դառնում է քաղաքական կյանքի կարևորագույն հարցերից մեկը։ Սրվում է դասակարգային պայքարը մի կողմից երիտասարդ բուրժուազիայի, գյուղացիության և ֆեոդալ-հողատերերի միջև, մյուս կողմից առաջինի և ձևավորվող բանվոր դասակարգի միջև։

Այս պայմաններում իմպերիալիզմի տնտեսական ակտիվությանը զուգորդում է քաղաքական ակտիվությունը, որովհետև գաղութային վարչության հսկայական հիերարխիան, իր տերերի պատվերով, չի կարող անմասն մնալ քաղաքական անցուդարձից։ Երևան են գալիս լուրեենսներ, որոնք հաճախ դառնում են որոշ դեպքերի գլխավոր գործող անձիք։ Սակայն, իմպերիալիզմի գործակալները լուրջ կերպով

15 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, էջ 318։

չեն կարողանում ազդել իրերի ընթացքի վրա, քանի որ նրանք ի վիճակի չեն կասեցնել հենց կապիտալիզմի ստեղծած հարաբերությունների զարգացման պրոցեսը, հետևաբար նաև տվյալ հասարակարգի ծնունդը հանդիսացող ազգային բուրժուազիայի և բանվոր դասակարգի աճը, ամրապնդումը և միաձուլումը, որպես քաղաքական ուժերի։

Իհարկե, իրենց մասշտաբներով Արևմուտքի երկրներին դիջում են այս բոլոր երևույթները։ Դարավոր հետամնացությունը չի կարող չազդել հեղափոխական պրոցեսի շարժիչ ուժերի վրա, որոնց ազդեցության չափը միշտ չէ, որ պետք է որոշել քանակական ցուցանիշներով։ Այսպես օրինակ, երբ մենք փորձում ենք պատկերացում կազմել ժամանակակից Արևմուտքի և Արևելքի ազգաբնակչության ինքնագործ մասի վերաբերյալ, ստիպված ենք արձանագրել, որ գաղութային քաղաքականության հետևանքները քաղաքական ազատություն ստանալուց հետո էլ դեռ երկար ժամանակ զգալի են լինելու զարգացող երկրների համար։ Ըստ վերջին տարիների տվյալների, վարձով աշխատողների թիվը Եվրոպայում կազմում է ազգաբնակչության 70%, Ասիայում՝ 33%, իսկ Աֆրիկայում՝ 18%։

Ավելի մանրամասն տվյալները ասում են այն մասին, որ բանվոր դասակարգը կազմում է Ասիայի և Աֆրիկայի ազգաբնակչության 5—8%, իսկ նրա աշխատունակ մասի՝ 10—15%։ Հետաքրքրական է նշել նաև, որ բանվոր դասակարգի մեծագույն մասը՝ 30—35% գյուղատնտեսական բանվորներ են, 10—25%՝ շինարարական, 20—30%՝ այլ ասպարեզների և միայն 10—15% ֆաբրիկա-գործարանային բանվորներ են[16]։

Այս թվերը հաստատում են, որ Արևելքի երկրները դեռևս գյուղացիական երկրներ են, բայց նրանց շարքում կան այնպիսիները, որտեղ արդեն առկա է հեղափոխական շարժման ավանգարդը հանդիսացող պրոլետարիատը, ինչպես նաև

16 Տե՛ս «Народы Азии и Африки», 1969, № 5, стр. 214.

«անկեղծ, մարտական, հետևողական դեմոկրատիա» ներկայացնելու ընդունակ ազգային բուրժուազիան[17]։

Բոլոր այս պատմական պայմաններից և իրական վիճակից ելնելով, Վ. Ի. Լենինը բնորոշել է Արևելքի երկրների ազգային-ազատագրական շարժումների էտապները և նրանց նշանակությունը մարդկային քաղաքակրթության ընդհանուր պատմության մեջ։

Ռուսական առաջին հեղափոխությունը, ինչպես նշել է Լենինը, արթնացրեց Արևելքը իր խոր, դարավոր քնից։ Իմպերիալիստական աշխարհի շահագործման, կեղեքման, նվաստացման առարկա դարձած, Արևմուտքի «առաջավոր ու դեմոկրատական» երկրների կողմից ստրկացված գաղութային ժողովուրդները համարձակ պայքարի բարձրացան արտաքին աշխարհի և սեփական հայրենիքի՝ իրենց հարստահարողների դեմ։ Սկսվեց բուրժուա-դեմոկրատական շարժումների մի պատմական ժամանակաշրջան, որը իրապես դարձավ Ասիայի, և ոչ միայն նրա, քաղաքական զարթոնքի շրջանը։ Գաղութային աշխարհի ամենամեծ երկրի՝ Հնդկաստանի ժողովուրդների պայքարը ստացավ մասսայական բնույթ։ Բարձրացան առանձին նահանգներ, տեղի ունեցան գյուղացիական շարժումներ։ Բայց ամենից կազմակերպված և հարատևող եղան բանվորական ելույթները։ 1908 թվականի ամռանը Բոմբեյի բանվորների քաղաքական գործադուլը դարձավ շարժման կիզակետը և խորը տպավորություն թողեց աշխարհի դեմոկրատական հասարակայնության վրա։

«Դյուրավառ նյութը համաշխարհային քաղաքականության մեջ» երկում Վ. Ի. Լենինը նշում է, որ Հնդկաստանի պրոլետարիատը բարձրացել է գիտակից քաղաքական պայքարի մակարդակին, որի հետևանքով անգլո-ռուսական կարգերի[18] երգը այստեղ երգված կարելի է համարել։ Միայն բռնությամբ չկարողանալով լռեցնել ժողովրդական մասսա-

---

17 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 199։

18 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 15, էջ 216։

ներին և ընդառաջելով ամրապնդվող տեղական բուրժուազիայի պահանջներին, անգլիական գաղութատերերը իրագործեցին մի շարք ռեֆորմներ (տեղական վարչություններ, օրենսդրական պալատներ և այլն)։

Կիսագաղութային երկրներում՝ Պարսկաստանում, Չինաստանում, Թուրքիայում շարժումները կրեցին կոնստիտուցիոն բնույթ։ Չինաստանում մանրբուրժուական դեմոկրատիայի պայքարը և բանվորական շարժումները հանգեցրին հանրապետական կարգերի հաղթանակին։ Պարսկաստանում մտցվեց սահմանադրություն, որը արդյունք էր շարժման մեջ ազդեցիկ ձախ թևի գոյության։ Թուրքիայում շարժումը վերնախավային էր, ղեկավարվում էր սպայության կողմից, երիտասարդ թուրքերը վախենում էին մասսայական պայքարից և ձգտում էին միայն 30 տարի առաջ արգելված սահմանադրության վերականգնմանը։ Վ. Ի. Լենինը վերջին շարժման արդյունքը որակում է որպես «կիսահաղթանակ, կամ նույնիսկ հաղթանակի ավելի փոքր մասը»[19]։

Չնայած այս ամենին, Ասիայի զարթոնքը նման չէր «հին չինական խռովություններին», այլ նոր որակ էր, համեմատաբար ավելի բարձր կազմակերպված հեղափոխական պայքար՝ որոշակի նպատակներով ու շարժիչ ուժերով։

Անհրաժեշտ է նշել, որ առանձին երկրների յուրահատկությունները, ինչպես ցույց են տալիս փաստերը, չէին փոխում նման զարգացման գլխավոր գծի ուղղությունը։ Կապիտալիստական հարաբերությունները մոտեցնում, հավասարեցնում են պայմանները, տարբեր երկրներում ստեղծում են ընդհանուր գծերով իրար նմանվող իրավիճակ, նույնատիպ դասակարգեր և քաղաքական կազմակերպություններ։ Վ. Ի. Լենինը մասնավորապես ընդգծում է, որ Արևելքի «1000 միլիոն ազգաբնակչությունից 700 միլիոնից ավելին (Չինաստանը, Հնդկաստանը, Պարսկաստանը, Եգիպտոսը) պատկանում է այն երկրներին, որտեղ բանվորներ կան»[20]։

---

19 Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 15, էջ 217։

20 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 73։

Սրանք էլ կոչված են դուրս բերելու գյուղացուն իր «ընկճված, պասսիվ, խավար, քաղաքականության մեջ անտարբեր» վիճակից։

Մեկ ուրիշ հանգամանքի վրա ևս Լենինը կենտրոնացնում է իր ուշադրությունը։ Նա Գեորգ Վիգների «Ժամանակակից Հնդկաստան։ Հնդկաստանում անգլիական տիրապետության հիմքերը և պրոբլեմները» աշխատությունը կոնսպեկտավորելիս, նշում է, որ չկա միասնական ազգ, միասնական լեզու, ակտիվորեն օգտագործվում են զանազան ցեղերի, կաստաների, հնդիկների և մահմեդականների միջև եղած հակասությունները և թշնամանքը։ Այլ աշխատություններում՝ «Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին», «Սոցիալիստական հեղափոխությունը և ազգերի ինքնորոշման իրավունքը», «Ցունիուսի բրոշյուրի մասին», «Ինքնորոշման վերաբերյալ դիսկուսիայի արդյունքները», բազմաթիվ ելույթներում, ճառերում և ուսումնասիրություններում Լենինը հանգել է այն եզրակացության, որ ազգային միասնության բացակայությունը, հիշյալ ներքին հակասությունները լուրջ արգելք են ազատագրական պայքարում։ Ահա այս իմաստով էլ մեծ և փոքր ազգերի կոնսոլիդացիան դիտվում է որպես այդ ասպարեզում չափազանց կարևոր քայլ։ Նշվում է նաև, որ փոքր թե մեծ ազգերի միավորման պրոցեսը ստանում է չափազանց ուժեղ իմպուլս հակաիմպերիալիստական, ազատագրական պայքարի բովում։

Տվյալ պրոբլեմին Վ. Ի. Լենինը, ինչպես միշտ, մոտենում է պրոլետարիատի դասակարգային շահերի տեսակետից։ «Պատմության դիալեկտիկան այնպիսին է,—գրում է նա,—որ մանր ազգերը, անզոր լինելով իրրև ինքնուրույն մի գործոն՝ իմպերիալիզմի դեմ պայքարում խաղում են այն խմորիչներից մեկի, այն բացիլներից մեկի դերը, որոնք օգնում են իմպերիալիզմի դեմ թատերաբեմ հանդես գալու իսկական ուժին, այն է՝ սոցիալիստական պրոլետարիատին»[21]։

---

21 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, էջ 481։

Այսպիսով Արևելքի զարթոնքը, ազգային-ազատագրական պայքարի առաջին էտապը ցույց տվեց բազմաթիվ բարդ հասարակական պրոցեսների առկայությունը այդ երկրներում։ Պատմության տվյալ ժամանակահատվածում առաջին անգամ իրագործվեց բանվորական և ազգային-ազատագրական շարժման միասնությունը և փոխադարձ կապը միջազգային առումով։ «Եվրոպական գիտակից բանվորն,—արձանագրում է Վ. Ի. Լենինը,—արդեն ասիական ընկերներ ունի, և այդ ընկերների թիվը կաճի ոչ թե օրերով, այլ ժամերով»[22]։ Իբրև հակառակ ռեակցիա այս երևույթին, անգլո-ռուսական իմպերիալիզմը փորձեց միասնական ուժերով խեղդել հեղափոխական շարժումը Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում և Չինաստանում։

Ինչպես նշում է Լենինը «Իրադարձությունները Բալկաններում և Պարսկաստանում»[23] աշխատության մեջ մեծ պետությունների կառավարությունները Արևելքի հեղափոխությունների նկատմամբ ժանդարմի դեր են խաղում, որովհետև վախենում էին թե՛ իրենց ազդեցության թուլացումից այս շրջանում և թե՛ ավելի շատ սեփական երկրներում ծավալված ժողովրդական շարժումներից։

Ուրեմն, հսկայական տեղաշարժերի էպոխայում, միջազգային կապիտալի և հեղափոխական շարժումների շահերի բախումը սկզբնավորեց համաշխարհային տարբեր բևեռների ուժերի համախմբումը, որը ավելի ևս որոշակիորեն ցուցադրվեց համաշխարհային պատերազմի տարիներին։ Այստեղ, սակայն, կա մեկ կարևոր տարբերություն՝ դեմոկրատական-հեղափոխական ուժերի միասնության հետագա ամրապնդումը տեղի է ունենում իմպերիալիստական հակասությունների և աշխարհը վերաբաժանելու համար մղվող պատերազմի պայմաններում։

Վ. Ի. Լենինը հսկայական ծառայություն մատուցեց միջազգային բանվորական շարժմանը և գաղութային շարժում-

---

22 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, էջ 481։

23 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 15։

ներին իր տիտանային տեսական և պրակտիկ գործունեությամբ։ Նրա մի քանի տասնյակ աշխատություններն ու հոդվածները նվիրված են իմպերիալիզմի, նրա բնորոշ կողմերի, դասակարգային ու ազգային հակասությունների սրման խնդիրներին, պրոլետարիատի և նրա կուսակցության ստրատեգիային ու տակտիկային՝ պատերազմի, խաղաղության ու հեղափոխության հարցերում։

Նա պայքարում էր իմպերիալիզմի քաղաքականության դեմ, մերկացնում էր իմպերիալիստական պատերազմի նպատակները, միևնույն ժամանակ խարազանելով պացիֆիզմը և բուրժուական ազգայնականությունը։

Նա գտնում էր, որ բանվոր դասակարգը և ճնշված ժողովուրդները պետք է օգտվեն պատերազմի պատճառով ստեղծված ճգնաժամից և հարվածեն իմպերիալիզմին բոլոր ճակատներից։ «Հին աշխարհին՝ ազգային ճնշման, ազգային գզվռտոցի կամ ազգային անջատողության աշխարհին,— գրել է նա,—բանվորները հակադրում են աշխատավորների, բոլոր ազգերի միասնության նոր աշխարհը, որտեղ չի լինի ոչ մի արտոնություն, ոչ մի ամենափոքր ճնշում մարդուն մարդու կողմից»[24]։

Վ. Ի. Լենինը խիստ քննադատության ենթարկեց Կ. Կաուցկուն և 2-րդ ինտերնացիոնալի մի շարք ներկայացուցիչների, որոնք չէին հասկանում գաղութների ազատագրման հրատապ անհրաժեշտությունը և դեմ էին դուրս գալիս ազատագրական, քաղաքացիական պատերազմներին, համարելով դրանք առիթներ, որոնք իբր կհասցնեն նոր իմպերիալիստական պատերազմի։ Այդպիսի պնդումը համարելով եվրոպական սոցիալ-դեմոկրատի կողմից շովինիզմի արտահայտություն, իսկ ընդհանրապես անհեթեթություն «Ցունիուսի բրոշյուրի մասին», «Պրոլետարական հեղափոխության ռազմական ծրագիրը» և այլ աշխատություններում նա ցույց է տալիս, թե որքան հետադիմական է անտեսել, կամ հակադրվել Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժում-

---

24 Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 19, էջ 72։

ներին, կամ իշխանությունը նվաճած բանվորների պայքարին՝ ներքին և արտաքին ռեակցիայի դեմ։ Նրա կարծիքով հենց իմպերիալիզմի էպոխան անխուսափելիորեն ստեղծում է հնարավորություն և անհրաժեշտություն՝ «նախ հեղափոխական, ազգային ապստամբությունների և պատերազմների, երկրորդ, պրոլետարիատի կողմից ընդդեմ բուրժուազիայի մղվող պատերազմների և ապստամբությունների, երրորդ, երկու տեսակի հեղափոխական կռիվների միացում»[25]։

Վիթխարի տարածություններ և մարդկային զանգվածներ ներքաշած առաջին աշխարհամարտի տարիներին Ռուսաստանում և Արևելքի մի շարք երկրներում ծագեցին այդ կռիվներն ու ապստամբությունները։ Նրանք միացան իրար և Հոկտեմբերի հաղթանակը լավագույն արտահայտությունն է լենինյան կանխատեսման իրագործման։

Իսկ գաղութները։ Նրանք անխնայորեն օգտագործվեցին, շահագործվեցին և հարստահարվեցին։ Երբեմն անհրաժեշտ եղավ (կոմունիկացիաների հեռավորության, առանձին ճակատների անջատվածության և ընդհանրապես պատերազմի ընթացքում պահանջների մեծացման կապակցությամբ) հենվել Հնդկաստանի, Եգիպտոսի կամ մյուս արաբական երկրների ունեցած նյութական և մարդկային ռեսուրսների վրա, որպեսզի հնարավոր լինի շարունակել պատերազմը։ Այդ տարիներին անասելի կերպով ուժեղացավ գաղութային ճնշումը, դրա վրա ավելացան պատերազմական դրության հետ կապված դժվարությունները։ Վիճակը դարձավ անտանելի ամենուր, մանավանդ գաղութային և կախյալ երկրներում։ Քաղաքական ճգնաժամը հասունանում էր և՛ Արևմուտքում, և՛ Արևելքում։ Ամփոփելով և գնահատելով ստեղծված վիճակը, Վ. Ի. Լենինը մի քանի տարի անց գրում էր. «Իմպերիալիստական պատերազմը օգնեց հեղափոխությանը, բուրժուազիան զինվորներ պոկեց գաղութներից, հետամնաց երկրներից, մոռացված վայրերից՝ այդ իմպերիալիստական պատերազմին մասնակցելու համար»։ Առանց մտածելու հետե-

25 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 96։

վանքների մասին, այդ զինվորներին սովորեցնում էին «զենքին տիրապետելու հմտություն», որը չափազանց օգտակար էր հեղափոխական պայքարի համար, և Լենինի արտահայտությամբ հարկավոր էր «բուրժուազիային խորին շնորհակալություն հայտնել» այդ բանի համար, նաև նրա համար, որ պատերազմը «համաշխարհային պատմության մեջ առավել կախյալ ժողովուրդներին»[26]։ Հետևանքը եղավ նրանց քաղաքական հասունացման արագացումը, որ զգացվեց պատերազմի վերջին տարիներին և նրա ավարտից հետո։ Սկսվեց պատմության մի շրջան, որը Լենինը անվանել է «համեմատաբար շատ ավելի թափընթաց, թռիչքաձև, կատաստրոֆիկ, կոնֆլիկտային», քան նախորդ՝ կապիտալիզմի զարգացման ավելի «խաղաղ» շրջանը[27]։

Բավական է հիշատակել միայն, որ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի ազդեցությունը զգացվեց Ասիայի երկրներում ոչ պակաս թափով, քան Արևմուտքում։ Իրար հետևից բարձրացան հեղափոխական պայքարի միլիոնավոր մարդիկ Չինաստանում, Ճապոնիայում, Կորեայում, Հնդկաստանում, Պարսկաստանում, Արաբական երկրներում և այլուր։

Պատերազմը և սովետական իշխանության հաստատումը Ռուսաստանում այդ մասսաներին, նշում է Լենինը, վերջնականապես դարձրեցին «համաշխարհային քաղաքականության և իմպերիալիզմի կործանման ակտիվ գործոնը»[28]։

Ռուսաստանի նախկին ծայրամասերում սովետական կարգերի հաղթանակը, ազգային անկախության ստեղծումը բոլոր մեծ ու փոքր ժողովուրդների համար, մի խոսքով ազգային հարցի արմատական լուծումը խոր արձագանք գտավ բոլոր գաղութային և կախյալ երկրներում։ Արևելքի ժողովուրդների պահանջը, նրանց պայքարի նպատակները դարձան ավելի հստակ ու որոշակի։

---

26 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 280—281։
27 Տե՛ս Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 22, էջ 126։
28 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 585։

Վ. Ի. Լենինը հատուկ ուշադրությամբ հետևում էր Հնդկաստանի շարժումներին, որովհետև նրան համարում էր Արևելքի երկրների «գլխին կանգնած», «ինդուստրիալ և երկաթուղային պրոլետարիատ» ունեցող երկիր, որտեղ հեղափոխությունը աճում էր չափազանց արագ։ 1918 թ. նոյեմբերին նա ընդունում է հնդիկ աշխատավորության պատվիրակությանը։ Վերջինիս կողմից սովետական կառավարությանը հանձնած հուշագրում ասված է, որ «Ռուսաստանի հեղափոխությունը չափազանց ուժեղ տպավորություն թողեց հնդիկ ժողովրդի հոգեբանության վրա։ Հակառակ Անգլիայի բոլոր ջանքերին ժողովուրդների ինքնորոշման կոչը թափանցեց Հնդկաստան»[29]։

Նույնը հաստատում է մարքսիստ պատմաբան Պալմ Դատտը, որը իր «Հնդկաստանն այսօր» գրքում գրում է. «Առաջին համաշխարհային պատերազմից հետո ազգային-ազատագրական շարժումը Հնդկաստանում ընդունեց մասսայական բնույթ, առաջ քաշվեց լրիվ ինքնավարության պահանջը...»[30]։

Չինաստանից մինչև Մարոկկո այս պահանջը դառնում է ամենաժողովրդականը և հասկանալի ազատագրական շարժման բոլոր մասնակիցների համար։ Հոկտեմբերի ազդեցության տակ ծավալված շարժումը,—ինչպես նկատել է Վ. Ի. Լենինը—«աճում էր զարմանալի ուժով»։ Իմպերիալիստական երկրների ներհակությունների սրումը, միջազգային բանվորական շարժման ազդեցությունը և Արևելքի հարյուրավոր միլիոն ճնշված ժողովուրդների պայքարը նա համարում էր այն վճռական գործոնները, որոնց առկայության հետևանքով «միջազգային իմպերիալիզմը ի վիճակի չեղավ խեղդելու Սովետական Ռուսաստանը...»[31]։

Այսպիսով, դարթոնքին հետևած հեղափոխական զարգացման երկրորդ էտապի կարևորագույն արդյունքներից մեկը Արևելքի ժողովուրդների ներգրավումն էր համաշխար-

---

29 «Известия», 24/XI 1968.

30 Пальм Датт, Индия сегодня, М., 1948, стр. 17.

31 Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 32, էջ 563

հային քաղաքականության մեջ, որի հետևանքով նրանք դարձան միջազգային հեղափոխական ճգնաժամ ստեղծող հիմնական ուժերից մեկը, և որպես հետադարձ ազդեցություն, օգնեցին սովետական ժողովուրդներին պաշտպանելու Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները, պահպանելու և ամրապնդելու բանվորների ու գյուղացիների առաջին պետությունը։

Արևելքի նշանակությանը Վ. Ի. Լենինը նվիրել է բազմաթիվ աշխատություններ, հոդվածներ ու ելույթներ։ Նա կոչ է արել ավելի մոտիկից ճանաչել ռուսական հեղափոխության թե միջազգային թշնամուն և թե նրա «միջազգային դաշնակցին... և՛ Եվրոպայում, և՛ Ասիայում»[32]։

Նրա համոզմունքը եղել է այն, որ «սոցիալիզմը Եվրոպայում անկայուն կլինի»[33], եթե բանվորները չհասկանան իրենց ինտերնացիոնալ պարտքը և շահը, չձգտեն «մերձենալ և ձուլվել», մոնղոլների, պարսիկների, հնդիկների, եգիպտացիների և այլ ժողովուրդների հետ։ Հենց սոցիալիստական հեղափոխության էությունը նա տեսնում էր ոչ «միայն գլխավորապես հեղափոխական պրոլետարիատի» պայքարի մեջ՝ բուրժուազիայի դեմ, այլև միջազգային իմպերիալիզմի դեմ՝ վերջինիս կողմից «ճնշված բոլոր գաղութների և կախյալ երկրների» պայքարի մեջ[34]։

Սովետական կարգերի հաղթանակից հետո նա նորաստեղծ պետության կարևորագույն խնդիրն էր համարում իր շուրջը համախմբել «Արևելքի բոլոր արթնացող ժողովուրդներին, որպեսզի նրանց հետ միասին պայքար մղի միջազգային իմպերիալիզմի դեմ»[35]։

Լենինը զգուշացնում էր, որ սովետական կառավարության, նրա օրգանների պրակտիկ քայլերը կունենան միջազգային արձագանք, մանավանդ, ազգային խնդիրների լուծման, ծայրամասերի թույլ, մինչև հեղափոխությունը ճնշված

32 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 15, էջ 223։
33 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 77։
34 Վ. Ի. Լենին. Երկեր հատ. 30, էջ 185։
35 Նույն տեղում, էջ 188։

ժողովուրդների հանդեպ տարվող քաղաքականության վերաբերյալ, որովհետև նշված բոլոր հարցերը գործնական նշանակություն ունեն «ամբողջ Ասիայի համար և աշխարհի բոլոր դաղութների համար, հազարավոր միլիոն մարդկանց համար»[36]։

Սովետների երկրի օրինակը, նրա խորհուրդները, նրա քաղաքական և գործնական ակտիվությունը Արևելքի երկրներում իրապես մեծ դեր կատարեցին նրանց ժողովուրդների պայքարի հետագա աշխուժացման և հակաիմպերիալիստական ճակատի համախմբման կարևոր խնդրում։ Այս հանգամանքին Լենինը այնպիսի նշանակություն էր տալիս, որ Հոկտեմբերի հաղթանակից հետո այդ ժողովուրդների վերաբերմունքը դեպի իմպերիալիզմը դասում էր ժամանակի «ամենաէական» երևույթների շարքին[37]։ Որպեսզի նման վիճակը ունենար հարատևող բնույթ, նա գաղութային երկրների կոմունիստական կուսակցություններին առաջարկում էր համակողմանի օգնություն ցույց տալ բուրժուա-դեմոկրատական, ազատագրական շարժմանը, ապահովելով այս գործում նաև մետրոպոլիայի բանվորների ակտիվ մասնակցությունը։ Մյուս կողմից գտնում էր անհրաժեշտ հետևողական պայքարը տեղական ռեակցիայի և հոգևորականության դեմ։ Նշված խնդիրների շարքում, կարևորներից մեկը, Լենինը համարել է պայքարը «պանիսլամիզմի և նման հոսանքների դեմ, որոնք փորձում են եվրոպական և ամերիկյան իմպերիալիզմի դեմ ուղղված շարժումը միացնել խանների, կալվածատերերի և նմանների դիրքի ամրացման հետ»[38]։

Ամենայն ուշադրությամբ Վ. Ի. Լենինը հետևում էր Արևելքում ծավալվող դեպքերին։ Նրա սուր հայացքից չէին վրիպում ամենափոքր հարցերը, որոնք կարող էին ունենալ լուրջ նշանակություն իմպերիալիզմի դեմ տարվող ծանր պայքարի ընթացքում։ Նա գիտեր, որ այդ բոլորի մեջ չափազանց մեծ դեր ուներ սոցիալիզմի երկիրը, նրա տըն-

36 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 155։

37 Նույն տեղում, էջ 174։

38 Նույն տեղում, էջ 167։

տեսական ու քաղաքական օգնությունը ճնշված ժողովուրդներին։ Նա տեսնում էր և համապատասխան շրջաններից պահանջում, որպեսզի ջանքեր գործադրվեն նաև դիվանագիտական ասպարեզ ներգրավելու Արևելքի ժողովուրդների ներկայացուցիչներին, մասնավորապես նրանց բախտի հետ կապված խնդիրները քննարկելիս։

Արդյունքները շատ շուտով եղան զգալի և որոշ բնագավառներում գոհացուցիչ։ Այդ բանը նշում էին առաջին հերթին Արևելքի մտավորականները։ Հայտնի են հնդիկ ականավոր գրող Ռաբինդրանատ Տագորի նամակները Ռուսաստանի մասին։ 1930 թ. այցելելով մեր երկիրը, նա գրում է, որ «Ռուսական հեղափոխության լոզունգները դարձան ամբողջ աշխարհի լոզունգները։ Այժմ երկրի վրա կա միայն մի ժողովուրդ, որը մտածում է ոչ թե միայն իր ազգի, այլ բոլոր մարդկանց շահերի մասին»[39]։

Սովետական ժողովրդի առաջնորդը նախատեսել և մշակել էր համամարդկային առաջընթացի հիմնական բոլոր օրինաչափությունները։ Նա գտնում էր, որ Հոկտեմբերի հաղթանակից հետո ազգային-գաղութային հարցի լուծման ելակետը լինելու է աշխարհում երկու՝ սոցիալիստական և կապիտալիստական իրավակարգերի գոյության փաստը։ «Եթե մենք աչքաթող անենք այդ բանը, ապա չենք կարողանա հիշտ դնել ոչ մի ազգային կամ գաղութային հարց, թեկուզ և խոսքը վերաբերի աշխարհի ամենահեռավոր անկյունին»[40]։

Լենինյան այս դրույթը ստացավ հատուկ նշանակություն երկրորդ համաշխարհային պատերազմի հաղթական ավարտից և մի շարք երկրներում սոցիալիստական կարգեր հաստատվելուց հետո, երբ սոցիալիստական մեկ երկրի փոխարեն ստեղծվեց սոցիալիզմի համաշխարհային սիստեմը։ Ինչպես նշված է կոմունիստական և բանվորական կուսակցությունների՝ 1957, 1960 և 1969 թվականներին տեղի ունեցած խորհրդակցությունների փաստաթղթերում, ժամանակակից

---

39 Р. Тагор, Письма о России, М., 1956, стр. 18.

40 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 294։

միջազգային կյանքի հիմնական բովանդակությունը երկու համաշխարհային սիստեմների համատեղ գոյությունն է, հակասությունները և պայքարը նրանց միջև։ Նրանց խաղաղ գոյակցության փաստը չափազանց բարենպաստ պայմաններ ստեղծեց իրենց ազատության համար պայքարող ժողովուրդների համար։ Սովետական Միության 50 տարվա գոյությունը, սոցիալիզմի լաղերի և նրա ազդեցության աճը, ցայժմ չտեսնված չափերով խորացրին հակասությունները իմպերիալիզմի հպատակության ոլորտներում և մասնավորապես նրա գաղութային սիստեմում։ Գաղութային և կախյալ երկրների ժողովուրդների համբերության բաժակը այնքան էր լցվել, որ բավական եղավ պայքարի երկու տասնյակ տարի, որպեսզի փլուզվեր գաղութային սիստեմը։ Այժմ ազատագրված երկրների թիվը մոտենում է 80-ի, որի կեսից ավելին՝ 41 պետություններ գտնվում են գաղութատիրության պատվարը հանդիսացող Աֆրիկայում։ Ազատագրված են նախկին գաղութների ազգաբնակչության 97% և տերիտորիաների 95%։ Ըստ վերջին տվյալների գաղութային և կախյալ վիճակում են գտնվում մայր ցամաքի տարածությունների 4% միայն (70%-ի փոխարեն) և ազգաբնակչության մեկ տոկոսից քիչ ավելին։

Ժողովուրդների ազատագրման այս պրոցեսը ընթացավ չափազանց անհավասարաչափ և հաստատեց Վ. Ի. Լենինի այն միտքը, «որ հետագա հեղափոխությունները բնակչությամբ անչափ ավելի հարուստ և սոցիալական պայմանների զանազանակերպությամբ անչափ ավելի աչքի ընկնող Արևելքի երկրներում... մատուցելու են անկասկած ավելի շատ յուրատեսակություն, քան ռուսական հեղափոխությունը»[41]։

Անհրաժեշտ է ամենից առաջ նշել, որ ազատագրական պայքարի հետևանքով սոցիալիստական երկրների, միջազգային բանվորական շարժման քաղաքական ու բարոյական օգնությամբ Արևելքի մի շարք երկրներում հաղթանակեցին

---

41 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 570—571։

սոցիալիստական կարգերը։ Մյուս ազատագրված երկրները իրենց քաղաքական և տնտեսական վիճակով կարելի է բաժանել երեք խմբի։ Առաջին խումբը, որի մեջ մտնում են Հնդկաստանը, Պակիստանը, Իրանը, Հյուսիսային Աֆրիկայի, հարավային և հարավ-արևելյան Ասիայի մի շարք երկրներ, իրենց ազատագրումից հետո, ազգային բուրժուազիայի ղեկավարությամբ ընթանում են կապիտալիզմի ուղիով։

Երկրորդ խումբը, գլխավորապես հասարակածային Աֆրիկայի և Ասիայի մի քանի երկրներ ապրում են դեռևս համայնական-ցեղային հարաբերությունների քայքայման պրոցեսը։ Այնտեղ չկան ժամանակակից հասարակական ձևավորված դասակարգեր, և հետևապես, որոշակի չէ նաև նրանց զարգացման ուղին։

Երրորդ խումբը, դրանք անցման շրջան ապրող այն երկրներն են, որոնք չեն կանգնած կապիտալիստական ուղու վրա և աշխատում են սոցիալ-տնտեսական արմատական բարեփոխումների միջոցով պայմաններ ստեղծել և նախապատրաստել անցումը դեպի սոցիալիզմ։ Ղեկավարությունը այս երկրներում գտնվում է մանրբուրժուական հեղափոխական դեմոկրատների ձեռքին, որոնք և հանդիսանում են, այսպես կոչված, «ազգային սոցիալիզմի» քարոզողներն ու իրագործողները։ Որպես օրինակ կարելի է նշել Միացյալ Արաբական Հանրապետությունը, Ալժիրը, Տանգանիան, Մալին, Կոնգոն (Բրազզավիլ), Բիրման և այլն։

Իհարկե նախատեսել, բազմազանության այս պայմաններում, երկրների առանձին խմբերի զարգացման բոլոր առանձնահատկությունները հնարավոր չէ։ Սակայն, հիմնական ուղղությունները նշված են մարքսիզմի կլասիկների կողմից։ Այսպես, բացի կապիտալիստական զարգացման շրջանից դեպի սոցիալիզմն անցնող երկրների խնդիրների և առանձին դասակարգերի պայքարի ձևերի, տակտիկայի ու ստրատեգիայի մշակումից, նրանք, պատմական որոշ պայմաններում և որոշ երկրների համար նախատեսել են անցումը դեպի սոցիալիզմ՝ շրջանցելով կապիտալիստական զարգացման փուլը։ Այդ մասին ամենայն հստակությամբ

ասել է Վ. Ի. Լենինը իր մի շարք գործերում և, մասնավորապես, ազգային և գաղութային հարցերի մասին կոմինտերնի 2.րդ կոնգրեսում տված զեկուցման մեջ։ Իր դրած հարցին՝ արդյոք անխուսափելի է տնտեսական կապիտալիստական զարգացման ստադիան ազատագրվող երկրների համար,—նա պատասխանում է բացասաբար և հիմնավորում է իր միտքը այսպես. «Եթե հեղափոխական հաղթական պրոլետարիատը նրանց մեջ սիստեմատիկ պրոպագանդա մղի, իսկ սովետական կառավարությունները նրանց օգնության հասնեն իրենց տրամադրության տակ ունեցած բոլոր միջոցներով, այն ժամանակ սխալ կլինի ենթադրել, թե հետամնաց ժողովուրդների համար անխուսափելի է կապիտալիստական զարգացման ստադիան»։ Այնուհետև ավելի կոնկրետացնելով տրված գաղափարը, Լենինը ներկայացնում է այն որպես պրակտիկ խնդիր, որը դրվում է երկու հիմնական գործող ուժերի առջև. «Առաջավոր երկրների պրոլետարիատի օգնությամբ հետամնաց երկրները կարող են անցնել սովետական կարգին և զարգացման որոշ աստիճանների միջոցով՝ կոմունիզմին, խուսափելով զարգացման կապիտալիստական ստադիայից»[42]։

Այս ուղիով ընթացան միջինասիական սովետական հանրապետությունները, Մոնղոլիան։ Նա պարտադիր կլինի նաև բազմաթիվ զարգացող երկրների համար, որտեղ կապիտալիզմը դեռ ծիլեր անգամ չի արձակել։

Ձեռք բերելով քաղաքական ազատություն, որը Վ. Ի. Լենինը համարում էր կարևորագույն քայլ ինքնուրույն ազգերի զարգացման ճանապարհին, Ասիայի և Աֆրիկայի համարյա բոլոր երկրները ունեն դրսի օգնության խիստ կարիքը։ Այս հանգամանքից օգտվում են իմպերիալիստները, որոնք ամեն ինչ անում են, սկսած պատերազմական գործողություններից (Վիետնամ, Լաոս, Արաբական Արևելք) մինչև պետական հեղաշրջումներ, քաղաքական տեռոր, ռեակցիոն ուժերի օգտագործում, տնտեսական սանկցիաներ

---

42 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 294—295։

և ճնշում, որպեսզի պահպանեն իրենց ազդեցությունը նախկին գաղութներում։

Սակայն, սոցիալիստական երկրների առկայության, նրանց ցույց տված եղբայրական անշահախնդիր օգնության պայմաններում իմպերիալիստները չեն կարող տանել բացարձակ գաղութային քաղաքականություն և նրանց բոլոր փորձերը՝ վերականգնել նախկինում եղած հարաբերությունները, վերջանում են պարտությամբ։ Այնուամենայնիվ, նրանք չեն հրաժարվում իրենց նպատակներից և փոխում են միայն պայքարի տակտիկան։ Այժմ տարվող իմպերիալիզմի նեոգաղութատիրական քաղաքականությունը արտահայտվում է՝ առաջինը նրանով, որ ջանքեր են թափվում պահելու և ընդլայնելու իրենց ազդեցության ոլորտը գլխավորապես տնտեսության ասպարեզում (նորից կապիտալի արտահանում և անհավասար փոխանակություն)։ Երկրորդ, արվում է ամեն ինչ, որպեսզի տապալվեն պրոգրեսիվ վարչակարգերը (արդեն իրականացվել են մոտ 40 պետական հեղաշրջումներ) և հնարավոր չլինի հասնել իսկական անկախության։ Երրորդ, բոլոր միջոցներով այդ երկրները պահպանել կապիտալիզմի ոլորտում և օգտագործել նրանց սոցիալիզմի գաղափարախոսության և սոցիալիստական սիստեմի դեմ տարվող պայքարում։ Տվյալ էտապում, զարգացող երկրների հետամնացության, աղքատության և ցածր կենսամակարդակի պայմաններում, որոշ չափով իրականանում են հիշյալ միջոցառումները։

Այդ երկրները տալիս են համաշխարհային արդյունաբերական արտադրանքի միայն 13%։ Նրանց արտահանության 88% հումքն է և համաշխարհային արտահանության մեջ այն կազմում էր ընդամենը 19% (1966 թ.)։

Ցածր է աշխատանքի արտադրողականությունը, դեռևս տիրապետում է գյուղատնտեսության մոնոկուլտուրային սիստեմը, գաղութատիրության ժամանակներից մնացած սովը և թերսնվածությունը ժողովրդական մասսաների համար հանդիսանում են իսկական դժբախտություն։ Տխուր պատկեր է տալիս կենսամակարդակը ներկայացնող մեկ մարդուն ընկ-

նող տարեկան միջին եկամուտը, որը ԱՄՆ-ում հավասար է 2400 դոլլարի, Ինդոնեզիայում՝ 83, Հնդկաստանում՝ 63, Բիրմայում՝ 54, Պակիստանում և Աֆղանստանում՝ 52, Լիբիայում՝ 25 և այլն[43]։

Այս վիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է համառ և երկարատև պայքար իմպերիալիզմի դեմ։ Կրկին և կրկին առաջին պլանի վրա է դրվում Վ. Ի. Լենինի պահանջը առաջավոր երկրների բանվորներին՝ միավորել իրենց ուժերը, համախմբվել վերջնականապես հաղթանակ տանելու համար։ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի պրոլետարիատը չի կարող ազատագրվել,—գրել է Վ. Ի. Լենինը,—«առանց բոլոր ճնշված, գաղութային ժողովուրդների և առաջին հերթին Արևելքի ժողովուրդների աշխատավոր մասսաների օգնության...»[44]։

Սակայն ճանապարհը դեպի այդ ժողովուրդների սիրտը հարթ չէ և նրանց հետ պահանջվում է երկարատև, համբերատար ու քրտնաջան աշխատանք՝ վերացնելու համար ճնշված ազգերի անվստահությունը դեպի նախկին մետրոպոլիայի բանվոր դասակարգը։ Ամենահետամնաց երկրներում, որտեղ ուժեղ է մանր հողագործական արտադրությունը, նահապետականությունը և այս բոլորի հետևանքով մանրբուրժուական ամենախոր նախապաշարմունքները, ազգային եսասիրությունը, ազգային սահմանափակվածությունը (որ նկատելի է մասնավորապես Քենիայում, Սենեգալում և աֆրիկյան այլ երկրներում), Լենինը սովորեցնում է «առանձին զգուշությամբ և առանձին ուշադրությամբ վերաբերվել ազգային զգացմունքների մնացուկներին առավել երկար ժամանակ ճնշված երկրների և ժողովուրդների մեջ», հատուկ ջանքեր գործադրել և «որոշ զիջումներ անել նշված անվստահությունը և նշված նախապաշարմունքներն ավելի արագորեն վերացնելու համար»[45]։

---

43 Տե՛ս «Азия и Африка сегодня», 1968, № 4, стр. 8.

44 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 189։

45 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 173։

Սա մի ծրագիր է, որի իրագործումը կպահանջի տևական ժամանակ և հատուկ ուշադրություն, որը բխում է սոցիալիստական երկրների ինտերնացիոնալ պարտականությունից։

Ելնելով համաշխարհային հեղափոխության շահերից, Վ. Ի. Լենինը բանվորական կուսակցություններին զգուշացնում է խուսափել նաև մի ռեալ վտանգից, որը, ինչպես ցույց է տալիս ժամանակակից իրադրությունը Աֆրիկայում, արաբական երկրներում, Հնդկաստանում և այլուր, կարող է լուրջ բարդություններ առաջ բերել իմպերիալիզմի և ռեակցիայի ընդհանուր ճակատի դեմ մղվող պայքարում։ Այդ վտանգը հենց ազգային եսասիրության և անջատվածության տենդենցն է, որ ընդգծված երևում է բազմաթիվ բուրժուական քաղաքական գործիչների և լիդերների (Լ. Սենգոր, Հ. Բուրգիբա և ուրիշներ) քաղաքականության և գործունեության մեջ։

Այս ճեղքվածքը ևս աշխատում են օգտագործել իմպերիալիստական գաղափարախոսության ներկայացուցիչները։ Խոսելով Արևելքում տարվող քաղաքականության խնդիրների մասին, մի խումբ ամերիկյան հեղինակներ գտնում են, որ իրենց կողմից տարվող «հոգեբանական հարձակումը պետք է ընդգծի կոմունիզմի և նացիոնալիզմի մեջ եղած կոնֆլիկտը»[46]։

Մինչդեռ այդ կոնֆլիկտը իրականում գոյություն չունի և այն ստեղծվում է մարքս-լենինյան ուսմունքի սխալ մեկնաբանման հետևանքով կամ արհեստականորեն որպես բուրժուական մտածելակերպի արդյունք։

Լենինը ուսուցանում էր ազգերի ինքնորոշման ծրագրային պահանջը չկապել պարտադիր բաժանման անհրաժեշտության հետ։ Քննադատելով սոցիալ-դեմոկրատական որոշ լիդերների տեսակետները այս հարցում, նա գտնում էր, որ ինքնորոշման և բաժանման խնդիրների առաջքաշումը և սկզբունքորեն լուծումը չպետք է շփոթել այն բանի հետ, որ պրոլետարները կարող են մտածել, որ նրանք պետք է բա-

---

46 Տե՛ս «Правда», 14/X 1968.

ժանվեն եգիպտական բանվորներից և ֆելլահներից, Մոնղոլիայի, Թուրքեստանի, Հնդկաստանի բանվորներից և գյուղացիներից, և վերջապես միթե այդ բոլորը նշանակում է, «որ մենք խորհուրդ ենք տվել գաղութների աշխատավոր մասսաներին «բաժանվել» եվրոպական գիտակից պրոլետարիատից։ Ոչ մի նման բան»[47]։ Ազգային անջատվածության ձգտումը Լենինը համարել է բուրժուական և ինտերնացիոնալ միասնությունը՝ պրոլետարական ձգտում, որը ժամանակակից էտապում առանձին, մասնավորապես մանր ազգերի, առաջադիմության միակ ուղին է։

Այն են ու խոր Վ. Ի. Լենինի գաղափարները ազգային-ազատագրական շարժումների ու նրանց նշանակության մասին։ Տասնյակ տարիների փորձով բանվորական կուսակցությունները (իհարկե ոչ ազգայնականությամբ տոգորված) և աշխատավոր մասսաները զգացել են դեմոկրատական ուժերի ու ժողովուրդների միասնության կենսական անհրաժեշտությունը՝ հանուն խաղաղության, դեմոկրատիայի, կոմունիզմի հաղթանակի։ Նրանք համոզվել են, որ լենինյան այս սկզբունքների համար հետևողական պայքար են մղում սոցիալիստական երկրները Սովետական Միության գլխավորությամբ և միջազգային բանվորական շարժումը մարքսիստական կուսակցությունների ղեկավարությամբ։

ՍՄԿԿ վերջին՝ 23-րդ համագումարը իր որոշումների մեջ կրկին արձանագրել է առաջիկայում Արևելքի ժողովուրդներին օգնելու անհրաժեշտությունը, հանուն նրանց պայքարի հաղթանակի, անկախության և հակաիմպերիալիստական ճակատի ամրապնդման։ Այս հարցին նվիրված իր զեկուցման մեջ Ա. Ն. Կոսիգինը մասնավորապես նշեց, որ Սովետական Միության համագործակցությունը զարգացող երկրների հետ «տնտեսական առումով ուղղված է այնպիսի արմատական պրոբլեմների լուծմանը, ինչպիսիք են ազգային արդյունաբերության կարևորագույն ճյուղերի ստեղծումը, տեխնիկական

---

47 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 77։

և գիտական կադրերի պատրաստումը, համաշխարհային շուկայում այդ երկրների դիրքերի ամրապնդումը»[48]։

Մեծագույն գոհունակությամբ են ընդունում նման եղբայրական օգնությունը Արևելքի ժողովուրդները և նրանց մտավորականությունն ու գործիչները։ Արդեն գոյություն ունի այս երևույթը մեկնաբանող ստվար գրականություն։

Մամուլը մշտապես արձագանքում է ամեն մի դրական քայլի և բարեկամական փոխհարաբերությունների արտահայտություններին։

Իր ուղերձներից մեկում Գ. Ա. Նասերը ազգային-ազատագրական պայքարի հաջողությունները բացատրում է Սովետական Միության և նրա հզորության առկայությամբ, առանց որի նա հնարավոր չի գտնում սանձահարել իմպերիալիզմը և ազգային հեղափոխական ուժերի համար ստեղծել բարեհաջող պայմաններ։ Բազմաթիվ են նման կարծիքները[49]։

Այս բոլորը գալիս են հաստատելու Վ. Ի. Լենինի մտքերը այն մասին, որ արհամարհված, թերագնահատված Արևելքը մեծ դեր է խաղացել մարդկության պատմության մեջ, «որ համաշխարհային հեղափոխության ապագա վճռական ճակատամարտերում երկրագնդի բնակչության մեծամասնության շարժումը, որ սկզբում ուղղված էր ազգային ազատագրության նպատակին, կշրջվի կապիտալիզմի և իմպերիալիզմի դեմ, և գուցե շատ ավելի մեծ հեղափոխական դեր կխաղա, քան մենք սպասում ենք»[50]։

---

48 А. Н. Косыгин, Директивы XXIII съезда КПСС по пятилетнему плану развития народного хозяйства СССР на 1966—1970 гг., М., 1966, стр. 66.

49 Տե՛ս «Народы Азии и Африки», 1967, № 5, стр. 42.

50 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 622։

Ն. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԵԼՔԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով սկսվեց իմպերիալիզմի և գաղութային սիստեմի ճգնաժամի առաջին էտապը։ Ռուսաստանում կատարված սոցիալ-տնտեսական և քաղաքական արմատական փոփոխությունների հետևանքով ուժեղացավ պրոլետարիատի դասակարգային պայքարը զարգացած կապիտալիստական երկրներում և ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը՝ գաղութներում։ 1917 թ. հոկտեմբերից հետո սկսվում է Արևելքի ժողովուրդների իսկական զարթոնքը և ռեալ հեռանկար է բացվում նրանց առջև մասնակցելու աշխարհի բախտը վճռելուն։ Վ. Ի. Լենինը դա համարում էր համաշխարհային պատմության նոր դարաշրջանի սկիզբ։

Պատմական այդ պրոցեսի մեջ ներգրավվեցին նաև արաբական երկրները։

Խոսելով արաբական ազգային-ազատագրական շարժումների վրա Հոկտեմբերյան հեղափոխության և լենինյան գաղափարների ունեցած ազդեցության մասին, անհրաժեշտ է ընդգծել այն հանգամանքը, որ ռուսական և արաբական հեղափոխականների միջև ուղղակի ոչ մի կապ գոյություն չի ունեցել։ Սովետական Ռուսաստանը չի հրահրել ազատագրական շարժումներն Արևելքում, այդ թվում նաև արաբական երկրներում։ Այլ կերպ ասած, նա չի փորձել հեղափոխու-

թյունն «արտահանել»։ Հեղափոխության «արտահանումը» հակասում է մարքսիստական-լենինյան տեսությանը և սովետական պետության բնույթին ու քաղաքականությանը։ Ֆ. Էնգելսը նշել է, որ համաշխարհային պրոլետարիատը շահագրգռված է, որպեսզի գաղութային երկրները ինչքան հնարավոր է շուտ անկախություն ձեռք բերեն, սակայն հաղթական պրոլետարիատը չի կարող ոչ մի ուրիշ ժողովրդի վզին ոչ մի երջանկություն փաթաթել, առանց խարխլելու իր սեփական հաղթանակի հիմքերը[1]։

Սովետական կառավարությունը, Վ. Ի. Լենինը միշտ էլ խստորեն հետևել են այդ սկզբունքներին և հանդես եկել հեղափոխության «արտահանման» դեմ։

Աշխատավորների առաջին պետության ստեղծվելը և այնտեղ կատարված փոփոխությունները հսկայական տպավորություն գործեցին արաբական ժողովուրդների վրա։ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակով միջազգային ասպարեզ դուրս եկավ մի պետություն, որը սկսեց կիրառել մինչ այդ համաշխարհային պրակտիկայում անհայտ սկզբունքներ։ Կ. Մարքսը, բնութագրելով պրոլետարիատի առջև կանգնած խնդիրները, նշում էր, որ նա պետք է հասնի այն բանին, որ մարդկանց միջև գործող բարոյականության և արդարության սկզբունքները դառնան բարձրագույն օրենքներ ժողովուրդների հարաբերությունների մեջ[2]։

Ղեկավարվելով այդ սկզբունքներով, Վ. Ի. Լենինի գլխավորած սովետական կառավարությունը ընդունեց մի շարք դեկրետներ ու որոշումներ, որոնք ցարական Ռուսաստանի գաղութային քաղաքականությանը ընդմիշտ վերջ տալու վկայություն էին։ Իշխանության գրավումը աշխատավորական մասսաների կողմից, արդյունաբերության և բանկերի ազգայնացումը, հողի հանձնումը գյուղացիներին, անհավատալի թվացող ազգային հարցի լուծումը և այլն, այս բոլորը

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Избранные письма, М., 1947, стр. 357.

[2] Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 16, М., 1960, стр. 11.

ուժեղ տպավորություն թողեցին արաբական ժողովուրդների վրա և մեծ չափով խթանեցին նրանց պայքարը ազգային և սոցիալական ազատագրման համար։ Արևելքի, այդ թվում նաև արաբական, երկրները ագրարային և մեծ մասամբ բաղմազգ պետություններ են, ուստի և վերոհիշյալ հարցերի լուծումը Սովետական Ռուսաստանում նրանց համար ուներ սկզբունքային նշանակություն։ Սովետական կառավարության առաջին դեկրետները քաղաքական և բարոյական մեծ օգնություն էին ճնշված և հարստահարվող ժողովուրդներին։

1917 թ. նոյեմբերի 8-ին սովետական կառավարությունն ընդունեց «Հաշտության մասին» դեկրետը, որտեղ նա «բոլոր պատերազմող ժողովուրդներին և կառավարություններին առաջարկում էր անհապաղ բանակցություններ սկսել արդարացի դեմոկրատական հաշտության վերաբերյալ»[3]։ Լենինյան այս դեկրետը ուշագրավ է ոչ միայն այն առումով, որ նա խաղաղության կոչ էր անում աշխարհի բոլոր ժողովուրդներին, այլ նաև նրանով, որ առաջին անգամ տրվում էր անեքսիայի սահմանումը։ Անեքսիայի տակ սովետական կառավարությունը հասկանում էր փոքր և թույլ ժողովրդի ամեն մի բռնի միացում մեծ և ուժեղ պետության, առանց փոքր ժողովրդի ցանկության և համաձայնության[4]։ Անեքսիայի բնորոշումը մեծ նշանակություն ուներ արաբական և Արևելքի մյուս ժողովուրդների համար, որոնց երկրները բաժանված էին Անգլիայի և Ֆրանսիայի միջև։ Տալով անեքսիայի սահմանումը, սովետական կառավարությունը դրանով իսկ հանդես էր գալիս իմպերիալիստական պետությունների գավթողական պլանների դեմ և պաշտպանում թույլ և փոքր, ազատագրական կռվի մեջ գտնվող ժողովուրդների շահերը։

1917 թ. նոյեմբերի 15-ին սովետական կառավարությունը, Վ. Ի. Լենինի ստորագրությամբ, հրապարակեց «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», որը վերջ էր դնում մի ժողովրդին մյուսի դեմ լարելու խայտա-

---

[3] «Документы внешней политики СССР», т. 1, М., 1957, стр. 11.

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 12։

ռակ քաղաքականությանը և հռչակում ժողովուրդների իրավահավասարության ու ինքնուրույնության սկզբունքները։

Սովետական կառավարությունը պաշտոնապես ճանաչեց ազգերի ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև անջատվելը և ինքնուրույն պետություն հիմնելը[5]։

Արաբական ժողովուրդների համար սկզբունքային նշանակություն ուներ ՌՍՖՍՀ ժողկոմխորհի 1917 թ. դեկտեմբերի 3-ի դիմումը «Ռուսաստանի և Արևելքի բոլոր մուսուլման աշխատավորներին»։ Սովետական Ռուսաստանը Արևելքի ժողովուրդների առջև կանգնեց որպես նրանց շահերի իսկական պաշտպան, նրանց ազատ ու անկախ զարգացման անկեղծ կողմնակից։ Դիմելով նրանց, սովետական կառավարությունը ասում էր. «Արևելքի մուսուլմաններ, պարսիկներ և թուրքեր, արաբներ և հնդիկներ... Դուք ինքներդ պետք է դառնաք ձեր երկրի տերը։ Դուք ինքներդ պետք է ձեր կյանքը կառուցեք ըստ ձեր ցանկության։ Դուք դրա իրավունքը ունեք, քանի որ ձեր ճակատագիրը ձեր սեփական ձեռքերումն է»[6]։

Արաբական երկրների նկատմամբ Անգլիայի և Ֆրանսիայի իմպերիալիստական քաղաքականության մերկացման գործում մեծ նշանակություն ունեցավ սովետական կառավարության կողմից, 1917 թ. նոյեմբերի 22-ին, գաղտնի դիվանագիտական փաստաթղթերի հրապարակումը[7]։ Այդ փաստաթղթերի մեջ էր նաև Անգլիայի և Ֆրանսիայի միջև կնքված «Սայքս-Պիկոյի» գաղտնի համաձայնագիրը Օսմանյան կայսրության արաբական տիրապետությունների բաժանման վերաբերյալ։ Վերջապես, սովետական կառավարությունը չեղյալ հայտարարեց ցարական Ռուսաստանի կողմից Չինաստանի, Թուրքիայի և Իրանի հետ կնքած տնիրավահավասար պայմանագրերը։

Այս բոլոր քայլերը վկայում էին, որ սովետական պետության կազմավորումով սկզբունքորեն նոր հարաբերություններ էին հիմնվում ազգերի և պետությունների միջև,

5 Տե՛ս նույն տեղում, էջ 15։

6 Նույն տեղում, էջ 35։

7 Նույն տեղում, էջ 21—22։

բարենպաստ պայմաններ ստեղծվում ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի համար։ Պատմության մեջ առաջին անգամ էր, որ մեծ պետությունը հանդես էր գալիս ոչ թե նվաճողի, այլ փոքր ու ստրկացված ժողովուրդների իրավունքների պաշտպանի դերում։

Այսպիսով, Հոկտեմբերյան հեղափոխությունը ծանր հարված հասցրեց իմպերիալիզմի համաշխարհային սիստեմին, արթնացրեց Արևելքի ժողովուրդներին, նպաստեց նրանց ազգային ինքնագիտակցության զարգացմանը և պայքարի ոգեկոչեց ընդդեմ իմպերիալիզմի։ Նա հեղափոխականացրեց համաշխարհային իրադրությունը։ Նրա վսեմ գաղափարները, ներքին և արտաքին քաղաքականության սկզբունքները, որոնք հռչակվեցին սովետական կառավարության առաջին դեկրետներում, մոբիլիզացնում էին արաբներին և խթանում նրանց հակաիմպերիալիստական պայքարը։ Սովետական օրինակով նրանք համոզվում էին, որ փոքր և ճնշված ժողովուրդները կարող են դառնալ իրենց ճակատագրի տերը։ Արաբները և Արևելքի մյուս ժողովուրդները տեսնում էին, որ ի դեմս սովետական պետության ունեն հավատարիմ դաշնակից։ Սոցիալիստական հեղափոխությունը զարգացած երկրներում և ազգային-ազատագրական պայքարը գաղութային երկրներում դարձան բնական դաշնակիցներ, ներկայացնելով հեղափոխական միասնական պրոցեսի երկու կողմերը։

«Սոցիալական հեղափոխությունը,—նշել է Վ. Ի. Լենինը,— չի կարող այլ կերպ տեղի ունենալ, քան իբրև մի դարաշրջան, որ միացնում է պրոլետարիատի քաղաքացիական կռիվը բուրժուազիայի դեմ առաջավոր երկրներում և մի ամբողջ շարք դեմոկրատական ու հեղափոխական, այդ թվում նաև ազգային-ազատագրական շարժումներ, չզարգացած, հետամնաց և ճնշված ազգերի մեջ»[8]։

Երբ տեղի ունեցավ Հոկտեմբերյան հեղափոխությունը, արաբական ոչ մի անկախ պետություն գոյություն չուներ։

---

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 67։

Արաբական ժողովուրդները գտնվում էին կամ թուրքական բռնակալների, կամ անգլիական, ֆրանսիական և իտալական իմպերիալիստների լծի տակ։ Արաբական մի խումբ երկրներ՝ Եգիպտոսը, Թունիսը և Մարոկկոն, պրոտեկտորատներ էին։ Եգիպտոսը անգլիական պրոտեկտորատ էր, իսկ Թունիսը և Մարոկկոն՝ ֆրանսիական։ Լիբիան իտալական գաղութ էր։ Իրաքը, Սիրիան, Լիբանանը և Հորդանանը ձևականորեն մըտնում էին Օսմանյան կայսրության կազմի մեջ։ Սակայն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին անգլիական զորքերը նվաճեցին այդ տերիտորիաները, իսկ հետո Անգլիան ու Ֆրանսիան մանդատի դիմակի ներքո հաստատեցին իրենց գաղութային տիրապետությունը նրանց վրա։

Այդպիսին էր ընդհանուր իրադրությունը Արաբական Արևելքում ազգային-ազատագրական շարժումների վերելքի նախօրյակին։

Արաբական ազգային-ազատագրական շարժումները սկսվել էին դեռևս մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը։ 19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբում նրանք հիմնականում ուղղված էին հետադիմական և բարբարոսական օսմանյան լծի դեմ։ Արաբների հակաթուրքական տրամադրությունից վարպետորեն օգտվեցին անգլիական և ֆրանսիական իմպերիալիստները առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ։ Խաղալով արաբ մասսաների ազատատենչ զգացմունքների, թուրքական լուծը թոթափելու և անկախ պետություն ստեղծելու նրանց ցանկության հետ, Անգլիան ձգտում էր արաբներին ոտքի հանել գերմանա-թուրքական բլոկի դեմ։

Անգլիայի և արաբների միջև ի դեմս Մեքքայի շերիֆ Հուսեյն իբն Ալիի, կոնտակտներ հաստատվեցին դեռևս նախքան առաջին համաշխարհային պատերազմը։ 1914 թ. փետրվարին Հուսեյնի որդի Աբդալլահը հանդիպում ունեցավ Եգիպտոսում Անգլիայի գլխավոր հյուպատոս Կիտշենների և արևելյան հարցերի գծով հյուպատոսության քարտուղար Ռ. Ստորսի հետ[9]։ Հանդիպման ժամանակ Աբդալլահը Անգ-

---

9 G. Antonius, The arab awakening, London, 1945, p. 127.

լիայի ներկայացուցիչներին տեղյակ պահեց, որ հարաբերությունները Թուրքիայի ղեկավարների և իր հոր՝ Հեջազի կառավարիչ Հուսեյնի միջև լարված են։ Նա միաժամանակ ավելացրեց, որ երիտթուրքերը մտադիր են տապալել իր հորը։ Աբդալլահը նշում է նաև, որ դա կարող է ապստամբություն առաջացնել Հեջազում[10]։ Աբդալլահի հետ ունեցած զրույցից անգլիացիներն եկան այն եզրակացության, որ բարենպաստ պայմանների դեպքում իրենք կարող են օգտագործել արաբներին։

Անգլիացիները կապեր են հաստատում նաև Իրաքի ազգային գործիչների, հատկապես Բաղդադի լիբերալ կոմիտեի հետ։ Վերոհիշյալ կոմիտեի ներկայացուցիչներն Անգլիայից պահանջում են ռազմա-քաղաքական օգնություն ցույց տալ միացյալ անկախ արաբական պետության ստեղծման գործում[11]։

Սակայն այս բոլոր հանդիպումները և կապերը դեռևս հետախուզական բնույթ էին կրում, կողմերից յուրաքանչյուրը փորձում էր պարզել մյուսի դիրքորոշումը և իսկական մտադրությունները։ Միայն պատերազմը սկսվելուց հետո այդ հարաբերությունները կոնկրետ բնույթ ստացան։

Առաջին հերթին պետք է նշել Հեջազի կառավարիչ Հուսեյն իբն Ալիի նամակագրությունը Եգիպտոսում Անգլիայի գլխավոր կոմիսար Մակ-Մահոնի հետ։ Նախքան նրանց միջև նամակագրություն սկսվելը, «Ալ-Ֆաթաթ» և «Ալ-Ահդ» արաբական կազմակերպությունները մշակել էին մի փաստաթուղթ, որը հայտնի է «Դամասկոսի արձանագրություն» անունով։ «Դամասկոսի արձանագրությունը» պահանջում էր ստեղծել անկախ արաբական պետություն, որի մեջ պետք է մտնեին ամբողջ Արաբական թերակղզին, Իրաքը, Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը, Հորդանանը և այժմյան Թուրքիայի հարավային որոշ տերիտորիաներ։ Եթե Անգլիան համաձայն-

10 Տե՛ս նույն տեղում։

11 См. М. Лазарев, Крушение турецкого господства на Арабском Востоке, М., 1960, стр. 85.

վեր պաշտպանել արաբական անկախ պետության ստեղծման գաղափարը, ապա արաբները խոստանում էին համագործակցել Անգլիայի հետ և հանդես գալ Թուրքիայի դեմ[12]։ Արձանագրությունը նախատեսում էր վերացնել կապիտուլյացիաները, պաշտպանական դաշինք կնքել Անգլիայի և արաբական պետության միջև, Անգլիային տրամադրել տնտեսական մենաշնորհներ և այլն[13]։ Այս պայմանների հիման վրա, ըստ արաբական ազգային ղեկավարների, պետք է ըսկըսվեր արաբների ապստամբությունը Թուրքիայի դեմ։

Ֆեյսալը «Դամասկոսի արձանագրությունը» հանձնեց իր հորը՝ Հուսեյնին։ Վերջինս լրիվ հավանություն տվեց նրան։ Արձանագրության պայմանների հիման վրա նա բանակցություններ սկսեց Մակ-Մահոնի հետ, որը պատմության մեջ հայտնի է «Հուսեյն-Մակ-Մահոնի նամակագրություն» անվանումով[14]։ Նամակագրությունը տևեց 1915 թ. հուլիսի 14-ից մինչև 1916 թ. հունվարի 30-ը։ Իր առաջին նամակում Հուսեյնը փաստորեն շարադրում է «Դամասկոսի արձանագրության» պայմանները, ավելացնելով Անգլիայի կողմից արաբական խալիֆայությունը ճանաչելու պահանջը[15]։ Այս պայմանները ընդունելու դեպքում արաբները պատրաստ էին բարձրացնել ապստամբության դրոշը։

Մակ-Մահոնը համաձայնվում է արաբական անկախ պետության ստեղծման գաղափարի և արաբական խալիֆայության ճանաչման առաջարկի հետ[16]։ Ինչ վերաբերում է ապագա արաբական պետության սահմաններին, ապա Անգլիան դրա մասին խոսելը դեռ վաղ էր համարում։ Հետագայում, նամակագրության ընթացքում, ցանկանալով արագացնել արաբների ելույթը Թուրքերի դեմ, Անգլիան որոշեց ճանաչել արաբական անկախ պետությունը, սակայն Հուսեյնի առաջին նամակում շարադրված սահմանների խիստ փոփոխությամբ։

12 G. Antonius, The arab awakening, p. 157.

13 Տե՛ս նույն տեղում, էջ 157—158։

14 Նամակագրության լրիվ տեքստը տես՝ G. Antonius, The arab awakening, p. 414—427.

15 Տե՛ս նույն տեղում, էջ 414, 426։

16 Տե՛ս նույն տեղում, էջ 415—416։

Անգլիային հաջողվեց ձեռք բերել Հուսեյնի համաձայնությունը ապագա արաբական պետության մեջ չմտցնելու Մերսինը, Ալեքսանդրետը և Սիրիայի մի մասը՝ Դամասկոսից, Հոմսից, Համայից և Հալեպից դեպի արևմուտք։ Բաղդադի և Բասրայի վիլայեթներում արաբները պետք է ճանաչեին Անգլիայի արդեն հաստատված «դիրքերը և շահերը»։ Անգլիան պարտավորվում էր այնտեղ հիմնել հատուկ վարչություն[17]։ Դրա փոխարեն Հուսեյնը Անգլիայից ստանալու էր ռազմական և նյութական օգնություն։

Այսպիսով, Անգլիային հաջողվեց ապագա արաբական պետությունից պոկել արաբական զգալի տերիտորիաներ, որոնք, ինչպես ցույց կտրվի ստորև, հետագայում դարձան Անգլիայի և Ֆրանսիայի ենթամանդատային տերիտորիաները։ «Հուսեյն-Մակ-Մահոն նամակագրությունը» փաստորեն ստացավ քաղաքական գործարքի բնույթ։ Շերիֆ Հուսեյնը «Դամասկոսի արձանագրության» հետ համեմատած լուրջ զիջումներ արեց անգլիացիներին։ Հուսեյնի անհետևողականությունը բացատրվում է արաբական ազգային-ազատագրական ուժերի թուլությամբ և անկազմակերպությամբ։ Արաբական ազգային շարժման ղեկավարությունն իր ձեռքը վերցրեց Հաշիմյան ֆեոդալական վերնախավը։ Վերջինս, գայթակղված արաբական պետություն ստեղծելու հեռանկարով, որտեղ իշխանությունը պատկանելու էր իրեն, լուրջ զիջումներ արեց արաբների համազգային շահերի հարցում և բավական հաստատակամություն չցուցաբերեց «Դամասկոսի արձանագրությամբ» նախատեսված ծրագրի իրագործման ուղղությամբ։

Արաբական ապստամբությունը, որը հայտնի է նաև «ապստամբություն անապատում» անունով, սկսվեց Հեջազում 1916 թ. հունիսի 5-ին։ Այդ օրը Հուսեյնի որդիներ Ալին և Ֆեյսալը Համզայում, Մեդինայի մոտ, Մեքքայի շերիֆ Հուսեյնի անունից հռչակեցին արաբների անկախությունը։ Հու-

---

17 G. Antonius. The arab awakening, p. 419—427.

Նիսի 10-ին ապստամբություն բռնկեց Մեքքայում[18]։ Ապըստամբ ջոկատները ղեկավարում էին Հուսեյնի որդիներ Ալին, Աբդալլահը, Ֆեյսալը և Զեյդը։

Հեջազում սկսված ապստամբությունը մեծ ազդեցություն ունեցավ արաբական մյուս շրջանների վրա, խթանելով նրանց հակաթուրքական պայքարը։ Ամին Սաիդը նշում է, որ արաբական ապստամբությանը մասնակցում էին Հեջազի, Շամի (Սիրիայի), Իրաքի, Եմենի, Նեջդի և Հյուսիսային Աֆրիկայի զավակները[19]։ Արաբներն այս ապստամբությունը դիտում էին որպես իրենց ազգային հեղափոխություն ընդդեմ թուրքերի, որի նպատակն էր անկախության և ազատության նվաճումը[20]։

1916 թ. նոյեմբերի 2-ին Մեքքայում կայացած ֆեոդալական վերնախավի ժողովը Հուսեյն իբն Ալիին հռչակեց արաբ ազգի թագավոր[21]։ Կազմվեց արաբական կառավարություն Հուսեյնի ավագ որդի Ալիի գլխավորությամբ։

Հուսեյնի այդ քայլը, որ նախօրոք համաձայնեցված չէր անգլիացիների հետ, վերջիններիս մոտ խոր դժգոհություն առաջ բերեց։ Անգլիան և Ֆրանսիան հրաժարվեցին Հուսեյնին ճանաչել արաբների թագավոր։ Երկար բանակցություններից հետո նրանք դիմեցին կոմպրոմիսի՝ Հուսեյնին ճանաչել միայն Հեջազի թագավոր։

Հուսեյնի տիտղոսի շուրջը ծագած վեճն առաջին լուրջ հրապարակային տարաձայնությունն էր մի կողմից Հուսեյնի, իսկ մյուս կողմից Անգլիայի և Ֆրանսիայի միջև։ Դա առաջին լուրջ նշանն էր այն բանի, որ վերջիններս չեն ուզում կատարել արաբներին տված իրենց խոստումները։

Արաբական ապստամբությունը ծանր հարված էր երիտթուրքական բախտախնդիրներին։ Նա էլ ավելի վատացրեց

---

18 Տե՛ս նույն տեղում, էջ 194—195; В. Луцкий, Новая история арабских стран, М., 1966, стр. 337.

19 امين سعيد ، الدولة العربية المتحدة ، ج ٣، القاهرة، ص ٨٧

20 Տե՛ս Амин Саид, Восстания арабов в XX веке, перевод с арабского, М., 1964, стр. 182.

21 Տե՛ս В. Луцкий, Новая история арабских стран, стр. 339.

Թուրքիայի առանց այն էլ ռազմական ծանր դրությունը և մեծ օգնություն ցույց տվեց Անգլիային՝ արաբական ռազմաճակատում Թուրքիայի դեմ մղած պայքարում։

Անգլիային զգալի օգնություն ցույց տվին նաև եգիպտացիները։ Պատերազմի ժամանակ Մեծ Բրիտանիան եգիպտական բանվորներից և գյուղացիներից կազմակերպեց աշխատանքային և այսպես կոչված ուղտերի կորպուսներ, որոնց շարքերում կար 1 մլն. 170 հազար մարդ[22]։

Արևելագիտական պատմական գրականության մեջ տարբեր կարծիքներ գոյություն ունեն արաբական ապստամբության նշանակության և այն դերի մասին, որ նա խաղաց պատերազմում Թուրքիային ջախջախելու գործում։ Որոշ հեղինակներ, ինչպես Ջ. Մարլոուն, թերագնահատում են նրա նշանակությունը[23]։ Սակայն պատմաբանների, ինչպես նաև ռազմա-քաղաքական գործիչների մեծ մասը բարձր են գնահատում արաբների մատուցած ծառայությունները Անտանտի երկրներին։

«Արաբական հեղափոխությունը,—նշում է Ռ. Բուլլարդը,—փոքր նշանակություն չունեցավ դաշնակիցների համար»[24]։ Նույն ոգով են արտահայտվում նաև Թ. Լոուրենսը, որը ակտիվ դեր է խաղացել արաբական ապստամբության նախապատրաստման գործում, Գ. Բելլը և ուրիշներ։ «Արաբական խանդավառությունը,—նշում է անգլիական հայտնի հետախույզ Թ. Լոուրենսը,—հանդիսացավ արևելյան պատերազմում հաղթանակ ձեռք բերելու մեր գլխավոր գործիքը»[25]։

Գ. Բելլը իր նամակներից մեկում՝ 1916 թ. հունիսի 25-ին, արաբների անկախության հռչակումից 20 օր անց, գրում էր.

---

22 Տե՛ս Х. Кильберг, Кризис британского господства в Египте после Великой Октябрьской социалистической революции, «Великий Октябрь и народы Востока», сборник (отв. ред. А. А. Губер), М., 1957, стр. 240.

23 Տե՛ս J. Marlowe, Arab nationalism and British imperialism, London, 1961, p. 21.

24 R. Bullard, Britain and the Middle East, London, 1951, p. 73.

25 T. Lawrence, Seven pillars of wisdom, London, 1935, p. 275—276.

«Այս շաբաթ լուրերը Մեքքայից շատ հետաքրքրական էին։ Սուրբ վայրում (Մեքքայում—Ն. Հ.) սկսված ապստամբությունը հսկայական քաղաքական և բարոյական նվաճում է»[26]։

Արաբներին անկախություն տալու վերաբերյալ Անգլիայի խոստումները կեղծ էին, մի խորամանկ քայլ, որի օգնությամբ Անգլիան կարողացավ հօգուտ իր շահերի օգտագործել արաբ ժողովրդի հակաթուրքական զգացմունքները։

Այն ժամանակ, երբ նամակագրություն էր տեղի ունենում Հուսեյնի և Մակ-Մահոնի միջև, Անգլիան և Ֆրանսիան նախապատրաստում էին մեկ այլ գաղտնի համաձայնագիր արաբական տերիտորիաների վերաբերյալ։ 1915 թ. նոյեմբերի 23-ին Լոնդոնում սկսվեցին գաղտնի բանակցություններ Անգլիայի և Ֆրանսիայի միջև։ Այդ բանակցություններին Ֆրանսիայի կողմից մասնակցում էր Բեյրութում ֆրանսիական գլխավոր հյուպատոս Ֆրանսուա Ժորժ-Պիկոն, իսկ Անգլիայի կողմից՝ արտաքին գործերի մինիստրի մշտական տեղակալ Արթուր Նիկոլսոնը, որին հետագայում փոխարինեց արևելյան հարցերի գծով փորձագետ Մարկ Սայքսը։ Բանակցությունները տևեցին մինչև 1916 թ. փետրվարը։

Այդ նույն թվականի մարտին Սայքսը և Պիկոն ժամանեցին Պետրոգրադ և ցարական արտաքին գործերի մինիստր Ս. Սազոնովին հանձնեցին իրենց համաձայնության տեքստը՝ Ասիական Թուրքիան բաժանելու վերաբերյալ։ Կարծիքների փոխանակումից հետո 1916 թ. մայիսի 16-ին Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը եկան վերջնական համաձայնության Ասիական Թուրքիայի, այդ թվում նաև արաբական տերիտորիաների բաժանման վերաբերյալ։

Այսպես լույս աշխարհ եկավ «Սայքս-Պիկոյի» համաձայնագիրը։

Այդ համաձայնագրով Ֆրանսիայի լրիվ տիրապետության տակ էր անցնում Արևմտյան Սիրիան, Լիբանանը, Կիլիկիան և Հարավ-արևելյան Անատոլիայի մի մասը։ Իսկ Արևելյան Սիրիան և Հյուսիսային Իրաքը համարվում էին Ֆրանսիայի ազդեցության գոտի։

---

26 „The letters of Gertrude Bell", London, 1930, p. 310.

Անգլիայի լրիվ տիրապետության տակ էին անցնում Կենտրոնական և Հարավային Իրաքը, Հայֆան և Աքքան Պաղեստինում։ Բացի այդ, նրա ազդեցության գոտին էին համարվում Անդրհորդանանը և Բաղդադի վիլայեթի հյուսիսային մասը։ Իսկ Պաղեստինի մնացած մասում, Ռուսաստանի և մյուս երկրների համաձայնությամբ, հաստատվելու էր միջազգային վարչություն[27]։

Այդպիսին էր «Սայքս-Պիկոյի» համաձայնագրի բովանդակությունը։ Այդ Անգլիայի և Ֆրանսիայի գաղութատիրական ձգտումները հաստատող մի անօրինակ փաստաթուղթ է։ Սայքսի և Պիկոյի բանակցությունները, ժամանակի առումով, համընկնում էին Մակ-Մահոնի և Հուսեյնի նամակագրության հետ։ Անգլիան մի կողմից արաբներին խոստանում էր ազգային անկախություն, իսկ մյուս կողմից, գաղտնի կերպով, Ֆրանսիայի հետ պատրաստվում էր անդամահատելու Թուրքիայի արաբական տիրապետությունները և նրանց դարձնելու իրենց գաղութները։

«Սայքս-Պիկոյի» համաձայնագիրը, ինչպես նշվեց, կնքվեց գաղտնի։ Նրա մասին արաբները բացարձակորեն տեղյակ չէին[28]։ Համաձայնագրի գոյությունը արաբներին և համաշխարհային հասարակայնությանը հայտնի դարձավ միայն, երբ 1917 թ. նոյեմբերին սովետական կառավարությունը հրապարակեց ցարական Ռուսաստանի գաղտնի պայմանագրերը։ Դա ցնցող տպավորություն թողեց արաբների վրա։ Նրանք հասկացան, որ իրենց խաբել են։ Դրանից հետո հարաբերությունները արաբական ազգային շարժման ղեկավարների և Անգլիայի միջև խիստ լարվեցին։ 1917 թ. դեկ-

---

27 «Սայքս-Պիկոյի» համաձայնագրի լրիվ տեքստը տե՛ս «Documents on British foreign policy, 1919—1939", Ist series, vol. IV, London, 1947, p. 241—247. «Раздел Азиатской Турции (по секретным документам б. министерства иностранных дел)», под ред. Е. А. Адамова, М., 1924, стр. 154—157.

28 Տե՛ս Դ. Լլոյդ Ջորջ, Правда о мирных договорах, т. 2, М., 1957, стр. 215.

տեմբերին Հուսեյնը բողոք հայտնեց անգլիական կառավարությանը և պահանջեց համապատասխան բացատրություններ տալ[29]։ Շատ տեղերում արաբական ապստամբ ուժերը հրաժարվում էին մասնակցել պատերազմին[30]։ Ավելին. արաբական հրամանատարությունը գաղտնի բանակցություններ մեջ մտավ թուրքական հրամանատարության հետ՝ սեպարատ հաշտություն կնքելու համար[31]։ Այդ նպատակով կոնտակտներ հաստատվեցին Ֆեյսալի և Ջեմալ փաշայի միջև։

Սակայն բանակցությունները, ինչպես նշում է Վ. Լուցկին, անհաջողությամբ վերջացան «թուրքերի լկտիության պատճառով, որոնք հրաժարվեցին ճանաչել արաբների ազգային պահանջները»[32]։

Անգլիան իր հերթին նույնպես դրմեց մի շարք քայլերի արաբներին հանգստացնելու համար։ Անգլիական կառավարությունը սկզբում փորձեց հերքել «Սայքս-Պիկոյի» համաձայնագրի գոյությունը, հայտարարելով, որ դա «բոլշևիկների հորինածն է»[33]։ Այնուհետև, 1918 թ. հունվարի 5-ին հատուկ հայտարարությամբ հանդես եկավ Անգլիայի պրեմիեր-մինիստր Լլոյդ Ջորջը։ «Արաբիան, Միջագետքը, Սիրիան, Պաղեստինը և Հայաստանը,—հայտարարեց նա,—իրավունք ունեն, որպեսզի նրանց առանձնահատուկ պայմանները ճանաչվեն»[34]։

Սակայն առաջին համաշխարհային պատերազմից հետո Անգլիան և Ֆրանսիան չճանաչեցին արաբների ազգային իրավունքները և անմիջապես ձեռնամուխ եղան «Սայքս-Պիկոյի» համաձայնագրի իրականացմանը՝ իրար միջև բաժան-բաժան անելով Միջագետքը, Սիրիան, Լիբանանը և Պաղեստինը։ Այդ իսկ պատճառով առաջին համաշխարհային պատերազ-

29 Տե՛ս «Арабские страны. История. Экономика», М., 1966, стр. 14.

30 Տե՛ս «Советско-арабские дружественные отношения», М., 1961, стр. 13.

31 Տե՛ս В. Луцкий, Октябрьская революция и арабские страны, «Советское востоковедение», М., 1957, № 5, стр. 91.

32 В. Луцкий, Новая история арабских стран, стр. 347.

33 Նույն տեղում։

34 «Арабские страны. История. Экономика», стр. 15.

մից հետո նոր թափով է ծավալվում ազգային-ազատագրական պայքարը արաբական երկրներում։ Շարժման վերելքի պատճառները բացատրելիս պետք է նկատի ունենալ այն իրադարձությունը, որ ստեղծվեց արաբական աշխարհում՝ առաջին համաշխարհային պատերազմի և Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի թողած ազդեցության հետևանքով։ Արաբական ժողովուրդներին չհաջողվեց լուծել իրենց ազգային կենսական խնդիրները և քաղաքական անկախություն նվաճել։ Նրանք միայն իրենց տերերին փոխեցին։ Թուրք կեղեքիչներին հաջորդեցին անգլիական և ֆրանսիական իմպերիալիստները։ Ազգային անկախություն ձեռք բերելու հարցը մնաց օրակարգի մեջ։ Եվ հենց այդ հանգամանքն էլ հանդիսանում է ազգային-ազատագրական շարժման վերելքի ղլխավոր պատճառը արաբական աշխարհում։ Հոկտեմբերյան հեղափոխությունն ավելի արագացրեց այդ պրոցեսը։ Նա օգնեց արաբական ժողովրդին հասկանալու Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքականության իմպերիալիստական բնույթը և խորը գիտակցելու իրենց առջև կանգնած խնդիրները։ «Արաբական բոլոր առաջավոր երկրներում,—գրում է Էմիլ Թուման,—հեղափոխական ելույթները առաջին համաշխարհային պատերազմի և Հոկտեմբերյան հեղափոխության բնական հետևանքներն էին»[35]։

Գոյություն ունեն բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են Եգիպտոսում, Իրաքում, Սիրիայում, Լիբանանում, Մարոկկոյում և մյուս արաբական երկրներում Հոկտեմբերյան հեղափոխության և Վ. Ի. Լենինի գաղափարների տարածման մասին։ Օտարերկրյա բազմաթիվ հեղինակներ, ինչպես նաև քաղաքական և զինվորական գործիչներ, որոնք 1917—1920 թթ. եղել են արաբական երկրներում, վկայում են, որ արաբական առաջադեմ ուժերը ծանոթ էին Հոկտեմբերյան հեղափոխության հռչակած սկզբունքներին և սովետական կառավարության կիրառած կարևոր միջոցառումներին։ Դեռ

35 امیل توما، العرب والتطور التاریخی فی الشرق الاوسط، حیفا، ١٩٦٢، ص ١٤٤

ավելին. շատ վայրերում արաբ հեղափոխականները ուսումնասիրում էին ռուս բոլշևիկների փորձը, ձգտելով այն կիրառել իրենց ազգային խնդիրների լուծման համար։

Հոկտեմբերյան հեղափոխությունը մեծ ազդեցություն գործեց Եգիպտոսի ազգային-ազատագրական շարժման վրա։ Եգիպտոսի հայրենասիրական ուժերը ձգտում էին ազատագրվել բրիտանական իմպերիալիզմի լծից և նվաճել քաղաքական անկախություն։ Հակաիմպերիալիստական պայքարի ընթացքում Եգիպտոսի գյուղական վայրերում ստեղծվեցին հեղափոխական կոմիտեներ, որոնք, ինչպես նշում է անգլիական դիվանագետ և հրապարակախոս, «Թայմս» թերթի խմբագիր Ջիրոլը, կոչվում էին «սովետներ»[36]։ Եգիպտական ֆելլահների համար ռուսական այդ բառը դարձավ մոտ ու հասկանալի։ Եգիպտոսում, ինչպես նշում էր անգլիական կառավարական միսիայի ղեկավար լորդ Միլները, գյուղացիների շրջանում լուրեր էին պտտվում այն մասին, որ անգլիացիներին շուտով կստիպեն հեռանալ Եգիպտոսից, հողը կբաժանեն գյուղացիներին, իսկ հարկերն էլ կվերացնեն[37]։ Հոկտեմբերյան հեղափոխության և բոլշևիկների փորձի նկատմամբ մեծ հետաքրքրություն են հանդես բերում եգիպտական բուրժուական նացիոնալիստները, որոնց ձեռքում էր գտնվում ազգային-ազատագրական պայքարի ղեկավարությունը 1919—1924 թթ. դեպքերի ժամանակ։ Անգլիական բուրժուական պատմաբան Ջ. Յունգը նշում է, որ 1919 թ., երբ հակաիմպերիալիստական պայքարի ալիքը Եգիպտոսում հասավ իր գագաթնակետին, եգիպտական ազգային կուսակցությունը և ազգային գործիչները ամրապնդեցին իրենց կազմակերպությունը և բարելավեցին իրենց ծրագիրը, ուսումնասիրելով ռուսական կոմունիստների մեթոդները[38]։

Անգլիական գաղութարարները մեծ տագնապով նկատում էին բոլշևիկյան գաղափարների տարածումը Իրաքում։ Սուլեյմանիեի անգլիական քաղաքական սպա Սոնը 1919 թ. իր զե-

---

36 Տե՛ս «Советско-арабские дружественные отношения», стр. 8.

37 Տե՛ս նույն տեղում։

38 Տե՛ս G. Young, Egypt, London, 1927, p. 231.

կուցագրերից մեկում հայտնում էր, որ Իրաքում «բոլշևիզմի անունը և սկզբունքները, ցավոք սրտի, դառնում են հայտնի»[39]։ Նույն բանը հաստատում էր անգլիական մեկ այլ պաշտոնյա՝ Թ. Լայելը։ Նա հավաստում էր, որ բոլշևիզմի սերմերը տարածվում են Իրաքում և Հնդկաստանում[40]։ Իրաքի հասարակայնությունը անգլիական և հնդկական մամուլի միջոցով տեղեկանում էր Սովետական Ռուսաստանում կատարվող քաղաքական և սոցիալ-տնտեսական փոփոխություններին։ Նույն ճանապարհով նա իմացավ «Սայքս-Պիկոյի» համաձայնագրի մասին, համաձայնագիր, որը Իրաքը վեր էր ածում Անգլիայի գաղութի[41]։ Իրաքի հասարակայնությունը աշխուժորեն քննարկում էր սովետական Ռուսաստանում տեղի ունեցած փոփոխությունները[42]։

Իրաքցիները Հոկտեմբերյան հեղափոխության հռչակած սկզբունքների և սովետների երկրում կատարվող իրադարձությունների մասին շատ բան իմանում էին Անդրկովկասից և Հյուսիսային Իրանից Իրաք այցելող ուխտագնացներից[43]։

Այս բոլորի շնորհիվ ազգային-ազատագրական պայքարը Իրաքում դառնում է ավելի կազմակերպված։ Իրաքի հայրենասերներն ավելի համարձակորեն և վճռականորեն են հանդես գալիս ընդդեմ անգլիական գաղութարարների։ Այդ հանդամանքի վրա ուշադրություն են դարձրել բազմաթիվ օտարերկրյա հեղինակներ՝ Հ. Ֆոստերը[44], Ս. Լոնգրիգը[45], Ու. Եյը[46]

---

39 Տե՛ս A. Wilson, Mesopotamia, 1917—1920. A clash of loyalties, London, 1931, p. 145.

40 Տե՛ս «История международного рабочего и национально-освободительного движения», ч. 2, М., 1962, стр. 409.

41 Տե՛ս Л. Котлов, Национально-освободительное восстание 1920 г. в Ираке, М., 1958, стр. 92.

42 Տե՛ս „The letters of Gertrude Bell", London, 1927. vol. 2, p. 485.

43 Տե՛ս «Великий Октябрь и народы Востока», стр. 315.

44 Տե՛ս H. Foster, The making of modern Iraq, Oclahoma, 1935, p. 317.

45 Տե՛ս S. Longrigg, Iraq 1900 to 1950, London, 1953.

46 Տե՛ս W. Yale, Near East. A modern history, Michigan, 1955, p. 317.

և ուրիշներ։ Այսպես, օրինակ, Ու. Ելը նշում է, որ Իրաքում «դիմադրությունն արևմտյան իմպերիալիզմի դեմ ավելի ուժեղացավ ռուսական հեղափոխության և բոլշևիկյան պրոպագանդայի ազդեցության ներքո»[47]։

Բոլշևիզմի գաղափարները ներթափանցում են նաև Սիրիա և Լիբանան։ Սիրիայի թագավոր Ֆեյսալը 1920 թ. գանգատվում էր, որ երկրում աճում է բոլշևիզմի կողմնակիցների թիվը[48]։ Սիրիայի և Լիբանանի գյուղացիության վրա հատկապես մեծ ազդեցություն էին գործել կալվածատիրական սեփականության վերացումը և հողի բաժանումը աղքատ գյուղացիներին։ Ոգևորվելով այդ գեղեցիկ օրինակով, նրանք համանման պահանջներ են առաջադրում իրենց երկրում։ Լիբանանի դատախազ Ֆուադ Ամմունը՝ վկայելով Սիրիայի և Լիբանանի գյուղացիության մոտ նման տրամադրությունների առկայության մասին, գրում էր. «Սովետական հանրապետությունների սկզբունքները, որոնք վերացրին հողի մասնավոր սեփականությունը և ամբողջ հողը կենդանի ու անշարժ գույքով հանձնեցին աշխատավոր ժողովրդի տնօրինությանը, ռուսական ագրարային օրենքի այդ պայմաններն այնպիսին են, որ սկսում են ազդել գյուղացիության վրա»[49]։ Նրանք պահանջում են ֆրանսիական իշխանությունից, որ իրենց հետ վարվեն այնպես, ինչպես գյուղացիների հետ վարվում են սովետների երկրում։

Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցության շնորհիվ ուժեղացավ արաբների ազգային ինքնագիտակցությունը։ Նրանք համոզվեցին, որ իրենք նույնպիսի իրավունք ունեն ինքնուրույն քաղաքական կյանքի, ինչպես մյուս ժողովուրդները։ Սելիմ Նաջջարը՝ Լիբանանի ազգային շարժման ղեկավարներից մեկը, խոստովանում էր, որ Հոկտեմբերյան հեղափոխությունը արաբների մոտ ամրապնդեց անկախության գաղափարը[50]։ Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխու-

47 Տե՛ս նույն տեղում։

48 Տե՛ս «Советско-арабские дружественные отношения», стр. 8.

49 Նույն տեղում, էջ 8—9։

50 Տե՛ս E. Young, La revolte arabe, Paris, 1924, vol. I, p. 192.

թյունը արմատական բեկում առաջ բերեց ժողովուրդների կյանքում։ Այն, ինչպես նշում է Յուսուֆ Խաթթարը, արաբական մասսաներին զինեց կարևոր զենքով՝ «իմպերիալիզմի տիրապետությունից ազատագրվելու և ազգային իշխանություն հաստատելու համար»[51]։ Արաբական ազատագրական շարժման շատ ղեկավարներ, ինչպես, օրինակ, մարոկկոյական ռիֆների որոշ առաջնորդներ, Ռուսաստանի կանխագծած ուղիով ընթանալու մեջ էին տեսնում իրենց ազատագրման բանալին։ «Ռուսաստանը,—ասում էին նրանք,—ազատագրվեց հարստահարիչներից, և մենք կգնանք նրանց (ռուսների—Ն. Հ.) ուղիով»[52]։ Այդ իմաստով մեծ հետաքրքրություն է ներկայացնում Սիրիայի «Արաբների միասնության կոմիտեի» փաստաթղթերից մեկը, որը հստակորեն ցույց է տալիս արաբների որոշ շրջաններում տիրապետող տրամադրությունները և այն ազդեցությունը, որ Հոկտեմբերյան հեղափոխությունը թողեց արաբական երկրների վրա։ «Լենինի ու նրա ընկերների կառավարությունը և Արևելքը եվրոպական բռնապետներից ազատագրելու համար նրանց բարձրացրած հեղափոխությունը,—կարդում ենք այդ փաստաթղթում,—արաբների կողմից մեծարվում են որպես մեծ ուժ՝ ընդունակ արաբներին տալու երջանկություն և բարեկեցություն։ Ամբողջ աշխարհի երջանկությունը և հանգիստը կախված է արաբների և բոլշևիկների դաշինքից»[53]։ Արաբ առաջադիմական ուժերը իրենց հիացմունքը հայտնելով Վ. Ի. Լենինի գլխավորած սովետական կառավարության քաղաքականության հանդեպ, առաջադրում են «Կեցցե Լենինը, նրա ընկերները և սովետական իշխանությունը» լոզունգը[54]։

Այս և նման այլ փաստեր ակնբախորեն ցույց են տալիս, որ չնայած Սովետական Ռուսաստանի և արաբական երկրների միջև ուղղակի կապի բացակայությանը, չնայած սովետ-

51 «طريق». («Ա-Թարիկ»), Բեյրութ, մարտ, 1958, էջ 5։
52 «Новый Восток», М., 1925, № 8—9, стр. XXXI.
53 «Великий Октябрь и народы Востока», стр. 37.
54 Նույն տեղում։

ների երկրի շուրջը ստեղծված բլոկադային, Հոկտեմբերի հռչակած լենինյան գաղափարները և սկզբունքները տարածվում էին արաբական երկրներում։ Այդ գաղափարները բարերար ազդեցություն ունեցան արաբական ժողովուրդների հակաիմպերիալիստական պայքարի վրա։

Իրենց անկախության համար մղած պայքարում արաբների համար մեծ կռվան էր Վ. Ի. Լենինի ղեկավարած սովետական կառավարության դիրքը այնպիսի կարևոր հարցերում, ինչպես ազգերի ինքնորոշման իրավունքի, անեքսիաների չդիմելու, մանդատի հարցը և այլն։

Ահա այս պայմաններում Անգլիան և Ֆրանսիան իրենց բացահայտ գաղութային տիրապետությունը սքողելու համար հրապարակ նետեցին մանդատի գաղափարը։ Ազգերի լիգան պաշտոնապես Անգլիային տվեց Իրաքի և Պաղեստինի, իսկ Ֆրանսիային՝ Սիրիայի և Լիբանանի մանդատը։ Կյանքի կոչելով մանդատային սիստեմը, Անգլիան և Ֆրանսիան փորձում էին աշխարհի առջև հանդես գալ ոչ թե որպես արաբական երկրների նվաճողներ և նրանց անկախությունից զրկող պետություններ, այլ սոսկ միջազգային կազմակերպության՝ Ազգերի լիգայի «հանձնարարությունը» կատարողներ։ Սակայն գաղտնիք չէր, որ Ազգերի լիգայում տեր ու տնօրեն էին Անգլիան ու Ֆրանսիան, գաղութային այդ ամենահին տերությունները։

Մանդատային սիստեմը գաղութատիրության խորամանկ ու սքողված ձևն էր։ Սովետական կառավարությունը և Վ. Ի. Լենինը սկզբից ևեթ հանդես եկան մանդատային սիստեմի դեմ, նշելով, որ նրա օգնությամբ գաղութային նոր լուծ է դրվում արաբական երկրների վզին։

1919 թ., հանդես գալով կոմունիստական կազմակերպությունների համառուսական 2-րդ համագումարում, Վ. Ի. Լենինը նշեց. «Երբ խոսում են գաղութների մանդատները բաժանելու մասին, մենք հիանալի գիտենք, որ դա մանդատների բաժանումն է հափշտակման, կողոպուտի համար, որ դա երկրագնդի բնակչության մի չնչին մասին իրավունքների

բաժանումն է երկրագնդի բնակչության մեծամասնությանը շահագործելու համար»[55]։

Սովետական կառավարությունը չճանաչեց մանդատային սիստեմը և բազմիցս հանդես եկավ պրոտեկտորատների ու մանդատների վերացման պահանջով[56]։ Իսկ 1934 թ., երբ Սովետական Միությունը դարձավ Ազգերի լիգայի անդամ, սովետական պատվիրակը հատուկ ընդգծեց սովետական կառավարության բացասական վերաբերմունքը մանդատային սիստեմի նկատմամբ և հրաժարվեց մասնակցել Ազգերի լիգայի մանդատային մշտական հանձնաժողովի աշխատանքներին[57]։

Սովետական կառավարության այս ազնիվ ու հետևողական դիրքը բարոյական մեծ օգնություն էր արաբ հայրենասիրական ուժերին մանդատի վերացման համար մղած նրանց պայքարում։

Ահա այսպիսի բարդ իրադրության պայմաններում ծավալվեցին ազգային-ազատագրական շարժումները առաջին համաշխարհային պատերազմից և Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո Եգիպտոսում, Իրաքում, Սիրիայում և Լիբանանում։

* * *

Եգիպտոսը մինչև առաջին համաշխարհային պատերազմը ձևականորեն մտնում էր Օսմանյան կայսրության կազմի մեջ։ Սակայն իրականում, 1882 թ. սկսած նա հանդիսանում էր Անգլիայի գաղութը։ Այդ հանգամանքն էլ կանխորոշեց Եգիպտոսի դիրքը պատերազմի տարիներին։

1914 թ. օգոստոսի 5-ին, Անգլիայի և Գերմանիայի միջև պատերազմ հայտարարվելուց անմիջապես հետո, եգիպտական կառավարությունը հրապարակեց մի դեկլարացիա, որը արգելում էր որևէ հարաբերություն պահպանել Գերմանիայի

55 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 186։

56 Տե՛ս «Документы внешней политики СССР», т. 6, М., 1962, стр. 226; «Известия», 10/V 1927.

57 Տե՛ս «Советско-арабские дружественные отношения», стр.14—15.

հետ[58]։ Հետագայում այդ դեկլարացիան տարածվեց նաև Ավստրո-Հունգարիայի և Թուրքիայի վրա։

1914 թ. օգոստոսի 6-ին Եգիպտոսի պրեմիեր-մինիստր Ռուշդի փաշան հայտարարեց, որ թուրքական գերիշխանությանը վերջ է տրվում և անկախ այն բանից, թե կրոնական ու սոցիալական ինչպիսի կապեր գոյություն ունեն եգիպտացիների ու թուրքերի միջև, Եգիպտոսն այսուհետև չի կազմելու Օսմանյան կայսրության բաղկացուցիչ մասը[59]։

Պատերազմը Անգլիայի և Թուրքիայի միջև դեռևս չէր սկսվել։ Սակայն ոչ ոք չէր կասկածում, որ վաղ թե ուշ սկսվելու է։ Այդ պատճառով էլ Անգլիան ձեռք է առնում որոշ նախազգուշական միջոցառումներ։ 1914 թ. նոյեմբերի 2-ին, Անգլիայի և Թուրքիայի միջև պատերազմ սկսվելուց 4 օր առաջ, Եգիպտոսում անգլիական օկուպացիոն զորքերի հրամանատար գեներալ Ջոն Գրենվիլ Մաքսուելը երկրում մտցրեց ռազմական դրություն[60]։ Այնուհետև նա հրապարակեց Անգլիայի կողմից Եգիպտոսի պաշտպանության դեկլարացիան։ Եգիպտոսում մտցվեց գրաքննություն և բնակչությանը խստիվ պատվիրվեց անվերապահորեն ենթարկվել ռազմական իշխանություններին[61]։

Դրանից հետո բրիտանական կառավարությունը մի քայլ կատարեց, որը վճռական նշանակություն ունեցավ Եգիպտոսում ազգային-ազատագրական շարժման հետագա ծավալման համար։ Առանց հաշվի առնելու եգիպտական ժողովրդի և քաղաքական տարբեր ուժերի կարծիքը, 1914 թ. դեկտեմբերի 18-ին անգլիական կառավարությունը պաշտոնապես իր պրոտեկտորատը հաստատեց Եգիպտոսի վրա[62]։ Այդ որոշ-

---

58 Տե՛ս Абдаррахман ар-Рафии, Восстание 1919 г. в Египте, сокращ. перевод с арабского, М., 1954, стр. 24—25.

59 Տե՛ս Amine Youssef Bey, Independent Egypt, London, 1940, p. 56.

60 Տե՛ս J. Marlowe, Ango-Egyptian relations 1800—1953, London, 1954, p. 214.

61 Տե՛ս նույն տեղում։

62 Տե՛ս Ш. аш-Шафии, Развитие национально-освободитель-

մամբ, ինչպես նկատել է եգիպտական պատմաբան առ-Ռաֆիին, «ծպտյալ պրոտեկտորատը, որ Անգլիան պարտադրել էր Եգիպտոսին 1882 թ., իր տեղը զիջեց ակնհայտ, ոչնչով չքողարկված պրոտեկտորատին»[63]։ Եգիպտոսի վրա անգլիական պրոտեկտորատի հաստատումով, ինչպես իրավացիորեն նշում է եգիպտական մի ուրիշ պատմաբան Ամին Սաիդը, կտրվեց վասալական կախման այն «բարակ թելը», որ դեռ Եգիպտոսը կապում էր Թուրքիայի հետ, և Եգիպտոսն անցավ անգլիական տիրապետության տակ գտնվող երկրների շարքը[64]։

Անգլիական պրոտեկտորատի հաստատումից հետո վերացվեց եգիպտական արտաքին գործերի մինիստրությունը, ցրվեց օրենսդիր ժողովը և երկրում մտցվեց արտակարգ դրություն։ Անգլիացիները պրոտեկտորատ հաստատելու հաջորդ օրը՝ 1914 թ. դեկտեմբերի 19-ին, գահընկեց արեցին Եգիպտոսի խեդիվ Աբբաս 2-րդ Հիլմիին, որը թուրքական ու գերմանական կողմնորոշում ուներ, և նրա փոխարեն սուլթանի տիտղոսով գահ նստեցրին Հուսեյն Քամիլին[65]։

Անգլիական պրոտեկտորատի հաստատումը եգիպտացիները ընդունեցին մեծ դժգոհությամբ։ Ժողովրդի դիմադրությունը կոտրելու համար անգլիական ռազմական իշխանությունները դիմեցին բռնի միջոցների։ Ազգային գործիչների մի մասը ձերբակալվեց, իսկ մյուս մասը աքսորվեց երկրից։ Արգելվեցին ամեն տեսակ ժողովները, ուժեղացվեց գրաքննությունը[66]։ 1915 թ. փետրվարի 18-ին պրոտեկտորատի հաստատման դեմ իրենց բողոքը հայտնեցին իրավաբանական ուսումնարանի ուսանողները։ Այդ նույն թվակա-

---

ного движения в Египте (1882—1956), пер. с арабского, М., 1961, стр. 53.

63 Ар-Рафии, Восстание 1919 г. в Египте, стр. 30.

64 Տե՛ս Амин Саид. Восстания арабов в XX веке, стр. 35.

65 Տե՛ս Ар-Рафии, Восстание 1919 г. в Египте, стр. 30.

66 Տե՛ս Ш. аш-Шафии, Развитие национально-освободительного движения в Египте, стр. 54.

նին եգիպտական հայրենասերները երկու անգամ մահափորձ կատարեցին սուլթան Հուսեյն Քամիլի դեմ[67]։

Պատերազմը և անգլիական պրոտեկտորատի հաստատումը ծանր անդրադարձավ Եգիպտոսի տնտեսության և ժողովրդական զանգվածների դրության վրա։ Պատերազմի հենց առաջին օրվանից Անգլիան ձգտեց Եգիպտոսի տնտեսությունը հարմարեցնել պատերազմի պահանջներին, օգտագործեց Եգիպտոսի ոսկու պաշարները։ Ավելին. եգիպտական բյուջեից հատկացումներ կատարվեցին ռազմական շինությունների՝ խրամատների, ճանապարհների և այլնի կառուցմանը[68]։ Ռազմական ծախսերի համար միջոցներ հայթայթելու նպատակով բարձրացվեցին հարկերը։ Անգլիական ռազմական իշխանությունները գյուղացիներից խլում էին հացը և գյուղատնտեսական այլ մթերքներ[69]։ Պատերազմի տարիներին Եգիպտոսում անգլիական իմպերիալիստները ստեղծեցին այսպես կոչված աշխատանքային բանակ, որի շարքերում հաշվվում էր մոտ 1,5 մլն. մարդ։ Դրանք հիմնականում գյուղացիներ էին։ Այդքան մեծ թվով աշխատունակ մարդկանց պոկելը գյուղատնտեսությունից խիստ բացասաբար անդրադարձավ վերջինիս առանց այն էլ ծանր վիճակի վրա։ Աշխատանքային բանակում ներգրավվածները կատարում էին ամենադժվար աշխատանքները։

Պատերազմի տարիներին ուժեղացավ օտարերկրյա, գլխավորապես անգլիական կապիտալի և ապրանքների հոսքը դեպի Եգիպտոս։ Իսկ դա մեծ հարված էր եգիպտական թույլ բուրժուազիայի, ինչպես նաև մանր արդյունաբերողների, բազմամիլիոն արհեստավորների ու առևտրականների շահերին։ Աշ-Շաֆիին նշում է, որ անգլիական պրոտեկտորատի տարիներին «Եգիպտոսում չմնաց ոչ մի դասակարգ, որն իր վրա չկրեր իմպերիալիզմի տնտեսական և քաղաքական ճնշումը»[70]։

---

67 Տե՛ս Ар-Рафии, Восстание 1919 г. в Египте, стр. 42—43.

68 Տե՛ս Л. Ватолина, Современный Египет, М., 1949, стр. 63.

69 Տե՛ս «Великий Октябрь и народы Востока», стр. 240.

70 Տե՛ս Ш. аш-Шафии, Развитие национально-освободительного движения в Египте, стр. 55.

Այսպիսով դժգոհությունը անգլիական քաղաքականության նկատմամբ համակել էր Եգիպտոսի սոցիալ-դասակարգային բոլոր շերտերին։ Այդ հիմքի վրա էլ ծավալվեց հակաիմպերիալիստական պայքարը առաջին համաշխարհային պատերազմից և Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո։

Պատերազմի ավարտից անմիջապես հետո Եգիպտոսի հակաիմպերիալիստական ուժերը հանդես եկան անգլիական պրոտեկտորատի վերացման և Եգիպտոսին լրիվ անկախություն տալու պահանջով։ 1918 թ. նոյեմբերի 13-ին, Կոմպյենյան զինադադարի կնքումից երկու օր անց, Եգիպտոսի ազգային ժողովի փոխ-նախագահ և հակաիմպերիալիստական շարժման ղեկավար Սաադ Զաղլուլը Աբդել Ազիզ Ֆահմիի և Ալի Շաարավի հետ միասին, որոնք նույնպես Եգիպտոսի ազգային շարժման ղեկավարներ էին, այցելեցին Եգիպտոսում անգլիական գլխավոր կոմիսար Ուինգեյտին և պահանջեցին անկախություն տալ Եգիպտոսին[71]։ Սաադ Զաղլուլը հայտարարեց Ուինգեյտին, որ պրոտեկտորատը վերացնելու և Եգիպտոսին անկախություն տալու դեպքում Եգիպտոսը պատրաստ է համաձայնության գալ Անգլիայի հետ և ճանաչել նրա որոշ իրավունքներն ու շահերը։ Ի պատասխան դրա անգլիական գլխավոր կոմիսարը նշում է. «Եգիպտոսը Թուրքիայի ստրուկն էր։ Դառնալով Անգլիայի ստրուկը մի՞թե նա ավելի վատթար պայմաններում է գտնվել»[72]։ Շաարավին նրան պատասխանում է. «Ստրկության բոլոր ձևերը մեկը մյուսին արժեն։ Մենք ուզում ենք լինել ոչ թե ձեր ստրուկը, այլ բարեկամը»[73]։ Ի վերջո Ուինգեյտը մերժում է եգիպտական ազգային առաջնորդների պահանջը, հայտարարելով, որ ինքը «այդ հարցի վերաբերյալ իր կառավարությունից կարգադրություններ չի ստացել»[74]։

---

71 Տե՛ս նույն տեղում, էջ 57—58։

72 А. Голдобин, Египетская революция 1919 г., Л., 1958, стр. 24.

73 Նույն տեղում։

74 Նույն տեղում։

Սաադ Զաղլուլը այդ այցելությունից յոթ օր անց՝ 1918 թ. նոյեմբերի 20-ին, դիմում է անգլիական իշխանություններին Անգլիա մեկնելու թույլտվությամբ։ Նրա նպատակն էր անգլիական հասարակայնությանը պարզաբանել եգիպտական պահանջների էությունը և նվաճել նրա համակրանքն ու բարյացակամ վերաբերմունքը Եգիպտոսի դատի հանդեպ։ Սակայն Անգլիան մերժում է Սաադ Զաղլուլի խնդրանքը։ Լլոյդ Ջորջի կառավարությունը պատասխանում է, որ «ազգայնականների այցելությունը ցանկալի չէ»[75]։ Անգլիական կառավարությունը մերժում է նաև եգիպտական կառավարության համանման առաջարկը[76]։

Սաադ Զաղլուլը դրանից հետո իր համախոհների հետ միասին կազմակերպեց այսպես կոչված «Եգիպտական պատվիրակությունը»՝ «Վաֆդ ալ-մսրի» («الوفد المصري»)[77], որի նպատակն էր՝ որպես եգիպտական լիազոր ներկայացուցիչ Եգիպտոսի պահանջները առաջադրել խաղաղության կոնֆերանսին։

Վաֆդը ընդունեց գործունեության ծրագիր, որը կոչվում էր «Ազգային պահանջների խարտիա»։ Այդ պահանջները հիմնականում հանգում էին հետևյալին. վերացնել բրիտանական պրոտեկտորատը և ճանաչել Եգիպտոսի անկախությունը, անգլիական զորքերը դուրս բերել Եգիպտոսից, Վաֆդը ճանաչել որպես իրավասու ազգային պատվիրակություն և թույլ տալ նրան մեկնելու Լոնդոն, ապա Փարիզ, մասնակցելու խաղաղության կոնֆերանսին և ներկայացնելու խարտիան[77]։

Վաֆդը իր պահանջների կատարմանը ձգտում էր հասնել խաղաղ միջոցներով։ Այդ կապակցությամբ Վաֆդի կանոնադ-

---

75 Л. Ватолина, Современный Египет, стр. 67.

76 Տե՛ս Amine Youssef Bey, Independent Egypt. p. 68.

77 Սկզբում լինելով լոկ պատվիրակություն, 1923 թ. «Վաֆդը» դարձավ կուսակցություն և կոչվում էր «Հիզբ ալ-Վաֆդ»։ Նա Եգիպտոսի ազգային բուրժուազիայի և լիբերալ կալվածատերերի կուսակցությունն էր և ալքի ընկնող դեր էր խաղում Եգիպտոսի քաղաքական կյանքում մինչև 1952 թ. հուլիսի 23-ի հեղափոխությունը։

77 = Տե՛ս «Великий Октябрь и народы Востока», стр. 247.

ության 2-րդ հոդվածում ասված էր. «Վաֆդի նպատակն է հասնել Եգիպտոսի անկախությանը խաղաղ և օրինական միջոցներով»[78]։ Վաֆդի զգուշությունն ու անվճռականությունը այս հարցում բացատրվում է այն հանգամանքով, որ նա շահագործողական դասակարգերի կազմակերպություն էր և չէր ցանկանում մասսաներին հանել վճռական գործողության։ Նա ձգտում էր իր նպատակներին հասնել բանակցությունների և համաձայնությունների ճանապարհով։

Երկրում սկսվեց ստորագրությունների հավաքում ի պաշտպանություն Եգիպտոսին անկախություն տալու պահանջի։ Տեղի ունեցան նաև մի շարք ցույցեր[79]։ Աշ-Շաֆիին նշում է, որ ստորագրությունների հավաքը Եգիպտոսի գյուղերում և քաղաքներում անցավ չտեսնված խանդավառությամբ[80]։ Անգլիական օկուպացիոն իշխանություններն ամեն կերպ փորձում էին խանգարել այդ կամպանիան։ Սակայն ոչինչ չստացվեց։ Երկրի հայրենասիրական ուժերը պահանջում էին անգլիացիների հեռացում Եգիպտոսից։ Հայրենասիրական և հակաիմպերիալիստական ալիքի բարձրացման այս պայմաններում 1919 թ. մարտի 1-ին հրաժարական տվեց Ռուշդի փաշայի կառավարությունը։ Ռուշդի փաշան, որ տատանողական դիրք էր գրավում և հակված էր կոմպրոմիսների և համագործակցության Անգլիայի հետ, նույնպես միացավ ազգային շարժմանը։ Այդ հանգամանքը, անշուշտ, իր դրական դերը խաղաց հակաիմպերիալիստական պայքարի հետագա ուժեղացման գործում։

Ստեղծված պայմաններում անգլիացիները դիմեցին ճնշումների և սպառնալիքների քաղաքականության։ 1919 թ. մարտի 6-ին Եգիպտոսում անգլիական ուժերի գլխավոր հրամանատար Ուատսոնը իր մոտ կանչեց Վաֆդի անդամներին և նրանց ներկայացրեց վերջնագրի բնույթ կրող հետևյալ պահանջները. չբարձրացնել պրոտեկտորատի վերացման

78 Ар-Рафии, Восстание 1919 г. в Египте, стр. 101.

79 Տե՛ս J. Marlowe, Anglo-Egyptian relations, p. 231.

80 Տե՛ս Аш-Шафии, Развитие национально-освободительного движения в Египте, стр. 59.

հարցը և նրա առկայության պայմաններում չխանգարել նոր կառավարություն կազմելուն և վերջինիս գործունեությանը։ Ուատսոնը զգուշացրեց, որ այս պայմանները խախտելու դեպքում անգլիական իշխանությունները ուժ կգործադրեն[81]։

Ուատսոնի վերջնագիրը ոչ մի ազդեցություն չունեցավ։ Եգիպտական ազգային ուժերը շարունակեցին պնդել իրենց առաջարկների վրա։ Իսկ Սաադ Զաղլուլը Անգլիայի պրեմիեր-մինիստրին ուղարկեց մի հեռագիր, որտեղ բողոքում էր Ուատսոնի նախազգուշացման դեմ, պրոտեկտորատը համարում անօրինական, պնդում Եգիպտոսին անկախություն տալու պահանջը և հետագա դեպքերի համար ամբողջ պատասխանատվությունը դնում անգլիական օկուպանտների վրա[82]։ Անգլիական կառավարությունը ոչ մի պատասխան չտվեց։ Դրա փոխարեն 1919 թ. մարտի 8-ին, այսինքն՝ Եգիպտոսում անգլիական ուժերի գլխավոր հրամանատարի զգուշացումից երկու օր անց, անգլիական իշխանությունները ձերբակալեցին Սաադ Զաղլուլին և Վաֆդի մյուս ղեկավարներին՝ Մուհամեդ Մահմուդին, Իսմաիլ Սիդկիին և Համդի ալ-Բասիլին։ Նրանց բանտարկեցին Կահիրեի Կասր ան-Նիլի զորանոցում։ Սակայն վախենալով, որ ժողովրդական զանգվածները կարող են ոտքի ելնել և ազատել բանտարկյալներին, անգլիական իշխանությունները մարտի 9-ին նրանց դուրս բերեցին Կահիրեից և աքսորեցին Մալթա[83]։

Սաադ Զաղլուլի և Վաֆդի մյուս ղեկավարների ձերբակալությունը առիթ ծառայեց 1919 թ. եգիպտական ապստամբության։

Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ ստեղծված ընդհանուր իրադրությունը նպաստեց 1919 թ. ապստամբության ծավալմանը։ Այդ բանը ընդունում են նաև մի քանի եգիպտացի պատմաբաններ, ինչպես, օրինակ, աշ-Շաֆիին։ «1919 թ. եգիպտական ապստամբությանը,—նշում է նա,— նախորդեց բանվոր դասակարգի ղեկավարությամբ կատար-

81 Տե՛ս Амин Саид, Восстания арабов в XX веке, стр. 36—37.
82 Տե՛ս նույն տեղում, էջ 37։
83 Տե՛ս Amine Youssef Bey, Independent Egypt, p. 69.

ված 1917 թ. ռուսական հեղափոխությունը, որն ուղղված էր իմպերիալիստական, կալվածատիրական և կապիտալիստական ուժերի դեմ։ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի հետևանքով մարդկային պատմության մեջ առաջին անգամ ստեղծվեց նոր տիպի պետություն—բանվորների և գյուղացիների պետություն»[84]։ Աշ-Շաֆիին շատ բարձր է գնահատում սովետական կառավարության առաջին դեկրետները և նրա հռչակած սկզբունքները։ Առաջին անգամ,—ասում է նա,—հանդես եկավ մի մեծ պետություն, որը ոչ ոքի չի ուզում գաղութացնել և կանգնել է աշխարհի բոլոր ազատասեր ուժերի կողքին[85]։ Աշ-Շաֆիին մատնանշում է, որ «այդ նոր պետությունը (Սովետական Ռուսաստանը—Ն. Հ.) Սաադ Զաղլուլին առաջարկեց օգնել զենքով, սակայն նա վախեցավ և մերժեց»[86]։

1919 թ. ապստամբությունը համաժողովրդական բնույթ էր կրում։ Նրան մասնակցեցին բանվորները, գյուղացիները, ուսանողությունը և ողջ մտավորականությունը, մանր ու միջին առևտրականները, ազգային բուրժուազիան և լիբերալ կալվածատերերը։ Աբդառառհման աշ-Ռաֆիին ժողովրդի մասնակցությունը համարում է «այդ ապստամբության գլխավոր գործոնը»[87]։ Ժողովրդական մասսաներն էին այդ ապստամբության գլխավոր շարժիչ ուժը։ Դրանումն է կայանում նրա արմատական տարբերությունը նախորդ շրջանների ելույթներից։

Սակայն ղեկավարությունը գտնվում էր դեռևս եգիպտական ազգային բուրժուազիայի ձեռքում։ Նա էր ազգային-ազատագրական շարժման հեգեմոնը։

1919 թ. մարտի 9-ին, երբ ժողովրդին հայտնի դարձավ Վաֆդի ղեկավարների ձերբակալումը, սկսվեցին հակաբրի-

---

84 Аш-Шафии. Развитие национально-освободительного движения в Египте, стр. 55—56.

85 Տե՛ս նույն տեղում, էջ 56։

86 Նույն տեղում։

87 Ар-Рафии. Восстание 1919 г. в Египте, стр. 19.

տանական ելույթները։ Առաջինը հանդես եկավ Կահիրեի ուսանողությունը։ Եգիպտական ուսանողները կազմակերպեցին ցույցեր ի պաշտպանություն Եգիպտոսի անկախության։ Անգլիական իշխանությունները դիմեցին բռնության, ձերբակալություններ կատարեցին, որոնք, սակայն, ոչ մի ազդեցություն չունեցան[88]։ Մարտի 11-ից սկսվեցին բանվորական գործադուլները։ Գործադուլ հայտարարեցին տրամվայի և երկաթուղային տրանսպորտի աշխատողները։ Նրանց միացան Ալեքսանդրիայի փարոսների, դոկերի և պետական արհեստանոցների բանվորները, որոնք ուսանողության հետ միասին կազմակերպեցին մանիֆեստացիաներ, հարձակվեցին անգլիացիների վրա և ջարդուփշուր արեցին անգլոֆիլ «Ալ-Մուկաթթամ» թերթի խմբագրությունը[89]։

Բանվոր դասակարգի մասնակցությունը նրա դասակարգային ինքնագիտակցության զարգացման և Հոկտեմբերյան հեղափոխության թողած ազդեցության արդյունք էր։ Հեղափոխությանը հաջորդող տարիներին Եգիպտոսում տարածվեցին մարքսիզմ-լենինիզմի գաղափարները, և 1918—1919 թթ. կազմավորվեցին առաջին կոմունիստական խմբակները։ Կոմունիստական խմբեր առաջացան Ալեքսանդրիայում, Կահիրեում և Պորտ-Սաիդում[90]։ Նրանք միավորեցին ինչպես եվրոպացի, այնպես էլ տեղական գիտակից բանվորներին։ 1920 թ. այս խմբերը միավորեցին և հիմնադրվեց Եգիպտոսի սոցիալիստական կուսակցությունը, որը 1921 թ. վերանվանվեց կոմունիստական կուսակցություն։

Զգալի չափով ընդլայնվեց նաև արհմիութենական շարժումը։ 1919—1921 թթ. Եգիպտոսի տարբեր քաղաքներում (Կահիրե, Ալեքսանդրիա, Սուեզ և այլն) գործում էին 90 արհմիություններ։ Նրանց մի մասը միավորվել էր Աշխա-

---

88 Տե՛ս А. Голдобин. Египетская революция 1919 г., стр. 46—47.

89 Տե՛ս Аш-Шафии, Развитие национально-освободительного движения в Египте, стр. 61.

90 Տե՛ս Л. Ватолина, Современный Египет, стр. 68.

տանքի եգիպտական կոնֆեդերացիայում, որը հարում էր պրոֆինտերնին։

Արհմիությունները մեծ աշխատանք տարան բանվոր դասակարգի գործադուլային պայքարը ղեկավարելու ուղղությամբ։ Աշ-Շաֆիին մատնանշում է, որ գործադուլի ժամանակ բանվորները գրավում էին գործարանները և ֆաբրիկաները, իսկ շատ հաճախ նրանց վրա բարձրացնում կարմիր դրոշներ[91]։

Սակայն սրանք բանվորական շարժման լոկ առաջին քայլերն էին։ Եգիպտական պրոլետարիատի դասակարգային ինքնագիտակցությունը դեռևս ցածր էր։ Բանվորների մեծ մասը երեկվա գյուղացիներն էին։

Ապստամբությունն իսկական համաժողովրդական բընույթ ստացավ, երբ ոտքի ելան ֆելլահները, դրանով իսկ այն դուրս եկավ Կահիրեից և ընդգրկեց ամբողջ Եգիպտոսը։ Հակաիմպերիալիստական ելույթներ տեղի ունեցան Ալեքսանդրիայում, Թանթում, Ռեկկայում, Բեխեյրում, Զակազիկում, Շարքիայում, Դակախլիյայում, Դամանհուրում, Մանսուրում, Մինյեում, Ասյուտում, Ասուանում և շատ ու շատ այլ վայրերում[92]։ Բնակչությունը զինված դիմադրություն էր ցույց տալիս անգլիական կանոնավոր բանակին, որը եգիպտացիների հերոսական դիմադրությունը կոտրելու համար օգտագործում էր զենքի բոլոր տեսակները, այդ թվում նաև ինքնաթիռներ։

Ապստամբները կառուցում էին բարիկադներ, իսկ որոշ վայրերում նույնիսկ փորում խրամատներ։ Անգլիական զորքերի առաջխաղացումը կանխելու համար ապստամբները մեծ նշանակություն էին տալիս հաղորդակցության միջոցների ոչնչացմանը։ Շատ վայրերում նրանք քանդում էին երկաթուղիները, հրկիզում երկաթուղային կայարանները, կտրում հեռախոսային ու հեռագրային լարերը։ Ռեկկայում նրանք

---

91 Տե՛ս Аш-Шафии, Развитие национально-освободительного движения в Египте, стр. 65.

92 Տե՛ս J. Marlowe, Anglo-Egyptian relations, p. 234.

հարձակվեցին անգլիական գնացքի վրա և հրկիզեցին կայարանը, իսկ Վաստայում՝ գրավեցին ապրանքատար գնացքը։ Նրանք հրկիզեցին նաև Կալյուբի, Թալի և այլ կայարաններ[93]։ Ապստամբների այդ գործողությունների հետևանքով երկաթուղային հաղորդակցությունը Կահիրեի, Ալեքսանդրիայի և Պորտ-Սաիդի միջև խզվեց։

1919 թ. ապստամբության բնորոշ գծերից մեկն այն էր, որ Եգիպտոսի պատմության մեջ առաջին անգամ կանայք մասնակցում էին այդ պայքարին։ Կանայք և աղջիկները Կահիրեի փողոցներում կազմակերպում էին ցույցեր «Կեցցե ազատությունը և անկախությունը» և «Կորչի պրոտեկտորատը» լոզունգների ներքո[94]։

Ապստամբները գավառներում հիմնում էին կառավարման տեղական օրգաններ, որոնք որոշ վայրերում կոչվում էին «սովետներ»[95], իսկ մի շարք տեղերում ստեղծվեցին ժամանակավոր կառավարություններ։ Այդպիսի կառավարություններ, որոնք կոչվում էին ազգային կոմիտե կամ ապստամբության կոմիտե, առաջացան Ալ-Մինյեում, Զակազիկում, Զիֆտում, Ասյուտում և այլ վայրերում։ Դրանց մեջ հատկանշական էր Զիֆտի կառավարության՝ «ապստամբության կոմիտեի» գործունեությունը Յուսուֆ Ահմեդ ալ-Գունդիի ղեկավարությամբ։ Կոմիտեն հռչակեց քաղաքի անկախությունը։ Կառավարական շենքի վրայից անգլիական դրոշն իջեցվեց և նրա փոխարեն բարձրացվեց եգիպտական ազգային դրոշը։ Ստեղծվեցին ենթակոմիտեներ, որոնք զբաղվում էին անվտանգության ապահովման, ֆինանսների և հարկերի հարցերով[96]։ Հարկերից ստացված գումարը կառավարությունը օգտագործեց ճահիճների չորացման, փողոցների բարեկարգման, կամուրջների վերանորոգման և այլ նպատակների հա-

93 Տե՛ս А. Голдобин, Египетская революция 1919 г., стр. 53—54.

94 Տե՛ս Ар-Рафии, Восстание 1919 г. в Египте, стр. 181.

95 Տե՛ս «Великий Октябрь и народы Востока», стр. 249.

96 Տե՛ս Ар-Рафии, Восстание 1919 г. в Египте, стр. 203.

մար։ «Ապստամբության կոմիտեն» այդ աշխատանքների մեջ ներգրավում էր առաջին հերթին գործազուրկներին[97]։

Համանման միջոցառումներ էին կիրառվում նաև մյուս վայրերում, որտեղ իշխանությունն անցել էր ապստամբների ձեռքը։ Իսկ Կահիրեում ստեղծվեց հայրենասիրական ոստիկանություն, որը ցույցերի և միտինգների ժամանակ հսկում էր կարգի պահպանմանը։ Ամբողջ Կահիրեի բնակչությունը կատարում էր ժողովրդական ոստիկանության կարգադրությունները[98]։ Այս բոլոր փաստերը վկայում էին, որ Եգիպտոսում Անգլիայի տիրապետությունը լուրջ սպառնալիքի տակ էր։ Ստեղծված պայմաններում Անգլիան դիմեց վճռական գործողությունների։ Ռեջինալդ Ուինգեյտի փոխարեն, որի գործունեությունից, ինչպես նշում է Ջ. Մարլոուն, դժգոհ էր պրեմիեր-մինիստր Դ. Լլոյդ Ջորջը, Եգիպտոսում գլխավոր կոմիսար նշանակվեց Ալլենբին[99]։ Վերջինս ստեղծեց պատժիչ խմբեր և նրանց գլուխն անցած մեկը մյուսի հետևից սկսեց ճնշել ապստամբության կենտրոնները։ Անգլիական զինվորները կրակում էին խաղաղ ցուցարարների վրա, հիմնահատակ անում և հրկիզում գյուղերը։ Շոբակ գյուղում անգլիական պատժիչ ջոկատները համարյա լրիվ ոչնչացրին գյուղի բնակչությանը, իսկ գյուղի շեյխին իր որդիների հետ միասին կենդանի թաղեցին[100]։ Ապստամբների հետ բարբարոսաբար վարվելու նման դեպքերը շատ շատ էին։ Դիմելով նման վայրագ միջոցների, անգլիական իշխանությունները հարկադրված էին ապստամբներին անել նաև որոշ զիջումներ։ Նրանց հանգստացնելու համար 1919 թ. ապրիլին ազատ արձակվեցին Սաադ Զաղլուլը և նրա ընկերները։ Սաադ Զաղլուլը իրավունք ստացավ մեկնելու Փարիզ և խաղաղության կոնֆերանսին ներկայացնելու իր պահանջները։

---

97 Նույն տեղում։

98 Տե՛ս Аш-Шафи, Развитие национально-освободительного движения в Египте, стр. 63.

99 Տե՛ս J. Marlowe, Anglo-Egyptian relations, p. 235.

100 Տե՛ս Л. Ватолина, Современный Египет, стр. 71.

Այս միջոցառումների շնորհիվ Անգլիային հաջողվեց ճնշել 1919 թ. ապստամբությունը։ Դրանն նպաստեց կապի բացակայությունը ապստամբական տարբեր օջախների միջև, որոնք գործում էին անջատ-անջատ և միմյանցից կտրված։ Սաադ Զաղլուլին ձերբակալելուց հետո Վաֆդին չհաջողվեց դառնալ ապստամբական շարժումը ղեկավարող իսկական և համարձակ կենտրոն։ Ընդհակառակը, ազատության մեջ մնացած Վաֆդի անդամների մեծ մասը դեմ էր վճռական, մանավանդ զինված գործողությունների և հակված էր համաձայնության գալ Անգլիայի հետ։ Այս բոլորը բացասաբար անդրադարձավ ապստամբության ելքի վրա։

Ազատվելուց հետո Սաադ Զաղլուլը մեկնեց Փարիզ։ Նա մեծ հույսեր էր կապել ԱՄՆ-ի և նրա պրեզիդենտ Վիլսոնի հետ։ Զաղլուլի և արաբական շատ գործիչների վրա իր ժամանակին մեծ տպավորություն գործեցին Վիլսոնի «14 կետերը», հատկապես այն կետը, որը քաղաքական անկախություն էր խոստանում նախկին Օսմանյան կայսրության մեջ մտնող ազգերին։ Սաադ Զաղլուլը հույս ուներ ձեռք բերել ԱՄՆ-ի աջակցությունը անգլիական պրոտեկտորատի վերացման հարցում։ Սակայն Փարիզում նրան սպասում էր դառն հուսախաբություն։ Վիլսոնը արդեն պաշտոնապես ճանաչել էր անգլիական պրոտեկտորատը Եգիպտոսի վրա[101]։

1919 թ. ապստամբության պարտությամբ Եգիպտոսի հայրենասիրական ուժերի պայքարը երկրի անկախության համար չդադարեց։ 1919—1921 թթ. երկրի մերթ այս, մերթ մյուս վայրերում տեղի էին ունենում հակաիմպերիալիստական ելույթներ, որոնք 1921 թ. դեկտեմբերին վերածվեցին մի նոր ապստամբության։ Այս անգամ անգլիացիները գործեցին ավելի արագ ու վճռական։ Ալեքսանդրիա, Սուեզ, Պորտ-Սաիդ և Իսմաիլիա ուղարկվեցին անգլիական ռազմական նավեր։ Անգլիական զորքերը գործում էին անողոքաբար։ Կահիրեի և Եգիպտոսի մյուս քաղաքների վրա, ժողովրդին վախեցնելու նպատակով, անընդմեջ պարեկություն էին կա-

101 Տե՛ս Амин Саид, Восстания арабов в XX в., стр. 39.

տարում անգլիական ինքնաթիռները[102]։ Այս բոլորի շնորհիվ հաջողվեց ճնշել նաև երկրորդ ապստամբությունը։

Սակայն անգլիացիները գիտակցում էին, որ կառավարել ինչպես նախկինում այլևս չեն կարող, որ անհրաժեշտ է որոշ փոփոխություններ մտցնել անգլո-եգիպտական հարաբերություններում։ 1922 թ. փետրվարի 22-ին Ալլենբին ստիպված էր խոստովանել, որ «պրոտեկտորատի ռեժիմը այլևս չի համապատասխանում գոյություն ունեցող իրադրությանը»[103]։ Այդ հայտարարությունից մի քանի օր անց՝ 1922 թ. փետրվարի 28-ին հրապարակվեց անգլիական կառավարության դեկլարացիան Եգիպտոսի վրա բրիտանական պրոտեկտորատը չեղյալ հայտարարելու վերաբերյալ[104]։

Այսպիսով, առաջին համաշխարհային պատերազմից հետո Եգիպտոսում ծավալված ազգային-ազատագրական պայքարը, հանուն պրոտեկտորատի վերացման, ավարտվեց Եգիպտոսի հայրենասիրական ուժերի հաղթանակով։ Դա բրիտանական տիրապետության դեմ ուղղված Եգիպտոսի ժողովրդի երկարատև պայքարի փայլուն էջերից մեկն էր։

Սակայն պրոտեկտորատի վերացումից հետո պայքարը անգլիական իմպերիալիզմի դեմ շդադարեց։ Ձևականորեն հրաժարվելով պրոտեկտորատից, Անգլիան Եգիպտոսում պահպանեց քաղաքական, ռազմական և տնտեսական տիրապետող դիրքերը։ Ոտի լրիվ և իսկական անկախություն ձեռք բերելու հարցը մնաց օրակարգի մեջ։

* * *

Իրաքում ազգային-ազատագրական շարժման դրոշը բարձրացվեց անգլիական օկուպացումից անմիջապես հետո։ Իրաքի հայրենասերները հասկացան, որ Անգլիան պատերազմի տարիներին իր տված խոստումներով խաբել է արաբ-

---

102 Տե՛ս «Великий Октябрь и народы Востока», стр. 259.

103 Տե՛ս Аш-Шафии, Развитие национально-освободительного движения в Египте, стр. 78.

104 Նույն տեղում։

ներին և նրանց օգտագործել իր նպատակների համար։ Իրաքի օկուպացումից հետո էլ Անգլիան փորձում էր հավատացնել Իրաքի ժողովրդական մասսաներին, որ իր գլխավոր նպատակը նրանց ազատություն տալն է։ Այդ է վկայում գեներալ Մոդի դեկլարացիան։ 1917 թ. մարտի 17-ին անգլիական զորքերը գեներալ Մոդի գլխավորությամբ մտան Բաղդադ։ Անգլիական գեներալը Մեծ Բրիտանիայի անունից դիմեց Բաղդադի բնակչությանը ասելով. «Այս պատերազմում մեր նպատակն է ջախջախել թշնամուն և նրան արտաքսել այս տեղերից։

Մեր բանակները ձեր հողերը և քաղաքները գրավում են ոչ թե որպես նվաճողներ ու թշնամիներ, այլ որպես ազատարարներ ու ձեր բարեկամներ։ Անգլիական կառավարությունը ձեզ չի պարտադրի օտար կարգեր։ Նրա միակ ցանկությունն է՝ կենսագործել այն, ինչին ձգտում են ձեր փիլիսոփաները և գրողները... Անգլիան և նրա դաշնակիցները կապահովեն արաբ ազգի նոր վերածնունդը, կվերակենդանացնեն նրա վեհությունն ու փառքը»[105]։

Այստեղ մեր առջև է խորամանկ Ալբիոնը իր ողջ նենգությամբ, որը ազատության ու վերածնունդի մասին էր խոսում այն պահին, երբ նույն այդ ազատության ու վերածընդի համար արդեն գերեզման էր փորված։ «Հիշյալ հայտարարության նպատակն էր,—գրում է ալ-Բազազը,—հանգստացնել ժողովրդին, արգելել նրան որևէ դիմադրություն ցույց տալու անգլիական օկուպացիոն բանակին, որը դեռ պետք է ավարտեր Բաղդադի վիլայեթի գրավումը»[106]։

Նույնպիսի խաբեություն էր նաև 1918 թ. նոյեմբերի 7-ի անգլո-ֆրանսիական դեկլարացիան, որտեղ ասված էր, թե Անգլիայի ու Ֆրանսիայի նպատակն է Միջագետքում և Սիրիայում, ինչպես նաև արաբական մյուս երկրներում, որոնք առաջիկայում լրիվ կազատագրվեն, հիմնել ազգային կառավարություններ և օգնել նրանց լուծելու իրենց առջև կանգնած

105 Амин Саид, Восстания арабов в XX веке, стр. 183—184.

106 عبد الرحمن البزاز، محاضرات عن العراق من الاحتلال حتى الاستقلال، القاهرة، ١٩٥٤، ص ٣٥

խնդիրները[107]։ Անգլիական և ֆրանսիական իմպերիալիստները հարկադրված էին հանդես գալ այսպիսի դեկլարացիայով, որպեսզի թուլացնեն իրենց հանդեպ աճող դժգոհությունը։ Դեկլարացիայի նպատակն էր, ինչպես նշում է ալ-Բազազը, թուլացնել «Սայքս-Պիկոյի» գաղտնի համաձայնագրերի հրատարակման և Պաղեստինում հրեական «օջախ» հիմնելու մասին Բալֆուրի հայտարարության առաջ բերած լարվածությունը[108]։ Բայի այդ, նման դատարկ խոստումներով փորձ էր արվում խաբել Իրաքի, ինչպես նաև արաբական մյուս երկրների ժողովրդական մասսաներին ու քաղաքական գործիչներին[109]։

Սակայն Մեծ Բրիտանիան, հակառակ իր այս հանդիսավոր հայտարարությունների, բոլորովին չէր ձգտում Միջագետքում հիմնել ազգային կառավարություն և երկրին տալ անկախություն։ Ընդհակառակը, նա առաջին օրվանից Իրաքում հաստատեց զինվորական վարչություն, որն իր ձեռքում կենտրոնացրեց ամբողջ իշխանությունը։ Բոլոր կարևոր պաշտոնները գրավեցին անգլիացիները։ Պերսի Քոկսը նշանակվեց Իրաքի քաղաքացիական կոմիսար։ Տեղերում անգլիացիներից նշանակվեցին այսպես կոչված «քաղաքական սպաներ», որոնք տեր ու տնօրեն էին իրենց հանձնված շրջաններում։ Արաբ պաշտոնյաները հեռացվեցին աշխատանքից և փոխարինվեցին անգլիացիներով ու հնդիկներով։ Շատ հայրենասերներ, որոնք դժգոհ էին անգլիական կառավարման այդ ձևից, ձերբակալվում և աքսորվում էին[110]։ Ի պատասխան այդ դժգոհությունների և Իրաքին անկախություն տալու պահանջների, Իրաքի նոր քաղաքացիական կոմիսար Ա. Վիլսոնը[111] հայտարարեց. «Իրաքը երկար դարեր կառավար-

---

107 Տե՛ս G. Antonius, The arab awakening, p. 435—436.

108 عبد الرحمن البزاز ، محاضرات عن العراق من الاحتلال حتى الاستقلال ، ص ٣٦

109 عبد الرزاق الحسنى ، تاريخ العراق السياسى الحديث ، ج ٢ ، صيدا ص ٣٤

110 عبد الرزاق الهلالى ، معجم العراق ، بغداد ، ١٩٥٣ ، ص ١٦

111 Նա այդ պոստում Պերսի Քոկսին փոխարինեց 1917 թ. և մնաց մինչև 1920 թ.։

վել է Թուրքերի կողմից և նա արագ կերպով չպիտի ձգտի ինքնուրույն կառավարման, որովհետև այդ բանում շտապելը կվնասի Իրաքին և կարող է հասցնել անցանկալի հետևանքների[112]։

Երկրում դժգոհությունը աճում էր նաև անգլիական իմպերիալիզմի ներքին, հատկապես, տնտեսական քաղաքականության հետևանքով։ Հարկերի ամբողջ ծանրությունը դրվեց աշխատավորական մասսաների ուսերին։ 1919 թ. անցկացրած հողային ռեֆորմը խոշոր ֆեոդալներին լայն հնարավորություն տվեց ունեզրկելու գյուղացիական մասսաներին[113], աշխատավորների տնտեսական վիճակը վատթարացավ, հաստատվեց անգլիական կապիտալի տիրապետություն Իրաքի էկոնոմիկայում և այլն։ Այս բոլորը միասին վերցրած է՛լ ավելի ուժեղացրեց դժգոհությունը Իրաքում ընդդեմ անգլիական օկուպանտների։

Երկրում սկսվեցին հուզումներ։ 1917 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին հակաանգլիական զինված ելույթներ տեղի ունեցան Կուֆում և Աբու-Սուխեյրում[114]։ 1918 թ. հակաբրիտանական խոշոր ելույթ տեղի ունեցավ Նեջեֆում։ Նեջեֆցիները, դժգոհ անգլիական կառավարության քաղաքականությունից, մարտի 21-ին սպանեցին բրիտանական կառավարիչ կապիտան Մարշալին։ Անգլիական զորքերը պաշարեցին քաղաքը, և ապստամբ նեջեֆցիները 40 օր դիմադրում էին անգլիական զավթիչներին։ Սակայն նրանք հարկադրված եղան անձնատուր լինել, և անգլիացիները դաժան հաշվեհարդար տեսան նրանց հետ։ 11 հոգու կախեցին, 5 հոգու դատապարտեցին ցմահ բանտարկության և ավելի քան 100 ականավոր նեջեֆցիների աքսորեցին[115]։ 1919 թ. հունվարին շերիֆ Հուսեյնի բանակում ծառայող իրաքցի սպաները դիմեցին անգլիական իշխանություններին, ընդգծելով, որ

---

112 عبد الرحمن البزاز ، محاضرات عن العراق ، ص ٢٨

113 Տե՛ս Л. Котлов, Национально-освободительное восстание 1920 г. в Ираке, стр. 78.

114 Տե՛ս նույն տեղում, էջ 100։

115 عبد الرحمن البزاز ، محاضرات عن العراق ، ص ٣٠

«Իրաքի ոչ մի մասը չպետք է գտնվի օտարերկրյա կառավարման ներքո»[116]։ Դրությունը լարված էր նաև Բաղդադում, Մոսուլում և այլ վայրերում։ 1919 թ. Բաղդադի սպաները պահանջեցին Իրաքում անհապաղ հաստատել ազգային կառավարություն[117]։ Այդ նույն թվականին անգլիացիների դեմ ապստամբեցին նաև Մունթաֆիկի նահանգի արաբական բանի մալիք և քրդական գոյան ցեղերը, որոնք, սակայն, հաջողություն չունեցան[118]։

Հուզումներ սկսվեցին Իրաքյան Քուրդիստանում և հատկապես Սուլեյմանիեում։ 1919 թ. մայիսին շեյխ Մահմուդի ղեկավարությամբ բռնկվեց ապստամբություն, որը ծավալվելով ընդգրկեց Կիրկուկը, Հալաբիայի և Ռանիայի շրջանները։ Ապստամբները առաջ էին քաշում անկախ քրդական պետության ստեղծման հարցը[119]։ Անգլիացիները ապստամբների դեմ նետեցին հետևակային երկու բրիգադ, հեծելազոր, հրետանի ու ինքնաթիռներ։ Նրանց հաջողվեց համառ մարտերից հետո կոտրել ապստամբների դիմադրությունը և հունիսի 18-ին ներխուժել Սուլեյմանիա։ Շեյխ Մահմուդը գերի ընկավ և աքսորվեց Հնդկաստան[120]։

Զենքի օգնությամբ և այլ միջոցներով ճնշելով ժողովրդական ելույթները, անգլիական զավթիչները լավ էին հասկանում, որ լարվածությունը թուլացնելու համար անհրաժեշտ են որոշ զիջումներ։ 1918—1919 թթ. անգլիական իշխանությունները Իրաքում անցկացրին այսպես կոչված հանրաքվե։ Իջեցված գաղտնի ցուցումների համաձայն քաղաքական կոմիսարները պետք է ստիպեին իրաքցիներին արտահայտվելու բրիտանական տիրապետության և Պերսի Քոկսին Իրաքի պետության ղեկավար ընտրելու օգտին[121]։ Կազմակերպելով

116 E. Kadourie, England and the Middle East, London, 1956, p. 179.

117 Տե՛ս նույն տեղում, էջ 180։

118 Տե՛ս Л. Котлов, Национально-освободительное восстание 1920 г. в Ираке, стр. 103.

119 Տե՛ս նույն տեղում, էջ 105։

120 Տե՛ս И. Левин, Ирак, М., 1937, стр. 116.

121 Տե՛ս Амин Саид, Восстания арабов в XX веке, стр. 185.

«Հանրաքվե» անգլիական իշխանությունները ժողովրդական մասսաներին թույլ չտվեցին մասնակցելու նրան և իրենց կարծիքը հայտնելու։ Դրա փոխարեն նրանք ստեղծեցին կալվածատերերից, ցեղերի առաջնորդներից և առևտրականներից բաղկացած ասամբլեաներ, որոնք պետք է հանդես գային Իրաքի ողջ ժողովրդի անունից։ Հանրաքվեն բոլոր վայրերում միատեսակ արդյունք չտվեց։ Այն վայրերում, որտեղ շեյխերը և կալվածատերերը, ինչպես նշում է Ֆ. Այերլենդը, կախում ունեին անգլիացիներից, որտեղ նրանք հող էին ձեռք բերել շնորհիվ բրիտանական իշխանությունների, հանրաքվեի մասնակիցները արտահայտվեցին հօգուտ բրիտանական կառավարման և Պերսի Քոկսի[122]։ Այդպես եղավ Ամարայում, Քուրնայում և Նասիրիյայում[123]։ Բասրան նույնպես արտահայտվեց հօգուտ բրիտանական կառավարման, որովհետև այնտեղ քվեարկում էին այնպիսի մարդիկ, որոնք առանձնապես շահել էին բրիտանական օկուպացումից[124]։ Դրանք մեծ մասամբ առևտրականներ և կոմպրադորական բուրժուազիայի ներկայացուցիչներ էին։

Սակայն մյուս վայրերում, հակառակ անգլիական ռազմական իշխանությունների բոլոր ջանքերին, հանրաքվեն չտվեց սպասած արդյունքները։ Ինչպես գրում է Ամին Սաիդը, Իրաքի ժողովուրդը լսել անգամ չէր ուզում Պերսի Քոկսի և անգլիական վերահսկողության մասին։ Շիիների գլխավոր մուջթահիդ՝ աստվածաբան շեյխ Մուհամմեդ Թակի աշ-Շիրազին հանդես եկավ Իրաքի ժողովրդին ուղղված մի ֆեթվայով, որտեղ ասված էր. «Ոչ մի մուսուլման իրավունք չունի ընտրել ոչ-մուսուլմանին, որպես հավատացյալների կառավարիչ»[125]։ Աշ-Շիրազիի այս ֆեթվան լայն արձագանք գտավ ամբողջ Իրաքում և նպաստեց հակաանգլիական տրամադրությունների ուժեղացմանը։ Դեպքերի զարգացումն անգլիացի-

---

122 Տե՛ս Ph. Ireland, Iraq. A study in political development, London, 1937, p. 166.

123 Տե՛ս նույն տեղում, էջ 167։

124 Տե՛ս նույն տեղում, էջ 168։

125 Амин-Саид, Восстания арабов в XX веке, стр. 185.

ների համար ոչ նպաստավոր ընթացք ունեցավ հատկապես Քերբելայում, Նեջեֆում, Կադիմայնում և Բաղդադում։ Քերբելայի մուջթահիդը հայտարարեց, որ նա, ով մուսուլմանական կառավարությունից բացի այլ կառավարություն կցանկանա, անհավատ է[126]։ Իսկ Կադիմայնի ուլեմները հայտարարեցին. «Նա, ով կքվեարկի հօգուտ բրիտանական օկուպացման, մղկիթից կհեռացվի»[127]։ Անգլիացիները նույնպիսի ճախողում կրեցին նաև Նեջեֆում։ Հանրաքվեի արդյունքների վրա ազդելու նպատակով այստեղ ժամանեց Ա. Վիլսոնը։ Սակայն դա ոչ մի արդյունք չտվեց։ Նեջեֆցիներն արտահայտվեցին Իրաքում արաբական իսլամական պետություն ստեղծելու օգտին Հուսեյն թագավորի որդիներից մեկի գլխավորությամբ[128]։ Դրությունը խիստ լարված էր նաև Բաղդադում, որը Ֆ. Այերլենդը համարում էր հակաբրիտանական ագիտացիայի կենտրոն։ Անգլիացիները դիտավորյալ հանրաքվեն որոշել էին Բաղդադում անցկացնել վերջում, որպեսզի մյուս տեղերի արդյունքներն ազդեն բաղդադցիների վրա։ Սակայն այդ չստացվեց. բրիտանական տիրապետության կողմնակիցները փոքրամասնություն էին կազմում և ոչ մի հաջողություն չունեցան։ Բաղդադում տեղի ունեցան մի շարք միտինգներ, որոնց ժամանակ առաջարկվեց ստեղծել արաբական կառավարություն, առանց եվրոպական որևէ պետության հովանավորության[129]։ Բաղդադի սուննի և շիա համայնքի ներկայացուցիչներն ընդունեցին դեկլարացիա՝ ըստ որի Իրաքի ղեկավարը պետք է լինի մահմեդական թագավոր՝ Հուսեյն թագավորի որդիներից մեկը և նրա իշխանությունը պետք է սահմանափակված լինի օրենսդրությամբ[130]։ Դեկլարացիան անգլիացիներին դուր չեկավ։ Նրանք այն չեղյալ հայտարարեցին և Բաղդադում կատարեցին ձերբակալություններ։

---

126 Տե՛ս Kedourie, England and the Middle East, p. 185.

127 Նույն տեղում։

128 عبد الرحمن البزاز ، محاضرات عن العراق ، ص ٣٣

129 Տե՛ս Ph. Ireland, Iraq, p. 171.

130 Տե՛ս նույն տեղում։

Մի հանգամանքի վրա ևս պետք է ուշադրություն դարձնել։ Թեև մի շարք վայրերում ասամբլեաները արտահայտվեցին հօգուտ բրիտանական իշխանության, սակայն, ինչպես իրավացիորեն նշում է Ֆ. Այերլենդը, դա դեռևս վկայություն չէր, որ այդ շրջանների ազգաբնակչությունը նույնպես կողմնակից էր բրիտանական տիրապետության[131]։ Իրաքի ողջ աշխատավորական մասսաները դեմ էին բրիտանական գաղութային տիրապետությանը։ Նրան կողմնակից էին միայն ֆեոդալ-շեյխերի վերնախավը և բուրժուազիայի որոշ շրջաններ, հատկապես կոմպրադորական բուրժուազիան, որոնց բարեկեցությունը և իշխանությունը կախված էր անգլիական տիրապետությունից։

Սակայն Անգլիան հաշվի չնստեց Իրաքի ժողովրդի ցանկության հետ։ Նա ոչ մի գնով չէր ուզում հրաժարվել Իրաքից և որոշեց «օրինականացնել» իր գաղութային տիրապետությունը։

1920 թ. ապրիլի 25-ին Սան Ռեմոյում տեղի ունեցավ Ազգերի լիգայի բարձրագույն խորհրդի նիստը։ Այստեղ Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան իրար միջև բաժանեցին արաբական երկրները։ Իրաքի և Պաղեստինի մանդատը, ինչպես ասվեց, տրվեց Անգլիային, իսկ Սիրիայի և Լիբանանի մանդատը՝ Ֆրանսիային։

Սան Ռեմոյի կոնֆերանսի որոշումները և անգլիական մանդատի հաստատումը ծանր հարված էին Իրաքի ժողովրդական զանգվածների ազգային ձգտումներին։ Եվ բնական է, որ Իրաքի ամենալայն շրջանները խոր դժգոհությամբ ու զայրույթով ընդունեցին այդ լուրը։ Անգլիական մանդատի հաստատումը, նշում է ալ-Հասանին, «մի մահացու հարված էր ժողովրդի սպասումներին»[132] և չափազանց շիկացրեց քաղաքական մթնոլորտը Իրաքում։ «Սան Ռեմոյի որոշումները,— գրում է ալ-Բազազը,—Իրաքում պայքարի սկսման խթան հանդիսացան»[133]։ Առաջադիմական ու հայրենասիրական ու-

131 Տե՛ս նույն տեղում, էջ 173։

132 عبد الرزاق الحسنى ، تاريخ العراق ، ج ١ ، ص ٣٥

133 عبد الرحمن البزاز ، محاضرات عن العراق ، ص ٣٦

ժերը իրենց ջանքերը միացնում են բրիտանական լծի դեմ դինված պայքար սկսելու համար։ Այդ նպատակով Բաղդադում, Նեջեֆում, Մոսուլում և Իրաքի մյուս խոշոր քաղաքներում գումարվեցին գաղտնի ու բացահայտ ժողովներ, որոնք մեծ չափով նպաստեցին հայրենասիրական ուժերի համախմբմանը։ Սան Ռեմոյի կոնֆերանսից ընդամենը երկու ամիս անց՝ 1920 թ. հունիսի 30-ին Իրաքում սկսվեց ազգային մեծ ապստամբություն։

* * *

1920 թ. ապստամբությունը տրամաբանական շարունակությունն էր Իրաքի ժողովրդի ազատագրական այն պայքարի, որ երկրում ծավալվեց բրիտանական իմպերիալիզմի դեմ 1917 թվականից սկսած։ Ապստամբությունը նախապատրաստվել էր նախորդ պայքարի ամբողջ ընթացքով և նրա պատճառները հենց այնտեղ էլ պետք է փնտրել։ Պատճառներից առաջինն ու գլխավորը բրիտանական գաղութային լծի՝ մանդատի հաստատումն էր Իրաքում։ Իրաքի դեմոկրատական ուժերը պահանջում էին ազգային անկախություն և ազգային պետության հիմնում։ Անգլիական իմպերիալիստները ոչ միայն չընդառաջեցին նրանց այդ օրինական պահանջներին, այլ, ընդհակառակը, իրենց մանդատը հաստատեցին Իրաքի վրա։

Ապստամբության մյուս պատճառը բրիտանական օկուպացիոն իշխանությունների ներքին քաղաքականությունն էր։ Նրանք Իրաքի դոները լայնորեն բացեցին անգլիական կապիտալի առջև, որը իր տիրապետությունը հաստատեց տնտեսության բոլոր ոլորտներում։ Դա մեծ հարված էր Իրաքի առանց այն էլ թույլ ազգային բուրժուազիայի շահերին։ Անգլիացիները չիրականացրին Իրաքի «տնտեսության բարգավաճման իրենց խոստումնալից ծրագրերից և ոչ մեկը»[134]։ Օկուպացիոն իշխանությունները, ընդհակառակը, ամեն կերպ

134 عبد الرحمن البزاز ، محاضرات عن العراق ، ص ٣٧

արգելակում էին դեմոկրատական կարգերի հաստատմանը և, ինչպես իրավացիորեն նշում է ալ-Հիլալին, Իրաքում վարում էին տեռորի ու բռնության քաղաքականություն[135]։

Ծանրացավ նաև աշխատավորական մասսաների վիճակը, աճեց գործազրկությունը, ավելացան հարկերը։ Ռ. Բուլարդը նշում է, որ Իրաքում հարկերը բնակչությունից հավաքում էին չտեսնված դաժանությամբ[136]։ Անգլիացիների դեմ ատելություն էր առաջացնում նաև այն հանգամանքը, որ պետական հիմնարկներում և երկաթուղում մեծ թվով հնդիկ պաշտոնյաներ էին աշխատում, այն դեպքում, երբ երկրի ներսում, ինչպես նշեցինք, աճում էր գործազրկությունը։ Հակաբրիտանական տրամադրությունները ուժեղացան նաև անգլիական գաղութային իշխանությունների՝ արաբական ցեղերին միմյանց դեմ լարելու և նրանց միջև երկպառակություն սերմանելու քաղաքականության հետևանքով[137]։

Ապստամբության առաջացման և ծավալման գործում նպաստավոր դեր խաղաց նաև միջազգային իրադրությունը և առաջին հերթին Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով ստեղծված իրավիճակը։

Այժմ անդրադառնանք 1920 թ. ապստամբության շարժիչ ուժերի հարցին։

Այդ ապստամբության հիմնական շարժիչ ուժը գյուղացիական մասսաներն էին։ Շարժմանը մասնակցում էին նաև բանվորները։ Նաբիհ Ամին Ֆարիսը և Մուհամմեդ Թաուֆիկ Հուսեյնը նշում են, որ «Լիբանանում, Սիրիայում և Իրաքում բանվորները... միշտ էլ գտնվել են ազգային պայքարի առաջին գծի վրա»[138]։ Սակայն այս շրջանում Իրաքի բանվոր դասակարգը դեռևս թույլ էր։ Նա վատ էր կազմակերպված, չուներ իր քաղաքական կուսակցությունը, այդ պատճառով

---

135 عبد الرزاق الهلالي ، معجم العراق ، ص ١٦

136 R. Bullard, Britain and the Middle East from the earliest times to 1950, London, 1951, p. 85.

137 عبد الرحمن البزاز ، محاضرات عن العراق ، ص ٣٠

138 Nabih Faris, Mohammed Husayn, The crescent in crisis, Kansas, 1955, p. 51.

էլ դեռևս չէր կարող ղեկավար դեր խաղալ ազգային-ազատագրական պայքարում։

1920 թ. ապստամբությանը մասնակցում էին նաև ազգային բուրժուազիան, արհեստավորությունը և ազգային ինտելիգենցիան։ Ազգային բուրժուազիան և արհեստավորությունը նեղվում էին օտարերկրյա, գլխավորապես անգլիական կապիտալի ճնշումից և հանդես էին գալիս ազգային անկախության պահանջով։ Բրիտանական լծից ազատվելը և Իրաքյան անկախ պետության ստեղծումը նպաստավոր պայմաններ կստեղծեին նրանց քաղաքական ու տնտեսական զարգացման համար։

Ինչ վերաբերում է ֆեոդալներին և ցեղերի ղեկավարներին, ապա պետք է նշել, որ նրանց վերնախավը, ինչպես նաև կոմպրադորական բուրժուազիան, որոնք կապված էին բրիտանական իշխանությունների հետ և նրանց օգնությամբ պահպանում էին իրենց դիրքը, դեմ էին այդ ապստամբությանը և չէին մասնակցում նրան։ Սակայն ֆեոդալների միջին և ցածր խավը դեմ էր անգլիական տիրապետությանը և ակտիվորեն մասնակցեց 1920 թ. ապստամբությանը։

Ապստամբությանն ակտիվ մասնակցություն ունեցավ նաև շիա հոգևորականությունը։ Նա դժգոհությամբ ընդունեց անգլիական «քաղաքական սպաների» իշխանության հաստատումը, որը սպառնում էր ժողովրդական մասսաների շրջանում հոգևորականության ազդեցությանը։ Բացի այդ, ինչպես նշում է Լ. Կոտլովը, «օկուպանտների կողմից շիա ցեղերի թալանումը պակասեցրեց «սուրբ վայրերի» եկամուտները։ Այս բոլորը շիա հոգևորականությանը պայքարի մղեց ընդդեմ «անհավատների»[139]։

Այս խմբերի՝ շիա հոգևորականության, միջին և մանր ֆեոդալների ու ցեղապետերի ազդեցությունը Իրաքում շատ մեծ էր և նրանց ձեռքում էր գտնվում 1920 թ. ապստամբության ղեկավարությունը։

---

139 Л. Котлов, Национально-освободительное восстание 1920 г. в Ираке, стр. 89.

Ապստամբության ժամանակ Իրաքում հիմնականում գործում էին երկու կազմակերպություն՝ «Ալ-Ահդ-ալ Իրաքի» (العهد العراقي)՝ «Իրաքյան պատգամ» և «Հարաս ալ-իսթիքլյալ» (حرس الاستقلال)՝ «Անկախության պահապան»։ Նրանց կազմակերպական ձևավորումն ավարտվեց 1919 թ.[140]։ «Ալ-Ահդը», որը հիմնականում բաղկացած էր սուննի ֆեոդալական վերնախավից, կանգնած էր պրոանգլիական դիրքերի վրա։ Նրա ղեկավարներն էին Նուրի Սաիդը, Ջաֆար ալ-Ասքարին, Ջամիլ ալ-Միդֆային և ուրիշներ, որոնք արդեն իրենց բախտը կապել էին բրիտանական իմպերիալիստների հետ[141]։ «Ալ-Ահդը» իր ծրագրերի մեջ մտցրել է Իրաքի անկախության պահանջը, սակայն այդ պահանջը ի չիք էր դառնում ծրագրի երկրորդ կետով, որտեղ ասված էր, որ նա իր նպատակների իրագործմանը ձգտում է հասնել Անգլիայի օգնությամբ[142]։

«Հարաս ալ-իսթիքլյալը» ավելի ձախ դիրք էր գրավում։ Նրա կազմի մեջ մտնում էին հայրենասեր մուջթահիդները, ցեղերի շեյխերը, ազգային բուրժուազիայի և մտավորականության ներկայացուցիչները։ Նա հանդես էր գալիս հանուն Իրաքի լրիվ անկախության[143]։ Նա ոչ միայն Անգլիայից օգնության պահանջ չէր դնում, այլև կարծում էր, որ անգլիական տիրապետությունից ազատագրվելու համար կանգ չպետք է առնել նույնիսկ զինված ապստամբության առաջ։ Հենց այստեղ էլ պետք է փնտրել այդ երկու կազմակերպությունների հիմնական տարբերությունը և ոչ թե այն բանում, որ «ալ-Ահդը» սուննիների կազմակերպություն էր, իսկ «Հարաս ալ-իսթիքլյալը»՝ շիաների, ինչպես սխալ կերպով պնդում է Է. Կեդուրին[144]։

1920 թ. ապստամբության ղեկավարությունը փաստորեն գտնվում էր «Հարաս ալ-իսթիքլյալի» ձեռքում։

---

140 E. Kedourie, England and the Middle East, p. 191.

141 Տե՛ս նույն տեղում։

142 Տե՛ս Л. Котлов, Национально-освободительное восстание 1920 г. в Ираке, стр. 94.

143 E. Kedourie, England and the Middle East, p. 191.

144 Տե՛ս նույն տեղում։

Ապստամբության դրոշը բարձրացվեց Ռումայսայում (Միջին Եփրատ) 1920 թ. հունիսի 30-ին։ Այդ օրը բանի հաջիմ ցեղի մի ճյուղի՝ զավալիմի մարդիկ հարձակվեցին Ռումայսայի կառավարական շենքի վրա և ազատեցին իրենց շեյխ Սաալան Աբու ալ-Ջունին, որին ձերբակալել էին անգլիական իշխանությունները հարկը չվճարելու պատրվակով[145]։ Ապստամբները կոտորեցին բանտի պահապաններին և Ռումայսան անցավ նրանց հսկողության տակ։ Անգլիական կառավարիչը հարկադրված եղավ կայազորի հետ միասին ամրանալ Ռումայսայի վարչական շենքում (սերա) և պաշտպանողական մարտեր մղել։

Ռումայսայի դեպքերի լուրը արագորեն տարածվեց Իրաքում և համաիրաքյան ապստամբության ազդանշան դարձավ։ Ապստամբական ուժերը սկսեցին միավորվել՝ միասնական ճակատով հանդես գալու համար։ «Ցեղերը,—գրում է Ֆարիկ ալ-Մազհուրը,—իրենց թշնամությունը մոռացան և սկսեցին բարեկամանալ, որպեսզի միասնական ուժերով անկախություն ձեռք բերեն»[146]։ Շուտով ապստամբությունը տարածվեց ամբողջ Ռումայսայի շրջանում։ Ապստամբները հուլիսի 1-ին մարտի բռնվեցին անգլիական կայազորին օգնության եկած բրիտանական մի ջոկատի հետ և ետ մղեցին նրա հարձակումը։ Նրանք քանդեցին երկաթուղին և Ռումայսան կտրեցին մյուս շրջաններից։ Այդպիսով, անգլիացիները զրկվեցին երկաթուղով իրենց պաշարված կայազորին օգնություն հասցնելու հնարավորությունից։ Ռումայսայից հետո ապստամբեցին Սամավայի ցեղերը, պաշարեցին անգլիական կայազորը, քանդեցին երկաթուղին Սամավայի հյուսիսում ու հարավում և հարձակվեցին Բասրայից Բաղդադ մեկնող գնացքի վրա[147]։ Հուլիսի 2-ին ապստամբեց Նեջեֆը։ Երբ այստեղ հասավ Ռումայսայի դեպքերի լուրը, ապստամբները հավաքվեցին Ալիի

---

145 عبد الرحمن البزاز ، محاضرات عن العراق ، ص ٣٤

146 فريق المزهر ، الحقائق الناصعة فى الثورة العراقية سنة ١٩٢٠ ونتائجها ، ج ١ ، بغداد ، ١٩٥٢ ، ص ٩٨

147 عبد الرحمن البزاز ، محاضرات عن العراق ، ص ٣٤

մղկիթի բակում և արաբական դրոշ պարզեցին[148]։ Քերբելայում շեյխի հրամանով ապստամբները քաղաքից դուրս վռնդեցին անգլիացիներին և քաղաքն անցավ ապստամբների ձեռքը[149]։ Ապստամբ ցեղերը սկսեցին տարբեր վայրերում հարձակման անցնել։ Ռումայսայից 6 մղոն հեռու գտնվող Արսիյաթում տեղի ունեցան կատաղի մարտեր, որի ժամանակ ապստամբները ցույց տվին ռազմական այնպիսի հմտություն, որ անգլիացիները զարմացել էին[150]։ Այնուհետև ապըստամբները շրջապատեցին Կուֆը և շարժվեցին դեպի Հիլլ։ Կուֆի շրջապատումը վերացնելու և Հիլլի վրա հարձակումը կանխելու նպատակով Հիլլից 800—900 հոգուց բաղկացած անգլիական մի պատժիչ ջոկատ ուղարկվեց նրանց դեմ։ Ապստամբները և անգլիական ուժերը իրար հանդիպեցին Ռուստամիայում (Ռառնաջիյա), որտեղ տեղի ունեցավ մի ճակատամարտ, որը 1920 թ. ապստամբության ամենակարևոր դեպքերից մեկն է։ Հուլիսի 24-ին ապստամբները ջախջախիչ հարված հասցրին անգլիացիներին, և վերջիններս փախուստի դիմեցին[151]։ Այդ ճակատամարտում անգլիացիները կորցրին իրենց ուժերի $^2/_3$-ը։

Ապստամբությունը ընդգրկեց Հիլլի, էդ-Դիվանայի, Նեջեֆի, Քերբելայի, Սամավայի, Կուֆի, Եփրատի և Դիյալայի շրջանները։ «Իրականում,—գրում է Ֆ. Այերլենդը,—ամբողջ միջին Եփրատը ապստամբել էր»[152]։ Հուզումներ տեղի ունեցան նաև Բաղդադում, Մոսուլում և այլ վայրերում։ Ճիշտ է, բանը այստեղ ապստամբության չհասավ, սակայն եղած հուզումները քիչ մտահոգություն չպատճառեցին անգլիական իշխանություններին[153]։ Անգլիական իշխանությունները Բաղդադում հուզումների առաջն առնելու և ժողովրդին սարսափեց-

148 Տե՛ս Амин Саид, Восстания арабов в XX веке, стр. 188.

149 فريق المزهر ، الحقائق الناصعة فى الثورة العراقية ، ج ١ ، ص ٢٢٦

150 عبد الرحمن البزاز ، محاضرات عن العراق ، ص ٣٤

151 Տե՛ս Л. Котлов, Национально-освободительное восстание 1920 г. в Ираке, стр. 133.

152 Ph. Ireland, Iraq, p. 267.

153 Տե՛ս „Journal des debats", 12/VII 1920.

նելու համար 5 ակտիվ գործիչների ձերբակալեցին և 1920 թ. օգոստոսի 17-ին գնդակահարեցին[154]։

Այսպիսով անգլիական տիրապետությունը Իրաքում լուրջ վտանգի առաջ էր կանգնած։ Անգլիական կառավարությունը շտապ միջոցներ ձեռք առավ դրությունը փրկելու համար։ Նա լրացուցիչ Իրաք տեղափոխեց մոտ 5000 անգլիացի և 25000 հնդիկ զինվորներ, ռազմա-օդային ուժեր ու հարձակման անցավ ապստամբների դեմ[155]։ Բացի այդ, ազատագրական շարժումը պառակտելու համար նա լայն չափերով կիրառեց ցեղապետերին կաշառելու և զանազան խոստումներ տալու մեթոդը։ Այս բոլորն իր արդյունքները տվեց։ Սեպտեմբերից սկսած դեպքերը զարգանում են հօգուտ գաղութարարների, որոնց և հաջողվում է 1920 թ. նոյեմբերին ճնշել ապստամբությունը։

Ապստամբությունը պարտվեց, որովհետև Անգլիայի ռազմական ու տնտեսական պոտենցիալը ավելի մեծ էր, քան ապստամբներինը, ապստամբությունը վատ էր կազմակերպված։ Չնայած գործադրված բազմաթիվ ջանքերին, չհաջողվեց տարբեր ցեղերի միջև ստեղծել իսկական միասնություն։ Ապստամբներին չմիացան երկրի բոլոր շրջանները, հատկապես Բասրան ու հարավային մի շարք շրջաններ և Իրաքյան Քուրդիստանը։ Ապստամբության պարտության գործում իր բացասական դերը խաղաց ղեկավարության ոչ վճռական դիրքը։ Ապստամբության ղեկավարությունը գտնվում էր ֆեոդալական տարրերի ձեռքում, և սրանք վախեցան, որ ապըստամբությունը հետագա ծավալման դեպքում կարող է ընդունել նաև ագրարային բնույթ և վերածվել գյուղացիների պայքարի՝ ընդդեմ ֆեոդալների։

Այս բոլորը միասին վերցրած հանգեցրին 1920 թ. ապըստամբության պարտությանը։

Ապստամբներին չհաջողվեց լուծել իրենց առջև դրված հիմնական խնդիրը՝ նվաճել Իրաքի քաղաքական անկախու-

---

154 فريق المزهر ، الحقائق الناصعة فى الثورة العراقية ، ج ١ ، ص ١٣٦

155 Տե՛ս Ph. Ireland, Iraq, p. 272.

թյունը։ Իրաքում պահպանվեց բրիտանական տիրապետությունը՝ մանդատի ձևով։

Այնուամենայնիվ, 1920 թ. ապստամբությունն իզուր չանցավ։ Մեծ Բրիտանիան հարկադրված եղավ փոխել իր տակտիկան։ Ա. Վիլսոնի փոխարեն գերագույն կոմիսար նշանակվեց Պերսի Քոկսը, որը Իրաք ժամանեց 1920 թ. հոկտեմբերին։ Նրա կարծիքով Անգլիան իր վերահսկողությունը կարող էր իրականացնել նվազ ակնհայտ մեթոդներով[156], մի բան, որ իր արտացոլումը գտավ «ազգային» կառավարության ստեղծման փաստի մեջ։ Պահպանելով մանդատով իրենց տրվող բոլոր իրավունքները, բրիտանական գաղութարարները տիրող վերնախավի ներկայացուցիչներից ստեղծեցին «ազգային» կառավարություն և տեղերում իշխանության ղեկավարներ նշանակեցին արաբներին։ Սակայն ազգային մինիստրներին և տեղական նահանգապետներին կից նշանակվեցին անգլիական «խորհրդատուներ», որոնք և իսկական տերերն էին։ Բացի այդ, ազգային կառավարությունը գտնվում էր Գերագույն կոմիսարի հսկողության տակ, որի վճիռները վերջնական էին[157]։

1921 թ. մարտի 18-ին Անգլիայի գաղութների մինիստր Ուինստոն Չերչիլը Կահիրեում անգլիական կառավարության հանձնարարությամբ գումարեց մի խորհրդակցություն՝ նվիրված Մերձավոր արևելքի հարցերին։ Այդ խորհրդակցությունում որոշվեց Իրաքի թագավոր առաջադրել Հուսեյնի որդի Էմիր Ֆեյսալին[158], որը հայտնի էր իր պրոանգլիական հայացքներով։ 1921 թ. օգոստոսի 23-ին տեղի ունեցավ Ֆեյսալի պաշտոնական թագադրությունը։ Դրանով իրաքյան արաբական «պետության» ստեղծման ամբողջ ֆարսը ավարտվեց։

Չնայած Իրաքում 1921 թ. ստեղծվեց թագավորություն, նա շարունակում էր մնալ Անգլիայի ենթամանդատային տերիտորիան, ուստի և շարունակվեց պայքարը ազգային անկախության համար։

---

156 Տե՛ս Ph. Ireland, Iraq, p. 335.

157 Տե՛ս նույն տեղում, էջ 280։

158 عبد الرزاق الهلالى ، معجم العراق ، ص IV

* * *

1918—1920 թթ. Սիրիան հակաիմպերիալիստական պայքարի խոշոր կենտրոն էր[159]։ Արաբները Սիրիան դիտում էին որպես իրենց ապագա փառքի և հզորության ամուր հենարան և մեծ հույսեր կապում նրա անկախության նվաճման հետ։

Սակայն անհրաժեշտ էր Սիրիան ազատագրել նախ թուրքական տիրապետությունից։ Թուրքերին Սիրիայից դուրս վռնդելու գործում ամենաակտիվ մասնակցություն ունեցավ արաբական բանակը էմիր Ֆեյսալի հրամանատարությամբ, որը բաղկացած էր Սիրիայի բոլոր շրջանների բնակիչներից։ Բանակում, հատկապես հրամանատարական կազմում, զգալի դեր էին խաղում նաև Իրաքի արաբները։ Արաբական բանակը ջախջախիչ հարվածներ հասցնելով թուրքերին Հաուրանում և Ջեբել-Դրուզում, 1918 թ. սեպտեմբերին մոտեցավ Դամասկոսին[160]։ Թուրքերը չկարողացան կազմակերպել դիմադրություն և 1918 թ. սեպտեմբերի 30-ին թողեցին Դամասկոսը[161]։ Քաղաքի բնակչությունը մեծ խանդավառությամբ ընդունեց արաբական բանակի մուտքը Օմայանների խալիֆայության երբեմնի մայրաքաղաքը։ Դամասկոսի կառավարական շենքի վրա բարձրացվեց Հեջազի թագավոր Հուսեյնի եռագույն արաբական դրոշը[162]։ Այնուհետև անգլո-արաբական զորքերը շարժվեցին դեպի հյուսիս, մեկը մյուսի ետևից ազատագրելով Համսը, Համան և այլ վայրեր[163]։ Նրանք մոտեցան Սիրիայի խոշորագույն քաղաք և կարևոր տնտեսական կենտրոն Հալեպին, որտեղ թուրքերը կենտրոնացրել էին մեծ թվով զորքեր և Մուստաֆա Քեմալ փաշայի հրամանատարությամբ

159 Այդ ժամանակ Սիրիան ընդգրկում էր ժամանակակից Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը և Անդրհորդանանը։

160 Տե՛ս Амин Саид, Восстания арабов в XX веке, стр. 82.

161 Տե՛ս G. Haddad, Fifty years of modern Syria and Lebanon, Beirut, 1950, p. 58.

162 Տե՛ս Zeine N. Zeine, The struggle for arab independence, Beirut, 1960, p. 25.

163 Տե՛ս S. Longgrig, Syria and Lebanon under French mandate, London, 1958, p. 64—65.

ստեղծել պաշտպանական ամուր գծեր[164]։ Սակայն դա չփրկեց Թուրքերին պարտությունից։ 1918 թ. հոկտեմբերի 25-ին Հալեպից հարավ՝ Խան-Թումանում, տեղի ունեցած ճակատամարտում արաբական և անգլիական զորքերը գլխովին ջախջախեցին Քեմալի հրամանատարության ներքո գտնվող Թուրքական բանակը և մտան Հալեպ[165]։ Ամին Սաիդը նշում է, որ Խան-Թումանի մոտ ձեռք բերած հաղթանակով արաբները ոնանշ վերցրին 1516 թ. Մարջ-Դաբիկում իրենց կրած պարտության համար[166]։

1918 թ. հոկտեմբերին անգլիական զորքերը Թուրքերից ազատագրեցին Սիրիայի ամբողջ մերձծովյա շրջանը՝ Ակրան, Տյուրոսը, Սիդոնը, Բեյրութը և Տրիպոլին։ Ռազմական այս գործողությունների շնորհիվ, Թուրքիայի հետ զինադադար կնքելու պահին, համարյա ամբողջ Սիրիան ազատագրվել էր Թուրքական տիրապետությունից։ Այսպիսով, Թուրքիայի մոտ չորս հարյուր տարվա խայտառակ տիրապետությունը վերջացավ նույնպիսի խայտառակ պարտությամբ։ Սիրիացիները, բնական է, մեծ գոհունակությամբ ընդունեցին Թուրքական լծի կործանումը, ենթադրելով, որ ռեալ հնարավորություն է ստեղծվում իրենց ազգային վերածննդի և պետականության վերականգնման համար։ Այս շրջանում թե՛ արաբ ղեկավարները և թե՛ ժողովրդական զանգվածները դեռևս պատրանքներ ունեին Անգլիայից և Ֆրանսիայից, հավատացած էին, որ նրանք կկատարեն պատերազմի տարիներին իրենց տված խոստումները։

1918 թ. հոկտեմբերի 5-ին, Դամասկոսը ազատագրելուց մի քանի օր անց, Ֆեյսալը ստեղծեց «արաբական զինվորական կառավարություն» Ալի ալ-Ռիկաբիի գլխավորությամբ[167]։ Այդ կառավարությունը համարվում էր համասիրական։ Նա

---

164 Տե՛ս նույն տեղում, Амин Саид. Восстания арабов в XX веке, стр. 82—83.

165 Տե՛ս նույն տեղում։

166 Տե՛ս նույն տեղում։

167 نجيب الارمنازى ، محاضرات عن سوريا من الاحتلال حتى الجلاء القاهرة ، ١٩٥٤ ، ص ١

իր ներկայացուցչին՝ Շուքրի փաշա ալ-Այյուբիին ուղարկեց Բեյրութ՝ Լիբանանում արաբական իշխանություն հաստատելու առաջադրանքով[168]։ Վերջինիս իրոք հաջողվեց Բեյրութում և Լեռնալիբանանում հաստատել իր իշխանությունը, սակայն գործին շտապեցին միջամտել ֆրանսիական իմպերիալիստները։ Մերձավոր արևելքում Ֆրանսիայի ներկայացուցիչը անգլիական ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Ալլենբիից պահանջեց վերացնել արաբական կառավարությունը Լիբանանում և Ֆրանսիայի վերահսկողությանը հանձնել Բեյրութը, Լեռնալիբանանը, Սիրիայի բոլոր մերձակա շրջանները՝ ան-Նակուրից մինչև Ալեքսանդրետ[169]։ Ֆրանսիան իր պահանջը հիմնավորում էր ելնելով «Սայքս-Պիկոյի» համաձայնագրից, ըստ որի այդ շրջանը համարվում էր ֆրանսիական տիրապետության գոտի։ Ալլենբին պահանջեց Դամասկոսի կառավարությունից հետ կանչել ալ-Այյուբիին։ Դա նշանակում էր արաբական իշխանության վերացում Լիբանանում և Սիրիայի որոշ շրջաններում։ Սիրիական կառավարությունը ստիպված էր կատարել Ալլենբիի պահանջը, և ալ-Այյուբին հեռացավ Բեյրութից։ Արաբական բոլոր դրոշները Լիբանանում իջեցվեցին և ֆրանսիական զինվորական կառավարիչներ նշանակվեցին Բեյրութում, Սիդոնում ու Տյուրոսում[169ա]։ Մինչ այդ Մ. Ժորժ Պիկոն արդեն նշանակվել էր Ֆրանսիայի «գլխավոր կոմիսար Պաղեստինում և Սիրիայում»[170]։

Դաշնակիցների այս գործողությունները դժգոհություն առաջացրին սիրիացիների մոտ և նրանք սկսեցին շատ կասկածամտությամբ ու անվստահությամբ վերաբերվել Անգլիային ու Ֆրանսիային։ Թեև սովետական կառավարության հրապարակած գաղտնի փաստաթղթերից սիրիացիներն իմացել էին «Սայքս-Պիկոյի» համաձայնագրի մասին, սակայն

168 Տե՛ս S. Longgrig, Syria and Lebanon under French mandate, p. 65—66.

169 Տե՛ս Амин Саид, Восстания арабов в XX веке, стр. 84.

169 — Տե՛ս Zeine N. Zeine, The struggle for arab independence p. 39.

170 Նույն տեղում, էջ 40։

ոչ բոլորն էին դեռևս հավատում դրան։ Դա բացատրվում է նրանով, որ անգլիացիները սկզբում ժխտում էին արաբական տերիտորիաները բաժանելու վերաբերյալ վերոհիշյալ համաձայնագրի գոյությունը և փորձում էին համոզել արաբներին, որ «Սայքս-Պիկոյի» համաձայնագիրը «հորինել են բոլշևիկները նրանց (անգլիացիների—Ն. Հ.) և արաբների միջև սեպ խրելու համար»[171]։ Բայց հետագա դեպքերն ապացուցեցին, որ «Սայքս-Պիկոյի» համաձայնագիրը «բոլշևիկյան պրոպագանդայի» հորինածը չէ, որ նա իրոք գոյություն ունի։ Այդ մասին 1918 թ. վերջերին Ֆեյսալին պաշտոնապես հայտնեց նաև Լոուրենսը[172]։

Թեև Դամասկոսում հաստատվեց սիրիական կառավարություն, սակայն նա իրական իշխանությունից չէր օգտվում։ Անգլիան Սիրիան համարեց «թշնամու օկուպացված տերիտորիա» և այդ հիման վրա ամբողջ Սիրիան ենթարկեց Մերձավոր արևելքում անգլիական ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Ալլենբիին։ Առանց վերջինիս համաձայնության ո՛չ արաբները և ո՛չ էլ Ֆրանսիայի ներկայացուցիչները ոչինչ չէին կարող անել, և նրա որոշումները վերջնական էին։ Գեներալ Ալլենբին տերիտորիալ առումով Սիրիան բաժանեց երեք մասի՝ հարավային, արևմտյան և արևելյան գոտիների։ Հարավային գոտին, որն ընդգրկում էր Պաղեստինը և Անդրհորդանանի մեծ մասը, անցավ անգլիական ռազմական իշխանությունների կառավարման ներքո, արևմտյան գոտին՝ Լիբանան և Լաթաքիա, անցավ ֆրանսիական զորքերի կառավարման ներքո, իսկ արևելյան գոտին, որն ընդգրկում էր Դամասկոսը, Հալեպը, Ջեբել-Դրուզը և Անդրհորդանանի մի մասը, մնաց Ֆեյսալի, այսինքն՝ արաբների կառավարման ներքո[173]։ Չնայած այս բաժանմանը, ամբողջ Սիրիան նախկինի պես ենթարկվում էր անգլիական հրամանատարությանը[174]։

171 Տե՛ս Амин Саид. Восстания арабов в XX веке, стр. 84.
172 Տե՛ս «Арабские страны. История. Экономика», стр. 20.
173 Տե՛ս «Великий Октябрь и народы Востока», стр. 371.
174 Տե՛ս «Арабские страны. История. Экономика», стр. 17.

Արաբները դժգոհությամբ ընդունեցին Սիրիայի բաժանումը, որը մի ծանր հարված էր նրանց ազգային ձգտումներին։ Այդ հողի վրա Սիրիայում և Լիբանանում սկսվեցին առաջին հակաիմպերիալիստական ելույթները[175]։ Լարված դրություն էր տիրում Բեյրութում։ Լեռնային մասերից արաբները հարձակվում էին ֆրանսիական հսկիչ կետերի և զինվորական մասերի վրա։ Սալիհ ալ-Ալիի գլխավորությամբ խոշոր հակաֆրանսիական ելույթներ տեղի ունեցան Լաթաքիայի շրջանում[176]։

Չնայած այս ելույթներին, արաբ մասսաները և հատկապես արաբ տիրապետող վերնախավը դեռևս հույս ունեին, թե կարելի է արաբական հարցի լուծմանը հասնել բանակցությունների միջոցով կամ Ազգերի լիգայի օգնությամբ։ Այս տրամադրությունները տիրապետող էին 1918—1919 թթ.։ Դրա յավազուն արտահայտությունը հանդիսացավ Ֆեյսալի մասնակցությունը Փարիզի խաղաղության կոնֆերանսին։ Նա 1919 թ. հունվարի 1-ին և 29-ին կոնֆերանսին ներկայացրեց հուշագրեր, որտեղ փորձում էր հիմնավորել արաբների միավորման և անկախ պետություն ստեղծելու իրավունքը։ Նա պահանջեց «արաբ ազգը Ալեքսանդրետ-Դիարբեքիր գծից մինչև Հնդկական օվկիանոս ճանաչել որպես անկախ գերիշխան ժողովուրդ»[177]։

Իր տված լրացուցիչ բացատրություններում Ֆեյսալը առաջ քաշեց արաբական երկրների կոնֆեդերացիա ստեղծելու գաղափարը։ Այդ կոնֆեդերացիայում Սիրիան պետք է լիներ միասնական և անկախ պետություն։ Լիբանանը կարող էր լինել անկախ, սակայն նա Սիրիայի հետ պետք է կազմեր տնտեսական մի ամբողջություն։ Պաղեստինի հարցը Ֆեյսալը համաձայնեց լուծել բոլոր շահագրգռված պետու-

175 Տե՛ս «Великий Октябрь и народы Востока», стр. 371.

176 S. Longrig, Syria and Lebanon under French mandate p. 80.

177 Zeine N. Zeine, The struggle for arab independence, p. 67.

թյունների կողմից մանրամասն քննարկվելուց հետո[178]։ Ֆեյսալը որոշակի հայտարարեց, որ բոլոր արաբական երկրները պետք է դիտվեն որպես անկախ պետություններ։ Փարիզի խաղաղության կոնֆերանսի «Տասի խորհուրդը» (Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Ճապոնիայի և Իտալիայի ներկայացուցիչները), հաշվի չնստելով Ֆեյսալի հուշագրերում առաջ քաշված պահանջների հետ, 1919 թ. հունվարի 30-ին որոշեց Հայաստանը, Սիրիան, Պաղեստինը, Միջագետքը, Արաբիան և Քուրդստանը համարել Օսմանյան կայսրությունից անկախ երկրներ և նրանց դնել Ազգերի Լիգայի մանդատի ներքո[179]։ Սա նշանակում էր, որ մեծ տերությունները մերժում էին արաբական երկրներին անկախություն տալու արաբ ժողովրդի օրինական պահանջը։ Սակայն «Տասի խորհուրդը» չլուծեց այն հարցը, թե այդ տերիտորիաների մանդատները ո՞ր երկրների միջև պետք է բաժանել։ Մանդատները ձեռք բերելու հարցում ամենամեծ հավակնություններ ունեին Անգլիան, Ֆրանսիան և ԱՄՆ-ը։ Բայց նրանց միջև գոյություն ունեցող լուրջ տարաձայնությունները խանգարում էին հասնել հարցի դրական լուծմանը։

Սիրիայի նկատմամբ գլխավոր հավակնորդը, ինչպես նշեցինք, Ֆրանսիան էր, որը ձգտում էր իր տիրապետությունը հաստատել ոչ միայն «արևմտյան գոտում»՝ Դամասկոս-Հոմս-Համա-Հալեպ գծից դեպի արևմուտք, այլ նաև «արևելյան գոտում», այսինքն՝ ամբողջ Սիրիայի վրա։ Չցանկանալով Սիրիայի մանդատը զիջել Ֆրանսիային և ձգտելով խոշընդոտներ հարուցել նրա առջև, ԱՄՆ-ի պրեզիդենտ Վ. Վիլսոնը դիմում է գեներալ Ալլենբիին հետևյալ հարցով. «Ի՞նչ կպատահի, եթե խաղաղության կոնֆերանսը թույլ տա ֆրանսիացիներին օկուպացնել Սիրիան»[180]։ Ալլենբին պատասխանում է, որ արաբները ուժեղ դիմադրություն ցույց կտան ֆրանսիացիներին։ «Ֆրանսիական մանդատը,—շարունակում է նա,— Սիրիայում առաջ կբերի լուրջ անկարգություններ և, հավա-

178 Տե՛ս «Арабские страны. История. Экономика», стр. 22.

179 Տե՛ս նույն տեղում, էջ 23։

180 Նույն տեղում, էջ 24։

նաբար, պատերազմ»[181]։ Գեներալ Ալլենբիի պատասխանը փաստորեն անգլո-ֆրանսիական տարաձայնությունների արտացոլումն էր, որոնք անհամեմատ ավելի ուժեղ էին, քան ֆրանս-ամերիկյան տարաձայնությունները։ Անգլո-ֆրանսիական տարաձայնությունները վերաբերում էին Սիրիային, Պաղեստինին և այլն։

Մերձավոր արևելքում անգլիական գլխավոր հրամանատար Ալլենբիից ստանալով այդպիսի պատասխան, Վ. Վիլսոնն առաջարկեց ստեղծել միջդաշնակցային մի հանձնաժողով, որը պետք է մեկներ Սիրիա և տեղում պարզեր, թե սիրիացիները ո՞ր երկրին են ցանկանում հանձնել Սիրիայի մանդատը։ «Տասի խորհուրդը» սկզբունքորեն համաձայնեց պրեզիդենտի առաջարկին։ Բայց, Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և Ճապոնիան հրաժարվեցին իրենց ներկայացուցիչներն ուղարկել Սիրիա։ Այդ պատճառով էլ Սիրիա ժամանեցին միայն ԱՄՆ-ի ներկայացուցիչներ Հ. Քինգը և Չ. Կրեյնը։ Մինչ «Քինգ-Կրեյնի հանձնաժողովի» մեկնելը արդեն Սիրիա էր վերադարձել Ֆեյսալը, համոզվելով, որ Փարիզի խաղաղության կոնֆերանսում ինքը ոչնչի չի կարող հասնել։

Սիրիայի ժողովուրդը մեծ դժգոհությամբ ընդունեց Սիրիայի վրա մանդատ հաստատելու լուրը։ Նաջիբ Ալ-Արմանազին նշում է, որ սիրիացիները ձգտում էին ազատագրվել ամեն տեսակի բռնակալական լծից և մանդատի վրա նայում էին խոր ատելությամբ[182]։ Սիրիացիների հիմնական խնդիրը դարձավ միասնությունը և անկախությունը[183]։

Այսպիսի իրադրության մեջ Սիրիայում անցկացվեցին սիրիական գլխավոր կոնգրեսի ընտրությունները։ Կոնգրեսը պետք է որոշեր Սիրիայի կառավարման ապագա ձևը և արաբ ժողովրդի պահանջները ներկայացներ «Քինգ-Կրեյնի հանձնաժողովին»[184]։ Սիրիական կոնգրեսի անդամներ ընտրվե-

---

181 Նույն տեղում։

182 نجيب الارمنازى ، محاضرات عن سوريا ، ص ٢٤

183 Տե՛ս նույն տեղում, էջ 25։

184 G. Haddad, Fifty years of modern Syria and Lebanon, p. 60.

ցին Սիրիայի, Պաղեստինի և Լիբանանի ներկայացուցիչները։ Նա իր աշխատանքներն սկսեց 1919 թ. հունիսի 7-ին[185]։ Սիրիական գլխավոր կոնգրեսը հիմնականում կազմված էր ազգային բուրժուազիայի և հայրենասեր կալվածատերերի ներկայացուցիչներից[186]։

«Քինգ-Կրեյնի հանձնաժողովը» Մերձավոր արևելք ժամանեց 1919 թ. հունիսին։ Նա այցելեց Պաղեստին, Սիրիայի «արաբական» և «ֆրանսիական» գոտիները և Կիլիկիա։ Այդ ժամանակամիջոցում նա եղավ 36 քաղաքներում և հավաքեց մոտ 2 հազար խնդրագիր։ 1919 թ. հուլիսի 3-ին հանձնաժողովի անդամները հանդիպեցին սիրիական գլխավոր կոնգրեսի ներկայացուցիչների հետ։ Վերջիններս Քինգին և Կրեյնին ներկայացրին հետևյալ պահանջները. Սիրիայի անկախության ճանաչումը իր բնական սահմաններում՝ հյուսիսում Տավրոսի լեռներից մինչև Եգիպտոսի սահմանները, արևելքում՝ Խաբուրից և Եփրատից մինչև Միջերկրականը։ Սիրիան պետք է լինի միապետություն և թագավոր հաստատվի Ֆեյսալը[187]։ Կոնգրեսը բողոքեց Ազգերի Լիգայի կանոնադրության 22-րդ հոդվածի դեմ, որը եվրոպական տերություններին իրավունք էր տալիս իրենց մանդատը հաստատել արաբական երկրների վրա։ Բողոքելով հանդերձ, կոնգրեսը մի վերապահում արեց։ Նա նշեց, որ եթե խաղաղության կոնֆերանսը չընդունի իր բողոքը և եթե մանդատային ռեժիմ ասելով հասկանան լոկ տեխնիկական օգնություն ցույց տալը, ապա սիրիական գլխավոր կոնգրեսը կխնդրեր ԱՄՆ-ի տեխնիկական օգնությունը, պայմանով, որ նա չհակասեր Սիրիայի քաղաքական անկախությանը[188]։ ԱՄՆ-ի հրաժարվելու դեպքում կոնգրեսը պատրաստ էր ընդունել Անգլիայի տեխնիկական օգնությունը, բայց ոչ մի դեպքում Ֆրանսիայինը։ Կոնգրեսը դեմ արտահայտվեց Պաղեստինը և Լիբանանը Սի-

185 Տե՛ս նույն տեղում։

186 Տե՛ս «Великий Октябрь и народы Востока», стр. 371.

187 Տե՛ս „Papers relating to the foreign relations of the United States. 1919", Washington, 1947, vol. XII, p. 765.

188 Տե՛ս նույն տեղում։

րիայից անջատելուն։ Ընդունելով Իրաքի լրիվ անկախությունը, կոնգրեսը միաժամանակ արտահայտվեց հօգուտ Իրաքի և Սիրիայի միջև պատնեշների վերացման[189]։

Վերադառնալով Փարիզ, Քինգը և Կրեյնը մի զեկուցագիր ներկայացրին Վիլսոնին, որտեղ նրանք առաջարկում էին մանդատային ռեժիմ հաստատել Իրաքում և Սիրիայում, երկու երկրներում էլ ստեղծել սահմանադրական միապետություն, Ֆեյսալին հաստատել սիրիական գահի վրա, Իրաքի մանդատը տալ Անգլիային, իսկ Սիրիայինը՝ ԱՄՆ-ին[190]։ Հանձնաժողովը կտրականապես դեմ արտահայտվեց Ֆրանսիային մանդատ տալու վերաբերյալ և իր կասկածները հայտնեց Պաղեստինում հրեական օջախ ստեղծելու պլանների կապակցությամբ[191]։ «Քինգ-Կրեյնի հանձնաժողովի» եզրակացությունները հաշվի չառնվեցին և ընթացք չստացան, որովհետև ԱՄՆ-ում հաղթանակեցին իզոլյացիոնիստները, և ամերիկյան կառավարությունը որոշ ժամանակ հրաժարվեց ակտիվ կերպով մասնակցել եվրոպական և ասիական գործերին։ Սակայն դա չէ էականը, այլ այն, որ Քինգ-Կրեյնի անցկացրած հանրաքվեն պարզ ու աներկիմաստ կերպով ցույց տվեց, որ Սիրիայի ժողովուրդը և բոլոր հասարակական խավերը պահանջում էին ստեղծել անկախ արաբական պետություն և դեմ էին ֆրանսիական տիրապետության հաստատմանը։ Հանրաքվեի արդյունքները և «Քինգ-Կրեյնի հանձնաժողովի» եզրակացությունները խիստ անհանգստացրին Ֆրանսիային։ Վերջինիս կառավարող շրջանները շտապեցին համաձայնության գալ Անգլիայի հետ արաբական երկրները իրար մեջ բաժանելու հարցի շուրջը։

1919 թ. սեպտեմբերին Կլեմանսոյի և Լլոյդ Ջորջի միջև կնքվեց մի համաձայնագիր, ըստ որի Ֆրանսիան ճանաչում էր Անգլիայի իրավունքները Իրաքի, Պաղեստինի և Անդրհոր-

---

189 Տե՛ս նույն տեղում։

190 Տե՛ս A. Hourani, Syria and Lebanon, London, 1946, p. 52.

191 Տե՛ս „Papers relating to the foreign relations of the US", vol. XII, p. 748—750.

դանանի վրա։ Դրա փոխարեն Անգլիան ճանաչում էր Ֆրանսիայի իրավունքները Լիբանանի և Արևմտյան Սիրիայի վրա և պարտավորվում իր զորքերը դուրս բերել Սիրիայի «արևելյան և արևմտյան գոտիներից», ինչպես նաև Կիլիկիայից[192]։ «Արևմտյան գոտին», այսինքն՝ Դամասկոս—Հալեպ գծից դեպի արևմուտք ընկած ամբողջ տերիտորիան անցնում էր ֆրանսիական իշխանությունների տնօրինությանը, իսկ «արևելյանը» մնալու էր Ֆեյսալի կառավարման ներքո։ «Արևելյան գոտուց», ինչպես նշվեց, անգլիական զորքերը նույնպես պետք է դուրս բերվեին։

Այս համաձայնությունը ձեռք բերվեց, և Սիրիան թողնվեց Ֆրանսիայի ողորմածությանը, որովհետև վերջինս, ինչպես իրավացիորեն նշում է արաբ պատմաբան Ջ. Հադդադը, Մոսուլը զիջեց Անգլիային[193]։ Այսպիսով, Անգլիան մի անգամ ևս կանգնեց արաբ ժողովրդի առջև որպես նրա շահերն ու իրավունքներն աճուրդի հանող երկիր։ «Սիրիացիները,— նշում է Ամին Սաիդը,—գործնականում տեսան, որ Անգլիան խաբել ու դավաճանել է իրենց։ Նրանք հասկացան, որ սխալվել են հավատալով մի երկրի, որը հավատարիմ չէ իր երդումներին և չի կատարում իր պարտավորությունները»[194]։

1919 թ. նոյեմբերին Անգլիան ավարտեց իր զորքերի դուրս բերումը «արևմտյան գոտուց», որը գրավեցին ֆրանսիական զորքերը գեներալ Գուրոյի գլխավորությամբ։ Գուրոն ստանձնեց նաև Մերձավոր արևելքում Ֆրանսիայի գլխավոր կոմիսարի պաշտոնը։

Անգլո-ֆրանսիական համաձայնագիրը և Արևմտյան Սիրիայում անգլիական զորքերի փոխարինումը ֆրանսիականով մեծ դժգոհություն առաջացրին Սիրիայում։ Այդ համաձայնագրի պայմանների դեմ իր պաշտոնական բողոքը հայտնեց Ֆեյսալը[195]։ Սիրիական գլխավոր կոնգրեսը 1919 թ. նո-

192 Տե՛ս նույն տեղում, vol. VIII, p. 217.

193 Տե՛ս G. Haddad, Fifty years of modern Syria and Lebanon, p. 62—63.

194 Амин Саид, Восстания арабов в XX веке, стр. 84.

195 S. Longrigg, Syria and Lebanon under French mandate, p. 94.

յեմբերին Սիրիայի ժողովրդին կոչ արեց ցույց տալ ամեն տեսակի դիմադրություն ֆրանսիական իմպերիալիստներին[196]։ Սիրիայի հայրենասիրական ուժերը իրականացրին մի շարք կոնկրետ միջոցառումներ ժողովրդի հակաիմպերիալիստական պայքարը կազմակերպելու ուղղությամբ։

1919 թ. նոյեմբերին Սիրիայի ազգային բուրժուազիայի նախաձեռնությամբ ստեղծվեց Ազգային պաշտպանության ժողովրդական խորհուրդը[197]։

Նրա մասնաճյուղերը հիմնվեցին համարյա բոլոր կարևոր քաղաքներում և գյուղական շրջաններում[198]։ Ժողովրդական խորհուրդը, որը Ամին Սաիդը անվանում է «ժողովրդական պառլամենտ», կանոնավոր նիստեր էր գումարում Դամասկոսում։ Նա ձեռնամուխ եղավ պարտիզանական ջոկատների ստեղծմանը, ֆինանսական միջոցների և զենքի հայթայթմանը[199]։

Ազգային պաշտպանության ժողովրդական խորհրդի նոյեմբերի 18-ի որոշմամբ ստեղծվեց հայրենիքի պաշտպանության ֆոնդ։ Ցուրաքանչյուր սիրիացի պարտավոր էր իր ունեցվածքի երկու տոկոսը հատկացնել այդ ֆոնդին[200]։

Ֆրանսիական իմպերիալիստներին հակահարված տալու գործում զգալի նշանակություն ունեցավ սիրիական կառավարության 1919 թ. դեկտեմբերի 21-ի օրենքը ընդհանուր դինապարտություն մտցնելու մասին։ Համաձայն այդ օրենքի 20—40 տարեկան բոլոր տղամարդիկ ենթակա էին զորակոչի[201]։

1918—1920 թթ. Սիրիայում ծավալված հակաիմպերիալիստական պայքարի շարժիչ ուժը հիմնականում գյուղացիու-

---

196 Տե՛ս «Великий Октябрь и народы Востока», стр. 372.

197 Տե՛ս նույն տեղում։

198 S. Longging, Syria and Lebanon under French mandate, p. 96.

199 Տե՛ս «Великий Октябрь и народы Востока», стр. 372.

200 Տե՛ս նույն տեղում։

201 Տե՛ս Амин Саид. Восстания арабов в XX веке, стр. 86.

թյունն էր։ Այդ պայքարին մասնակցում էին նաև բանվորները, արհեստավորները և ուսանողությունը։ Շարժումը ղեկավարում էր բուրժուազիան։

Սիրիայում ծավալված հակաիմպերիալիստական պայքարի առանձնահատկությունը պարտիզանական շարժման մեջ էր։ Ամբողջ երկրով մեկ ստեղծվեցին գյուղացիներից, բանվորներից, արհեստավորներից բաղկացած պարտիզանական ջոկատներ, որոնք մշտական ահ ու սարսափի մեջ էին պահում ֆրանսիական օկուպանտներին։ Նրանք հարձակվում էին կանոնավոր զորքերի, հսկիչ կետերի և զորասյուների վրա։ Սիրիական պարտիզանական խմբերի և ամբողջ սիրիական ժողովրդի հակաիմպերիալիստական պայքարի շնորհիվ ֆրանսիական իմպերիալիստների կողմից գրավված տերիտորիան ենթարկվեց մասնակի բլոկադայի[202]։ 1919 թ. նոյեմբերից սկսած արյունալի ընդհարումներ էին տեղի ունենում սիրիական հայրենասերների և ֆրանսիական օկուպանտների միջև։ Սիրիական ուժերը հաջող հարձակում կատարեցին Համմամի վրա, կատաղի ճակատամարտի բռնվելով ֆրանսիական զորագնդի հետ[203]։ Ձգնված ընդհարումներ տեղի ունեցան Լիթանիի կամուրջի և Տարտուսի մոտ։ Սիրիայի հակաիմպերիալիստական ուժերը հարձակումներ էին գործում Ակրա—Սիդոն գծի ուղղությամբ, Հոմսի և Տրիպոլի շրջանում, Ալեքսանդրետում, Հարիմում և այլ վայրերում[204]։ Հիշատակության է արժանի Թել Քալախի (Լաթաքիայի շրջան) գյուղացիների ապստամբությունը ֆրանսիական իմպերիալիստների դեմ 1919 թ. դեկտեմբերին[205]։ Արյունալի ճակատամարտ տեղի ունեցավ 1919 թ. դեկտեմբերին Բաալբեկում։ Իմանալով, որ ֆրանսիացիները պետք է մտնեն Բաալբեկ, տեղի բնակչությունը որոշեց ոչ մի գնով չթույլատրել նրանց մուտքը քաղաք։ Նրանք դեկտեմբերի 16-ին արգելեցին ֆրան-

---

202 Տե՛ս S. Longgrig, Syria and Lebanon under French mandate, p. 96.

203 Տե՛ս նույն տեղում։

204 Տե՛ս նույն տեղում։

205 نجيب الارمنازى ، محاضرات عن سوريا ، ص ٥

սիական սպային մտնել Բաալբեկ, և նա ստիպված եղավ հեռանալ[206]։

Ի պատասխան դրա ֆրանսիացիները ապստամբած Բեքաայի բնակիչների դեմ ուղարկեցին 1500 հետևազորայիններից, 200 հեծյալներից և հրետանային մեծ գումարտակից բաղկացած մի խումբ։ Սակայն դա չվախեցրեց ապստամբներին, որոնք Բաալբեկից 8 կմ հեռու գտնվող Աբ-Թայիբա գյուղի մոտ 1919 թ. դեկտեմբերի 18-ի առավոտյան քաջաբար դիմավորեցին ֆրանսիական զորքերին։ Մարտը տևեց մինչև երեկո, և ապստամբները դիմադրությունը դադարեցրին միայն այն բանից հետո, երբ նրանց փամփուշտները վերջացան[207]։

Մի շարք մարտերում պարտիզանները պարտության էին մատնում ֆրանսիական ջոկատներին։ 1920 թ. հունվարին նրանք գլխովին ջախջախեցին ֆրանսիական մի զորախումբ ալ-Ջադիդա գյուղի մոտ, ալ-Հուլա լճի շրջանում։ Այդ մարտում զոհվեց 70 ֆրանսիացի և 17 հոգի գերվեց։ Ապստամբների ձեռքն անցավ մեծ քանակությամբ ռազմական ավար[208]։

Զինված ընդհարումներ էին լինում նաև Հալեպի շրջանում, Լեռնալիբանանում, Ջեբել Ամալում, Բիլադ Բշարրիում և այլ վայրերում[209]։

Ինչպես երևում է այս փաստերից, Սիրիայում համաժողովրդական պայքար էր սկսվել հանուն երկրի անկախության։ Ֆրանսիական իմպերիալիստների համար փաստորեն անհնար էր դարձել իրենց տիրապետությունը հաստատել թեկուզև Սիրիայի արևմտյան մասում, էլ չենք խոսում արևելյանի մասին։ Ուստի նրանք օրըստօրե ավելացնում էին իրենց զորքերի թիվը։ Եթե 1919 թ. ֆրանսիական օկուպացիոն բանակը բաղկացած էր 7 հազար մարդուց, ապա 1920 թ. կեսերին այդ թիվը հասավ 70 հազարի[210]։ Դրան զուգընթաց

206 Տե՛ս Амин Саид, Восстания арабов в XX веке, стр. 86.

207 Տե՛ս նույն տեղում, էջ 86—87։

208 Տե՛ս «Великий Октябрь и народы Востока», стр. 373.

209 Տե՛ս «Современный Ливан», М., 1963, стр. 104.

210 Տե՛ս նույն տեղում, էջ 103։

Ֆրանսիան ձգտում էր համաձայնության գալ Ֆեյսալի և Սիրիայի ֆեոդալական վերնախավի հետ։ Ֆեյսալը, չնայած Սիրիայի անկախության նվաճման վերաբերյալ իր բազմաթիվ հայտարարություններին, հետևողական չգտնվեց և 1920 թ. հունվարի 6-ին Փարիզում Ֆրանսիայի պրեմիեր-մինիստր Կլեմանսոյի հետ կնքեց մի համաձայնագիր, որը շահավետ էր Ֆրանսիային և հակասում էր Սիրիայի ազգային ձգտումներին։

Ըստ Ֆեյսալ-Կլեմանսո համաձայնագրի, Ֆրանսիան իր պրոտեկտորատն էր հաստատում «արևելյան», այսինքն արաբական գոտում։ Ֆեյսալը ճանաչում էր Լիբանանի «անկախությունը» ֆրանսիական մանդատի ներքո, համաձայնվում էր ստեղծել դրուզների ավտոնոմ մարզ Հաուրանում, պարտավորվում միայն ֆրանսիական մասնագետներ և «խորհրդատուներ» հրավիրել և այլն[211]։

Երբ այս համաձայնագրի լուրը հասավ Սիրիա, երկրում նոր հուզումներ առաջացան։ Խոշոր ապստամբական շարժում սկսվեց Ալավիի շրջանում։ Դամասկոսում տեղի ունեցան ազգային գործիչների, սպաների ու ուսանողության հավաքներ, որտեղ քննարկվում էին Սիրիայի անկախությունը պահպանելու և ֆրանսիական մանդատը մերժելու հարցերը[212]։

1920 թ. հունվարի կեսերին Դամասկոս վերադարձավ Ֆեյսալը և Սիրիայի ազգային գործիչներին ներկայացրեց Կլեմանսոյի հետ կնքած իր համաձայնագրի նախագիծը։ Ինչպես նշում է Ամին Սաիդը, Ֆեյսալի խորհրդատուները, ծանոթանալով նախագծի հետ, էմիրին խորհուրդ տվին լռել և այն գաղտնի պահել, քանի որ սիրիական «ժողովուրդը, որ կռվել է թուրքերի հետ հանուն արաբական անկախ պետության ստեղծման, չի հանդուրժի ֆրանսիական գաղութարարներին»[213]։ Համաձայնագիրը ներկայացվեց «Երիտասարդ Սի-

---

211 Տե՛ս Zeine N. Zeine, The struggle for arab independence, p. 126.

212 Տե՛ս G. Haddad, Fifty years of modern Syria and Lebanon, p. 64.

213 Амин Саид, Восстания арабов в XX веке, стр. 89.

րիա» կազմակերպության գործադիր կոմիտեի քննարկմանը։ Վերջինիս անդամները մերժեցին այն։ Ֆեյսալը փորձեց նրանց համոզել, որ դա նշանակում է պատերազմ Ֆրանսիայի հետ։ Կոմիտեի անդամները նրան պատասխանեցին. «Մենք պատրաստ ենք միաժամանակ պատերազմ հայտարարել Ֆրանսիային և Անգլիային և ինչ որ լինելու է, թող լինի»[214]։ Ֆեյսալին չհաջողվեց վավերացնել Կլեմանսոյի հետ կնքած իր համաձայնագիրը։ Սիրիական ժողովուրդը և նրա շահերը ներկայացնող ազգային կազմակերպությունները մերժեցին այն։

Հակաիմպերիալիստական պայքարի ալիքի բարձրացման պայմաններում, 1920 թ. մարտի 2-ին, բացվեց սիրիական գլխավոր կոնգրեսի նիստը։ Կոնգրեսը մարտի 8-ին Ֆեյսալին հռչակեց ամբողջ Սիրիայի թագավոր և որոշեց ստեղծել համասիրիական ազգային կառավարություն, որի իրավասությունը պետք է տարածվեր Սիրիայի, Պաղեստինի և Լիբանանի վրա[215]։ Սիրիան լինելու էր սահմանադրական միապետություն։ Ֆեյսալ-Կլեմանսո համաձայնագրի մերժումը և սիրիական անկախ պետության հռչակումը 1918—1920 թթ. ծավալված ազգային-ազատագրական պայքարի ամենակարևոր արդյունքն էր։

Ֆրանսիան և Անգլիան չճանաչեցին սիրիական կոնգրեսի մարտյան որոշումը։ 1920 թ. ապրիլի 25-ին Ազգերի Լիգայի գլխավոր խորհրդի Սան Ռեմոյում տեղի ունեցած կոնֆերանսում Սիրիայի և Լիբանանի մանդատը հանձնվեց Ֆրանսիային։

Ֆրանսիական մանդատի հաստատման լուրը Սիրիայում առաջացրեց չտեսնված զայրույթ։ Ամին Սաիդի վկայությամբ Սիրիայի բոլոր անկյուններում հայրենասերները հայրենիքի պաշտպանության կոչ էին անում[216]։ 1920 թ. մայիսի 3-ին, հակաիմպերիալիստական ուժերի ճնշման ներքո, Սիրիայում ստեղծվեց ազգային պաշտպանության կառավարություն՝

214 Նույն տեղում։

215 Տե՛ս S. Longgrig, Syria and Lebanon under French mandate, p. 98.

216 Տե՛ս Амин Саид, Восстания арабов в XX веке, стр. 91.

սիրիական գլխավոր կոնգրեսի ղեկավար Հաշիմ ալ-Աթասիի գլխավորությամբ։ Այդ կառավարության մեջ մտան նաև Աբդել Ռահման Շահբանդերը, Յուսուֆ ալ-Ազմին և Ժորժ Ռիզքալլահը[217]։ Մայիսի 8-ին արտաքին գործերի մինիստր Շահբանդերը սիրիական կոնգրեսում ընթերցեց կառավարության ծրագիրը։ Կառավարությունն իր գլխավոր խնդիրն էր համարում լրիվ և անվերապահորեն պաշտպանել Սիրիայի անկախությունը, ապահովել Սիրիայի միասնությունը իր բնական սահմանների մեջ և թույլ չտալ որևէ օտար միջամտություն Սիրիայի ներքին գործերին[217]։ Կառավարության ծրագիրը հավանության արժանացավ կոնգրեսի և ամբողջ սիրիական ժողովրդի կողմից։

Սիրիական կառավարությունը զինապարտությունը դարձրեց համընդհանուր։ Իրենց գործունեությունը ակտիվացրին բազմաթիվ հայրենասիրական կազմակերպություններ։ Ուժեղացան պարտիզանների գործողությունները ֆրանսիական զավթիչների դեմ[219]։ Ամբողջ Սիրիան լի էր վճռականությամբ զինված դիմադրություն ցույց տալու ֆրանսիական իմպերիալիստներին և խանգարելու մանդատի հաստատմանը։

1920 թ. հուլիսի 14-ին ֆրանսիական ուժերի հրամանատար գեներալ Գուրոն վերջնագիր ներկայացրեց սիրիական կառավարությանը, պահանջելով. ա) անվերապահորեն ընդունել ֆրանսիական մանդատը, բ) վերացնել զինապարտությունը և կրճատել սիրիական բանակի թվական կազմը, գ) Սիրիայի տերիտորիայում շրջանառության մեջ դնել ֆրանսիական «Սիրիայի և Լիբանանի բանկի» կողմից բաց թողնված դրամները, դ) առանց մարտի հանձնել Հալեպը, երկաթուղային կայարաններ Հոմսը, Համան, Բաալբեկը և Ռայյակ—Հալեպ երկաթուղագիծը, ե) պատժել բոլոր «ոճրագործ-

217 Տե՛ս G. Haddad. Fifty years of modern Syria and Lebanon, p. 65.

218 Տե՛ս Амин Саид, Восстания арабов в XX веке, стр. 91.

219 Տե՛ս Zeine N. Zeine, The struggle for arab independence, p. 157.

ներին», որոնք թշնամական գործողություն են կատարել Ֆրանսիայի նկատմամբ[220]։

Գուրոյի վերջնագիրը զայրույթի նոր ալիք առաջ բերեց Սիրիայում։ Բոլոր քաղաքներում տեղի ունեցան հակաֆրանսիական ցույցեր[221]։ Սիրիական կառավարությունը պաշտոնապես բողոքեց Գուրոյի վերջնագրի դեմ, համարելով այն Սիրիայի գերիշխանության կոպիտ խախտում։ Երկրում մտցվեց ռազմական դրություն[222]։

Գուրոն իր վերջնագրի ընդունման համար տվել էր երեք օր ժամանակ՝ հուլիսի 14—17-ը։ Ժամկետը լրանալու և վերջնագրի պայմանները չընդունելու դեպքում Ֆրանսիան իրեն ազատ էր համարում դիմելու ամեն մի գործողության[223]։ Ֆեյսալը և սիրիական կառավարությունը, որոնք կողմնակից էին համաձայնության, հակվում են վերջնագիրը ընդունելուն։ Այդ լուրը հուզեց ամբողջ Դամասկոսը։ Հուլիսի 15-ին սիրիական գլխավոր կոնգրեսը հայտարարեց, որ սիրիական ազգը չի ճանաչում ոչ մի պայմանագիր և համաձայնագիր առանց սիրիական կոնգրեսի նախնական համաձայնության[224]։ Ֆեյսալի բոլոր փորձերը կոնգրեսի անդամներին համոզելու և վերջնագիրն ընդունել տալու ուղղությամբ զուր անցան։

Չնայած այդ հանգամանքին, Ֆեյսալն ընդունեց վերջնագիրը, որի մասին հուլիսի 18-ին պաշտոնապես հեռագիր ուղարկեց Գուրոյին։ Այնուհետև, ի կատարումն վերջնագրի պայմանների, կառավարությունն սկսեց զորացրել սիրիական ազգային բանակը[225]։ Նա երկու ամսով արգելեց սիրիական գլխավոր կոնգրեսի գործունեությունը[226]։ Կառավարության

220 Տե՛ս նույն տեղում։

221 Տե՛ս նույն տեղում։

222 Տե՛ս «Великий Октябрь и народы Востока», стр. 374.

223 Տե՛ս Zeine N. Zeine, The struggle for arab independence, p. 174.

224 Տե՛ս Амин Саид, Восстания арабов в XX веке, стр. 97—98.

225 نجيب الارمنازى ، محاضرات عن سوريا ، ص ١٢

226 G. Haddad, Fifty years of modern Syria and Lebanon, p. 67.

այս գործունեությունից դժգոհ, Դամասկոսի բնակչությունը փաստորեն ապստամբեց։ Հայրենասերների մի խումբ հարձակվեց Դամասկոսի ամրոցի վրա, որտեղ գտնվում էր զինանոցը, ազատեց ձերբակալվածներին և գրավեց մեծ քանակությամբ զենք[227]։ Դամասկոսի բնակչությունը սկսեց զինվել։ Քաղաքում տեղի ունեցան ցույցեր՝ ուղղված կառավարության և անձամբ Ֆեյսալի դեմ[228]։ Ժողովուրդը մեղադրում էր նրանց Սիրիայի ազգային շահերին դավաճանելու մեջ։ Ապստամբների մի խումբ փորձեց մտնել արքայական պալատը[229]։ Թագավորական զորախումբը մեծ դժվարությամբ ետ մղեց նրանց գրոհը։

Վերջիվերջո սիրիական կառավարությանը հաջողվեց ճնշել ժողովրդական մասսաների ելույթները։ Հարյուրավոր սիրիացիներ իրենց կյանքը զոհեցին այդ պայքարում։

Շուտով հայտնի դարձավ, որ ֆրանսիական բանակը շարժվում է դեպի Դամասկոս։ Գուրոն իր այդ քայլը փորձում էր հիմնավորել նրանով, թե վերջնագիրն ընդունելու վերաբերյալ սիրիական պատասխանը ուղարկվել է վերջնագրի ժամկետը լրանալուց հետո[230]։ Սակայն սա լոկ պատրվակ էր Սիրիայի ռազմական օկուպացումն ավարտելու և Սիրիան ֆրանսիական գաղութի վերածելու համար։ Ֆեյսալը, իհարկե, այդ բանը հասկացավ։ Նա համոզվեց, որ Ֆրանսիան ուզում է ոչնչացնել սիրիական պետությունը՝ իր թագավորությունը։ Եվ դրանից հետո միայն նա որոշեց դիմել վճռական գործողություններին։ Հուլիսի 21-ին նա հրապարակեց մի մանիֆեստ, որը սիրիական ժողովրդին պատերազմի կոչ էր անում։ Նա իր այդ կոչը կրկնեց Օմայանների մզկիթում արտասանած ճառում[231]։ Դամասկոսի փողոցներում, հրապարակներում և շուկաներում տեղի էին ունենում բուռն ցույցեր, որոնց ժա-

227 Տե՛ս Амин Саид, Восстания арабов в XX веке, стр. 91.

228 Տե՛ս Longgrig. Syria and Lebanon, under French mandate, p. 101.

229 Տե՛ս Амин Саид, Восстания арабов в XX веке, стр. 98.

230 نجيب الارمنازى ، محاضرات عن سوريا ، ص ١٢

231 Տե՛ս Амин Саид, Восстания арабов в XX веке, стр. 99.

մանակ ժողովուրդը պատրաստակամություն էր հայտնում կրծքով պաշտպանել Դամասկոսը[232]։

1920 թ. հուլիսի 24-ին զինված սիրիացիները և զորացրումից հետո մնացած որոշ սիրիական զորամասեր պաշտպանության մինիստր Յուսեֆ Ազըմի գլխավորությամբ պաշտպանական դիրքեր գրավեցին Մայսալունի մոտ՝ Դամասկոսից 28 կմ արևմուտք։ Այստեղ տեղի ունեցավ վճռական ճակատամարտ սիրիական հայրենասերների և ֆրանսիական զորքերի միջև։ Դա, Ամին Սաիդի բնութագրմամբ, «ժողովրդական ճակատամարտ էր։ Յուրաքանչյուրն ուզում էր մեռնել հանուն հայրենիքի և ապացուցել աշխարհին, որ ինքը թշնամի է այն «քաղաքակրթությանը», որ մանդատի անվան տակ բերում է Ֆրանսիան»[233]։

Մի քանի ժամ անընդհատ զինված սիրիացիները հերոսական դիմադրություն էին ցույց տալիս ֆրանսիական կանոնավոր զորամասերին, որոնք սիրիացիների դեմ օգտագործում էին հրետանի, տանկեր և ինքնաթիռներ։ Ուժերն անհավասար էին, և սիրիական մարտիկները պարտություն կրեցին։ Շատ շատերը իրենց կյանքը տվեցին հանուն Սիրիայի անկախության։ Դրանց թվում էր նաև պաշտպանության մինիստր Յուսեֆ Ազըմին[234]։

Ֆրանսիական զորքերը մտան Դամասկոս։ Նրանք վերացրին սիրիական թագավորությունը և վերջ տվին արաբական կառավարությանը։ Ամբողջ Սիրիայի վրա հաստատվեց ֆրանսիական մանդատը։ 1920 թ. սեպտեմբերի 1-ին Սիրիայից անջատվեց և ստեղծվեց «Մեծ Լիբանանը», դարձյալ ֆրանսիական մանդատի ներքո։

Սիրիայի և Լիբանանի հակաիմպերիալիստական ուժերը չհաշտվեցին գաղութային նոր լծի հաստատման հետ։ 1920 թվականից նրանք երկար ու ծանր պայքար են սկսում ֆրան-

---

234 Տե՛ս Zeine N. Zeine, The struugle for arab independence, p. 182.

232 Амин Саид, Восстания арабов в XX веке, стр. 100.

233 نجيب الارمنازى ، محاضرات عن سوريا ، ص ١٢

սիական մանդատի վերացման և Սիրիայի ու Լիբանանի անկախության համար։

* * *

Արաբական ժողովուրդները երկարատև ու համառ պայքարի շնորհիվ միայն 40—50-ական թվականներին կարողացան թոթափել գաղութային լուծը և նվաճել քաղաքական անկախություն։ Այժմ նրանք պայքարում են տնտեսական անկախության և սոցիալական վերածննդի համար։ Այդ պայքարում Վ. Ի. Լենինի ուսմունքը և Սովետական Միության առկայությունը մեծապես օգնում են արաբական առաջադիմական ուժերին կողմնորոշվելու և ճշմարիտ ուղիներ ընտրելու արաբական երկրների ազգային վերածննդին հասնելու համար։

Հ. Մ. ԵԳԱՆՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԵԼՔԸ ԻՐԱՆՈՒՄ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ԵՎ ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Փետրվարյան հեղափոխությունը և ցարական ինքնակալության տապալումը մեծ արձագանք գտան ամբողջ Իրանում։ Երկրի տարբեր շրջաններում, հատկապես հյուսիսում տեղի ունեցան բազմաթիվ ցույցեր և ժողովներ, որոնց մասնակիցները խանդավառությամբ էին ողջունում Ռուսաստանի ժողովուրդներին՝ նրանց ձեռք բերած հաղթանակի համար և հույս հայտնում, որ դա կազատագրի նաև ցարիզմի նվաճողական քաղաքականության զոհ դարձած այլ ժողովուրդներին։ Թե ինչպիսի ցնծությամբ ողջունեց Իրանի առաջավոր հասարակայնությունը ցարական ինքնակալության տապալումը, երևում է «Թաջադոդ» թերթի հետևյալ գնահատականից. «Ռուսաստանի այս հեղափոխությունը, որը ռուս մեծ ժողովրդի պարծանքների պատմության լավագույն էջն է, ազատ ռուս ժողովրդի և իրանական ժողովուրդի միջև բարի դրացիական, բարեկամական հարաբերություններ ստեղծելու գործում լավագույն միջոց է հանդիսանալու ...Այսօր ազատասեր իրանցիների հայացքները լավատեսությամբ և անկեղծ ու բարի ցանկություններով ուղղված են ռուս առաջադեմ ժողովրդին և լի են ազգային անկախության ու երջանկության մեծ հույսերով»[1]։

---

1 علی آذری قیام شیخ محمد خیابانی در تبریز تهران ۱۳۲۹ صفحه ۱۱۸—۱۱۹

Դրանք, իհարկե, միայն հույսեր չէին և գտան իրենց կոնկրետ մարմնացումը։ «Ռուսական հեղափոխությունը,— գրում է պատմաբան Սեյֆփուր Ֆաթեմին,—տակնուվրա արեց իմպերիալիստների բոլոր ռազմական ու քաղաքական հաշիվները և արմատական կերպով ձևափոխեց ամբողջ իրանական պրոբլեմը։ ...Արտակարգ իրադարձություններ տեղի ունեցան. ռուսներն ու պարսիկները եղբայրանում էին փողոցներում և ստեղծում միացյալ հեղափոխական կոմիտեներ՝ առկա դրժվարությունները եղբայրաբար վճռելու համար։ Ամբողջ Իրանում հայրենասերները մեկ անգամ ևս գլուխ բարձրացրին, զգալով, որ վերջապես Իրանի ժողովուրդը հնարավորություն է ձեռք բերել ազատորեն զարգացնելու իր քաղաքական ինստիտուտները առանց իմպերիալիստական մեծ տերությունների կողմից մշտականապես սպառնացող վտանգի»[2]։

Իրանական խոշորագույն պատմաբան Ահմադ Քասրավին նույնպես անդրադարձել է այդ հարցին։ Նա գրում է. «Թավրիզում խոշոր իրադարձություններ տեղի ունեցան, քանի որ հենց այդ ժամանակ (1917) Ռուսաստանում մեծ հեղափոխություն կատարվեց։ Նիկոլայ կայսրը գահընկեց արվեց, և ինքնակալական դաժան ապարատը խորտակվեց։ Դա մեծ շարժում առաջ բերեց ամբողջ Իրանում, հատկապես Ադրբեջանում և Թավրիզում։ ...Բոլոր զինվորները և կազակները, որ երեկ ցարական կառավարության բռնության գործիքներն էին, այսօր ձեռք էին երկարացնում ազատասերներին և ասում էին. «Եկեք եղբայրանանք, եկեք ձեռք ձեռքի տանք»։ Դա մի մեծ իրադարձություն էր և Թավրիզի ազատասերների համար թանկարժեք աչքալուսանք»[3]։

Հեղափոխական շարժման վերելքի այդ օրերին էր, որ Թավրիզում ստեղծվեց զինվորների և բանվորների դեպուտատների սովետի գործադիր կոմիտե, որը լայն աշխատանք ծավալեց քաղաքում։

---

2 N. Saifpour Fatemi, Diplomatic History of Persia (1917—1923), New-York, 1952, p. 7.

3 احمد کسروی زندگانی من تهران ۱۹۴۵ صفحه ۶۶

Իր պրոկլամացիաներից մեկում գործադիր կոմիտեն նշում էր. «Հասել է այն ժամը, որ երկար սպասում էինք։ Իրանական ու ռուս ժողովուրդները դեն նետեցին այն ծանրշղթան, որ նրանց դարերի ընթացքում ստրուկ էր դարձրել, և հնարավորություն ստացան միմյանց եղբայրաբար ձեռք մեկնելու, ազնիվ ու սիրալիր հարաբերություններով միանալու և աղատության ուղիով ընթանալու դեպի այն երջանիկ կյանքը, որը ամբողջ աշխարհի աշխատավորության նպատակն է...։ Այսօր ռուս հեղափոխական ժողովուրդը, հանձինդինվորների և բանվորների դեպուտատների Թավրիզի սովետի, գնում է իր գաղափարակիցների՝ Իրանի հեղափոխականների գերեզմանի վրա տեղեկացնելու նրանց, որ ռուս հեղափոխական ժողովուրդը Պետրոգրադի փողոցներում փետրվարին Թափած արյունով իր վրայից մաքրեց ու հեռացրեց այն սև բիծը, որ գոյացել էր Իրանի և Ռուսաստանի ղեկավարների 1911 Թ. արյունալի արարքներից»[4]։

Զինվորների կոմիտեները և սովետները մեծ ջանքեր էին գործադրում սերտ բարեկամական կապեր հաստատելու տեղական բնակչության հետ։ Որոշ վայրերում ստեղծվում էին միասնական սովետներ։ Քերմանշահում, օրինակ, միասնական կոմիտե ստեղծվեց զինվորների ներկայացուցիչների և տեղական հեղափոխականների մասնակցությամբ։ Եղբայրացման բազմաթիվ դեպքեր եղան նաև երկրի հյուսիսային շրջանի տարբեր վայրերում։ Գիլանում ռուս զինվորների և ջանդալիների եղբայրացման փաստեր են արձանագրվել։

Գիլանում ծավալված ազգային-ազատագրական շարժման մասնակիցները նույնպես ողջունեցին ցարական ինքնակալության տապալումը։ Շարժման ղեկավարներից Էհսանուլա խանը գրում է, որ երբ «այդ արտակարգ լուրը հաստատվեց, հեղափոխականների ցնծությանը և ուրախությանը վերջ չկար։ Մեծահասակ մարդիկ երեխաների պես ուրախանում էին և պարում։ Շուտով ռուսական զորքերի կողմից եկան բանակային կոմիտեի ներկայացուցիչներ և հայտարարեցին,

---

4 على آذرى قيام شيخ محمد خيابانى ... صفحه ١٣٦-٧

որ այլևս ռուսների և իրանական հեղափոխականների միջև կռիվ չկա։ Այսպիսով ռուսական հեղափոխությունը մեզ ևս որոշ ազատագրում բերեց»[5]։

Ցարական ինքնակալության տապալումը և հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում մեծ հավանություն գտան իրանական հասարակայնության տարբեր շրջաններում։

Մեհդի Մալեքզադեն «Իրանի սահմանադրական հեղափոխության պատմությունը» աշխատության մեջ, խոսելով ռուսական հեղափոխության նկատմամբ իրանական առաջադեմ շրջանների վերաբերմունքի մասին, գրում է. «Իրանի մտավորականները, որոնց համբերությունը հատել էր իրենց երկրում ռուսական կառավարության օրըստօրե աճող ճնշումից և երկրի ներքին գործերին նրա ներկայացուցիչների միջամտությունից, մեծ հավանությամբ էին դիտում Ռուսաստանի ազատասերների հեղափոխությունը և հաջողություններ էին ցանկանում այդ երկրի ազատասեր ժողովրդին։ Չնայած բռնության երկաթյա պատնեշին, որն իրանցիներին թույլ չէր տալիս ազատ աշխարհի մամուլի հետ կապի մեջ մտնել, նրանք հնարավոր միջոցներով Ռուսաստանի ազատասերների շարժման ուրախություն պատճառող լուրերը ձեռք էին բերում և տարածում Իրանի ազատատենչ ժողովրդի մեջ»[6]։

Այդ հարցին անդրադառնում է նաև Հոսեյին Մաքքին, գրելով. «Երբ առաջին համաշխարհային պատերազմը ավարտվեց և ցարական ահեղ բռնակալությանը հաջորդեց կոմունիստական իշխանություն, աշխարհում առաջացան մտավոր նորանոր շարժումներ, որոնց արձագանքը որոշ երկրներում, այդ թվում և Իրանում բավականին ուժեղ ու սասանող էր։ Տառապյալ և փորձություններով ենթարկված Իրանում այդ մտավոր թռիչքը շուտով վերածվեց քաղաքական շարժման և բռնության երկարատև ու անընդհատ ճնշման տակ հոգնած ու թուլացած ձեռքերը, գաղափարական այդ վերելքից ուժ

---

5 «Новый Восток», 1928, № 23—24, стр. 261.

6 مهدی ملکزاده تاریخ انقلاب مشروطیت ایران تهران ۱۳۲۸ صفحه ۱۱۶

ստանալով, գործի անցան, որպեսզի փտած իշխանությունը տապալեն և մի ուժեղ ու կենսունակ Իրան ստեղծեն։ Երկրի որոշ մասերում սկսվեցին այս կամ այն չափով զինված ելույթներ։ Մի քանի կարևոր նահանգներում արձագանք գտան ազատասիրական մեղեդիներն ու համայնական իշխանության կոչերը»[7]։

Ամբողջ Արևելքում, այդ թվում և Իրանում ռուսական հեղափոխության ունեցած խոր հետևանքների մասին են խոսում նաև մի շարք այլ պարսիկ հեղինակներ։

Մոդիր Հալլաջը «Իրանի վերածննդի պատմությունը» գրքում նշում է. «Ռուսաստանի 1917 թ. հեղափոխությունը, որը տապալեց կայսերական Ռուսաստանի բնության ամրոցը, ոչ միայն մոտեցրեց համաշխարհային պատերազմի վախճանը և խիստ սասանեց արևմտյան որոշ իմպերիալիստական պետությունների հիմքերը, այլև հսկայական հետևանքներ թողեց ամբողջ Արևելքում ընդհանրապես, իսկ Իրանում՝ մասնավորապես և առաջ բերեց համընդհանուր շարժում ու ազգային զգացմունքների նոր վերելք»[8]։

Սեյֆփուր Ֆաթեմին «Իրանի դիվանագիտական պատմությունը» գրքում շեշտում է, որ «1917 թ. հեղափոխությունը զգալի փոփոխություններ առաջ բերեց Իրանում։ 1917 թ. Իրանի ճակատագիրը շատ սերտորեն կապված էր Ռուսաստանի հետ և չէր կարող կենսականորեն իր վրա չկրել քաղաքական պայթյունների ազդեցությունը ավելի, քան Ռուսաստանին հարևան որևէ այլ երկիր։ Այժմ արդեն, երբ պայթյունը տեղի ունեցավ, իրանական ժողովրդի ազատասիրությունը նորից սկսեց վերակենդանանալ»[9]։

Այս միտքն է առաջ քաշում նաև իրանական Ադրբեջանի դեմոկրատական կուսակցության ղեկավար Խիաբանին։ «Այն

---

7 حسین مکی تاریخ بیست ساله ایران جلد اول کودتای ۱۲۹۹ تهران ۱۹۴۵ صفحه پ

8 مدیر حلاج تاریخ نهضت ایران ۱۹۳۳ صفحه ۱۰۹

9 N. Saifpour Fatemi, Diplomatic History of Persia (1917—1923), p. 135—136.

պահից, երբ արյունարբուների հենարանը խորտակվեց և Ռուսաստանի բռնապետության հիմքը փլվեց,— գրում է նա,— բնականաբար ամբողջ աշխարհում ազատագրական շարժումներ սկսվեցին։ ...Իրանցիներն էլ սահմանակից լինելով ազատագրված Ռուսաստանի հետ, չէին կարող այսպիսի մեծ հարևան երկրի հեղափոխությունից չազդվել»[10]։

Հոկտեմբերյան հեղափոխության և Վ. Ի. Լենինի գաղափարների հաղթանակի խոր ազդեցությունը Արևելքի գաղութային և կախյալ երկրների վրա պայմանավորված էր նաև նրանով, որ այդ երկրներում արդեն ստեղծվել էին ներքին նախադրյալներ՝ ազգային-ազատագրական շարժումների նոր վերելքի համար, նախադրյալներ, որոնք արագ թափով հասունացան հատկապես առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։

Հոկտեմբերյան հեղափոխության անմիջական ազդեցությամբ արմատական փոփոխության ենթարկվեցին միջազգային պայմանները։ Այս նոր պայմաններում ծավալվող ազգային-ազատագրական շարժումները ստացան նոր երանգ։ Հոկտեմբերյան հեղափոխությունը, նախ, սոցիալիզմի համար կապիտալիստական զարգացած երկրների բանվոր դասակարգի պայքարը միացրեց գաղութային և կախյալ երկրների ազատագրման ու անկախության համար մղված ազգային-ազատագրական պայքարի հետ։ Այս հանգամանքը գնալով էլ ավելի խորացավ և իր ցայտուն արտահայտությունը գտավ հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմի և նրան հաջորդած տարիների շարժումներում։ Եվ, երկրորդ, փոփոխություն առաջացավ հենց ազգային-ազատագրական շարժումների բնույթի մեջ։ Եթե այդ շարժումները դեռևս շարունակում էին ղեկավարել ազգային բուրժուազիայի ներկայացուցիչները, ապա շարժմանը արդեն մասնակցում էր բանվոր դասակարգը, իսկ որոշ երկրներում՝ մինչև իսկ, ղեկավարում շարժումը։ Ինչպես կտեսնենք նման իրադրություն գոյություն ուներ ոչ միայն համեմատաբար ավելի զարգացած գաղու-

---

10 علی آذری قیام شیخ محمد خیابانی ... صفحه ۱۳۴

թային երկրներում՝ Հնդկաստանում, Չինաստանում, այլև արդյունաբերական տեսակետից այնպիսի թույլ երկրներում, ինչպիսին Իրանն էր։

Ինտերվենտների և նրանց սպիտակգվարդիական գործակալների դեմ սովետական իշխանության տարած յուրաքանչյուր հաղթանակ մեծագույն օգնություն էր գաղութային և կախյալ երկրների ազգային-ազատագրական շարժումների զարգացմանը, իսկ վերջիններիս հաջողությունները, իրենց հերթին, որոշ իմաստով, օգնություն էին սովետական իշխանության ամրապնդման գործին՝ նրա գոյության առաջին դժվարին տարիներին։

Այսպիսով, Ռուսաստանի և գաղութային ու կախյալ երկրների ժողովուրդների շահերի ինչ-որ ընդհանրություն էր ստեղծվել, որը իր կնիքը դրեց այդ տարիներին երկու կողմերի հարաբերությունների վրա։

Հենց այս տեսանկյունից էլ պետք է դիտել, օրինակ, այդ տարիներին զարգացող սովետա-թուրքական կամ սովետա-իրանական բարեկամական հարաբերությունները, որոնց հավատարիմ մնաց սովետական պետությունը իր գոյության ամբողջ ընթացքում, որոնցից, սակայն, բազմիցս հեռացան Թուրքիայի և Իրանի իշխող շրջանները, միանալով իմպերիալիստական պետությունների կողմից հյուսվող տարբեր հակասովետական քաղաքական և ռազմական բլոկներին։

Ընդգծելով Հոկտեմբերյան հեղափոխության համաշխարհային պատմական նշանակությունը Արևելքի ժողովուրդների հակաիմպերիալիստական պայքարի գործում, Վ. Ի. Լենինը գրում էր. «Իսկ Արևելքը, մյուս կողմից, վերջնականապես մտել է ռևոլյուցիոն շարժման մեջ» և «վերջնականապես ներքաշվել է համաշխարհային ռևոլյուցիոն շարժման ընդհանուր շրջապտույտի մեջ»[11]։

Այս միտքը ընդգծվեց հետագայում հրապարակված բազմաթիվ այլ փաստաթղթերում։

«Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությու-

11 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 595։

նը,— ասված է 1960 թ. Մոսկվայում կայացած կոմունիստական և բանվորական կուսակցությունների խորհրդակցության փաստաթղթերում,— արթնացրեց Արևելքը, գաղութային ժողովուրդներին ներգրավեց համաշխարհային հեղափոխական շարժման ընդհանուր հոսանքի մեջ»[12]։

Հոկտեմբերյան հեղափոխության անմիջական ազդեցությամբ 1917—1921 թթ. Իրանում ծավալվեցին ազգային-ազատագրական մեծ շարժումներ, որոնք ընդգրկեցին հատկապես հյուսիսային նահանգները։ Իրանական Ադրբեջանում Դեմոկրատական կուսակցությունը և նրա ղեկավար շեյխ Մոհամեդ Խիաբանին ստեղծեցին դեմոկրատական կառավարություն։ Գիլանում ջանգալիները, կոմունիստները և այլ քաղաքական կազմակերպություններ լայն պայքար ծավալեցին, որը ունեցավ տարբեր էտապներ։ Խորասանում տեղի ունեցավ ժանդարմերիայի ապստամբություն գնդապետ Մոհամեդ Թաղի խանի գլխավորությամբ։

Մեր խնդիրը չէ կանգ առնել այդ շարժումների պատմության վրա[13]։ Նշենք միայն, որ ազատագրական շարժումները սկսվել էին դեռևս պատերազմի տարիներին։ Իրանում ծավալվող ազգային-ազատագրական շարժումը գլխավորապես ուղղված էր ցարական Ռուսաստանի և իմպերիալիստական Անգլիայի վարած քաղաքականության դեմ։ Շարժման մասնակիցները այդ երկու տերությունների դեմ պայքարելու համար պատրաստ էին օգնություն ստանալ նրանց դեմ պատերազմող մյուս պետություններից, ինչպես, օրինակ, Գեր-

---

12 «Программные документы борьбы за мир, демократию и социализм», М., 1961, стр. 64.

13 Ազգային-ազատագրական այդ շարժումները մանրամասն նկարագրված են հետևյալ աշխատություններում.

М. Н. Иванова, Национально-освободительное движение в Иране, М., 1961.

Ш. Тагиева, Национально-освободительное движение в Иранском Азербайджане в 1917—1920 гг., Баку, 1956.

Հ. Մ. Եգանյան, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և ազգային-ազատագրական շարժումները Իրանում, 1917—1920 թթ., Երևան, 1957։

մանիայից և Թուրքիայից։ Միանգամայն այլ հարց է, որ վերջիններս, օգտվելով այդ հանգամանքից, փորձում էին հասնել Իրանում հետապնդած իրենց նվաճողական նպատակներին։

Որոշ հեղինակներ, հիմք ընդունելով ջանգալիների «Իսլամի միություն» կազմակերպության գոյությունը կամ ջանգալիների հետ գերմանական ու Թուրքական մի քանի զինվորականների համագործակցելու փաստերը, փորձել են ամբողջ շարժմանը տալ միանգամայն այլ գնահատական[14]։

Հոսեյն Մաքքին, անդրադառնալով Գերմանիայի ու Օսմանյան պետության հետ ջանգալիների համագործակցությանը, նշում է, որ անգլիական զորքերի հրամանատար Դենստերվիլը իր գրքում ջանգալիներին և Քուչիկ խանին մեղադրում է, որ նրանք գործիք էին գերմանացիների և օսմանցիների ձեռքին։ Մաքքին այդ միտքը հերքելու համար մեջ է բերում ջանգալիների մի հայտարարությունը, որը տպագրված է եղել «Փարվարեշ» թերթում։ Հայտարարության մեջ ասված է. «Ինչո՞ւ ենք հանգիստ կյանքից և անդորրից հրաժարվել։ Արդյո՞ք Գերմանիայի և Օսմանյան պետության համար։ Արդյո՞ք օտարների հզորությունը ընդարձակելու համար։

Անարդարացի է, որ թշնամին այսպիսի անամոթ մեղադրանք է մեզ ուղղում, օտարներից դրամ վերցնելը և ապականվելը ստոր և անազնիվ մարդկանց գործն է։

...Մենք մեր հայրենիքի անկախության համար ենք զոհվում, Իրանի ազատության և ազատագրման համար ենք զոհաբերություն կատարում»[15]։

Իրանում հող էր պատրաստվել ազգային-ազատագրական շարժման ծավալման համար։ Երկիրը գտնվում էր տրն-

---

14 Մարչենկոն, օրինակ, Քուչիկ խանին հայտարարում է գերմանական գործակալ և նրա ստեղծած շարժումը դիտում որպես գերմանական մեքենայություն։ Տե՛ս M. Martchenko, Un Voyage en Perse pendent la Revolution Russe, Nancy, 1920, p. 40.

15 حسین مکی تاریخ بیست ساله ایران .... صفحه ۳۲۷

տեսական և քաղաքական սնանկացման շեմքին։ Իշխող շրջանները և իրանական կառավարությունը այդ վիճակից դուրս գալու փրկությունը տեսնում էին դրսում՝ հովանավորություն փնտրելով իմպերիալիստներից։ Ուստի ազատագրական շարժումը ուղղված էր օտարերկրյա իմպերիալիստների և նրանց հենարան հանդիսացող ֆեոդալական ռեակցիայի դեմ։ Բայց այն ծավալվում էր ոչ համաչափ։ Եթե հյուսիսային շրջանում, հատկապես Գիլանում և Ադրբեջանում ազատագրական շարժումը վերածվեց զինված ապստամբության, և ստեղծվեցին դեմոկրատական ժողովրդական իշխանություններ, ապա երկրի հարավային և կենտրոնական մասերում սահմանափակվեց ցույցերով, ժողովներով ու պայքարի այլ ձևերով։ Հասկանալի է, որ այս հանգամանքը իր բացասական ազդեցությունն ունեցավ ամբողջ երկիրը ազգային-ազատագրական շարժման ոլորտը ընդգրկելու և վերջնական հաղթանակի հասնելու գործում։

Իրանի ազգային-ազատագրական շարժման առանձնահատկությունը այն էր, որ նա ծավալվեց իր զարգացման առաջին էտապում, երբ նրա սուր ծայրը գլխավորապես ուղղված էր օտարերկրյա իմպերիալիզմի դեմ։ Ագրարային շարժումը, հողազուրկ ու սակավահող գյուղացիների և կալվածատերերի առանձին, թեկուզև սուր բախումներից չբվերածվեց ագրարային հեղափոխության։

Այս իմաստով խիստ բնորոշ է Գիլանի ժամանակավոր հեղափոխական կառավարության հրապարակած ծրագիրը, որը ընդգրկում էր հետևյալ կետերը. 1. պայքար թագավորության դեմ և Իրանում հանրապետության հաստատումը, 2. ամբողջ բնակչության անձի և ունեցվածքի պաշտպանությունը, 3. օտար տերությունների հետ իրանական կառավարության կնքած բոլոր պայմանագրերի չեղյալ հայտարարումը, 4. բոլոր ազգերի իրավահավասարությունը, 5. Իսլամի պաշտպանությունը[16]։

---

16 7/VII—1920. "انقلاب سرخ".

Ինչպես երևում է այս փաստաթղթից, ազգային-ազատագրական շարժումը գտնվում էր իր զարգացման առաջին էտապում։

1920 թ. հունիսին Սերգո Օրջոնիկիձեն Վ. Ի. Լենինին ուղարկած հեռագրում գրում էր. «Ոչ մի սովետական իշխանության մասին Իրանում խոսք անգամ չի կարող լինել։ Քուչիկ խանը չհամաձայնեց մինչև իսկ բարձրացնել հողային հարցը։ Առաջադրված է միայն մի լոզունգ. Կորչեն անգլիացիները և նրանց ծախված Թեհրանի կառավարությունը»[17]։

Իրանի ժողովրդական զանգվածները հենվում էին Սովետական Ռուսաստանի երիտասարդ կառավարության վրճռական և մինչև վերջ սկզբունքային լենինյան արտաքին քաղաքականության վրա, որը ձգտում էր հաստատել սովետա-իրանական իրավահավասար հարաբերություններ և պաշտպանել Իրանի իրավունքները անկախ գոյության համար։ Դրա անմիջական հետևանքներից մեկը, որին կանդրադառնանք հետագայում, այն էր, որ Անգլիան ստիպված եղավ իր զինված ուժերը դուրս բերել երկրից, և Իրանը պահպանեց իր անկախ գոյությունը։

Իրանի բանվորներին և գյուղացիներին Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի ուղղած դիմումի մեջ մերկացվում էր ցարական կառավարության և անգլիական իմպերիալիզմի գաղութարարական քաղաքականությունը Իրանում, ընդգծվում էր այն հանգամանքը, որ ռուս հեղափոխականները, պայքարելով ցարական բռնակալության դեմ, փաստորեն եղբայրական օգնություն են ցույց տվել իրանական ժողովրդին, և, միաժամանակ, մատնանշվում այն նոր քաղաքականությունը, որ հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կիրառվեց Իրանի նկատմամբ։

Անհրաժեշտ է նշել, որ իրանական կառավարությունը իր հերթին որոշ փորձեր արեց Սովետական Ռուսաստանի քաղաքականության հետևանքով Իրանի համար ստեղծված բարենպաստ դրությունից օգտվելով, ձերբազատվել իմպերիա-

---

17 ЦГАОР СССР, ф. 130, оп. 4, ед. хр. 464, л. 103.

լիստական մյուս պետությունների կողմից իր երկրի վզին փաթաթված անհավասար և ստրկացուցիչ պայմանագրերից։

Հայտնի է, որ երբ սովետական կառավարությունը չեղյալ հայտարարեց անգլո-ռուսական պայմանագիրը, դեռևս 1918 թ. փետրվարին իրանական կառավարությունը պահանջեց Անգլիայից իր զորքերը դուրս բերել Իրանից և ետ կանչել հարավային Իրանի զորամասում եղած անգլիական զինվորականներին[18]։

Սովետական կառավարության հրապարակային հրաժարումը ցարիզմի գաղութակալական քաղաքականությունից և Իրանի հետ կնքած անիրավահավասար պայմանագրերի չեղյալ հայտարարելը հսկայական տպավորություն թողեցին Իրանում։ 1918 թ. Թեհրանում սովետական դիվանագիտական ներկայացուցիչը տեղեկացնում էր, թե. «Հնարավոր չէ հաղորդել այն տպավորությունը, որ այդ որոշումները թողեցին պարսիկների վրա։ Թեհրանը տառացիորեն ցնցված էր համընդհանուր ուրախության պայթյունից։ Ես ոչ մի բոպե ազատ չեմ ինձ ողջունող պատվիրակության և առանձին մարդկանց անվերջ շարքից։ Մինչև իսկ փողոցում ինձ բուռն ծափահարություններով են դիմավորում»[19]։

Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո սովետական կառավարության հռչակած խաղաղասիրական արտաքին քաղաքականությունը հսկայական ժողովրդայնություն վայելեց ամբողջ Արևելքում։ Իրանական կառավարությունը Տաշքենդում իր ներկայացուցչի միջոցով Վ. Ի. Լենինին ուղարկած ողջույնի ուղերձում ասում էր, որ Վ. Ի. Լենինը «Արևելքի ազատության գլխավոր արարիչն է» և որ «Ռուսական հեղափոխության արևոտ լույսի տակ կծաղկեն Իսֆահանի վարդերը և Շիրազի նարգիզները»[20]։

---

18 «Сообщения МИД Ирана в иранскую прессу», № 3429 (տե՛ս «Великий Октябрь и народы Востока», М., 1957).

19 «Документы внешней политики СССР», т. 1, М., 1957, стр. 713—714.

20 ЦПА ИМЛ, ф. 122, оп. 1, ед. хр. 95, л. 68 (Տե՛ս «Великий Октябрь и народы Востока», М., 1957, стр. 23).

Երբ 1917 թ. դեկտեմբերի 22-ին Բրեստ-Լիտովսկում սկսվեցին հաշտության բանակցությունները, Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչը հրապարակեց մի դեկլարացիա, որտեղ պաշտպանվում էին բոլոր ժողովուրդների ազգային անձեռնմխելիությունը և ինքնորոշման իրավունքը։ Սովետական ներկայացուցիչը առաջ քաշեց վեց սկզբունքային և հիմնական պահանջ, որոնցից երկուսը անմիջականորեն վերաբերում էր Իրանի ժողովրդի վիճակին։ Սովետական կառավարությունը առաջին հերթին պահանջում էր թույլ չտալ պատերազմի ժամանակ գրավված հողերի բռնի միացում ու ամենակարճ ժամանակում այդ հողերից օկուպացիոն զորքերի դուրս բերումը։ Այնուհետև սովետական կառավարությունը պահանջում էր վերականգնել այն ժողովուրդների քաղաքական ինքնուրույնությունը, որոնք դրանից զրկվել էին իմպերիալիստական պատերազմի ժամանակ[21]։

Բրեստի հաշտության փաստաթղթում մտցվել էր հատուկ հոդված Իրանի և Աֆղանստանի անկախության վերաբերյալ։ «Ելնելով այն փաստից,—ասվում էր հոդվածում,— որ Իրանը և Աֆղանստանը հանդիսանում են ազատ և անկախ պետություններ, պայմանավորվող կողմերը պարտավորվում են հարգել Իրանի և Աֆղանստանի քաղաքական և տնտեսական անկախությունը և տերիտորիալ անձեռնմխելիությունը»[22]։

Նկատի ունենալով, որ անհրաժեշտ էր «մեծագույն շտապողականություն հնարավորին չափ շուտ լիկվիդացնելու այն բռնությունները, որ ցարիզմն ու Ռուսաստանի բուրժուական կառավարությունը պատճառել էին իրանական ժողովրդին», սովետական կառավարությունը չսպասելով Իրանից ռուսական զորքերը դուրս բերելու մասին բանակցություններին, որոշեց այդ զորքերը դուրս բերել երկրից[23]։

---

21 Տե՛ս «Внешняя политика СССР», сборник документов, т. 1, стр. 32—34.

22 «Документы внешней политики СССР», т. 1, док. 78, стр. 123.

23 Նույն տեղում, էջ 73։

Սակայն ռուսական զորքերի հեռացումը Իրանից տեղի ունեցավ ոչ առանց խոչընդոտների։ Հեղափոխության և սովետական իշխանության թշնամիները ոչ մի ջանք չխնայեցին խանգարելու սովետական կառավարության բարեկամական ակտերը։ Անգլիական իմպերիալիստները և հակահեղափոխական ցարական զինվորականները վախենում էին, որ սովետական կառավարության բարեկամական քաղաքականությունը կբարձրացնի սովետական իշխանության հեղինակությունը Իրանում, կօգնի իրանական ժողովրդին համոզվելու Հոկտեմբերյան հեղափոխության հռչակած խաղաղասիրական և դեմոկրատական սկզբունքների ճշմարտացիության մեջ։

1918 թ. հունվարի 12-ին Թեհրան ժամանեց սովետական առաջին ներկայացուցիչը՝ Բրավինը, որը պետք է հավաստիացներ իրանական կառավարությանը, որ այսուհետ սովետական կառավարության և Իրանի միջև հնարավոր են միայն իրավահավասար հարաբերություններ՝ հիմնված ազատ համաձայնության և փոխադարձ հարգանքի վրա։

«Հասավ այն ժամը,—գրում էր Թեհրանի թերթերից մեկը,—երբ Իրան եկավ բոլշևիկների ներկայացուցիչը, որը հսկա դարբնի պես մեծ մուրճով կջարդի ստրկության շղթաները, որոնք շղթայակապել են Իրանի դժբախտ երկիրը»[24]։

Սակայն, եթե իրանական ժողովրդի լայն շրջանները, բանվորները, ինչպես նաև ազգային բուրժուազիայի նշանակալից մասը ուրախությամբ ընդունեցին և հավանություն տվեցին սովետական կառավարության բարեկամական ակտերին, ապա իշխող շրջանները անգլիական իմպերիալիստների անմիջական հրահրումով թշնամական վերաբերմունք ցուցաբերեցին։

Սովետական կառավարության այս քայլերը մեծ սարսափ առաջացրին իմպերիալիստական շրջաններում։ Ամերիկյան հեղինակ Դինը գրում է, որ. «Արևմտյան պետությունները անհանգստացած էին Լենինի կողմից ցարական պայմանագրերը չեղյալ հայտարարելուց, պայմանագրեր, որոնք Ռու-

---

24 «Известия», 16/IV 1918.

սաստանին տրամադրում էին հատուկ արտոնություններ այնպիսի երկրներում, ինչպիսիք են Չինաստանը և Իրանը, մի ակտ, որը մարտահրավեր էր մյուս շրջաններում գաղութային տերությունների արտոնյալ դիրքերին»[25]։

Համենայն դեպս անգլիական իմպերիալիստները ստիպված եղան դեմագոգիկ նպատակներով չեղյալ հայտարարել մի քանի ստրկացուցիչ այնպիսի պայմանագրեր, որոնք փաստորեն արդեն վերացվել էին Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո։ Ազարին, անդրադառնալով Քերզոնի այն հայտարարությանը, թե իբր «Անգլիան հայտնել է Իրանի կառավարությանը, որ այսուհետ 1907 թ. պայմանագիրը կարճվում է», գրում է. «Խոստանում են, որ այս օրվանից կկարճեն մի պայմանագիր, որի հիմքերը արդեն փշրվել է համաշխարհային հսկա հեղափոխության առաջացումով։ Մի պայմանագիր, որը թշնամական նպատակներով էր ստորագրվել և որի վերջնական նպատակը Իրանի անկախության ու ազատության ոչնչացումը և սահմանադրության քայքայումն էր։ Երբ մեր հարևանության մեջ մի երջանիկ հեղափոխության առաջացումը խորտակել է նրա հիմունքները, այսօր անգլիական դիվանագետների մեծահոգությամբ այն կարճվում է»[26]։

Քաղաքացիական պատերազմում սովետական ժողովրդի տարած հաղթանակները հսկայական նշանակություն ունեցան Արևելքի ժողովուրդների ազատագրական պայքարի ընթացքի վրա։

Համաշխարհային իմպերիալիզմի կրած հարվածից, զինված ինտերվենցիայի ջախջախումից և հատկապես Անդրկովկասում անգլիական իմպերիալիստների պարտությունից և այնտեղ սովետական իշխանության հաստատումից հետո Իրանում էլ ավելի մեծ թափ ստացան դեմոկրատական և ազգային-ազատագրական շարժումները։

---

25 V. Dean, The United States and Russia, New-York, 1948, p. 129.

26 راه صفحه ۲۴۰ .... على اذرى قيام شيخ محمد خيابانى

1920 թ. ապրիլին Բաքվի պրոլետարիատի զինված ապըստամբության հաղթանակով Ադրբեջանում տապալվեց մուսավաթական կառավարությունը և հաստատվեց սովետական իշխանություն։ Զախողվեցին Արևմտյան իմպերիալիստների և Իրանի հետադիմական ուժերի պլանները Ասիայում բոլշևիզմի տարածման առաջն առնելու նպատակով Հյուսիսային Իրանում և Անդրկովկասում մի ամուր պատ ստեղծելու ուղղությամբ։

Այսպիսով, հենվելով Սովետական Ռուսաստանի բարոյական և տնտեսական հովանավորության վրա, Արևելքի ժողովուրդները, այդ թվում և իրանական ժողովուրդը, հնարավորություն ստացան իրենց պայքարը ծավալել ընդդեմ իմպերիալիստական բռնությունների և ներքին ռեակցիայի։

Անդրադառնալով այդ հարցին, Իրանի «Թուդե» կուսակցության Կենտկոմի քարտուղար Ռեզա Ռադմանեշը գրում է, որ 1918—1919 թթ., երբ Անգլիան լիակատար կերպով տիրում էր երկրին, ազգային-ազատագրական շարժումները միտինգների, ցույցերի, գործադուլների և գաղտնի կազմակերպությունների գործունեության շրջաններից դուրս չեկան։ Սակայն, սկսած 1920 թվականից, Թուրքմենստանում և Բաքվում ազատարար կարմիր բանակի տարած հաղթանակից հետո, ազգային-ազատագրական շարժումները Իրանի հյուսիսային շրջաններում վերածվեցին զինված ապստամբության[27]։

Անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունները մեծ քաղաքական աշխատանքներ էին ծավալում իրանական բանվորների մեջ, որոնք մյուս ազգերի բանվորների հետ միասին մասնակցում էին հեղափոխական պայքարին։

Կոմունիստական ինտերնացիոնալի գործադիր կոմիտեն 1920 թ. օգոստոսին Բաքվում հրավիրեց Իրանի, Հայաստանի և Թուրքիայի բանվորների ու գյուղացիների համագումար։ Իրանի, Հայաստանի և Թուրքիայի ստրկացված ժողովրդական մասսաներին համագումարի ուղղած դիմումի մեջ ասված էր. «Իրանի գյուղացիներ և բանվորներ! Թեհրանի ղա-

---

27 رضا رادمنش تاثیر انقلاب کبیر در ایران ۱۳۳۸ صفحهٔ ۷

չարական կառավարությունը և նրա ծառաները—նահանգային խաները, դարեր շարունակ թալանել և շահագործել են ձեզ։ Հողը յուրացվել է Թեհրանի կառավարության լակեյների կողմից։ Նրանք տնօրինում են այդ հողը, իրենց հայեցողությամբ ձեզ են պարտադրում հարկեր և տուրքեր, քամում են երկրի ամբողջ հյութը, հասցնելով նրան քայքայման և թշվառության։ Անցյալ տարի երկու միլիոն ֆունտ ստերլինգի դիմաց Իրանը ծախեցին անգլիական իմպերիալիստներին, այն հաշվով, որ նրանք Իրանում բանակ կազմեն և այդպիսով էլ ավելի ճնշեն ձեզ, քան այն անում էին առաջ և որպեսզի բանակը ձեզանից դանձի հարկերը և տուրքերը՝ խաների և Թեհրանի կառավարության համար։ Նրանք Անգլիային ծախեցին Հարավային Պարսկաստանի հարուստ նավթային աղբյուրները, դրանով իսկ նպաստելով ձեր երկրի թալանին»[28]։

Փաստերը ցույց են տալիս, որ սովետական ժողովուրդների մղած հերոսական մարտերին մասնակցում էին նաև ռուսական տերիտորիայում գտնվող Արևելքի տարբեր ժողովուրդների, այդ թվում և իրանական ժողովրդի ներկայացուցիչները։ Միջին Ասիայում և Անդրկովկասում գտնվող իրանցի բանվորները մտնում էին կարմիր բանակի շարքերը, կազմակերպում էին իրանական կամավորական կարմիրբանակային զորամասեր և մասնակցում ինտերվենտների դեմ մղվող սովետական ժողովուրդների հերոսական պայքարին[29]։

Հոկտեմբերյան հեղափոխության հսկայական նշանակությունը Իրանի քաղաքական կյանքում լայն քննարկման է ենթարկվել իրանական մամուլում և պատմագրության մեջ։ Բերենք մի քանի քաղվածքներ։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Թավրիզում տարածված պրոկլամացիայում ասված էր. «Բոլոր լիբերալներին և մարդկային ազատության կողմնակից-

---

28 «Коммунистический интернационал», 1920, № 12, стр. 2259.

29 *Տե՛ս* «Великий Октябрь и народы Востока», стр. 55.

ներին հայտնվում է հաճելի տեղեկություն, որ բոլշևիզմի արևը իր ճառագայթներով լուսավորել է ամբողջ աշխարհը»[30]։

Ռաշտում գումարված մի մեծ միտինգում ջանգալիների ղեկավար Քուչիկ խանը հանդիսավոր կերպով հայտարարում է. «Վառ լույս է վառվել Ռուսաստանում, բայց սկզբում նրա ճառագայթները այնպես մթնացնեցին մեր աչքերը, որ մինչև իսկ մենք շրջվեցինք նրանից։ Բայց այժմ մենք հասկացանք այս ճաճանչափայլ լուսատուի ամբողջ վեհությունը։ Եթե Ռուսաստանում վառվող ճրագը հանգչի, ապա պարսիկ ժողովուրդը լուցկի չունի այն նորից վառելու համար։ Այդ պատճառով էլ պարսիկ ժողովրդի ամբողջ ջանքերը պետք է ուղղված լինեն Ռուսաստանի հետ դաշինքի։ Ի նշան սերտ դաշինքի ռուս բոլշևիկների հետ, ես գրկում և համբուրում եմ Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչներին»[31]։

«Գոլշան» թերթը 1921 թ. նոյեմբերի 21-ին խոսելով այն մասին, որ պետք է օգնություն կազմակերպել Ռուսաստանի սովյալներին, գրում է. «...Այդ օգնությունը ցույց է տրվում այն ազատ Ռուսաստանին, որը խորտակելով ցարական միահեծան կարգերը, ոչ միայն ինքը ազատագրվեց քմահաճույքի լծից, այլև փրկեց իր հարևան երկրներին։ Դա հենց այն Ռուսաստանն է, որը ոչնչացրեց ցարական կառավարության բոլոր գիշատիչ կոնցեսիաները և միանգամայն անվճար այդ ամենը վերադարձրեց Իրանին։ Դա հենց այն Ռուսաստանն է, որը եղբայրական օգնության ձեռք մեկնեց մեզ և ձգտում է մեզ հետ ապրել խաղաղ ու բարեկամ»[32]։

«Մեհրե Իրան» թերթը 1942 թ. գրում էր, որ առաջին երկիրը արևելքում, որը զգաց Հոկտեմբերյան մեծ հեղափոխության նշանակությունը և ողջունեց նոր կարգերի հաստատումը, Իրանը և Իրանի ժողովուրդն էր։ Իրանի ժողովուրդը, որը տարիներ շարունակ տառապել էր ցարական իշխանության քաղաքականությունից և անտանելի ճնշման ու բռնության հետևանքով ռուս ժողովրդի պես ձգտում էր այդ իշ-

30 ЦГВИА, ф. 13207, оп. 1, ед. хр. 14, л. 28.

31 «Современный Восток», 1960, № 4, стр. 16.

32 ՀՍՍՀ, ՊԿԱ, ֆոնդ 4с/114, գ. 180, էջ 167։

խանության տապալմանը, հենց որ սովետական սոցիալիստական նոր կարգերը հաստատվեցին, այդ նոր կառավարության կողմից երկարած բարեկամության ձեռքը ջերմորեն սեղմեց»[33]։

«Ցարիզմի ոչնչացումով մեր ամենաահեղ պատմական թշնամիներից մեկը ոչնչացավ և նրա չարաբաստիկ ու անցանկալի ազդեցությունը Իրանում վերացավ։ Սովետական նոր իշխանությունը Իրանի հետ բարեկամություն հաստատեց, Իրանում ունեցած իր բոլոր իրավունքները, արտոնությունները և կալվածքները նվիրեց Իրանի ժողովրդին։ ...Ցարերի վայրենի իմպերիալիզմի ոչնչացումը մեզ իրանցիներիս իրական և իսկական անկախություն ձեռք բերելու հույսեր տվեց, մութ և խավար հորիզոնը լուսավորեց և բացեց։ Հոկտեմբերի մեծ հեղափոխության ազդեցությունը Իրանում հակիմպերիալիստական զգացմունքները լարեց և մեզ ինքնապահպանության ու ազատատենչության քաջալերեց»[34], *գրում էր «Մարդում» թերթը 1942 թվականին։*

Իրանի քաղաքական կյանքի վրա Հոկտեմբերյան հեղափոխության ունեցած մեծ ազդեցության մասին վկայել են քաղաքական հակադիր բևեռներում գտնվող շատ գործիչներ։

Իրանի շահը 1956 թ. հուլիսի 11-ին Մոսկվայում ընդունելության ժամանակ հայտարարեց. «Դուք նշեցիք, որ Լենինի քաղաքականությունը Իրանի նկատմամբ հիմնված էր իրավունքների հավասարության և արդարության վրա։ Մենք Իրանում ընդունում ենք այդ և Իրանը գուցե առաջին պետություններից էր, որ ճանաչեց սովետական պետությանը, որը կազմակերպվել էր Լենինի ղեկավարության ներքո»[35]։

Իսկ Իրանի «Թուդեհ» կուսակցության քարտուղար Ռեզա Ռադմանեշը, գնահատելով Հոկտեմբերյան հեղափոխության հսկայական նշանակությունը, գրում է. «Հոկտեմբերյան հե-

---

33 انقلاب کبیر اکتبر بیست و پنجمین سال حشن انقلاب وانعکاس آن در ایران تهران ۱۹۴۲ صفحه ۶۳

34 *Նույն տեղում, էջ 9։*

35 «Правда», 7/II 1956.

դափոխությունը փրկեց մեր երկիրը, նրա անձեռնմխելիությունը և անկախությունը ոչնչացման վտանգից, ազատեց նրան ցարական իմպերիալիզմի լծից և անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեց իմպերիալիստների տնտեսական և քաղաքական ճնշումից ազատագրվելու համար։

Հոկտեմբերյան հեղափոխությունը մեր հարևանության մեջ ցարական Ռուսաստանի փոխարեն ստեղծեց բանվորական և գյուղացիական իշխանություն ունեցող Սովետական Ռուսաստանը և մեր ժողովուրդը հանձինս Սովետական Ռուսաստանի գտավ իր լավագույն բարեկամին և իր ազատության ու անկախության պաշտպանին և հովանավորողին[36]։

Հոկտեմբերի ազատարար դերի մասին արտահայտվել է նաև պարսիկ մտավորականությունը։

Իմպերիալիստական Անգլիայի և ցարական Ռուսաստանի Իրանում վարած գաղութարարական քաղաքականությունը մերկացնելով և Հոկտեմբերյան հեղափոխության ու մեծ Լենինի ազատարար դերը ցույց տալով, իրանական ականավոր քաղաքական գործիչ, գրականագետ, պատմաբան Մալեք օլ Շոարա Բահարը «Քաղաքական կուսակցությունների համառոտ պատմությունը» գրքում մի այսպիսի դեպք է հիշատակում. «Ռուսաստանում տեղի ունեցավ հեղափոխություն և ցարական ռուսական զորքերը Իրանից հեռացան և իրանցի ազատասերների հետ եղբայրացան։ Մեկ օր Մասշեդշահում մի խումբ դեմոկրատներ էին հավաքվել և ես Դեմոկրատական կուսակցության գաղտնի կազմակերպության ցուցումով ելույթ ունեցա ու ասացի. երկու թշնամի պարան էին գցել մեկի վզին, որպեսզի նրան խեղդեն։ Ցուրաքանչյուրը պարանի մի կողմը բռնած քաշում էր, իսկ այդ դժբախտը մեջտեղում օրորվում էր։ Այդ ժամանակ կողմերից մեկը պարանը բաց թողեց և ասաց. այ խեղճ մարդ, ես քեզ հետ եղբայր եմ, և դժբախտ մարդը փրկվեց։ Այն մարդը, որ այդ խոսքը ասաց և պարանը բաց թողեց, Լենինն էր»[37]։

---

36 رضا رادمنش تاثیر انقلاب کبیر در ایران، ۱۳۳۸ صفحه ۴

37 ملک الشعراء بهار تاریخ مختصر احزاب سیاسی جلد اول انقراض قاجاریه تهران ۱۳۲۳ صفحه ۲۷–۲۶

Հեղինակը պատկերավոր կերպով ցույց տալով իմպերիալիստական Անգլիայի և ցարական Ռուսաստանի գիշատիչ դաղութատիրական քաղաքականությունը Իրանում, որը փաստորեն երկիրը տանում էր դեպի ոչնչացում, ընդգծում է այն հսկայական դերը, որ ունեցավ Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանում։ Սովետական իշխանության և մեծ Լենինի բարիդրացիական, իրավահավասար և բոլոր մեծ ու փոքր ազգերի շահերը հարգելու քաղաքականությունը փրկեց Իրանը ստրկացումից։

Մոարեխ օլ Դոլե Սեփեհրը «Իրանը 1914—1917 թթ. մեծ պատերազմում» արժեքավոր աշխատության մեջ, անդրադառնալով Իրանի նորագույն պատմության մեջ Հոկտեմբերյան հեղափոխության ունեցած ազդեցությանը, գրում է. «Ռուսաստանի կարգերի փոփոխումը Իրանի տնտեսական և քաղաքական վիճակում խոր ազդեցություն ունեցավ։ Ցարական Ռուսիայի ռազմական ճնշումը, որը ավելի քան մեկ դար ծանրանում էր Իրանի կրծքի վրա, հանկարծ վերացավ, և Իրանի հայրենասերների համար հույսի լուսանցք բացվեց, կարծես թե ռեակցիոներների և ռուսական վարձկանների հույսերի առջև հուսահատության և տխրության մի պատ քաշվեց։ ...Քաղաքական տեսակետից Ռուսաստանի հեղափոխությունը Իրանի համար անհամար օգուտների երաշխիք էր։ Իհարկե Կերենսկու շրջանում ռուսական քաղաքականության մեջ Իրանի օգտին որևէ զգալի փոփոխություն տեղի չունեցավ։ ...Բայց հենց որ Լենինը իրավունքները ստանձնեց, ցարերի կողմից բռնի կերպով Իրանին պարտադրված կոնցեսիաները և արտոնությունները անհապաղ չեղյալ հայտարարեց, Իրանից ռուսական զորքերի հեռացման հրաման արձակեց»[38]։

Բարձր գնահատականով է հանդես եկել Մեհդի Մալեքզադեն «Իրանի սահմանադրական հեղափոխության պատմությունը» գրքում։ «Ռուսաստանի բռնապետական կառավարությունը, որը Ճապոնիայից կրած պարտությունից և ներ-

---

38 مورخ الدوله سپهر ایران درجنگ بزرگ ۱۹۱۴–۱۹۱۷ تهران ۱۳۳۶ صفحه ۲–۴۵۱

քին հեղափոխությունից վիրավորվել և անկարող էր դարձել, 1914 թ. համաշխարհային պատերազմում պարտվեց։ Բռնապետական կառավարությանը փոխարինեց ժողովրդական իշխանությունը և Իրանը մահվան վտանգից փրկվեց։ Այն, ինչ ռուսական ագրեսիվ կառավարությունը տարիների ընթացքում ուժով և բռնությամբ Իրանից կորզել էր, Լենինի ազատասեր կառավարությունը ամենայն բարյացակամությամբ, մարդասիրությամբ ու ազատամտությամբ Իրանի ժողովրդին վերադարձրեց և իրանցիներին իրեն սիրո և արդարամտության պարտական դարձրեց»[39]։

Իսկ Ալի Ազարին «Շեյխ Մոհամեդ Խիաբանիի ապստամբությունը Թավրիզում» աշխատության մեջ գրում է. «Հույսի բոլոր դռները փակվել էին Իրանի ազատասերների համար։ Իրանի ազատության համար պայքարող լավագույն մարդկանցից շատերին ձերբակալեցին կամ սպանեցին։ Նրանց մի մասը հեռացավ, իսկ մյուս մասը անհայտացավ։ Բայց մնացածները ազատասիրության բառարանից հուսահատությունը միանգամայն մերժելով, պայքարը ուժգին կերպով շարունակեցին։ Բարեբախտաբար շուտով այդ իղձը Ռուսաստանի տանջված աշխատավորության ջանքերով իրականացավ։ Երկար չանցավ, երբ 1917 թ. հոկտեմբերին հեղափոխության արևը անծայրածիր փայլատակեց, և մարդկության երջանկության աստղերը շողացին»[40]։

* * *

Բրիտանական իմպերիալիզմի քաղաքականությունը Իրանում 1918—1920 թթ. սերտորեն կապված էր Սովետական Ռուսաստանի դեմ կազմակերպված զինված ինտերվենցիայի պլանների հետ։ Նա միաժամանակ հետապնդում էր Իրանի լիակատար գաղութացումը։

Երբ Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով խորտակվեց ցարական իմպերիալիզմը, անգլիական մոնոպո-

---

39 مهدی ملکزاده تاریخ انقلاب مشروطیت ایران تهران ۱۳۲۸ صفحه ۱۷۱

40 علی آذری قیام شیخ محمد خیابانی .... صفحه ۱۱۸

լիստների մոտ մեծ հույսեր առաջացան Իրանի գաղութային շահագործման մենաշնորհը ամբողջովին իրենց ձեռքը վերցնելու համար։

Իրանից ռուսական զորքերի հեռացումից հետո անգլիացիները շարժվելով դեպի հյուսիս, գրավեցին ամբողջ երկիրը։ 1918 թ. հունվարին Իրան ուղարկվեց անգլիական հատուկ զորամաս գեներալ Դենստերվիլի հրամանատարությամբ, որը Բաղդադից առաջանալով գրավեց Համադան քաղաքը, իսկ հետո շարժվելով հյուսիս՝ փորձեց ճանապարհ բացել դեպի Բաքու։ Նրանք Հյուսիսային Իրանում հանդիպեցին ջանգալիների դիմադրությանը՝ Քուչիկ խանի գլխավորությամբ։

Ջանգալիները Ֆումենում հրատարակում էին «Ջանգալ» թերթը, որի առաջին համարը լույս տեսավ 1917 թ. մայիսի 23-ին։ Թերթի համարներում զետեղված նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա մերկացնում էր Իրանի իշխող շրջանների ներքին և արտաքին քաղաքականությունը, ինչպես նաև անգլիական իմպերիալիստների հետապնդած նպատակները Իրանում։

«Ջանգալ» թերթը 1917 թ. հոկտեմբերին գրում էր. «Համաշխարհային պատերազմի հիմնական հրահրիչներից մեկը Մեծ Բրիտանիան էր, որը ձգտում էր բոլոր փոքր ժողովուրդների սուվերենիտետը ոչնչացնել»։ Թերթը գրում էր, որ Անգլիան ձգտում է նորանոր գաղութներ ձեռք բերել և այդ թվում հավիտյան ստրկացնել Իրանը[41]։ Նա կոչ էր անում պայքարի դուրս գալ անգլիական իմպերիալիստների դեմ և խափանել նրանց այդ մտադրությունները, նշելով, որ ռուս ժողովրդի հաղթանակը և ցարիզմի պարտությունը «ամրապնդեց իրանական ժողովրդի հույսերը ավելի լավ ապագայի նկատմամբ և նրան հավատ ներշնչեց, որ ռուսական դեմոկրատիան իրանական ժողովուրդներին նյութական և բարոյական օգնություն ցույց կտա»[42]։

---

41 «جنگل». 4/X 1917.

42 «جنگل». 23/V 1917.

Սակայն Դենստերվիլին հաջողվեց դեռևս Իրանում մնացած Բիչերախովի հրամանատարության տակ գտնվող ցարական զորքերի օգնությամբ հաղթահարել այդ խոչընդոտը և հասնել մինչև Կասպից ծովի ափերը։

Ամրանալով Հյուսիսային Իրանում, անգլիական իմպերիալիստները պատրաստվում էին շարժվել դեպի Բաքու, Բաքվի կոմունայի դեմ պայքարելու համար։ Մյուս կողմից, անգլիական իմպերիալիստները իրանական կառավարության օգնությամբ, մի կառավարություն, որը, ինչպես Ս. Մ. Կիրովն էր ասում, «գտնվում էր անգլիական իմպերիալիստների անմիջական ղեկավարության և հպատակության ներքո»[43], ձեռնամուխ եղան երկրում ծավալվող ազգային-ազատագրական շարժումը ճնշելուն։

Այսպիսով, գրավելով ամբողջ Իրանը, անգլիական իմպերիալիստները մտադիր էին Իրանում և Անդրկովկասում ստեղծել հակահեղափոխական կառավարություններից կազմված մի պատնեշ՝ կոմունիզմի տարածման առաջն առնելու համար։ Միևնույն ժամանակ նրանք ձգտում էին Իրանը վերածել գաղութի և օգտագործելով Ռուսաստանում ստեղծված դրությունը, ձեռք գցել Բաքվի նավթը և Անդրկովկասի ամբողջ հարստությունը։ Բացի այդ, նրանք ծրագրում էին Իրանում ու Անդրկովկասում հաստատվելուց հետո օգնել Ռուսաստանում հակահեղափոխական ուժերին՝ նորաստեղծ սովետական իշխանության դեմ պայքարելու համար։

Անգլիական հեղինակները մինչև իսկ չեն թաքցնում, որ «Մեծ Բրիտանիան, նոր իրավիճակը օգտագործելով, գրավել էր ամբողջ Իրանը և օգտագործում էր այն որպես բազա Կովկասում և Թուրքեստանում բոլշևիկների դեմ մղած գործողություններում»[44]։

Միանգամայն արդարացի է «Նավթը և արտաքին քաղաքականությունը» գրքի հեղինակ Մայքլ Բրուքսը, երբ գրում է. «Անգլիական զորքերն ամուր կաշկանդել էին Հյուսիսային

---

43 «Доклад С. М. Кирова», Стенографический отчет V съезда АКП(б), стр. V, Бюллетень № 2, Баку, 1923.

44 L. Fischer, The Soviets in World Affaires, vol. I, p. 425.

Իրանը. նրանց ներկայությունը պայմանավորված էր երկու նպատակով. 1. ռազմական ինտերվենցիայի օգնությամբ խորտակել երիտասարդ Սովետական հանրապետությունը և 2. ապահովել Իրանի լիակատար ստրկացումը...»[45]։

Մի ուրիշ հեղինակ, Էլվել Սաթնը, անդրադառնալով Իրանի նկատմամբ Անգլիայի մտադրություններին, գրում է, որ երբ ռուսները Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո հեռացան Հյուսիսային Իրանից, գերմանացիների և թուրքերի համար ճանապարհ բացվեց շարժվելու դեպի Հնդկաստան ու Աֆղանստան։ Սակայն այդ պետությունները արդեն ծանր վիճակի մեջ էին և չէին կարող օգտվել ստեղծված դրությունից։ Բրիտանական ուժերը կարողացան Իրանի հյուսիսը և հարավը իրենց հսկողության տակ վերցնել և Գերմանիայի պարտությունից հետո այլևս ոչ մի արգելք չկար նրա ազդեցության ընդարձակման համար։ Միակ արգելքը, որը խանգարում էր անգլիացիներին հասնելու իրենց վերջնական նպատակին, իրանական ժողովրդի դիմադրությունն էր, որն այն ժամանակ միանգամայն անսպասելի էր և հաշվի չէր առնվել անգլիացիների կողմից։ «Մի հարց, որ պետք է ուշադրության արժանանա,—գրում է Էլվել Սաթնը,—դա այն է, որ իրենց ագահ ծրագրերը մշակելիս բրիտանական քաղաքագետները մի շատ կարևոր հանգամանք անտեսեցին և վերջին տարիներին անընդհատ աճող իրանցիների ազգային ներքին զգացմունքները չգնահատեցին, որի հետևանքով մի քանի ամսվա ընթացքում դրությունը միանգամայն փոխվեց, և իրանական ժողովուրդը նորից կարողացավ ոտքի կանգնել[46]։ Այնուհետև նա նշում է, որ նոր Ռուսաստանը հենց սկզբից որոշ հաջողություններ ունեցավ։ Չնայած ցարական Ռուսաստանը Անգլիայի պես մասնակից էր հանցագործ քաղաքականությանը, սակայն Ռուսաստանի հեղափոխությունը հույս էր տալիս, որ այդ երկիրը փոխելու է իր նախկին քաղաքականությունը։ Ռուսաստանը ուզում էր պատերազմից հետո թըշ-

---

45 М. Брукс, Нефть и внешняя политика, М., 1949, стр. 63.

46 ۱۲ول سالدن رضا شاه کبیر یا ایران نو تهران—۱۹۶ صفحه ۲—۱۹۱

նամական պետությունների կողմից իր շուրջը քաշած պատնեշը ճեղքել. «Իրանն էլ,—շարունակում է Սաթնը,—Թուրքիայի և Աֆղանստանի պես, այն երիտասարդ երկրներից էր, որ սեր և համակրանք չուներ Արևմուտքի կապիտալիստական երկրների նկատմամբ։ Եվ այդ պատճառով ու սահմանակից լինելու հետևանքով հարմար դաշնակից էր համարվում Սովետական Ռուսաստանի համար»[47]։

Հասկանալի է, որ անգլիական իմպերիալիստները հենվում էին Իրանի իշխող դասակարգերի որոշ շերտերի և իրանական կառավարության վրա, որը կազմվում ու ցրվում էր անգլիացիների թելադրանքով և իր գոյությունը քաշ տալիս անգլիական նյութական միջոցներով։

Ուփթոնը «Ժամանակակից Իրանի պատմությունը» գրքում ցույց տալով Իրանում անգլիական գերիշխանության մեթոդները, գրում է. «Պատերազմի վերջին Իրանը ոչ միայն գտնվում էր բրիտանական հովանավորության ներքո, այլև մինչև իսկ կառավարության կանոնավոր ծախսերը նշանակալից չափով տրվում էին անգլիացիների կողմից, ամսական 225000 ստերլինգ ավանսի եղանակով, որը պարունակում էր նաև կազակային զորամասի պահպանման ծախսերը։ Դրան անգլիացիները հոնորարների կամ կաշառքի ձևով լրացուցիչ մեծ գումարներ էին տալիս տեղական պաշտոնյաներին, ինչպես, օրինակ, Շիրազի նահանգապետին...»[48]։

Վերջապես Անգլիան տիրում էր Իրանին միահեծան կերպով, քանի որ նրան այլևս ոչինչ չէր խանգարում։ Ինչպես Քերզոնն էր նշում կառավարությանը հղած իր հուշագրում, պատերազմի տարիներին Իրանում Անգլիայի ձեռքերը «կապված էին 1907 թ. անգլո-ռուսական դժբախտ պայմանագրով»[49]։

---

47 Նույն տեղում, էջ 408։

48 J. M. Upton, The History of Modern Iran, an Interpretation, Cambridge, 1960, p. 41.

49 „Documents on British foreign policy, 1919—1939", first series, vol. VI, London, 1952, p. 1119.

Հետաքրքրական է, որ համանման գործունեություն էին ծավալում նաև ամերիկյան իմպերիալիստների ներկայացուցիչները։ Բերենք երկու փաստ։

Երբ Իրան եկավ «Իրանի օգնության ամերիկյան հանձնաժողովը», Միջագետքի անգլիական հրամանատար գեներալ Մարշալը կարգադրություն ստացավ ամեն տեսակ օժանդակություն ցույց տալ նրան։ «Ես,—գրում է Մարշալը,—իհարկե, այդպես էլ արեցի, թեև միանգամայն համոզված էի, որ նավթն էր հանձնաժողովի գործունեության գլխավոր նպատակը և ոչ թե սովյալներին օգնելը»[50]։

Սա, իհարկե, այնպիսի խոստովանություն է, որ ամերիկյան իմպերիալիզմի ոչ մի ջատագով ի վիճակի չի լինի հերքելու։

Իսկ թե ինչպես էին նրանք միջամտում Իրանի ներքին գործերին և «երկրի անդորրը» ապահովելու քողի տակ փաստորեն պայքարում ազգային-ազատագրական շարժման դեմ, ցույց է տալիս հետևյալ փաստը։

Թիֆլիսում ամերիկյան հյուպատոս Սմիթը 1917 թ. վերջին հաղորդում էր իր կառավարությանը, որ հյուսիս-արևմտյան Իրանում անդորրը ապահովելու համար անհրաժեշտ է պարսիկներին նշանակալից դրամական օգնություն տրամադրել, որը ինքը Սմիթը, Թավրիզի հյուպատոսը և Թեհրանի դեսպանը կբաշխեն։ Նա իր ներկայացուցիչ Դուլիթիլին ուղարկում է Թեհրան դրությունը ուսումնասիրելու համար, իսկ 1918 թ. գարնանը ինքն է մեկնում հյուսիսային Իրան[51]։

Անգլիական իմպերիալիստների Իրանում ունեցած միահեծան գերիշխանության և նրանց հետապնդած նպատակների հարցին լայնորեն անդրադարձել են պարսիկ հեղինակները։

Այսպես, իրանական հեղինակ Սիիդ Դամը իր «Իրանի և Եվրոպայի հարաբերությունների պատմությունը ներկա դարի սկզբներին» գրքում խոսելով Անգլիայի վարած քաղաքա-

---

50 W. Marshall, Memories of four fronts, London, 1929, p. 317.

51 „Foreign Relations", V, II, 1918, p. 58.

կանության սասին, գրում է, որ համաշխարհային առաջին պատերազմի ավարտից հետո Իրանն ընկավ անգլիացիների լոնի, դաժան և մենաշնորհ տիրապետության տակ, մի տիրապետություն, որի ցանցերը ամբողջ Արևելքն էր բռնել և այդ ցավահար երկրամասի մասսաների վզին ստրկության շղթաներ գցել[52]։

Աբդոլահ Մոսթոֆին նշում է, որ լորդ Քերզոնը հավակնում էր, թե Անգլիան Իրանը փրկեց գերմանացիներից, թուրքերից, իսկ այժմ էլ ուզում է փրկել բոլշևիկներից։ Բայց դա, իհարկե, ճիշտ չէ, քանի որ անգլիական զորքերի Իրան ուղարկելը «ոչ թե իրանցիներին պաշտպանելու, այլ Դենիկինին և Վրանգելին օգնելու համար էր»։ Այնուհետև Մոսթոֆին շարունակում է, որ անգլիացիները Անդրկովկասի ազգային կառավարություններին հովանավորում էին, որպեսզի «Ռուսաստանի դուրջը ստեղծված պատը Իրանի կողմից ևս ավարտվի...»[53]։

Ադրբեջանի դեմոկրատների օրգանը 1918 թ. գրում էր. «Անցել է այն ժամանակը, երբ անգլիացիները իրենց քաղցր խոսքերով իրանցիների մեջ հավատք էին ներշնչում, թե Անգլիան իբր թույլ ազգերի բարեկամը և հովանավորողն է, թե նա ցարիզմի դեմ է և Իրանին ու նրա ժողովրդին ցանկանում է բարիք և անկախություն։ Բայց ռուսական ազատ կառավարության միջոցառումները, հատկապես գաղտնի պայմանագրերի հրապարակումը, անգլիացիների դիմակը պատռեց և փարատեց նրանց նկատմամբ եղած հավատքը։ Այժմ նրանց չար նպատակները հայտնի դարձան բոլորին։ Բոլոր փոքր երկրներին արդեն հասկանալի դարձավ, որ հնագույն Իրանը գաղութի վերածելու հիմնական հանցավորը հենց Անգլիան է։ Այսպիսով, այլևս անգլիացիների քաղցր խոսքերին ոչ ոք չի հավատում։ Նրանց հավատում և պաշտպանում են միայն

---

52 سپیده دم تاریخ روابط ایران واروپا در اوایل قرن معاصر تهران ۱۹۶ صفحه ۱

53 عبد الله مستوفی شرح زندگانی من یا تاریخ اجتماعی واداری دوره قاجاریه قسمت اول از جلد سوم تهران ۱۹۴۵ صفحه ۱۹۸

հայրենիքի դավաճանները, որոնք ծախվել են անգլիական ոսկու դիմաց»[54]։

Իրանում իրենց փաստական գերիշխանությանը իրավական ձևակերպում տալու համար 1919 թ. օգոստոսի 9-ին անգլիական իմպերիալիստները Իրանին թելադրեցին անգլո-իրանական պայմանագիրը։

Հայտնի է, որ երբ սովետական կառավարությունը ցարական բոլոր անհավասար պայմանագրերը չեղյալ համարեց, Սամսամ էս Սալթանեի գլխավորած կառավարությունն էլ 1918 թ. հուլիսի 27-ին կառավարության նիստում որոշում կայացրեց բոլոր անիրավահավասար պայմանագրերը և համաձայնագրերը չեղյալ համարել և այդ որոշման մասին հայտնեց բոլոր օտարերկրյա ներկայացուցիչներին։

Անգլիական իմպերիալիստները խիստ վրդովմունք հայտնեցին այդ որոշման կապակցությամբ, գնահատելով այն որպես հակաանգլիական մի ակտ։ Թեհրանում անգլիական դեսպան Մարլինգը շահին հայտնեց, թե այդ որոշման իրականացումը «համազոր է Իրանի կողմից Անգլիային պատերազմ հայտարարելուն»։

Ահա հենց այդ քայլից հետո էր, որ անգլիական դեսպանի պնդմամբ շահը առաջարկեց Սամսամ էս Սալթանեին հրաժարական տալ, և երբ վերջինս չենթարկվեց, նրան բռնի կերպով հեռացրին իշխանությունից։

Այսպիսով, անգլիացիներին հաջողվեց ստեղծել մի կառավարություն, որին պարտադրեցին անգլո-իրանական 1919 թ. պայմանագիրը։ Պայմանագիրը, որ կոչվում էր «Իրանի առաջադիմության և բարեկեցության համար բրիտանական օգնության մասին», ստորագրեցին Իրանի պրեմիեր-մինիստր Վոսուգ էդ Դովլեն և Թեհրանում անգլիական դեսպան Քոքսը[55]։

Անգլո-իրանական պայմանագիրը համաժողովրդական խոր վրդովմունք առաջացրեց ամբողջ երկրում։ Տեղի ունե-

---

54 «Азербайджан», 8/II 1918.

55 „Agreement between His Britanic Majesty's Government and the Persian Government signed at Teheran, August 1919", London, 1919.

ցան ցույցեր, որոնց մասնակիցները պահանջում էին բարեկամական հարաբերություններ հաստատել Սովետական Ռուսաստանի հետ և ողջունել Իրանի նկատմամբ նրա բարիդրացիական քայլերը, որոնք երաշխիք կարող էին հանդիսանալ Իրանի անկախության և ազատության համար։

Անգլո-իրանական վերոհիշյալ պայմանագիրը, որը փաստորեն երկիրը վերածում էր Անգլիայի գաղութի, լայնորեն քննարկվել է իրանական պատմագրության մեջ։

Բահարը գրում է. «1919 թ. Վոսուգ էդ Դովլեի պայմանագիրը Անգլիայի հետ քննարկվեց Իրանում և հարված ստացավ բոլոր դասակարգերի և կուսակցությունների կողմից՝ թե ձախ և թե աջ»[56]։

Իսկ Հոսեյն Մաքին, խոսելով պայմանագրի առաջացրած վրդովմունքի մասին՝ գրում է. «1919 թ. պայմանագրի ստորագրումը Իրանի նոր պատմության կարևորագույն դեպքերից մեկն է։ Այդ պայմանագիրը նման էր մի հարիշի, որը ամուր խփվեց ժողովրդի նվագալարերին և բոլոր դասակարգերից հակառակության ուժեղ ձայն բարձրացավ։ Ժողովրդի բոլոր խավերը պայմանագրին հակառակ էին, բացի մի քանի հոգուց, որոնք Վոսուգ էդ Դովլեի մտերիմներն ու համախոհներն էին»[57]։

Իրանական Ադրբեջանում ծավալված ազգային-ազատագրական շարժումը Խիաբանու գլխավորությամբ նույնպես մեծ թափ ստացավ անգլո-իրանական ստրկացուցիչ պայմանագրից հետո։ Հանդես գալով քսանհազարանոց միտինգում, Խիաբանին ասաց. «Այսօր ես պաշտոնապես ամբողջ աշխարհին հայտարարում եմ, որ մենք ապստամբել ենք Անգլիայի հետ ավերիչ պայմանագիր կնքող Վոսուգ էդ Դովլեի կառավարության դեմ»[58]։ Մի այլ առիթով անդրադառնալով Իրանի կառավարող հետադիմական խավերի դավաճանական ակտե-

---

56 ملك الشعراء بهار تاريخ مختصر احزاب سياسى جلد اول انقراض قاجاريه تهران ۱۳۳۰ صفحه ۳۰

57 حسين مكى تاريخ بيست ساله ايران .... صفحه ۲

58 على آذرى قيام شيخ محمد خيابانى .... صفحه ۳٦۷

ին, Խիաբանին հայտարարեց. «Ե՞րբ են նրանք լավ քննություն հանձնել։ Նրանք միշտ ցանկացել են երկիրը ծախել և դեմոկրատիան գցել իմպերիալիստ դաժան շահագործողների ձեռքը, բայց մենք չենք թողել։ Նրանք օտարներին հրավիրեցին երկիր, նրանց գաղափարները և մտքերը տարածեցին, նրանց նենգ մտքերի և ծրագրերի միջնորդները դարձան, իսկ մենք դեմոկրատիայի իրավունքները պաշտպանելու համար ոտքի կանգնեցինք և դժբախտ ժողովրդին փրկեցինք օտարերկրյա իմպերիալիստների ոչնչացնող հարվածներից...»[59]։

Այսպիսով, պայքարելով ընդդեմ Վոսուգ էդ Դովլեի հետադիմական կառավարության, Ադրբեջանի Դեմոկրատական կուսակցությունը Խիաբանու գլխավորությամբ փաստորեն պայքարում էր ընդդեմ անգլիական ազդեցության Իրանում, քանի որ Վոսուգ էդ Դովլեն հանդիսանում էր անգլո-իրանական 1919 թ. պայմանագրի գլխավոր ճարտարապետը[60]։

Նույնը կարելի է ասել նաև Խորասանում Մոհամադ Թաղի խանի գլխավորությամբ ծավալված ազատագրական շարժման մասին։ Մաշհադում լույս տեսնող թերթերը կոչ էին անում պայքարել երկրի անկախության և իմպերիալիստական լծից ազատագրվելու համար։ Հաբիբոլլահ Մոխթարին գրում է. «Մոհամադ Թաղի խանը ամբողջովին դեմ էր Անգլիայի դաղութարարական քաղաքականությանը Արևելքում և հատկապես Իրանում։ Նա ասում էր, որ երիտասարդ իրանցիները իրենց երկրի քաղաքական և տնտեսական լիակատար անկախությունը ձեռք բերելու և այն պահելու համար պետք է, ինչ ձևով էլ լինի, իրենց քղանցքը ազատեն եվրոպացիների և հատկապես անգլիացիների քաղաքական մեքենայություններից»[61]։

Իրանական ականավոր առաջադիմական բանաստեղծ Միրզադե Էշղին մեղադրում էր պրեմիեր-մինիստր Վոսուգ էդ

---

59 *Նույն տեղում։*

60 G. Lenczowski, Russia and the West in Iran, 1918—1948, New York, 1949, p. 61.

61 حبیب الله مختاری بیداری ایران تهران ۱۹۴۷ صفحه ۲۷۱

Դովլեթին և հայտարարում. «Ես ուզում էի հիշեցնել պրեմիեր մինիստրին, որ Իրանը նրա հոր կալվածքը չէ, որ նա մի անկախ պետություն է և պատկանում է Իրանի ժողովրդին։ Զգուշացեք այն օրվանից, երբ ձեր այս խայտառակ արարքները կպատժվեն կախաղանով։ Արդեն տեսանելի է այդ օրը և Իրանի ժողովուրդը աղոթում է այդ օրվա համար»։ Նա մերկացնում էր նաև անգլիական իմպերիալիստներին. «Կարծես թե մեր երկիրը ստեղծված է ժողովրդի արյունից, իսկ անգլո-սաքսոնյան գայլերը խմում են այդ արյունը»[62]։

Իրանական թերթերը չէին կարողանում թաքցնել, որ 1919 թ. անգլո-իրանական պայմանագիրը ուղղված էր Սովետական Ռուսաստանի դեմ։ «Իրան» թերթը, օրինակ, գրում էր, որ բոլշևիկները իրենց հոգևոր բարեկամներն են, և քանի որ անգլո-իրանական պայմանագիրը ուղղված էր բոլշևիկների դեմ, ապա դրա դեմ սկսվել է այսպիսի պայքար[63]։

Անգլիական իմպերիալիստները Իրանին պարտադրելով 1919 թ. անգլո-իրանական ստրկացուցիչ պայմանագիրը, ձգտում էին դա տարածել նաև Անդրկովկասի վրա։ Հենց այդ նպատակով էլ, անգլիական իմպերիալիստների ցուցումով, Իրանի ներկայացուցիչները և մուսավաթական Ադրբեջանի կառավարությունը բանակցություններ սկսեցին «դաշնակցային պայմանագիր» ստորագրելու համար։ 1919 թ. դեկտեմբերին Բաքու ժամանեց Իրանի արտակարգ կառավարական միսիան՝ տխրահռչակ Սեյիդ Զիա էդ Դինի գլխավորությամբ, որը Ադրբեջանի կառավարության հետ ստորագրեց «բարեկամության» պայմանագիր։ Դա փաստորեն 1919 թ. անգլո-իրանական պայմանագրի հավելումն էր։

Անգլիական իմպերիալիստները ամեն գնով աշխատում էին հովանավորել Ադրբեջանի մուսավաթական կառավարությանը, դրա մեջ տեսնելով իրենց պլանների իրագործման

---

62 Տե՛ս А. Х. Бабаходжаев, Влияние Великой Октябрьской социалистической революции на развитие национально-освободительного движения народов Ближнего и Среднего Востока, Ташкент, 1957, стр. 24.

63 Տե՛ս „Times", 13/V 1920.

նրաշխիքը։ Այդ տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Թեհրանում անգլիական դեսպանի զեկուցագիրը արտաքին գործերի մինիստր Քերզոնին, որտեղ տրվում է իրանական կառավարության վերաբերմունքը մուսավաթական Ադրբեջանի նկատմամբ։

«Թեհրան, 1920 թ. հունվարի 11։

Պրեմիեր-մինիստրը Կովկասում իրանական միսիայից զեկուցագիր և տեղեկություններ է ստանում նույն բովանդակությամբ, ինչ նորին մեծության կառավարությունը՝ իր ներկայացուցիչներից։ Այս զեկուցագրերը նշում են Հարավային Կովկասի երկրների ցանկությունը դիմադրել բոլշևիզմին և Բաքվի կառավարության ակտիվ մտադրությունները իր դիրքերը ամրապնդելու նպատակով Իրանի հետ սերտ հարաբերությունների մեջ մտնելու վերաբերյալ։

Այս կապակցությամբ պրեմիեր-մինիստրը խնդրում է ինձ տեղյակ պահել նորին մեծության կառավարությանը, թե ինչպիսի հսկայական առավելություն կտա դա Իրանին և բրիտանական շահերին՝ իրանական առևտրում և քաղաքականության մեջ, եթե Ադրբեջանի կառավարության անկախությունը ճանաչվի և նա իրեն դնի Մեծ Բրիտանիայի բարեկամական զեկավարության ներքո և որոշակի ձևով դաշնակցի Իրանի հետ...»[64]։

Այս փաստաթուղթը պարզորոշ ցույց է տալիս անգլիական իմպերիալիստների և իրանական կառավարության հետապնդած նպատակները, ինչպես նաև մուսավաթական կառավարության հակաժողովրդական բնույթը և ազգադավ քաղաքականությունը։

Ահմեդ շահը 1919 թ. այցելում է Լոնդոն։ Կառավարական հաշվեկշիռի ժամանակ արտասանած ճառում Քերզոնը նշում է. «Վերջին ժամանակներս Իրանի հյուսիսային մասում բոլշևիկները ընդծողություններ էին ծավալել և մինչև այժմ էլ դեռ Իրանի կարգ ու կանոնը բոլշևիկների վտանգից չի փրկ-

---

[64] „Documents on British Foreign Policy, 1919—1939", first series, vol. III, p. 752.

վել։ Եթե Իրանը բոլշևիկների հարձակումից ազատվեց, նրա տերիտորիան ոտնձգությունից ապահովվեց և նրա ազգային գոյությունը պահպանվեց, ապա գլխավոր պատճառը անգլիական զորքերի այդ երկրում գտնվելն ու Միջագետքում մեր ունեցած հաջողություններն էին։

Այժմ ցավալի կլինի, եթե Իրանի հյուսիս-արևմտյան ճակատում ռուսական բանակի մեծ ծառայությունները թերագնահատվեն։

Իմ կարծիքով, ճշմարտության համապատասխան կլինի, եթե ասվի, որ նրանց օգնությամբ մենք Իրանը փրկեցինք հյուսիս-արևմուտքից եկող հարձակումից, ինչպես և հույսով ենք այժմ նրան փրկել բոլշևիկների գործողություններից[65]։

Այնուհետև նա ավելացնում է, որ բոլշևիզմը վերջին ամիսներին նոր ըմբռստ տարրեր է ոտքի հանել, և մենք պետք է վստահ լինենք, որ քանի այդ խմբերը գոյություն ունեն, լայն պրոպագանդա կմղեն Ասիայի տարբեր շրջաններում[66]։

Իրանական մի շարք հեղինակներ հակահարված են տվել անգլիական իմպերիալիստների «Իրանի փրկարարի» հավակնությանը և ցույց տվել նրանց իսկական մտադրությունները։

Իրանական պատմաբան Մահմուդ Մոթամեդը, իր աշխատության երկրորդ հատորում, որը վերնագրել է «Իրանա-օսմանյան քաղաքական հարաբերությունների պատմությունը», քննարկում է Իրանում անգլիացիների վարած քաղաքականությունը։ Նա գրում է. «Ոմանք կարծում են, թե անգլիացիները իրանցիների գեղեցիկ աչքերին են կարոտ և նրանց համար նեղություն են քաշել, Իրան են եկել, որպեսզի խանգարեն դարերի ընթացքում ռուսների ներթափանցումը դեպի Իրան։ Այդ մտքերը փուչ են»։ Նշելով, որ այդպիսի անհիմն և իրականությունից հեռու տեսակետներ տարածելով, ոմանք ուզում են ժողովրդին համոզել դրանց ճշմարտացիության

---

65 حسین مکی مختصری از زندگانی سیاسی سلطان احمد شاه قاجار تهران ۱۳۳۳ صفحه ۳۳

66 Տե՛ս նույն տեղում, էջ 43։

մեջ, նա շարունակում է. «Մինչդեռ անգլիական կառավարության քաղաքականությունը Մերձավոր արևելքում եղել է նվաճողական, ժողովուրդների տարբեր դասակարգերի մեջ խռովություն գցող, այդ երկրներում ապիկար ղեկավարների հովանավորման քաղաքականություն և նպատակ է ունեցել, որ նրանք չկարողանան կազմակերպվել ու ինքնապաշտպանության դիմել և առանց այլևայլության անգլիացիների մրտադրությունների առջև անձնատուր լինեն։ Եվ եթե իսկապես Անգլիան վախենում էր, որ Իրանը և օսմանյան երկիրը կարող են գրավվել Ռուսաստանի կողմից, ապա ամենալավ ճանապարհը այն էր, որ ինքը պատճառ չդառնար այդ երկու երկրների հակասություններին և ամեն պահ սահմանային շեյխերին և տարբեր ցեղերին չգրգռեր, որպեսզի անարխիա ստեղծեն և արյունահեղությամբ զբաղվեն։ Այդ մասին հազարավոր փաստաթղթեր են պահպանվել տարբեր երկրների արխիվներում»[67]։

Անգլիական իմպերիալիզմի քաղաքականությանը տրված նման գնահատականների կարելի է հանդիպել պարսիկ հեղինակների բազմաթիվ այլ աշխատություններում։

Իրանի ռեակցիոն իշխող շրջանները, հենվելով անգլո-իրանական պայմանագրի վրա, ձգտում էին ճնշել երկրի ներսում ծավալվող ազգային-ազատագրական շարժումները։ Հատկանշական է, որ իրանական դեսպանը Բեռլինում 1920 թ. հունիսին հայտարարում է. «Իրանը բոլորովին էլ չի հրաժարվում Անգլիայի հետ կնքած 1919 թ. պայմանագրից։ Իրանը հույս է դրել Անգլիայի օգնության վրա՝ բոլշևիկյան շարժման դեմ մղված պայքարում»[68]։

Տարբեր աղբյուրներում բազմաթիվ փաստեր կան այն մասին, որ անգլիական իմպերիալիստները, լիակատար գերիշխելով երկրում, հաշվեհարդար էին տեսնում ազգային-

---

67 محمود فرهاد معتمد تاریخ سیاسی دوره صدارت میرزا حسینخان مشیر الدوله سپهسالار اعظم جلد دوم تاریخ روابط سیاسی ایران وعثمانی تهران ۱۳۲۵ صفحه ۴۲۱

68 Бюллетень НКИД, № 23, 15/VI 1920.

ազատագրական շարժման մասնակիցների հետ, հետապնդում սովետական կարգերը համակրողներին։ Այդ տարիներին մեծ թվով մարդիկ ձերբակալվեցին և աքսորվեցին Միջագետք։

Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը հատուկ դիմում հրապարակեց՝ ուղղված Իրանի բանվորներին և գյուղացիներին, որի մեջ սովետական կառավարությունը ոչ միայն մերկացնում էր անգլո-իրանական 1919 թ. համաձայնագիրը և Իրանի իշխող շրջանների ու կառավարության դավաճանությունը, այլև Ռուսաստանի աշխատավորության անունից խոստանում էր եղբայրական օգնություն ցույց տալ Իրանի ճնշված մասսաներին ներքին և արտաքին շահագործողների դեմ մղած պայքարում[69]։

Իսկ «Սովետական Իրան» թերթը 1920 թ. հունիսի 24-ի համարում գրում էր. «Մենք պետք է օգնենք պարսիկ ժողովրդին թոթափելու անգլիացիների լուծը և սովորեցնենք զանազանելու՝ որտեղ են նրա թշնամիները և ովքեր են նրա բարեկամները»[70]։

Իրանի «Թուդե» կուսակցության քարտուղար Ռեզա Ռադմանեշը, անդրադառնալով Իրանի նկատմամբ սովետական կառավարության կիրառած բարեկամական և իրավահավասար սկզբունքներով քաղաքականությանը, նշում է, որ սովետական կառավարության այդ քայլերի կարևորությունը հատկապես ակնհայտ է դառնում, երբ «նկատի ենք առնում, որ դրանք այն ժամանակ էին տեղի ունենում, երբ Իրանի անկախությունն ամեն կողմից վտանգված էր և ամբողջ Իրանը օկուպացված էր անգլիական բանակի կողմից։ Դա մի ժամանակ էր, երբ Անգլիան, օգտվելով Իրանի քաղաքական թատերաբեմից ցարական Ռուսաստանի հեռանալու փաստից, ուզում էր Իրանը վերածել իր լիակատար գաղութի։ Դա մի ժամանակ էր, երբ անգլիական նավթային ընկերությունը և անգլիական Շահնշահի բանկը իշխում էին Իրանի քաղաքական և տնտեսական բոլոր օրգաններին...։ 1919 թ. օգոս-

69 Տե՛ս «Известия», 30/VIII 1919.

70 ЦГАКА, ф. № 195, оп. № 3, д. 352, л. 13.

տոսի պայմանագիրը վերջին հարվածն էր, որ անգլիական իմպերիալիզմը հասցրեց մեր երկրի տնտեսական և քաղաքական անկախությանը»[71]։

Այդ ամենը, անշուշտ, մեծապես բարձրացրեց սովետական երկրի հեղինակությունը Իրանում և էլ ավելի խորացրեց ժողովրդական վրդովմունքը անգլիական իմպերիալիստների դեմ։

Անգլիական «Թայմս» թերթի թղթակիցը Թեհրանից հաղորդում էր Սովետական Ռուսաստանի հեղինակության աճի և անգլիական ազդեցության անկման մասին։

«Ռուսական ազդեցությունը,— գրում էր թերթը,—որը որոշ ժամանակով ոչնչացել էր, այժմ արագ կերպով աճում է և նոր ուժով զարգանում, քանի որ նրան կողմնակից են հասարակության նշանակալից շերտերը...։ Գնալով աճում է բրիտանական քաղաքականության և անգլո-իրանական համաձայնագրի հակառակորդների թիվը»[72]։

Իրադարձությունները բուռն կերպով զարգացան հատկապես 1920 թ.։

1920 թ. ապրիլի 28-ին Բաքվի հերոսական պրոլետարիատը 11-րդ կարմիր բանակի եղբայրական օգնությամբ տապալեց մուսավաթիստների և նրանց հովանավորող անգլիական իմպերիալիստների տիրապետությունը և Ադրբեջանում հաստատեց սովետական իշխանություն։ Սպիտակգվարդիականները անգլիացիների հետ միասին 15 նավով փախան Էնզելի, հույս ունենալով ամրանալ այնտեղ և շարունակել ինտերվենցիան Սովետական Ռուսաստանի դեմ։

Անգլիական և սպիտակգվարդիական ջոկատներին սովետական սահմանամերձ վայրերից հեռացնելու համար 1920 թ. մայիսի 18-ին սովետական նավատորմը մոտեցավ Էնզելի քաղաքին, ոմբակոծեց անգլիական դիրքերը և դեսանտ հանեց անգլիական լորքերի ու սիպահիների թիկունքում։

---

71 رضا رادمنش تاثیر انقلاب کبیر در ایران ۱۳۳۸ صفحه ۵

72 „Times", 16/V 1920.

Երբ սովետական զորքերը ափ իջան Էնզելի, սովետական նավատորմի հրամանատարը իրանական իշխանությունների ներկայացուցիչներին հայտարարեց, որ «Սովետական Ռուսաստանը ճանաչում է Իրանի անկախությունը և չի միջամտելու նրա ներքին գործերին»[73]։

Այս երևույթը ըստ արժանվույն գնահատվեց իրանական ժողովրդի կողմից։

«Սովետական զինված ուժերի ռազմական գործողությունները Էնզելիի շրջանում,—կարդում ենք «Մաթեն» թերթի էջերում,—իրանական ժողովրդի կողմից դիտվում են որպես Իրանի անկախության վերականգնմանը նպաստող գործոնի։ Բոլշևիկներին համարում են ոչ թե սպառնալիք երկրի համար, այլ Վոսուգ էդ Դովլեի կառավարության անկմանը հասնելու մի միջոց...»[74]։

Կարմիր նավատորմի հաղթանակը և անգլիացիների փախուստը նոր թափ հաղորդեցին Իրանի ժողովրդի ազգային-ազատագրական շարժմանը, ուժեղացավ պայքարը անգլիական գաղութարարների դեմ։ Հենց այդ կապակցությամբ է, որ Ֆրենչը գրում է. «Քուչիկ խանը դարձավ բոլշևիկների դաշնակիցը և նրա ու անգլիացիների միջև փաստորեն պատերազմական վիճակ գոյություն ուներ»[75]։

Այդ դեպքերը ամբողջ Իրանից անգլիական զորքերի հեռացման սկիզբը հանդիսացան[76]։

Այս փաստը հատուկ ուշադրության է արժանացել պարսիկ և օտարերկրյա մի շարք հեղինակների աշխատություններում։

Այսպես. Աբբաս Էքբալը նշում է. «Բարեբախտաբար համաշխարհային իրադարձությունները թույլ չտվին, որ անգլո-իրանական պայմանագիրը իրականացվի։ Մի կողմից Սովետական Ռուսաստանի պետությունը ամրապնդվեց, իսկ

---

73 «Известия», 3/VI 1920.
74 „Matin", 3/VI 1920.
75 F. French. From white hall to the Caspian, London, p. 101.
76 „The Nation", 22/V 1920.

մյուս կողմից այս պայմանագիրը Իրանի ներսում և դրսում սաստիկ հակառակություններ հանդիպեց»[77]։

Անգլիացի հեղինակ Բալֆուրը, խոսելով այդ հարցի մասին, գրում է, որ բոլշևիկների ափ իջնելու պահից, անգլո-իրանական պայմանագիրը պետք է համարել մահացած, թեև պաշտոնապես չեղյալ համարվեց ինն ամիս հետո[78]։

Մի ուրիշ տեղ նա նորից է անդրադառնում այդ հարցին գրելով, որ բոլշևիկների էնզելի գալուց և անգլիացիների նահանջից հետո բրիտանական ռազմական հեղինակությունը այնպիսի հարված ստացավ, որ այլևս ոչ մի պարսիկ մինիստր չէր կարող երաշխավորել անգլո-իրանական պայմանագրի հաստատումը։ Դա այնքան ակնհայտ էր, որ մինչև իսկ բանակցություններին մասնակից մինիստրները նման ոչ մի փորձ չարեցին[79]։

Ամերիկյան հեղինակ Մաք Քարթին նույնպես հաստատում է այդ փաստը։ Նա գրում է, որ երբ բոլշևիկները ափ իջան էնզելիում, պարսիկների հավատը բրիտանական ռազմական կարողության նկատմամբ, որպես իրենց պաշտպանի, միանգամայն սասանվեց։ Բոլշևիկյան ուժերի ափ իջնելու պահից պայմանագիրը պետք է համարել մահացած[80]։

Այսպես ամբողջ երկրով մեկ ժողովրդական հուժկու շարժում ծավալվեց Վոսուգ էդ Դովլեի կառավարության դեմ։

Դեռևս 1920 թ. «Պրավդան» գրում էր. «Ամբողջ երկիրը ապատում է մոտակա և անխուսափելի հեղափոխական իրադարձություններից։ Անգլիացիների և նրանց դրածոների՝ խանների դեմ ապստամբությունը հոգեբանորեն արդեն հասունացել է և կբռնկվի առաջին հարմար առիթով։ Ժանդարմերիան լուրջ անհանգստություն է ներշնչում իշխանությունը-

---

77 عباس اقبال کلیات تاریخ تمدن جدید تهران ۱۹۴۸ قسمت دوم
تاریخ تمدن جدید در ایران صفحه ۷۱

78 J. M. Balfour, Recent Nappennings in Persia, London, 1922, p. 131.

79 Տե՛ս նույն տեղում, էջ 189։

80 „The University of Buffalo studies", vol. IV, June 1925, № 2. „Anglo-Russian Rivalary in Persia by Mary Mc Carthy", p. 63.

ներին, քանի որ նրանց մեջ տեղի է ունենում հեղափոխական խմորում, գլխավորապես անգլիացիների դեմ ունեցած կատաղի ատելության հողի վրա։ Ամենուրեք մզկիթներում կրակոտ ճառեր են արտասանվում՝ կոչ անելով համընդհանուր ապստամբության դիմել ընդդեմ անգլիական ճնշողների։ Մաշհադում գտնվող անգլիական հյուպատոսարանի գրասենյակը փոխադրված է ուրիշ տեղ»[81]։

Հեղափոխական խմորումների ուժեղացման պայմաններում կարևոր նշանակություն ունեցավ իրանական կոմունիստների գործունեության ակտիվացումը։ Նրանք հատուկ կոչ ուղղեցին ժողովրդին, որտեղ ասված էր, որ իրանական կոմունիստական կուսակցության Կենտկոմը, դիմելով բոլոր կուսակցական կազմակերպություններին և Իրանի աշխատավորությանը, առաջ է քաշում կուսակցության հերթական խնդիրները. 1. անգլիացիների վտարումը և վճռական պայքար եվրոպական իմպերիալիստների լծից Իրանը ազատագրելու համար, 2. հեռացնել շահական կառավարությանը, որը Իրանը վաճառել էր ռուսական ցարիզմին և անգլիական ավազակներին, 3. Իրանի հռչակումը անկախ, միասնական և անբաժանելի ժողովրդական հանրապետության և սահմանադիր ժողովի հրավիրումը, 4. մինչև նրա հրավիրումը, անմիջապես հայտարարել խոսքի, խղճի, մամուլի, ժողովների, միությունների ազատություն և գյուղացիության ազատագրումը կալվածատիրական լծից, 5. ազգային բանակի կազմումը[82]։ Այնուհետև 1920 թ. կայացած Իրանի կոմունիստական կուսակցության համագումարը նոր կոչով դիմեց իրանական ժողովրդին՝ «Իրանի բանվոր և գյուղացի ընկերներ։ Համախմբվեցեք հեղափոխական պայքարի դրոշի ներքո, հանուն օտարերկրյա բռնարարներից Իրանի ճնշված և կեղեքված մասսաների ազատագրման։ Կորչեն օտարերկրյա ավազակները։ Կորչեն աշխատավոր ժողովրդի դավաճանները»[83]։

---

81 «Правда», 27/V 1920.

82 Տե՛ս գաղ. «Набат революции», 17/XI 1920.

83 Նույն տեղում, 19/II 1920։

ժողովրդական շարժման լայն թափի ճնշման ներքո Վոսուգ էդ Դովլեի կառավարությունը ստիպված եղավ հրաժարական տալ։

«Էնդելարե Սորխ» թերթը այս մասին գրում էր. «Դավաճան Վոսուգ էդ Դովլեն իր տիրոջ՝ Անգլիային տված խոստումները չկարողացավ իրականացնել, չկարողացավ ոչընչացնել իրանական ժողովրդի ազատասիրության զգացմունքը և զգոնությունը։ Նա տեսավ, որ հնագույն Իրանը Անգլիայի գաղութը չի դառնա և ամենայն հուսահատությամբ գործից հեռացավ։ Վրեժի կարմիր դրոշը բարձրացել է, ժողովրդի արյունը եռացել, ճնշումը հասել իր գագաթնակետին և սկսվել է ազգային շարժումը։ Վոսուգ էդ Դովլեն և նրա ստոր դինակիցները ուժեղ էին և կարող, բայց այսօր ժողովրդի կամքի առաջ անկարող են դարձել և ուզում են պատժից ու վրեժից փախչել»[84]։

Նկատի ունենալով ամբողջ երկրով մեկ ծավալվող հակաանգլիական ժողովրդական ելույթները, կառավարության նոր ղեկավար Սեփահդարը հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ և ընդգծեց, որ նոր կառավարությունը չի կիրառի անգլո-իրանական պայմանագիրը, քանի դեռ այն չի վավերացված մեջլիսի կողմից, չնայած արտաքին քաղաքականության բնագավառում կշարունակի նախկին կառավարության գիծը։ Այդ հայտարարությամբ Սեփահդարը ձգտում էր հանգստացնել և՛ հասարակայնությանը, և՛ անգլիական իմպերիալիստներին։

Անգլիական կառավարությունը իր դժգոհությունը հայտնեց Սեփահդարի այդ հայտարարության կապակցությամբ։ 1920 թ. նոյեմբերի 16-ին լորդերի պալատում՝ Իրանի կառավարության դեմ սպառնալիքներով լի ելույթում Քերզոնը նշեց, թե չպետք է մոռանալ, որ համաշխարհային քաղաքական ասպարեզ է մտել «ամեն ինչ ավերող ագրեսիվ բոլշևիզմը», որ եթե չվավերացվի անգլո-իրանական պայմանագիրը, ապա Իրանը կթողնվի մենակ և անպաշտպան ու այն

84 Նույն տեղում։

ժամանակ ինչպե՞ս նա կկարողանա դիմադրել բոլշևիկներին, որոնք սպառնում են նրա գոյությանը[85]։ Դրանով Քերզոնը շահին և Իրանի իշխող շրջաններին զգուշացնում էր այն վտանգից, որ սպառնում էր նրանց օրեցօր լայն ծավալ ընդունող ազգային-ազատագրական շարժումը։

Հայտնի է նաև, որ 1920 թ. նոյեմբերի 26-ին Թեհրանում հրավիրվեց արտակարգ և գերագույն խորհուրդ, որին մասնակցում էին շահը, արքայազնները, կառավարության անդամները, ֆեոդալների և բուրժուազիայի ներկայացուցիչները, բարձր հոգևորականությունը և այլն։ Խորհուրդը պետք է ելք որոներ ստեղծված դրությունից դուրս գալու համար։ Ջնայած խորհրդի նման կազմին, այնուամենայնիվ, տեղի ունեցան հակաանգլիական խիստ ելույթներ։ Օրինակ, ելույթ ունեցողներից մեկը նշում է. «Անգլիացիները իրանական ժողովրդին վախեցնում են բոլշևիկներով այն ժամանակ, երբ Սովետական Ռուսաստանը անց է կացնում ժողովուրդների լիակատար ինքնորոշման սկզբունքներ։ Անգլո-իրանական համաձայնագիրը իշեցնում է պարսիկներին ստրուկների վիճակի»[86]։

Ինչպես հայտնի է, գերագույն խորհուրդը որոշեց չվավերացնել անգլո-իրանական համաձայնագիրը։

Այսպիսով սովետական արտաքին քաղաքականությունը վճռական նշանակություն ունեցավ Իրանի հետագա ճակատագրի համար։

Թեմփերլին իր «Փարիզի խաղաղության կոնֆերանսի պատմությունը» գրքում անց է կացնում այսպիսի հետաքրքիր համեմատություն։ Նա գրում է, որ դրությունը Իրանում շատ բանով էր նման Ալբանիայի վիճակին։ Երկուսն էլ զոհ էին մեծ պետությունների միջև կնքված համաձայնագրի, որոնց դիմադրել նրանք չէին կարող։ Երկուսն էլ ուզում էին պատերազմի ժամանակ չեզոք մնալ և նրանց չհաջողվեց։ Երկու դեպքում էլ հանգամանքների բերումով օտար զորքերը հեռացան։ «Բայց,—գրում է հեղինակը,—նրանց ազատագրը-

---

85 Бюллетень НКИД, № 50, 15/XII 1920.

86 «Коммунист», 1/1 1921.

ման մեթոդները տարբեր էին։ Ալբանիան իր սահմանները, իր գոյությունը, իր ճանաչումը պարտական է Ազգերի լիգային, իսկ Իրանը ավելի շատ պարտական է բոլշևիկներին, քան որևէ այլ մեկի»[87]։

Եվ իսկապես, 1917—1921 թթ. Իրանի նորագույն պատմության մեջ այն տարիներն են, երբ երիտասարդ սովետական իշխանությունը, գտնվելով ամենադժվարին պայմաններում, հետևողականորեն ձգտում էր, որ բոլոր երկրները հարգեն իրանական ժողովրդի իրավունքները՝ հանուն ինքնորոշման, անկախության և պետականության պահպանման։ Իրանի անկախության վերականգնման գործում, որից նա զրկվել էր փաստորեն սկսած 1907 թ., սովետական կառավարության առանձնահատուկ ծառայությունը ստիպված էին ընդունել իմպերիալիստական պետությունները, առաջին հերթին Անգլիան, երբ նրանք մշակում էին Վերսալի պայմանագիրը։

Անգլիական իմպերիալիստները, իհարկե, չդադարեցրին իրենց դավադրությունները Իրանում։ Միայն թե ստեղծված պայմաններում անհրաժեշտ էին ստրատեգիական նոր մեթոդներ։

1921 թ. փետրվարի 21-ին տեղի ունեցավ զինվորական հեղաշրջում, որը հսկայական բանավեճի առարկա է դարձել իրանական պատմագրության մեջ։

Իրանի կոմունիստական կուսակցության 2-րդ համագումարի փաստաթղթերում նշված է, որ «1919 թ. անգլո-իրանական համաձայնագիրը պետք է Իրանի բռնագրավմանը տար պաշտոնական բնույթ։ Սակայն, մի կողմից՝ սովետական իշխանության ուժեղացումը և ամրապնդումը, մյուս կողմից՝ հենց բուն Իրանում ժողովրդական հեղափոխական շարժումների էլ ավելի ընդարձակումը ստիպեցին Անգլիայի կառավարությանը հրաժարվել իրենց մտադրություններից և այլ ուղիներ փնտրել իրենց նպատակներին հասնելու համար»[88]։

---

87 H. Temperley, A History of the Peace Conference of Paris, vol. VI, London, 1924, p. 217.

88 کنگره دوم فرقه کمونیست ایران صفحه ۱

Հոսեյն Մաքքին գրում է. «Բրիտանական դիվանագիտությունը երբ տեսավ, որ հին և հզոր հակառակորդը հրապարակից դուրս եկավ, նպատակահարմար գտավ իր սովորական քաղաքականությունը հանկարծակի, արագ և ուժգին փոփոխության ենթարկել։ Եվ որպեսզի Ռուսաստանի հեղափոխության և մի նոր ուժեղ Ռուսաստանի առաջանալու բնական շարունակությունը հանդիսացող ապագա հասարակական իրադարձությունների առաջն առներ, ծայրահեղ գործունեության ձեռնամուխ եղավ»[89]։

Անգլիական իմպերիալիզմի կողմից Իրանում անցկացվող քաղաքականության նոր մեթոդների մասին են խոսում նաև պարսիկ այլ հեղինակներ։

Աբդոլլահ Մոսթոֆին նշում է, որ «Հնդկաստանի, այդ հին ոսկեբեր գաղութի, Միջագետքի, պատերազմի այդ նոր ոլորտի պաշտպանության համար դեռևս ոչինչ չէր մտածվել, և իրականում բոլշևիզմի դեմ ստեղծված պատնեշը Իրանի կողմից բաց էր մնում։ Վոսուգ էդ Դովլեի պայմանագիրը և Իրանի ֆինանսների, ադմինիստրացիայի ու բանակի նկատմամբ անգլիացիների կողմից իրավունքներ ձեռք բերելը պետք է պատի այդ ճեղքը փակեին։ Սակայն դա իրանցիների կողմից չընդունվեց և նրա իրագործումը մնաց բաց։ Ուրեմն ի՞նչ պիտի անել, որ Հնդկաստանը և Միջագետքը բոլշևիզմի տարածումից ապահով լինեն։ Պետք է Իրանում պետական հեղաշրջում կազմակերպել և այդ երկրի համար մի դիկտատոր ստեղծել, որը հենց իրանցիների դրամով և ուժով բոլշևիզմի շուրջը ստեղծված պատնեշը ամբողջացներ»[90]։

Մերկացնելով անգլիական իմպերիալիստների գաղութարարական քաղաքականությունը, Մոխթարին նշում է, որ անգլիացիները Իրանում մի քանի նպատակ էին հետապնդում. նախ՝ ապահովել տնտեսական և նյութական այն շահերը, որ ստանում էին հարավի նավթից, Շահնշահի բանկից և առևտրական շուկաներից, երկրորդ՝ ուժեղացնել Իրանի

---

89 حسین مکی مختصری از .... صفحه ۷

90 عبد الله مستوفی شرح زندگانی من .... صفحه ۳–۱۹۱

կողմից Հնդկաստանի պաշտպանությունը՝ ռուսական բոլշևիկներից, երրորդ՝ իրանական ժողովրդի մեջ բոլշևիկյան գաղափարների տարածման առաջն առնել[91]։ Շահին և թագաժառանգին, նշում է այնուհետև Մոխթարին, «վստահեցրել էին, թե հեղաշրջումը ոչ մի կերպ չի խանգարի նրանց թագավորությանը, և կատարվում է ստեղծելու համար մի ուժեղ կառավարություն, որը կկարողանա բոլշևիկյան գաղափարների ազդեցության տարածման առաջն առնել, մի գաղափար, որով խստորեն զբաղված են մտքերը»[92]։

Ինքը Ահմադ շահը նույնպես խոստովանել է բրիտանական իմպերիալիստների մասնակցությունը Ռեզա շահի հեղաշրջմանը։ Երբ նա երկրից հեռացել և Շվեյցարիայում էր գտնվում, պարսիկ մի գործիչ նրան ասում է, որ շահն ինքն է Ղաջարների դինաստիայի անկումը նախապատրաստել և եթե նա թույլ տար Ռեզա խանին ոչնչացնեին, այսօր նման դժվարությունների առաջ կանգնած չէին լինի։ Շահը պատասխանում է. «Եթե Ռեզա խանին սպանած լինեինք, մի ուրիշ Ռեզա խան մեզ համար կհորինեին։ Եթե Ռեզա խանը սպանված լիներ, ապա անմիջապես մի ուրիշ Ռեզա խան հազարանգամ ավելի ուժգին մեզ համար կստեղծեին և նրա սպանության համար մեզ էլ կմեղադրեին։ Հետևաբար նպատակահարմար չէր համաձայնվել Ռեզա խանի տեռորին կամ ոչնչացմանը»[93]։

Իրանական պատմաբան Սեփիդե Դամը իր «Ներկա դարի սկզբների Իրանի և Եվրոպայի հարաբերությունների պատմությունը» գրքի երկրորդ հատորում, խոսելով Ռեզա շահի միապետության ստեղծման մասին, գրում է, որ նման միապետության հաստատումը Իրանում հնարավոր էր միայն աշխարհի այլ մասերում ֆաշիստական իշխանությունների հաստատման պայմաններում։ Մուսոլինիի իշխանությունը՝ Իտալիայում, Հիտլերինը՝ Գերմանիայում, Պիլսուդսկունը՝ Լեհաս-

---

91 حبیب الله مختاری تاریخ بیداری ایران تهران ۱۹۴۷ صفحه ۲۵

92 Նույն տեղում, էջ 224։

93 حسین مکی مختصری از ... صفحه ۲۶۱

տանում, Մաներհայմինը՝ Ֆինլանդիայում, Քեմալ փաշայինը՝ Թուրքիայում հնարավոր դարձրին Ռեզա շահի միահեծան իշխանության հաստատումը Իրանում։ Դա մի պողպատյա շրջանակ էր, որ քաշվում էր աշխարհում առաջին սոցիալիստական երկրի՝ Սովետական Միության շուրջը (ընդգծումը մերն է—Հ. Ե.)։ Ռեզա շահի պես մարդը կարող էր բրիտանական իմպերիալիզմի համար օգտավետ լինել երկու տեսակետից։ Մի կողմից նա իր դասակարգային դիրքով, ընդարձակ կալվածքներով, անհաշիվ կապիտալով Սովետական Միության արյունարբու թշնամին էր։ Մյուս կողմից՝ բռնի կերպով ձեռք բերած իր արտոնությունները պահելու համար նա ստիպված էր իրանական ժողովրդին ստրկության շղթաների տակ պահել և մեր երկրի աշխատավորության դեմ սուր ճոճել[94]։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, 1921 թ. հետո Անգլիան նորից վերադառնում է իր հին քաղաքականությանը, այն է՝ աշխատանք ծավալել Հարավում, հովանավորել կենտրոնախույս տարրերին։ Այդ իմաստով մեծ հետաքրքրություն է ներկայացնում անգլիական հետախույզ կապիտան Նոելի 1921 թ. հունիսի 6-ին գրված նամակը անգլիական դեսպան Պերսի Քոքսին։

«Սիրելի Սեր Պերսի։ Ես Իրան էի ուղարկվել արտաքին գործերի մինիստրի կողմից, երբ թվում էր, թե մեր զորքերի հեռացմանը կհետևի բոլշևիկյան ներխուժումը և սովետական կառավարության ստեղծումը, որի հետևանքով մեր ձեռքերը կբացվեն Հարավում։ Այս կանխագուշակումը ճիշտ դուրս չեկավ։ Փոխանակ առաջ շարժվելու, բոլշևիկները հեռացան։ Նրանց քաղաքականությունը կայանում է նրանում, որպեսզի պահպանվի Իրանի ամբողջականությունը և ինչ գնով էլ լինի կանխվի մեր կողմից Հարավային ֆեդերացիայի կազմավորումը։ Հարավային ֆեդերացիայի հարցից բխում է մի շարք միջոցառումների անցկացում, այդ թվում Հարավային Իրանի կառավարություն ստեղծելը և հարավային նավ-

---

94 سپیده دم تاریخ روابط .... صفحه ۳۸_۳۹

թից ստացված եկամուտը նրան հանձնելը...»[95]։ Ամերիկացի հեղինակ Մաք Քարթին նույնպես հաստատում է այդ փաստը։ Նա գրում է, որ քանի դեռ Անգլիան մենակ էր տիրում Իրանում և թվում էր, տարիներ պետք է անցնեն մինչև Ռուսաստանը նորից Իրանի քաղաքական ասպարեզը մուտք գործի, անգլիացիները ձգտում էին իշխանությունը կենտրոնացնել Թեհրանի կառավարության ձեռքում։ Բայց հենց որ բոլշևիկները երևացին թատերաբեմերում, Անգլիան ընտրեց ճիշտ հակառակ քաղաքականություն[96]։

Այսպիսով, քաղաքական նոր իրադարձությունների պայմաններում Ռեզա շահի դիկտատուրան առաջին հերթին ձեռնամուխ եղավ երկրի ներսում ծավալվող ազգային-ազատագրական շարժման ճնշմանը, որը անգլիական իմպերիալիստների ընդհանուր հակասովետական պլանների մի մասն էր։

Սակայն 1917—1921 թթ. Իրանում ծավալված ազգային-ազատագրական շարժումները ունեցան իրենց պատմական նշանակությունը։

«Թուդե» կուսակցության քարտուղար Ռեզա Ռադամնեշը, խոսելով ազգային-ազատագրական շարժման և նրա խաղացած պատմական դերի մասին, գրում է. «1918—1921 թթ. հակաիմպերիալիստական և հակաֆեոդալական շարժումը պարտվեց, բայց նա խոր ազդեցություն ունեցավ մեր ժողովրդի գիտակցության վրա և հող պատրաստեց ազգային-ազատագրական շարժման նոր վերելքի համար։ Իրանում ազգային-ազատագրական շարժման հետագա աճը և ծավալման ամբողջ ընթացքը, ինչպես մյուս գաղութային և կախյալ երկրներում, ցույց տվին, որ Հոկտեմբերյան հեղափոխությամբ սկսվում է իմպերիալիզմի և ռեակցիայի դեմ տանջված ժողովուրդների հեղափոխության դարաշրջանը»[97]։

---

95 М. Павлович, С. Иранский. Персия в борьбе за независимость, М., 1925, стр. 128.

96 Տե՛ս „The University of Buffalo studies", vol. VI. June 1925, № 2, „Anglo-Russian Rivalary in Persia by M. McCarthy", p. 63.

97 رضا دامنشی تاثیر انقلاب کبیر در ایران ۱۳۳۸ صفحه ۱۶

* * *

1917 թ. դեկտեմբերին Իրանը պաշտոնապես ճանաչեց սովետական կառավարությանը և 1918 թ. հունվարի 13 (26)-ին Թեհրան եկավ սովետական դիվանագիտական առաջին ներկայացուցիչը։

Պետք է ասել, որ սովետական կառավարության ճանաչումը պահանջում էին իրանական հասարակայնության ամենալայն շրջանները։

Իր ելույթներից մեկում Խիաբանին նշում է, որ Սովետական Ռուսաստանը հսկայական ջանքեր է գործադրում տարբեր ժողովուրդների և երկրների հետ կապ հաստատելու համար։ Խոսելով այն մասին, որ Սովետական Ռուսաստանը դրական վերաբերմունք ունի Իրանի ազատագրական շարժման նկատմամբ, նա ասում է, որ մեր հարևանը մեծ հաճույքով է դիտում մեր պայքարը և եթե մենք ջանքեր չխնայենք, ամեն տեսակի օգնություն կստանանք[98]։

Իրանական Ադրբեջանի դեմոկրատական կուսակցության նահանգային կոնֆերանսը հանձնարարեց կուսակցության նահանգային կոմիտեին հաշվի առնել Ռուսաստանում տեղի ունեցած փոփոխությունները, ողջունել ռուսական հեղափոխության առաջացումը և նրա ունեցած հետևանքները Իրանում, բարեկամական կապեր հաստատել Ռուսաստանի ազատասերների հետ և ձեռք բերել նրանց օժանդակությունը[99]։

Ինչպես ասվեց, սովետական առաջին ներկայացուցչի՝ Բրավինի նշանակումը Իրանում ընդունվեց մեծ խանդավառությամբ։ Խոսելով Իրանի դեմոկրատական կուսակցության և առաջադեմ մամուլի կողմից սովետական ներկայացուցչի նկատմամբ ցուցաբերած ջերմ վերաբերմունքի մասին, Մալեք օլ Շոարա Բահարը գրում է. «Բրավինը մեծ Լենինի կողմից բարեկամական ջերմ խոստումներով Թեհրան եկավ և մեր կուսակցության ու մեր մամուլի ջերմ ընդունելությանը հանդիպեց։ Դեմոկրատական մամուլը մեծապես փառաբանեց

---

98 علی آذری قیام شیخ محمد خیابانی ... صفحه ٥٧

99 Նույն տեղում, էջ 194։

Լենինի հեղափոխությունը և վստահություն հայտնեց սովետական կառավարության բարեկամությանը...»[100]։

Մոսթոֆի օլ Մամաելքի կառավարությունը տարբեր պատրվակներով հրաժարվում էր ճանաչել սովետական դիվանագիտական ներկայացուցչին։ Իրանական կառավարությունը անգլիական իմպերիալիստների անմիջական թելադրանքով միայն ոչ պաշտոնական կապեր էր պահպանում սովետական ներկայացուցչի հետ, վախենալով, որ պաշտոնական հարաբերությունների հաստատումը նրա հետ ինչ-որ ձևով կքաջալերի ազատագրական շարժման մասնակիցներին և կնպաստի կոմունիստական գաղափարների տարածմանը Իրանում։ Ահա հենց այդ կապակցությամբ ամբողջ երկրով մեկ տեղի են ունենում միտինգներ և ցույցեր, որոնց մասնակիցները պահանջում են բարեկամական հարաբերություններ հաստատել Սովետական Ռուսաստանի հետ և իրենց բողոքն են հայտնում իրանական կառավարությանը սովետական դիվանագիտական ներկայացուցչին պաշտոնապես չճանաչելու կապակցությամբ։

«Ջանգալ» թերթը հաղորդում էր Գիլանի ջանգալիների բողոքը, որի մեջ ասվում էր, որ կառավարությունը իրավունք չունի չճանաչել բոլշևիկյան Ռուսաստանի ներկայացուցչին, այն պատրվակով, որ իբր բոլշևիկյան պետությունը դեռ չի կազմավորվել[101]։

Շուտով Թեհրան եկավ սովետական դեսպան Կոլոմիյցևը։

Սովետական Ռուսաստանի առաջին դեսպան Կոլոմիյցևը իր զեկուցագրում նշում էր, որ իրանական ժողովրդի լայն շերտերը շատ բարեկամաբար են տրամադրված սովետական իշխանության նկատմամբ[102]։ Հայտնի է, որ իրանական կառավարությունը անգլիացիների դրդմամբ չճանաչեց Կոլոմիյցևին։ Վերջինս անձամբ ներկայանում է Իրանի արտաքին գործերի մինիստրին և պահանջում է իրեն պաշտոնապես

---

100 ملك الشعراء بهار تاريخ مختصر .... صفحه ۲۹

101 «جنگل» 3/III 1918.

102 «Новый Восток», № 8—9 (С. Иранский, Страница из истории красного дипломата, стр. 155).

ճանաչել որպես Սովետական Ռուսաստանի դեսպան։ Բացասական պատասխան ստանալով, նա մինիստրին հայտարարում է. «Ձնայած ձեր պատասխանը թելադրված է անգլիական դեսպանի կամքով և ինձ շատ է վշտացնում, բայց, համենայն դեպս, ես մեծ մխիթարանք եմ զգում նրանում, որ իրանական ժողովուրդը ի դեմս մի ամբողջ շարք հասարակական գործիչների, ինձ ճանաչում է, որի ապացույցը ես ստանում եմ յուրաքանչյուր օր»[103]։

Քաղաքացիական կռիվներում կարմիր բանակի հերոսական մարտերի հաջողության լուրը մեծ խանդավառություն առաջացրեց նաև Իրանում։ Իրանական հասարակայնության լայն շրջանները պահանջում էին անհապաղ բարեկամական կապեր հաստատել Սովետական Ռուսաստանի հետ։ Դա իր արտահայտությունն էր գտնում նաև Թեհրանի մամուլի էջերում։ Թերթերի մեծամասնությունը գրում էր սովետական երկրի հետ հարաբերությունները հաստատելու անհրաժեշտության մասին։ Հետաքրքիր է «Ռահնեմա» թերթի «Մենք և բոլշևիկները» վերնագրով հոդվածը։ Թերթը գրում էր. «Բոլշևիկները հենց սկզբից հրաժարվեցին ժողովուրդների ստրկացման մտադրություններից և հանդես եկան մարդկությունը ստրկությունից ազատագրելու քաղաքականությամբ։ Բնական է, որ նրանք չեն կարող... սվիններով իրենց գաղափարները տարածել ուրիշ ժողովուրդների մեջ։ Մենք այդպես էլ չենք մտածում։ Բոլշևիզմը դա խաղաղություն է, ստեղծագործում... Բոլշևիկների քաղաքականությունը ոչ մի նմանություն չունի ժամանակակից եվրոպական պետությունների քաղաքականությանը»[104]։

Նոր իրադրության պայմաններում մինչև իսկ Վոսուգ էդ Դովլեի հետադիմական կառավարությունը չէր կարող որևէ միջոցի չդիմել։ 1920 թ. մայիսին իրանական կառավարությունը «Ռոզա Լյուքսեմբուրգ» ռազմանավի հրամանատարին ուղարկեց մի հեռագիր, որով խնդրում էր սովետական կառա-

---

103 Նույն տեղում, էջ 156։

104 «Լուսաբեր». 11/V 1920.

վարությանը հանձնել իրանական կառավարության հուշագիրը, ուր ասված էր. իրանական կառավարությունը խորին բավարարվածության զգացմունքներով նշում է այն բարյացակամ վերաբերմունքը, որ կարմիր բանակի զորամասերը ցուցաբերել են իրանական հպատակների նկատմամբ, ինչպես Ռուսաստանի կենտրոնում, այնպես էլ Ադրբեջանում։ Ադրբեջանի Սովետական Հանրապետության հռչակումը մեծ հիացմունք առաջ բերեց իրանական կառավարության և իրանական ժողովրդի մոտ, քանի որ այդ դեկրետը հաստատում էր այն միտքը, որ սովետական կառավարությունը իսկապես ձգտում է փոքր ժողովուրդների ազատագրմանը և իրավունքների վերականգնմանը[105]։

Այսպիսով Վոսուդ էդ Դովլեի կառավարությունը ստեղծված դժվարին վիճակից դուրս գալու, ինչպես նաև ցույց տալու համար, որ իբր ընդառաջում է ժողովրդի պահանջին, որոշ քայլերի դիմեց սովետական կառավարության հետ բարի դրացիական, բարեկամական նորմալ հարաբերություններ հաստատելու, բանակցություններ սկսելու ուղղությամբ։ Իրանի արտաքին գործերի մինիստր Ֆիրուզը մամուլի ներկայացուցիչներին արեց հետևյալ հայտարարությունը. «Իշխանության գլուխ անցնելուց անմիջապես հետո բոլշևիկյան կառավարությունը բարեկամաբար առաջարկեց ոչնչացնել Իրանի համար ոչ շահավետ ռուս-պարսկական բոլոր պայմանագրերը։ Մենք այդ առաջարկին չարձագանքեցինք միայն այն պատճառով, որ Սովետական Հանրապետության վիճակը հեղհեղուկ էր թվում։ Այժմ մենք պետք է անենք այն ամենը, ինչ անում են մյուս ծայրամասային կառավարությունները»[106]։

Իհարկե, միայն անգլո-իրանական պայմանագրի իրականացման հետաձգումը չէր կարող հանգստացնել հասարակայնությանը։ Անհրաժեշտ էր անհապաղ նորմալ հարաբերություններ հաստատել Սովետական Ռուսաստանի հետ։

---

[105] «Документы внешней политики СССР», т. II, стр. 537—538.

[106] «Правда», 24/IV 1920.

Ուշադրության կենտրոնում էր հատկապես տնտեսական հարաբերությունների հաստատման հարցը, որը Իրանի համար ուներ կենսական նշանակություն։

Սովետական երկրի հետ տնտեսական կապեր հաստատելու գործում շահագրգռված էր նաև իրանական բուրժուազիան, հատկապես երկրի հյուսիսային շրջանների բուրժուազիան, որը սկսած վաղ ժամանակներից լայն կապեր ուներ ռուս առևտրականների հետ։ Արդեն 1918—1919 թթ. երկրի հյուսիսային շրջաններում գյուղատնտեսական մթերքների կուտակումներ էին տեղի ունեցել, որոնց իրացումը հնարավոր էր միայն Ռուսաստանի հետ տնտեսական կապերը վերականգնելու դեպքում։ Եվ իրանական բուրժուազիան այդ շրջանների տնտեսական կյանքը քարացած վիճակից դուրս բերելու նպատակով 1920 թ. հանդես է գալիս Սովետական Ռուսաստանի հետ տնտեսական կապեր հաստատելու օգտին։

Այսպիսով Սովետական Ռուսաստանի հետ դիվանագիտական և տնտեսական կապերի հաստատումը պահանջում էին ոչ միայն ժողովրդական մասսաները, այլև ազգային բուրժուազիայի զգալի մասը, մինչև իսկ կալվածատիրական դասակարգի առանձին ներկայացուցիչները, որոնց շահերը կապված էին նման հարաբերությունների հաստատման հետ։

«Իրան» թերթը մի շարք հոդվածներում բազմաթիվ համոզիչ փաստերով ապացուցում էր, որ Իրանի տնտեսական սնանկացումից դուրս գալու միակ ուղին Ռուսաստանի հետ առևտրական կապերի վերականգնումն է[107]։

Անդրադառնալով այս նույն հարցին, «Սեթարեյե Իրան» թերթը գրում էր. «Իրանի առևտուրը Ռուսաստանի հետ միշտ էլ եղել է փոխադարձ շահավետ։ Այդ պատճառով էլ նման առևտուրը նպաստում էր Իրանի հյուսիսային, հյուսիս-արևմտյան և հյուսիս-արևելյան շրջանների ծաղկմանը։ Եթե մի հայացք նետենք դժբախտ երկրի թշվառ բնակչության ներկա վիճակի վրա, կարելի է հասկանալ, որ դժբախտությունների գլխավոր պատճառներից մեկը հանդիսանում է մեր պետու-

107 «ایران» , 1919 , № 320.

թյան հարաբերությունների խզումը հարևան Ռուսաստանի հետ։ Իրանի և Ռուսաստանի միջև եղած այդ հարաբերությունների մի քանի տարվա ընդմիջումը ցույց տվեց, թե որքան է Իրանի տնտեսական կյանքը կապված Ռուսաստանի հետ»[108]։

Մի այլ տեղ թերթը գրում էր. «Ռուսաստանի ապրանքները ձեռնտու են մեզ բոլոր տեսակետներից։ Նրանք չեն խանգարում մրցակցությունը օտարերկրյա ապրանքների հետ, իսկ այդպիսի մրցակցությունը շատ ձեռնտու է մեր շուկայի համար»[109]։

Մոսթոֆի ոլ Մամալեքը, ինչպես գրում է Մաքքին, «հասկանում էր, որ միայն սովետական պետության հետ քաղաքական և տնտեսական հարաբերությունների կարգավորումով կարելի է երկիրը փրկել տնտեսական քայքայումից և ներքին խառնակությունից»[110]։

Այդ հրատապ հարցը չէր կարող շրջանցել նաև Վոսուգ էդ Դովլեն։ Սակայն դեպքերը ընթացան այլ կերպ։

Սովետա-իրանական հարաբերությունների նորմալացումը ձախողելու համար անգլիական իմպերիալիստները ոչ մի միջոցի առաջ կանգ չառան։ 1918 թ. նոյեմբերին կազակային մի ջոկատ հարձակվեց սովետական միսիայի վրա և ձերբակալեց նրա բոլոր անդամներին ու հանձնեց անգլիացիներին, որոնք և նրանց ուղարկեցին Բաղդադ։ Միայն Կոլոմիյցևին հաջողվեց փրկվել։

Կոլոմիյցևը երկրորդ անգամ Իրան եկավ 1919 թ., բայց Բանդարգազ քաղաքից ոչ հեռու գտնվող վայրում չարանենգորեն սպանվեց։

Աբդոլլահ Մոսթոֆին, անդրադառնալով Կոլոմիյցևի սպանությանը, գրում է. «Վոսուգ էդ Դովլեի կառավարության օրոք բոլշևիկյան կառավարությունը Կոլոմիյցևին Իրան ուղարկեց։ Այդ դեսպանը Մազանդարանում ոտք դրեց իրանական հողը և տասնվեց հոդվածից բաղկացած պայմանագրի մի նախա-

---

108 "ستاره ایران". 12/X 1921.

109 "ستاره ایران". 2/II 1922.

110 حسین مکی تاریخ بیست ساله ایران جلد دوم صفحه ۲۳۲

գիծ ուղարկեց Իրանի արտաքին գործերի մինիստրությանը, որով իրականացվում էին Բրավինի բոլոր խոստումները։ Նա պատրաստակամություն հայտնեց իրանական կառավարության հետ բարեկամական դաշինք կնքել։ Հայտնի է, որ մամուլը գրաքննության պայմաններում և Վոսուգ էդ Դովլեի ցանկությամբ, որը Իրանն ամբողջովին գցել էր Անգլիայի գիրկը և զբաղված էր տխրահռչակ պայմանագրի ստորագրման ու իրականացման գործով, իսկ Իրանի տերիտորիան վերածել էր բոլշևիկների դեմ անգլիացիների մղած կռիվների համար զինամթերք փոխադրելու ճանապարհի, այդ դեսպանին կարևորություն չտվեց, մինչև իսկ աշխատեց չհաղորդել բոլշևիկյան այդ ներկայացուցչի գալը, և հասարակությունը ոչ մի տեղեկություն չստացավ Կոլոմիյցևի միսիայի մասին։ Ոմանք իմացան միայն, որ Կոլոմիյցև անունով մեկը Մազանդարան է եկել և սպանվել ինչ որ աղետի ժամանակ, որի կազմակերպչին էլ չճանաչեցին[111]։

Իսկ Աբոլֆազլ Կասեմին բացահայտ հայտարարում է, որ Վոսուգ էդ Դովլեն «անգլիացիներին դուր գալու համար ռուսական կառավարության դեսպան Կոլոմիյցևին խորհրդավոր ոչնչացրեց...»[112]։

Կոլոմիյցևի միսիայի վրա կատարված հարձակման կապակցությամբ իրենց վրդովմունքը հայտնեցին Ռուսաստանում ապրող պարսիկները։ 1919 թ. ապրիլի 10-ին Մոսկվայում բնակվող պարսիկները միտինգ գումարեցին, որտեղ ընդունեցին հետևյալ բանաձևը. «Պարսկական գաղութը Ռուսաստանում, անկախ տարբեր ուղղություններից, սկսած սոցիալիստական տարրերից մինչև միջին բուրժուազիայի ներկայացուցիչները, միահամուռ կերպով խայտառակության սյունին են գամում պարսկական կառավարությանը»։ Բանաձևը ավարտվում էր հետևյալ խոսքերով. «Պարսկական գաղութը Ռուսաստանում հանձինս Սովետական Ռուսաստանի

---

111 عبد الله مستوفی شرح زندگانی من .... صفحه ۱۸۰

112 ابو الفضل قاسمی تاریخ سیاه یا حکومت خانواده ها درایران
۳ خانواده قوام السلطنه تهران صفحه ۱۵۸

տեսնում է այն գլխավոր աղբյուրը, որից պարսիկ ժողովուրդը, անկախ քաղաքական ուղղությունից, պետք է ուժ ստանա օտարերկրյա և ներքին ճնշողների դեմ մղած պայքարում, և այդ պատճառով էլ հրավիրում է բոլոր պարսիկներին, ինչ կուսակցության կամ դասակարգի էլ նրանք պատկանելիս լինեն, ակտիվ ելույթների, որոնք արդեն տեղի են ունենում հայրենիքում հեղափոխական կազմակերպությունների կողմից»[113]։

Անգլիական իմպերիալիստների քայքայիչ քաղաքականությունը ավելի ուժեղ դրսևորվեց սովետա-իրանական պայմանագրի ստորագրման նախօրյակին, երբ անգլիացիների ու իրանական հետադիմական շրջանների մեքենայությունների հետևանքով ձգձգվում էին սկսված բանակցությունները։ Մաքքին նշում է, որ Լոնդոնի կարգադրությամբ միջոցներ էին ձեռնարկվում Մոշիր էդ Դովլեի կառավարությունը տապալելու ուղղությամբ։ Սակայն վերջինս, հակահարված տալով անգլիացիների դավադրություններին, հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որով ժողովրդին հայտնում էր կառավարության վճռական մտադրությունը սովետական երկրի հետ բարիդրացիական և բարեկամական հարաբերություններ ստեղծելու ուղղությամբ[114]։

Անգլիացիներին հաջողվեց ստիպել Մոշիր էդ Դովլեի կառավարությանը հրաժարական տալու, սակայն նրանց չհաջողվեց վիժեցնել բանակցությունները։

1920 թ. դեկտեմբերի 22-ին Համառուսաստանյան սովետների համագումարում Վ. Ի. Լենինը իր զեկուցման մեջ խոսելով Արևելքում սովետական քաղաքականության հաջողությունների ու սովետա-իրանական բանակցությունների մասին, ասաց. «Ես պետք է նշեմ նաև, ընկերներ, որ Արևելքում մեր քաղաքականությունը այս տարվա ընթացքում խոշոր հաջողություններ ունեցավ...

Մենք կարող ենք ողջունել նաև պայմանագրի առաջիկա ստորագրումը Պարսկաստանի հետ, որի հետ բարեկամական

113 «Правда», 12/IV 1919.

114 حسین مکی تاریخ بیست ساله ایران .... صفحه ۳۸-۳۶

հարաբերություններն ապահովված են շնորհիվ այն հանգամանքի, որ իմպերիալիզմի ճնշումից տառապող բոլոր ժողովուրդների արմատական շահերը զուգադիպում են»[115]։

1921 թ. փետրվարի 26-ին Մոսկվայում ստորագրվեց սովետա-իրանական պայմանագիրը։

1921 թ. սովետա-իրանական պայմանագիրը լենինյան ազգային քաղաքականության կլասիկ արտահայտություններից է։ Մեր խնդիրը չէ այստեղ մանրամասն վերլուծել պայմանագրի բովանդակությունը, սակայն համառոտակի կարելի է ասել, որ այս պայմանագրով չեղյալ հայտարարվեցին ցարական կառավարության բոլոր այն պայմանագրերն ու համաձայնագրերը, որոնք կնքվել էին որևէ երրորդ պետության հետ ի վնաս իրանական ժողովրդի սուվերենության։ Սովետական կառավարությունը առանց փոխհատուցման հրաժարվեց Իրանում ցարական Ռուսաստանի ունեցած բոլոր մենաշնորհներից։ Սովետական կառավարությունը Իրանին հանձնեց 64 միլիոն ոսկի ռուբլի արժեցող վարկեր բաց թողնող բանկը, իր բոլոր շարժական ու անշարժ գույքով, հրաժարվեց ցարական կառավարության Իրանին տված 70 միլ. ոսկի ռուբլի պարտքից, ինչպես և այդ պարտքը ապահովող՝ Իրանի պետական գործերին միջամտելու իրավունքից։ Սովետական կառավարությունը հրաժարվեց նաև Իրանի անկախության և անձեռնմխելիության հետ չհամատեղող էքստերիտորիալ կապիտուլյացիոն իրավունքներից։ Երկու կողմերը պարտավորվում էին չմիջամտել միմյանց ներքին գործերին և պայմանավորվում թույլ չտալ իրենց երկրում մյուս կողմի նկատմամբ թշնամական կազմակերպությունների գոյությունը։

Սովետական կառավարությունը այդ պայմանագրով ցույց տվեց, որ պատրաստ է անկեղծորեն ու բարեկամաբար օգնել Իրանի քաղաքական ու տնտեսական զարգացմանը։ Սովետական կառավարության նման վերաբերմունքը Իրանին հնարավորություն տվեց ճանաչվել որպես անկախ պետություն։

---

115 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 619։

Սովետական Ռուսաստանի հետ բարեկամական պայմանագիրը մեծ հենարան էր իրանական հայրենասիրական ուժերի համար անգլիական գաղութարարների դեմ մղած պայքարում։ Անգլիական զորքերը ստիպված եղան հեռանալ երկրից, և Իրանը անկախ զարգացման հնարավորություն ստացավ։

Սովետական Ռուսաստանի քաղաքականությունը բարձր գնահատականի արժանացավ Իրանի հասարակայնության կողմից։ «Սովետական կառավարության նոր քաղաքականությունը—գրում է Հոսեյն Մաքքին,—ամբողջովին հակառակ էր ցարական Ռուսաստանի կառավարության քաղաքականությանը, այն իմաստով, որ սովետական կառավարությունը իր արտաքին քաղաքականության հիմքում դրել էր հարևան երկրների անկախության և թույլ ժողովուրդների հավասարության սկզբունքը և ցանկանում էր ցարական բռնապետական իշխանության կեղեքումները փոխհատուցել։ Սովետական ղեկավարների այս քաղաքականությունը Արևելքի երկրների համար բարենպաստ պայմաններ էր ստեղծել»[116]։

Ժողովրդական մասսաները ողջունեցին սովետա-իրանական պայմանագիրը, երկրի զանազան վայրերում տեղի ունեցան միտինգներ և ցույցեր, որտեղ աշխատավորները, նշելով պայմանագրի վիթխարի նշանակությունը Իրանի հետագա զարգացման համար, իրենց խորին երախտագիտությունն էին հայտնում սովետական կառավարության մարդասիրական վերաբերմունքի և գաղութային ու կախյալ երկրների ժողովուրդներին իմպերիալիստական լծից ազատվելու գործում ցուցաբերած օգնության համար։

Գնահատելով սովետա-իրանական պայմանագիրը, իրանական «Ռահնեմա» թերթը գրում էր, որ հյուսիսից ճառագայթած կայծերը լուսավորեցին Իրանի մթագնած քաղաքական հորիզոնը և «թույլ տվեցին մեզ ավելի լավ տեսնել

---

116 حسین مکی تاریخ بیست ساله ایران جلد دوم ... تهران ۱۹۴۶ صفحه ۳

դրությունը, ընտրել մեզ համար ամուր և ավելի վստահելի կուրս»[117]։

Խոսելով սովետա-իրանական պայմանագրի մասին, իրանական «Թուֆան» թերթը գրում էր. «Իրանական ժողովուրդը կարող է հպարտանալ այն բանով, որ ատելի տերությունների կողմից կրած մի քանի դարերի ճնշումներից հետո, նրան հաջողվեց երիտասարդ Ռուսաստանի հետ պայմանագիր կնքել, որը երաշխավորում է երկու ժողովուրդների շահերը։ Տխրահռչակ անգլո-իրանական և այժմյան ռուս-իրանական պայմանագրերի համեմատումը ակնհայտ ցույց է տալիս, որ այն ամենը, ինչ մեզանից վերցնում է առաջին համաձայնագիրը, վերադարձնում է մեզ երկրորդ պայմանագիրը, դեռ ավելին, նա պահպանում է մեր տերիտորիալ և իրավական անձեռնմխելիությունը»[118]։

Սովետական կառավարության անշահախնդիր քաղաքականությունը Իրանում և սովետա-իրանական պայմանագրի իրավահավասար և Իրանի համար ազատարար բնույթը, ինչպես ասվեց, լայնորեն քննարկվել է պարսիկ բազմաթիվ հեղինակների աշխատություններում։

Հաբիբոլլահ Մոխթարին իր «Իրանի զարթոնքի պատմությունը» աշխատության մեջ գրում է, որ սովետա-իրանական պայմանագրի ստորագրումը «ազգայնականների մեջ դրական արձագանք ունեցավ և ամեն տեղից ու բոլոր քաղաքներից ուրախության և հավանության արտահայտություններ լսվեցին»[119]։

Մի ուրիշ տեղ նա գրում է. «Ռուս-իրանական պայմանագիրը սոցիալիստական ոգին զեփյուռի պես հյուսիսից դեպի մեր երկիրը փչեց և, բացի մի խումբ մարդկանցից, բոլորին դարձրեց Ռուսաստանի բարեկամը և Անգլիայի հակառակորդը»[120]։ Հեղինակը այնուհետև նշում է, որ այդ պայ-

117 «История дипломатии», т. III, М., 1945, стр. 108.

118 "طوفان". 18/XII 1921.

119 حبیب الله مختاری تاریخ بیداری ایران .... صفحه ۲۰۹

120 Նույն տեղում, էջ 213։

մանագիրը, ինչպես նաև նոր Ռուսաստանի նկատմամբ իրանցիների արտակարգ ուշադրությունը մեծ երաշխիք էին անգլիական ճնշումից ազատվելու համար[121]։

Սովետա-իրանական պայմանագրի պատմական նշանակության հարցի մասին խոսում է նաև իրանական ժամանակակից խոշորագույն պատմաբան Հոսեյն Մաքքին, որը զաջարական վերջին թագավոր Ահմադ շահի քաղաքական կյանքի պատմությանը նվիրված իր արժեքավոր գրքում գրում է. «Սովետա-իրանական պայմանագրի նշանակությունը և սովետական կառավարության բարյացակամ վերաբերմունքը այն ժամանակ հայտնի և պարզ կդառնա, եթե ուսումնասիրենք Գոլեստանի, Թուրքմենչայի և նման այլ պայմանագրերի ստորացուցիչ բնույթը և ցարական կառավարության քաղաքականությունը Իրանի նկատմամբ։ Եթե չլինեին սովետական կառավարության բարյացակամ վերաբերմունքը և օգնությունը, ապա Մոշավեր օլ Մամալեքը ինչքան էլ ջանար, պայմանագիրը այդպիսի բովանդակություն չէր ունենա։

Հետևաբար սովետական կառավարության համաձայնությունը Արևելքի, ինչպես նաև հարևան երկրների նկատմամբ նրա մեղմ և բարյացակամ քաղաքականությունն էր, որ պատճառ դարձավ, որպեսզի սովետական իշխանությունը պաշտոնապես ճանաչած առաջին ասիական պետության՝ Իրանի հետ բանակցությունները այսպիսի բարյացակամ և խաղաղասիրական ոգով ընթանան»։

Այնուհետև խոսելով պայմանագրի անմիջական հետևանքների մասին, Մաքքին նշում է, թե պետք է խոստովանել, որ սովետա-իրանական բարեկամական հարաբերությունների հաստատումը «պատճառ դարձավ, որ հարավային հարևանը, այսինքն՝ Անգլիան Իրանի նկատմամբ իր քաղաքականությունը փոփոխության ենթարկի և 1919 թ. օգոստոսի պայմանագիրը վերանայելով, նրա բեկանումը ընդունի։ Բացի այդ, սովետա-իրանական հարաբերությունների հաստատումը, 1921 թ. պայմանագիրը և սովետական կառավարու-

---

121 Նույն տեղում, էջ 219—220։

թյան այն պայմանը, որ եթե անգլիական ուժերը Իրանից դուրս չգան, ռուսական զորքերն էլ Գիլանից չեն հեռանա, մեծ դեր խաղացին Իրանից անգլիական զորքերի հեռացման և հարավային ոստիկանության ուժերի լուծարքի ենթարկման գործում»[122]։

Իրանի ժողովրդական «Թուդե» կուսակցության քարտուղար Ռեզա Ռադմանեշը նկարագրելով այդ տարիներին Իրանում տիրող վիճակը և նրա անկախությանն ու ամբողջականությանը սպառնացող վտանգը, նշում է. «Իրանի ազատության և անկախության համար այսպիսի վտանգավոր ժամանակ էր, երբ սովետական կառավարության օգնության ձայնը հնչեց և իրանական ժողովրդի ազատագրական շարժումը մեծ թափ ստացավ»[123]։ Խոսելով սովետա-իրանական պայմանագրի մասին, նա գրում է. «1921 թ. պայմանագրի կնքումը Իրանը փրկեց նրա անկախությանը և սուվերենությանը սպառնացող վտանգից։ Բացի այդ, ցարական կառավարության և նրա հպատակների Իրանում ունեցած մենաշնորհների բեկանումը և պարտքերի անփոխադարձ նվիրումը Իրանին տվեց ավելի քան հարյուր միլիոն ոսկի ռուբլու օգուտ։ Այսպիսով, այս պայմանագրի ստորագրումով բավական նպաստավոր հող ստեղծվեց Իրանի տնտեսական և քաղաքական լիակատար անկախությունը ապահովելու համար»[124]։

Եվ, վերջապես, Հեսամ Մոեզին իր «Իրանի քաղաքական հարաբերությունները աշխարհի հետ» գրքում սովետա-իրանական 1921 թ. պայմանագիրը գնահատում է որպես «մեծահոգի և ձեռնբաց արարք»[125]։

Մերկացնելով անգլո-իրանական պայմանագրի իմպերիալիստական, գաղութարարական նպատակները և պատաս-

---

122 حسین مکی مختصری از .... صفحه ۲۴۵

123 رضا رادمنش تاثیر انقلاب کبیر در ایران ۱۳۳۸ صفحه ۵

124 Նույն տեղում, էջ 13։

125 نجفقلی حسام معری تاریخ روابط سیاسی ایران بادنیا از هخامنشی تا تحولات اخیر جلد اول تهران ۱۳۲۴ صفحه ۲۷

խանելով Քերզոնի ելույթի այն մասին, որտեղ նա զրպարտչորեն մեղադրում էր Սովետական Ռուսաստանի քաղաքականությունը Իրանի նկատմամբ և հեգնանքով էր արտահայտվում սովետա-իրանական պայմանագրի մասին, «Սեթարեյե Իրան» թերթը գրում էր. «Արդյո՞ք կարելի է հնդկական բանակի սվինները և հարավ-իրանական զորամասերի կազմակերպումն ու 1919 թ. պայմանագրի կնքումը համարել «օգնության ձեռք»; իսկ ռուս-իրանական պայմանագրի քսանհինգ կետերը և ցարական ռեժիմի բոլոր անօրինական իրավունքների բեկանումը՝... «Ռուսաստանի շոյումը». բայց մենք այդքան հիմար չենք, որ չհասկանանք այն տարբերությունը, որ գոյություն ունի Ռուսաստանի հետ մեր կնքած պայմանագրի և անգլո-իրանական համաձայնագրի միջև, մի համաձայնագիր, որը անգլիական գաղութային քաղաքականության վառ օրինակ էր հանդիսանում և նպատակ ուներ ոչընչացնել մեր ազատությունը։ Մենք Սովետական Ռուսաստանի հետ քաղաքական և տնտեսական տարաձայնություններ չունենք...»[126]։

Խոսելով նոր Ռուսաստանի նոր քաղաքականության և Իրանի նկատմամբ նրա ցուցաբերած վերաբերմունքի մասին, «Գոլշան» թերթը նշում էր. «Դա այն ազատ Ռուսաստանն է, որը տապալելով ցարական բռնակալական կարգերը ոչ միայն ինքը ազատագրվեց քմահաճույքների լծից, այլև մինչև իսկ փրկեց իր հարևան պետություններին։ Դա այն նույն Ռուսաստանն է, որը ոչնչացրեց ցարական կառավարության բոլոր գիշատիչ կոնցեսիաները և միանգամայն անվճար կերպով վերադարձրեց դրանք Իրանին։ Դա այն Ռուսաստանն է, որը մեզ եղբայրական օգնություն ցուցաբերեց և ձգտում է մեզ հետ ապրել խաղաղ և բարեկամաբար»[127]։

Քերզոնը Սովետական Ռուսաստանի նկատմամբ աճած համակրանքը և անգլիական իմպերիալիստների հեղինակությանն անկումը մեկնաբանում էր որպես սովետական կառա-

---

126 «Жизнь национальностей», 26/IX 1921.

127 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿԱ, ֆոնդ 4—114, գործ 180, էջ 167։

վարության հակաանգլիական պրոպագանդայի արդյունք։ Պատասխանելով Քերզոնի նման պնդումներին, իրանական «էթեհադ» թերթը իր 1921 թ. հոկտեմբերի 3-ի համարում գրում էր. «Դուք կարծում եք, որ Ռոտշտե՞յնն է փողի միջոցով այդպիսի գաղափարներ տարածում։ Ոչ, դուք խիստ սխալվում եք, և մենք ձեզ կասենք, թե որտեղ է հատկապես ձեր սխալը։

Եթե հնարավոր լիներ դրամով պարսիկներին գաղափարներ պարտադրել, ապա պատասխանեք հետևյալ հարցին. «Ինչպե՞ս եղավ, որ երկու տարվա ընթացքում ձեր պայմանագիրը անցկացնելու համար Իրանում չորս միլիոն 800 հազար թուման ծախսելով, դուք չկարողացաք պարսիկներին ձեր կողմը թեքել։ Եթե իսկապես հնարավոր լիներ դրամով գնել պարսիկների խիղճը, ապա ի՞նչ դժվար բան էր դա ձեզ համար։ Չէ՞ որ դուք ավելի հարուստ եք և ավելի եք վճարում, քան ուրիշները... Եթե մենք հիմա եղբայրաբար ողջունում ենք ազատ Ռուսաստանին, ապա դա չի նշանակում, որ դրա համար մեզ դրամ են վճարում...»։

Դեռ վերջերս, երբ Ռուսաստանը Իրանի ազատության և անկախության թշնամին էր, մենք, ոչ մի բանի առաջ կանգ չառնելով, թշնամաբար էինք տրամադրված նրա հանդեպ, բայց նոր Ռուսաստանը ամեն կերպ ձգտում է մեր երկրի լիակատար անկախության պահպանմանը, և ինչքան էլ դուք՝ Մեծ Բրիտանիայի զավակներդ, զայրանաք, այսուհանդերձ մենք իրավունք ունենք ձեզ ասելու, որ ձեր դաժան քաղաքականությունը, ձեր գաղտնի ֆոնդերը, ձեր կողմից կազմակերպված հեղաշրջումը, ձեր վրդովեցուցիչ ինտրիգները, վերջապես այդ ձեր «պողպատյա կոմիտեն» ստիպում են մեզ ձեր նկատմամբ կասկածամտություն և մտավախություն ունենալու»[128]։

Տարիների փորձը հաստատեց իրանական հասարակայնության նման կարծիքը։

1942 թ. Իրանի հասարակայնությունը լայնորեն նշեց

---

128 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿԱ. ֆոնդ 40ա/114, գործ 179, էջ 60—61։

Հոկտեմբերյան հեղափոխության 25-ամյակը։ Իրանական թերթերը, անկախ իրենց ուղղություններից, արձագանքեցին այդ պանծալի հոբելյանին։ Նրանց էջերում լույս տեսած հոդվածներից այնուհետև կազմվեց առանձին գիրք։ Բերենք մամուլի արձագանքներից մի քանիսը։

«Ջավանան» թերթը գրում էր. «Սովետական նոր իշխանության ակտերից մեկը իր հարևան ասիական երկրների, այդ թվում և մեր երկրի հետ բարեկամական և բարիդրացիական հարաբերությունների հաստատումն էր։ Այդ հարաբերությունների հիմքը դրվեց 1921 թ. պայմանագրով, որի մեջ սովետական կառավարությունը հրաժարվեց ցարական իշխանության՝ Իրանում ուժով և բռնությամբ ձեռք բերած բոլոր արտոնություններից։ Դա պատճառ դարձավ, որ Իրանի ազատասերները ողջունեցին սովետական նոր իշխանության ստեղծումը, և հենց այդ պատճառով էր, որ Իրանի ժողովուրդը և կառավարությունը առաջինն էին, որ պաշտոնապես ճանաչեցին սովետական նոր իշխանությունը»[129]։

«Իրանե Քոնունիկ» թերթը գրում էր. «1917 թ. Հոկտեմբերյան մեծ հեղափոխության ձայնը իր արձագանքը գտնելով Ռուսաստանում և ամբողջ աշխարհում, իրանական ժողովրդի հույսերի ճառագայթները ևս լուսավորեց, որ նա շուտով իր տնտեսական անկախությունը նույնպես ձեռք կբերի։ Եվ իսկապես, այդ հույսերը իրականացան Սովետական Ռուսաստանի և Իրանի միջև 1921 թ. փետրվարի 26-ի պայմանագրի ստորագրումով։ Սովետական պետության պաշտոնական հայտարարությամբ վերադարձվեցին բոլոր այն մենաշնորհները և իրավունքները, որ ցարական կառավարությունը անցյալում ուժով և բռնությամբ կորզել էր իրանական ժողովրդից։ ...Այդ պայմանագրով Սովետական Սոցիալիստական պետությունը ապացուցեց, որ ինքը իրանական ժողովրդի քաղաքական և տնտեսական կյանքի ընդարձակման և զարգացման կողմնակիցը և ցանկացողն է։ Հետագայում սովետական պետության և Իրանի միջև կնքված տնտեսական և քաղաքական

129 انقلاب کبیر اکتبر بیست و پنجمین سال جشن انقلاب وانعکاس آن در ایران تهران ۱۹۴۲ صفحه ۲۷

պայմանագրերը ապացուցեցին և ամրապնդեցին այդ միտքը»[130]։

Այս ամենի հետևանքը եղավ այն, որ ինչպես անգլիացի հեղինակ Էլվել Սաթնն է խոստովանում, երբ 1921 թ. ստորագրվեց սովետա-իրանական պայմանագիրը, «Իրանի ազգայնականները Ռուսաստանի հովանավորությամբ ավելի քաջալերվեցին և փետրվարի 25-ին անգլո-իրանական 1919 թ. պայմանագիրը բեկանեցին և հենց այդ ժամանակից էլ Բրիտանիայի ազդեցությունը Իրանում օրեցօր պակասեց և հասավ մինչև այն աստիճանի, որ նրա օգնությունն էլ չընդունեցին»։ Էլվել Սաթնն ստիպված է ընդունել, որ «Բրիտանիան Իրանի հին և պատմական թշնամիներից էր համարվում, իսկ այժմ մեծ հույսեր կային, որ Ռուսաստանը այս երկրի նոր և օգտավետ բարեկամը կդառնա...»[131]։

• • •

Իրանական մամուլից և պարսիկ հեղինակների աշխատություններից վերը բերված ընդարձակ մեջբերումները և հատվածները ցույց են տալիս, որ իրանական պատմագրությունը ըստ արժանվույն է գնահատել Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության փրկարար նշանակությունը Իրանի համար։

Իմպերիալիզմի դարաշրջանում գաղութային և կախյալ երկրներում, այդ թվում և Իրանում, տեղի ունեցան ներքին խմորումներ, որոնք իրենց գագաթնակետին հասան առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։ Այդ ամենը պարարտ հող էր ստեղծել Հոկտեմբերի ազատարար գաղափարների տարածման համար։

Հոկտեմբերի անմիջական ազդեցության ներքո 1917—1921 թթ. Իրանում մեծ թափ ստացան ազգային-ազատագրական շարժումները, որոնք, ճիշտ է, հաղթական վախճան չունեցան, սակայն Իրանի նորագույն պատմության մեջ խա-

130 Նույն տեղում, էջ 49—50։

131 ۱۹۷—۸ صفحه ۱۹۶— لول سا تن رضا شاه کبیر یا ایران نوتهران

ղացին վճռական դեր և ապահովեցին երկրի անկախությունն ու անձեռնմխելիությունը։

Իրանական պատմագրությունը ամենայն մանրամասնությամբ քննարկել է այդ տարիներին երկրում տեղի ունեցած իրադարձությունները՝ սովետական երիտասարդ կառավարության բարեկամական առաջին ակտերը, անգլիական իմպերիալիստների ագրեսիվ քաղաքականությունը, 1919 թ. անգլո-իրանական պայմանագիրը, 1921 թ. սովետա-իրանական պայմանագիրը ու այլ փաստեր և ամենայն իրավացիությամբ ընդգծել Հոկտեմբերյան հեղափոխության և մեծ Լենինի ստեղծած սովետական պետության դերը Իրանի պատմության հետագա զարգացման գործում։

Շ. Խ. ՄՀՈՅԻ

ՔՈՒՐԴ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

(1918—1925 թթ.)

Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխության և լենինյան գաղափարների հաղթանակի պահին Քուրդստանը շարունակում էր մնալ մասնատված երկիր, իսկ նրա ժողովուրդը ենթարկվում էր ազգային ու սոցիալական ճնշման։ Օսմանյան Թուրքիայի տիրապետությունը Քուրդստանի հետամնացության և նրա բնակչության սոցիալ-տնտեսական ծանր դրության հիմնական պատճառներից մեկն էր։ Բնակչության բացարձակ մեծամասնությունը կազմող գյուղացիները գտնվում էին թուրքական իշխանությունների և քրդական ֆեոդալա-կալվածատիրական դասակարգի ու հոգևորականության երկակի ճնշման տակ, որոնց ձեռքում կենտրոնացված էր երկրի հիմնական հարստությունը։

Առաջին համաշխարհային պատերազմն իր ընթացքով ու հետևանքներով ավելի վատթարացրեց ժողովրդական զանգվածների դրությունը։ Քուրդստանը[1] *Մերձավոր արևելքի այն երկրներից էր, որը ոչ միայն իմպերիալիստական տերությունների գործարքների առարկա էր, այլև անմիջականորեն իր վրա կրեց պատերազմական գործողությունների բոլոր ար-*

---

[1] *Այստեղ նկատի ունենք հիմնականում Հարավային (Իրաքյան) Քուրդստանը, որը, ինչպես հայտնի է, առաջին համաշխարհային պատերազմից հետո մտցվեց Իրաքի պետության կազմի մեջ։*

հավիրքները։ Իրաքի ինչպես արաբական, այնպես էլ քրդական շրջաններում գրեթե շարքից դուրս եկավ ոռոգման սիստեմը, ամայացան մշակվող դաշտերը[2]։ «1914—1918 թթ. պատերազմը,—գրում է լիբանանցի առաջադեմ պատմաբան Յուսուֆ Մալեքը,—չտեսնված արհավիրքներ բերեց քրդերին, ինչպես նաև Թուրքիայի ազգային մյուս փոքրամասնություններին»[3]։ Թուրքական, իսկ 1918 թ. արդեն անգլիական իշխանությունների կողմից բնակչության վրա դրվեցին շատ ծանր հարկեր։ 1911—1912 թթ. համեմատությամբ 1919—1920 թթ. ազգաբնակչությունից գանձվող հարկերի չափը ավելի քան կրկնապատկվեց[4]։ Իրաքի օկուպացումից անմիջապես հետո անգլիական զավթիչները ռազմական ծախսերի մի զգալի մասը սկսեցին կորզել երկրի բնակչությունից[5]։

1917 թ. երկրից դուրս տարվեց 117 հազար տոննա հացահատիկ, այն դեպքում, երբ նույնիսկ նախապատերազմյան տարիներին, երբ ցանքատարածությունների ծավալը անհամեմատ ավելի մեծ էր, Իրաքը ի վիճակի էր արտահանելու ընդամենը 90—100 հազար տոննա հացահատիկ[6]։ Հիշյալ հացահատիկի մի մասը դուրս տարվեց Մոսուլի վիլայեթից, այսինքն՝ Հարավային Քուրդստանից։

Պատերազմը խախտեց Իրաքի տնտեսական կյանքը, որի հետևանքով մեծ հարված հասավ երկրի գրեթե բոլոր խավերի շահերին։ Գյուղական աշխատունակ ազգաբնակչության զգալի մասը կանչված էր բանակ, կամ էլ կատարում էր հարկադրական աշխատանքներ։ Դրա հետևանքով զգալիորեն նվազել էր ցանքատարածությունների ծավալը։ Պատերազմի վերջում միայն Հարավային Քուրդստանում անմշակ էր մնա-

---

2 Л. Н. Котлов, Национально-освободительное восстание 1920 года в Ираке, М., 1958, стр. 68.

3 Юсуф Малек. Курдистан или страна курдов, Бейрут, 1945, стр. 25.

4 *Տե՛ս* Л. Котлов, Нац.-осв. восстание..., стр. 69.

5 *Տե՛ս* A. T. Wilson, Masopotamia; 1917--1920. A chash of loy olties. A personal and historical record, London, 1931, p. 57.

6 *Տե՛ս նույն տեղում։*

ցել ցանքատարածությունների մինչև 50%-ը։ Ամենուրեք մոլեգնում էր սովը։ 1917—1918 թթ. ձմռանը Մոսուլում սովամահ եղավ մոտ 10 հազար մարդ[7]։ 1918 թ., երբ անգլիական օկուպացիոն զորքերը մտան Հարավային Քուրդստան, ականատեսների վկայությամբ Սուլեյմանիեում «դիակները փռված էին փողոցներում և ամայի մնացած տներում... մնացել էր բնակչության միայն մեկ երրորդը... Շրջակայքի գյուղերի բնակչության երկու երրորդը հեռացել էր, կամ մահացել»[8]։

Խիստ ցածր կենսամակարդակի և բուժսպասարկման բացակայության հետևանք էին հիվանդությունների մասսայական տարածումն ու մահացության բարձր տոկոսը։ 1919 թ. Իրաքի գրեթե բոլոր շրջաններում տարբեր հիվանդությունների տարածումը սոսկալի չափեր էր ընդունել[9]։ «Մանկական մահացությունը Քուրդստանում,—գրում էր այդ տարիներին անգլիական սպա Հեյը,—արտակարգ մեծ չափերի է հասնում»[10]։

Սոցիալ-տնտեսական կյանքի պայմանների հետագա վատթարացումը Քուրդստանի բնակչության լայն խավերի նոր դժգոհության հիմնական պատճառներից մեկը դարձավ։ Շարունակ պայքար մղելով օտարերկրյա և ներքին հարստահարիչների դեմ, քրդական լայն զանգվածները աստիճանաբար գալիս էին ազգային ինքնագիտակցության։ 1917 թ. հետո, երբ Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցության տակ հուժկու վերելք ապրեց Արևելքի ժողովուրդների ազատագրական պայքարը, Հարավային Քուրդստանում տեղի ունեցած ազատագրական շարժումները ևս որոշակի առաջընթաց քայլ կատարեցին իրենց զարգացման ճանապարհին։ Որպես օսմանյան կայսրության լծի տակ տառապող ժողովուրդներից

---

7 Տե՛ս Л. Котлов, Нац.-осв. восстание..., стр. 69.

8 C. J. Edmonds, Kurds, Turks and Arabs, London, 1957, pp. 80—81.

9 Տե՛ս «Революция в Ираке», М., 1959, стр. 13.

10 W. R. Hay, Two years in Kurdistan. Experiences of a political officer, 1918—1920, London, 1921, p. 43.

մեկը, քրդերը ևս աշխատում էին օգտագործել կայսրության քայքայումը և հասնել ազգային ինքնուրույնության։ Այս իմաստով «առաջին համաշխարհային պատերազմը և Թուրքիայի կրած պարտությունը քուրդ ժողովրդին նոր հույս ներշնչեցին»[11]։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ իմպերիալիստական պատերազմին վերջ տալու և դեմոկրատական հաշտություն կնքելու գլխավոր պայմանը պետք է լինի «հրաժարումն աննեքսիաներից (զավթումներից)—ոչ այն սխալ իմաստով, որ բոլոր պետությունները վերադարձնում են իրենց կորցրածը այլ այն միակ ճիշտ իմաստով, որ յուրաքանչյուր ժողովուրդ, առանց որևէ բացառության, թե՛ Եվրոպայում, թե՛ գաղութներում ազատություն և հնարավորություն է ստանում ինքը որոշելու՝ արդյոք ուզո՞ւմ է առանձին պետություն կազմել, թե՞ մտնում է իր ուզած որևէ այլ պետության կազմի մեջ»[12]։

Իմպերիալիստական տերությունները, սակայն, մտադիր չէին օսմանյան կայսրության ժողովուրդներին ինքնուրույնություն տալ, չնայած այդ մասին նրանց կողմից արված բազմաթիվ հայտարարություններին ու խոստումներին[13]։ Ընդհակառակը, այդ տերությունները, մասնավորապես Անգլիան ու Ֆրանսիան, օգտագործելով գերմանական բլոկի դեմ ձեռք բերած իրենց ռազմական հաջողությունները, դեռևս մինչ պատերազմի ավարտը, Մերձավոր արևելքի երկրները միմյանց միջև բաժանելու պլաններ էին մշակել։

1917 թ. մարտի 11-ին անգլիական գեներալ Ստենլի Մոդը գրավեց Բաղդադը։ Նա դիմեց Իրաքի բնակչությանը քաղաքական մի խարտիայով, որտեղ նշվում էր «արաբիզմի և Իրաքի տերիտորիայի միասնականության պահպանման ցանկությունը»[14]։ Անգլիական իմպերիալիստները օսմանյան Թուրքիայի լծից ազատագրված ժողովուրդներին «ինքնուրույնություն տալու» իրենց խոստմանը «հավատարիմ մնալու»

---

11 Bernard Vernier, L'Irak d'aujourdhoi, Paris, 1963, p. 89.

12 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 57։

13 Տե՛ս Амин Саид, Восстание арабов в XX веке, М., 1964, стр. 183.

14 Pierre Rossi, L'Irak des Revoltes. Paris, 1962, p. 81.

հավակնությամբ, գեներալ Մոդի բերանով հայտարարեցին. «Այս պատերազմում մեր նպատակն է ջախջախել թշնամուն և նրան արտաքսել այս տեղերից։

Մեր բանակները ձեր հողերը և քաղաքները գրավում են ոչ թե որպես նվաճողներ ու թշնամիներ, այլ որպես ազատարարներ ու ձեր բարեկամներ... Այսպիսին է ո՛չ միայն իմ թագավորի ու ժողովրդի կամքը, այլև մեծ ազգերի կամքը»[15]։ Շարունակելով Իրաքի և Հարավային Քուրդստանի օկուպացումը, անգլիական զորքերը 1918 թ. մայիսի 7-ին գրավեցին Կիրկուկը, իսկ մի քանի օր անց՝ Սուլեյմանիեն[16]։

Հոկտեմբերի վերջերին գրեթե ավարտվեց Հարավային Քուրդստանի օկուպացիան։ Նոյեմբերի 1-ին, Մուդրոսյան զինադադարի կնքման հաջորդ օրը, անգլիական զորքերը գրավեցին Մոսուլը[17]։ Զինադադարի օրը ուղղակի կապված էր Մոսուլի գրավման հետ, քանի որ այդ օրվանից միայն բոլոր ճակատներում մարտերը դադարեցին[18]։

Բրիտանական զորքերի «ազատագրական» խոստումներին հավատալով Համավենդի և Սուլեյմանիեի շրջանների քրդական վերնախավի ներկայացուցիչները անգլիացիների հետ համաձայնության եկան՝ կազմելու քրդական ժամանակավոր մի կառավարություն բրիտանական հսկողության ներքո, շեյխ Մահմուդ Բարզինջանի գլխավորությամբ[19]։

Ուշագրավ է գերագույն կոմիսար Առնոլդ Վիլսոնի կարծիքը այն մասին, թե որոնք էին անհապաղ «քրդական հարցով զբաղվելու» դրդապատճառները։ «Դաշնակիցները,—գրում էր նա,—քրդական հարցով սկսեցին զբաղվել զինադադարից հետո, նկատի ունենալով երեք կարևոր հանգամանք»[20], որոնց վրա անհրաժեշտ էր անհապաղ ուշադրություն դարձնել։

---

15 Նույն տեղում։

16 Տե՛ս L. Rambout, Les Kurdes et le Droit, Paris, 1947, p. 49.

17 Տե՛ս Hassan Arfa, Kurds. An historical and political study, London, 1966, p. 110.

18 Տե՛ս նույն տեղում։

19 Տե՛ս L. Rambout, Les Kurdes..., p. 52.

20 A. Wilson, Mesopotamia..., p. 52.

Դրանք էին. «Հիմնականում քրդերով բնակեցված Մոսուլի վիլայեթի ապագայի հարցը, Մոսուլի վիլայեթից հյուսիս գտնվող քրդական մյուս տերիտորիաների հարցը և իրանական տերիտորիայի վրա տեղի ունեցող քրդական շարժումների հարցը, որոնք կարող էին ազդեցություն գործել իրադարձությունների ելքի վրա»[21]։

Պատերազմում Անգլիայի ու նրա դաշնակիցների հաղթանակը և օսմանյան դժնդակ տիրապետության թոթափումը պարարտ հող ստեղծեցին անգլիացիների տված խոստումներին հավատալու համար։ «Երբ անգլիացիները մտան Իրաք,— գրում է Ամին Սաիդը,—նրա բնակիչները բարեկամաբար դիմավորեցին նրանց և ցույց էին տալիս իրենց աջակցությունը, նրանց համարելով իրենց բարեկամները և դաշնակիցները»[22]։ Սակայն ժողովրդական զանգվածները շուտով կողմնորոշվեցին, որին զգալի չափով նպաստեցին Ռուսաստանում տեղի ունեցող իրադարձությունները։

Հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո «Սովետական կառավարությունը ձեռնարկեց ցարական և ժամանակավոր կառավարությունների գաղտնի պայմանագրերի ու դիվանագիտական փաստաթղթերի հրապարակմանը»[23]։ Գաղտնի փաստաթղթերի լույս ընծայումով մերկացվեցին ցարիզմի և նրա իմպերիալիստական դաշնակիցների ծրագրերը առաջին համաշխարհային պատերազմում։ Հրապարակ հանվեց նաև արաբական երկրներին, այդ թվում նաև Իրաքին վերաբերող Սայքս-Պիկոյի համաձայնագիրը։ Հիշյալ միջոցառման արձագանքները Արևելքի երկրներում հասան հսկայական չափերի։ «Հրապարակելով Սայքս-Պիկոյի, ինչպես նաև մյուս գաղտնի պայմանագրերը, սովետական կառավարությունը օգնեց Մերձավոր արևելքի ժողովուրդներին ըմբռնելու իմպերիալիստների դավադրությունների իմաստը»[24]։ Իմպե-

21 Նույն տեղում։

22 Амин Саид, Восстания арабов..., стр. 183.

23 «Революция в Ираке», стр. 17.

24 A. R. Ghassemlou, Kurdistan and the Kurds, Prague 1965, p. 44.

ռիալիստական երկրների կառավարող շրջանները որոշակի խառնաշփոթության մի շրջան ապրեցին։ Թերևս «դրությունը փրկելու» մի քայլ կարելի է համարել Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ Վիլսոնի «14 կետերը» «ժողովուրդների ինքնուրույնության վերաբերյալ»։ «Այս պատերազմի հետևանքով կատարվող տերիտորիալ յուրաքանչյուր փոփոխություն,—հայտարարում էր ԱՄՆ-ի պրեզիդենտը,—պետք է ելնի այն բնակչության և ժողովրդի շահերից, որին նա վերաբերում է... միջազգային արդարությունը պետք է լինի այնպիսի արդարություն, որը չի ճանաչում որևէ կողմնապահություն և ապահովում է շահագրգռված բոլոր ժողովուրդների իրավահավասարությունը»[25]։ Ուշագրավ է Իրաքում Անգլիայի գերագույն կոմիսար Առնոլդ Վիլսոնի կարծիքը ԱՄՆ-ի պրեզիդենտի արտահայտած այս դոկտրինայի վերաբերյալ։ Նա նշում է, որ պրեզիդենտ Վիլսոնի «14 կետերը» ուղղակի կամ անուղղակի կերպով ընդունվեցին որպես Սայքս-Պիկոյի պայմանագրին փոխարինող մի փաստաթուղթ, որ բոլշևիկները հրապարակել էին 1917 թ. նոյեմբերին։ Վիլսոնը խոստովանում է, որ սովետական կառավարության կողմից գաղտնի փաստաթղթերի հրապարակումից հետո դաշնակիցները հարկադրված էին «եթե ոչ փոխել, ապա լրացնել հիշյալ պայմանագիրը»[26]։ «Դաշնակից տերությունները,— գրում է Յուսուֆ Մալեքը,— պարզորոշ գիտակցում էին, որ անհրաժեշտ է նաև Քուրդստանին տալ անկախություն, որին ձգտում էր քուրդ ժողովուրդը և որը կարող էր վերջ դնել քրդական անընդհատ ապստամբություններին»[27]։ Այն մասին, թե նման իրադրության մեջ ինչ վերաբերմունք ունեին Հարավային Քուրդստանի հասարակական խավերը անգլիական տիրապետության և քրդերին ինքնավարության իրավունքներ տալու նրա խոստման նկատմամբ, Առնոլդ Վիլսոնը գրում էր. «...կասկածամտության մթնոլորտը մեր վերջնական մտադ-

---

25 А. Иванов, Национальные меньшинства после мировой войны («Международная жизнь», 1925, № 1, стр. 27).

26 A. Wilson, Mesopotamia... p. 103.

27 Ю. Малек, Курдистан..., стр. 25.

ությունների նկատմամբ շարունակում էր գոյություն ունենալ և մենք հնարավորություն չունեինք ինչ-որ կերպ վերստահության մթնոլորտ ստեղծել»[28]։ Հետաքրքիր է նաև Համիլտոնի արտահայտած կարծիքը. «Շեյխը,— (Մահմուդ Բարզինջանը—Շ. Մ.) արևելյան անսխալ բնազդով գիտեր, որ մեր քաղաքականությունը խախուտ է և անկայուն»[29]։

Քուրդստանը իր ռազմա-ստրատեգիական ու տնտեսական նշանակությամբ մշտապես գրավել էր անգլիական իմպերիալիզմի ուշադրությունը։ Իր իմպերիալիստական նըպատակների իրագործման համար անգլիական դիվանագիտությունը դեռևս մինչև պատերազմը մեծ աշխատանք տարավ քրդերի մեջ։ Ինչպես արաբական երկրները, այնպես էլ Քուրդստանը «հեղեղված էին անգլիական իմպերիալիզմի գործակալներով, որոնք հող էին նախապատրաստում Քուրդըստանը Անգլիայի տիրապետության տակ գցելու համար»[30]։

Օսմանյան Թուրքիան պարտված էր, ցարիզմն այլևս գոյություն չուներ, անգլիական իմպերիալիզմը վերջապես դրությունը նպաստավոր էր համարում ձեռնարկելու իր մերձավոր արևելյան պլանների իրագործմանը։ Անգլիական կառավարության ծրագրերի մեջ իր ուրույն տեղն ուներ քրդական հարցը։

* * *

1918 թ. գրավելով Հարավային Քուրդստանը, անգլիացիները ինչպես Իրաքի հարավային շրջաններում, այնպես էլ այստեղ փաստորեն վարեցին ֆեոդալների և հոգևորականության դիրքերի ամրապնդման քաղաքականություն։ Հարավային շրջաններում օկուպանտները իրականացրին հողային ռեֆորմ, որը «գոհունակությամբ ընդունվեց ֆեոդալական վերնախավի, հատկապես քաղաքային երևելիների, խոշոր շեյխերի կողմից, որոնք դեռևս թուրքական տիրապետության

28 A. Wilson, Mesopotamia..., p. 127.

29 A. M. Hamilton, Road through Kurdistan, London, 1949, p. 201.

30 A. R. Ghassemlou, Kurdistan, .. p. 42—43.

ժամանակվանից ձեռք էին բերել ցեղերին պատկանող հողերը սեփականացնելու իրավունք»[31]։ Հարկային բեռը ավելի ծանրացավ. ռազմական բնույթի միջոցառումներից և զորքերի պահպանման հետ կապված ծախսերից բացի, անգլիացիները, ի տարբերություն թուրքական իշխանությունների, որոնք երբեմն ի վիճակի չէին հարկեր կորզել արաբական և քրդական մի շարք շրջաններից, հարկերը գանձում էին լրիվ, «հրաժարվելու դեպքում դիմում էին զինված ուժի, մինչև իսկ ավիացիայի օգնությանն»[32]։ Հարավային Քուրդստանում անգլիացիները իրենց քաղաքականության մեջ կարող էին հենվել միայն քրդական ֆեոդալական ավագանու և հոգևորականության վրա։ Եվ դա հասկանալի էր։ Ֆեոդալների և հոգևորականության տնտեսական ու քաղաքական ուժեղ ազդեցության գոյության պայմաններում, երբ «ցեղային ավանդական» կապանքներով կաշկանդված էին քրդական ժողովրդական ընչազուրկ զանգվածները, ֆեոդալական ավագանին ու հոգևորականությունը կարող էին դառնալ օտարերկրյա իմպերիալիզմի առավել հուսալի հենարանը։ Ի փոխհատուցումն դրա անգլիական օկուպանտները, ինչպես և մյուս շրջաններում, անցկացրին հողին տիրանալու իրավունքի վերագրանցում, օրինականացնելով, այսպիսով, գյուղական հողերի բռնագրավումը, որը կատարվել էր տեղական քուրդ ֆեոդալների կողմից դեռևս թուրքական ռեժիմի ժամանակ։

Օկուպացիայից անմիջապես հետո ամբողջ Քուրդստանը պաշտոնապես դրվեց անգլիական քաղաքական սպաների իշխանության ներքո[33]։ Միաժամանակ բրիտանական քաղաքացիական վարչությունը աշխատում էր ստեղծել «քրդերի ինքնուրույնության հասնելու տրամադրությունները հաշվի առնելու» տպավորություն։ Այդ քայլը Անգլիային պետք էր, որովհետև առջևումն էին «քրդական հարցի» շուրջը տեղի ունենալիք հակամարտությունները։ Անգլիական իմպերիալիզմը այդ ձևով ուզում էր իր կողմը գրավել «բոլոր քրդերին

31 Л. Котлов, Нац.-осв. восстание..., стр. 78.
32 „Times", 8/XI 1919.
33 Տե՛ս նույն տեղում.

և դյուրին դարձնել Մոսուլի հարցի լուծումը»[34]։ Քիչ նշանակություն չուներ նաև այն փաստը, որ անգլիական զինված ուժերը դժվարությամբ էին կարողանում հնազանդության մեջ պահել ինչպես արաբական, այնպես էլ քրդական շրջանները, որոնք օսմանյան տիրապետությունը անգլիական իմպերիալիզմի տիրապետությամբ փոխարինելու պլանների դեմ պայքարելու տրամադրություններ էին արտահայտում[35]։ Վերջապես անհրաժեշտ է նշել, որ «խոշոր նշանակություն ունեցող գործոններից մեկն էլ Հոկտեմբերյան հեղափոխության ազատագրական լոզունգների ազդեցությունն էր քրդական ժողովրդական զանգվածների վրա, որոնք ակտիվացնում էին իրենց պայքարը ազգային ազատագրության համար»[36]։ Ահա թե ինչու անգլիական քաղաքացիական վարչությունը «հարկադրված էր ընդունել քրդական մի շարք շրջանների ինքնավար դրությունը»[37]։ 1918 թ. հոկտեմբերին Սուլեյմանիեի քաղաքական սպա Նոելին հանձնարարվեց «ստեղծել ժողովրդի համար ընդունելի վարչական ժամանակավոր մի սիստեմ»[38]։ Քրդական ավագանու ներկայացուցիչները ստանում էին նահանգապետների պաշտոններ, որոնք, սակայն, գտնվելու էին անգլիական իշխանությունների հսկողության տակ։ Նախատեսվում էր ստեղծել «Հարավային իրաքյան Քուրդստանի ցեղերի մի կոնֆեդերացիա»[39]։ Քրդական ինքնավար մի քանի շրջաններ ստեղծելու անգլիական իմպերիալիզմի քաղաքականությունը ևս ուներ իր որոշակի նպատակները։ Օգտագործելով քրդական ավագանու մեջ գոյություն ունեցող հակամարտությունները և իշխանության համար ծավալված պայքարը, անգլիացիները իրենց նենգ քաղաքականությամբ փաստորեն մեծ հարված էին հասցնում քուրդ ժողովրդի

---

34 Курд Оглы, Курды и империализм, стр. 115.

35 Տե՛ս S. S. Gavan, Kurdistan. Divided Ntation of the Middle East, London, 1958, p. 20.

36 «Аграрные проблемы», 1931, № 9—10, стр. 99—100.

37 Л. Котлов, Нац.-осв. восстание..., стр. 83.

38 J. Edmonds, Kurds, Turks and Arabs, p. 29.

39 S. Gavan, Kurdistan... p. 30.

ազատագրական պայքարի հնարավորություններին։ Այդ քաղաքականությունը միաժամանակ կոչված էր «ապահովելու Անգլիայի տիրապետությունը Միջագետքի նկատմամբ»։ «Ինչ վերաբերում է Քուրդստանին,—այդ առթիվ գրում էր Հնդկաստանի գործերի գծով Անգլիայի պետական քարտուղարը,—ապա մեր կարծիքը այն է, որ հարմար կլինի խրախուսել ինքնավար պետությունների ֆեդերացիայի կազմումը...., որոնք կարող են կռվել միմյանց դեմ (ընդգծումը մերն է—Շ. Մ.), բայց չեն վնասի Միջագետքը»[40]։ Անգլիական իմպերիալիզմը այսպիսով երկիմաստ ու խարդախ քաղաքականություն էր վարում Հարավային Քուրդստանում. մի կողմից առերես «ինքնավարություն» էր շնորհում քրդերին, մյուս կողմից նրանց պարտադրում էր վարչա-քաղաքական այնպիսի մի ձև, որը իրենց ձեռքումն էր թողնում այդ ձևական ինքնավարությունը ոչնչի հավասարեցնելու ռեալ հնարավորությունները։ Նման իրադրության պայմաններում 1918 թ. նոյեմբերի 1-ին քուրդ նշանավոր ֆեոդալ, քաղաքական ակտիվ գործիչ Շեյխ Մահմուդ Բարզինջանին իրավունք վերապահվեց իրեն հայտարարելու Հալաբջայից մինչև մեծ Զաբ գետը ընկած շրջանի հուկումդար (կառավարիչ)[41]։ Անգլիացիները նման քաղաքականություն վարեցին նաև Ռևանդուզի և Ամադիայի շրջաններում[42]։

1918 թ. դեկտեմբերի 1-ին գերագույն կոմիսար Առնոլդ Վիլսոնը մեկնեց Սուլեյմանիե՝ քուրդ ղեկավարների հետ հանդիպում ունենալու նպատակով։ Ինչպես երևում է Վիլսոնի հիշողություններից, նրա այս ուղևորությունը հիմնականում ուներ քրդերի հակաթուրքական տրամադրությունները շոշափելու նպատակ։ «Քուրդ ղեկավարները ինձ համոզում էին,—գրում է նա,—որ գյուղական ազգաբնակչությունը ուժով կդի-

---

40 Նույն տեղում։

41 Derk Kinnane, The Kurds and Kurdistan, London, 1964, p. 35.

42 Տե՛ս St. Longrigg, Iraq, 1900—1950, London, 1956, p. 105.

մադրի թուրքերի վերադարձին»[43]։ Վիլսոնի հետ հանդիպման ժամանակ քրդական ներկայացուցիչների մի մասը արտահայտում էր վարչական վերահսկողությունը քրդական շրջաններում ընդունելու պատրաստակամություն, իսկ մնացածները ուղղակի հանդես էին գալիս նրա դեմ[44]։ Ի վերջո Շեյխ Մահմուդ Բարզինջանը գերագույն կոմիսարին է ներկայացնում քրդական քառասուն առաջնորդների ստորագրությամբ մի համաձայնեցված փաստաթուղթ, որը ուներ հետևյալ բովանդակությունը. «Քանի որ նորին մեծության կառավարությունը (բրիտանական կառավարությունը — Շ. Մ.) հայտնել է իր ցանկությունը արևելյան ժողովուրդներին թուրքական ճնշումից ազատելու և ցանկանում է օգնել նրանց անկախության գործին, մենք, որպես քուրդ ժողովրդի ներկայացուցիչներ, խնդրում ենք բրիտանական նորին մեծության կառավարությանը հնարավորություն տալ քուրդ ժողովրդին խաղաղ կերպով ընթանալու զարգացման ուղիով բրիտանական խնամակալության ներքո...»[45]։ Թեև Մահմուդ Բարզինջանը ուներ ոչ քիչ ախոյաններ, բայց քրդական ներկայացուցիչների՝ Սուլեյմանիեում տեղի ունեցած համաժողովը փաստորեն որոշեց ինքնուրույն քրդական վարչակարգ ստեղծել Մահմուդ Բարզինջանի ղեկավարությամբ[46]։

Շեյխ Մահմուդ Բարզինջանը, ապավինելով բրիտանական կառավարության «հովանավորությանը», հուսով էր, թե կընդարձակի իր իշխանության սահմանները և ի վերջո կըհասնի քրդերի ինքնուրույնության ճանաչմանը։ Ահա թե ինչու սկզբից ևեթ նա հավակնություն ուներ «ամբողջ Մոսուլի վիլայեթի վրա և նպատակ էր դրել ստեղծելու ինքնուրույն պետություն»[47]։ Սակայն, անգլիական իշխանությունները մտադիր չէին նպաստելու քրդական պետության ստեղծմանը։

---

43 محمد الدرة ، القضية الكردية والعربية فى معركة العراق ، بيروت ١٩٦٣ ، ص ٦٩

44 Տե՛ս A. Wilson, Mesopotamia..., p. 129.

45 Նույն տեղում, էջ 68—69։

46 Տե՛ս A. Arfa, The Kurds... p. 111.

47 J. Edmonds, Kurds..., p. 29.

Ընդհակառակը, իրենց «դիրքերի ամրապնդման»[48] հետ մեկտեղ անգլիացիները սկսեցին սահմանափակել Շեյխ Մահմուդ Բարզինջանի իրավունքները և ամբողջ իշխանությունը կենտրոնացրին իրենց ձեռքում։ Նույնիսկ պաշտոնապես նրա իշխանության տակ գտնվող գոտուց անջատվեց Հալաբջայի շրջանը[49]։ Զավթիչները հաջողությամբ օգտագործում էին քրդական ֆեոդալական ավագանու միջև գոյություն ունեցող հակամարտություններն իրենց դիրքերն ամրապնդելու համար։ 1918 թ. դեկտեմբերի վերջերին Նոելը Սուլեյմանիեից մեկնեց արևմտյան և հյուսիսային շրջանները «կառավարման նոր սիստեմի վիճակը ստուգելու համար»։ Քաղաքական սպաներ նշանակվեցին Քոյում, Ռանիայում և Ռևանդուզում։ «Թուրքական ծառայողները,—գրում է Վիլսոնը,—ուղարկվեցին այնտեղ, որտեղից նրանք եկել էին...»[50]։ Քրդական ավագանուն իշխանություն տալու և նրա վրա անմիջական հրամանատարություն սահմանելու անգլիական իշխանությունների քաղաքականությունը, սակայն, սկզբից ևեթ ուներ իր խոցելի կողմերը և անկենսունակ գտնվեց։ Այդ քաղաքականությունը չէր բավարարում ոչ Քուրդստանի գյուղացիական զանգվածներին, որոնք ի վիճակի չէին ապրուստի նորմալ պայմաններ գտնել և տնքում էին հարկերի ծանրության տակ, ոչ էլ քրդական ֆեոդալական ավագանու մի զգալի մասին, որի իրավունքները «լրջորեն սահմանափակվել էին զավթիչների կողմից»[51]։ Անգլիական օկուպացիայից առաջ երկրի քաղաքական կյանքի վրա ազդեցություն գործող ֆեոդալական խավի ներկայացուցիչների մի մասի իրավունքների այդօրինակ սահմանափակումը հատկապես նկատելի կերպով արտահայտվեց «Միջին Եփրատի ու Տիգրիսի և Քուրդստանի շրջաններում»[52]։ Օկուպացիոն իշխանությունների կամայականությունները և անօրինակ հարկերը մասսայական դժգոհության առիթ էին

48 Л. Котлов, Нац.-осв. восстание..., стр. 83.

49 Տե՛ս նույն տեղում։

50 Տե՛ս A. Wilson, Mesopotamia..., p. 132.

51 Л. Котлов, Нац.-осв. восстание..., стр. 83—84.

52 Նույն տեղում։

տալիս։ Անգլիական գաղութարարները հաշվի չէին նստում բնակչության ազգային զգացմունքների հետ, ոտնահարում էին նրանց մարդկային արժանապատվությունը, անողոք ավերում էին հնագույն կուլտուրայի մեծարժեք հուշարձանները։ «Օկուպանտ սպաները, մինչև իսկ բարձրաստիճան սպաներ, ծեծում էին արաբ և քուրդ ծերերին ու երեխաներին»[53],— գրում էր արաբ պատմաբան Մահմուդ Մուսիլին։ Գյուղացիական զանգվածները, որոնք սկզբնական շրջանում միամտորեն կարծում էին, թե «անգլիացիները կսահմանափակեն ցեղապետների կողմից նրանց նկատմամբ կիրառվող բռնապետական իշխանությունը»[54], նույնիսկ Վիլսոնի խոստովանությամբ, հուսախաբ էին լինում։

Զանգվածային բնույթ կրող դժգոհության այս պայմաններում անգլիական գաղութարարները որոշեցին ավելի սահմանափակել Սուլեյմանիեի ինքնավար շրջանի իրավունքները։ Որոշվեց այստեղ սահմանել այնպիսի կարգ, «որը նման լինի օկուպացված մյուս շրջանների վարչակարգին»[55]։ Այդ նշանակում էր, որ անգլիական իշխանությունների կողմից տրված «ինքնավարությունը» ի չիք էր դառնում՝ նախքան լրիվ իրականացումը։ Նման դրության լարված բնույթը չէին կարող չնկատել նաև անգլիացիները, և ըստ երևույթին, դրությունը կարգավորելու անհրաժեշտությունը հետին դեր չխաղաց Սուլեյմանիեում Նոելի փոխարեն Սոնին որպես քաղաքական սպա նշանակելու մեջ։ Վերջինս քաջատեղյակ էր քրդերի պատմությանը և սովորույթներին, գիտեր քրդերեն և առհասարակ «քրդական գործերի գիտակ» էր։ Սուլեյմանիեում, սակայն, իրադրությունը «գնալով լարված բնույթ էր ստանում»[56]։ Մահմուդ Բարզինջանը տեսնում էր, որ «քրդական ինքնավարությունը» փաստորեն ձևական բնույթ էր կրում և ինքը զրկված էր ինքնուրույն գործելու իրավունքներից, քանի որ ամեն ինչ վճռվում էր քաղաքական սպաների կողմից։

---

53 Նույն տեղում, էջ 84։

54 A. Wilson, Mesopotamia..., p. 132.

55 J. Edmonds, Kurds.... p. 90.

56 A. Wilson, Mesopotamia..., p. 135.

1919 թ. մայիսի սկզբներին Վիլյամ Մարշալի փոխարեն Իրաքում անգլիական զորքերի գլխավոր հրամանատար նշանակվեց Ջորջ Մակ Մահոնը։ Մայիսի 9-ին Սուլեյմանիեից վերադառնալով Բաղդադ, հաջորդ օրը Առնոլդ Վիլսոնը բրիտանական կառավարությունից ստացավ իրեն հասցեագրված պաշտոնական հետևյալ հաղորդագրությունը. «Մենք լիազորում ենք Ձեզ ղեկավարելու իրաքյան պետության ստեղծումը... Դուք միաժամանակ պետք է վերստեղծեք արաբական Մոսուլի գավառը, որը հանդիսանում էր «ինքնավար շրջան» և որը ղեկավարում էին բրիտանական խորհրդատուների հսկողությամբ գործող քուրդ առաջնորդները»[57]։ Քրդական ինքնավարությունը սահմանափակելու իրենց քաղաքականության մեջ անգլիացիները հմտորեն օգտագործում էին Մահմուդ Բարզինջանի ախոյաններին։ Չնայած Շեյխ Մահմուդի տիրապետության սահմանները բավական ընդարձակ էին, սակայն քուրդ բոլոր ղեկավարները չէին, որ ենթարկվում էին նրան[58]։ Եվ ահա այն ժամանակ, երբ Մահմուդ Բարզինջանը աշխատում էր վերջ տալ նման իրադրությանը, որը մեծապես խանգարում էր «Երկրի կառավարմանն ու նրա վերականգնմանը և ստեղծել միացյալ ինքնուրույն պետություն»[59], անգլիացիները վարում էին քրդական ախոյան ուժերը միմյանց հակադրելու և թուլացնելու քաղաքականություն։ Մահմուդ Բարզինջանը բացահայտ կերպով արտահայտում էր իր դժգոհությունը «քրդական ինքնավարության գործերին» բրիտանացիների անընդհատ միջամտությունից[60]։ Ի պատասխան դրա բրիտանական իշխանությունները որոշեցին նրան վերցնել խիստ հսկողության տակ։ Ակնարկելով մի կողմից Շեյխ Մահմուդի և անգլիացիների, մյուս կողմից առաջինի և նրան ենթակա քուրդ երևելիների միջև գոյություն ունեցող հակասությունները, Ռամբուն շատ դիպուկ է բնութագրել այդ իրավիճակը։ «Մահմուդը,—գրում է նա,—կիսով չափ էր բավարարում

57 H. Arfa. Kurds... p. 111.

58 Նույն տեղում։

59 Նույն տեղում։

60 Նույն տեղում։

անգլիացիներին՝ իր հովանավորներին և քրդերին՝ իր ենթականերին»[61]։

1919 թ. մայիսի 23-ին Մահմուդ Բարզինջանը հարձակվեց Սուլեյմանիեի անգլիական քաղաքական սպայի ռեզիդենցիայի վրա, ձերբակալեց նրա ամբողջ անձնակազմը մայոր Գրինհաուզի գլխավորությամբ, որը փոխարինում էր այդ ժամանակ բացակա Սոնին և հռչակեց Քուրդստանի անկախությունը[62]։ Անգլիական «քաղաքական բյուրոյի» դրոշի փոխարեն Սուլեյմանիեի վարչական շենքի կատարին բարձրացվեց քրդական դրոշը[63]։ Անգլիական սպա Լիսի հրամանատարության տակ գտնվող ջոկատը նահանջեց դեպի Խանեկին։ Մայիսի 26-ին անգլիացիները գրավեցին Խանեկինը։ Կիրկուկում գտնվող անգլիական զորաբանակը հրաման ստացավ հեծելազորայիններ, իրաքյան զինված ուժերի զրահապատ մեքենաների ու լեռնային հրետանու հետ շարժվել դեպի Սուլեյմանիե[64]։ Քրդական ուժերը Սուլեյմանիեից մոտ 35 կմ հեռավորության վրա գտնվող կիրճում պարտության մատնեցին անգլիական զորաբանակին և իրենց ձեռքը գցեցին բավականաչափ զենք[65]։ Ապստամբների առաջին հաղթանակը դգալի չափով նպաստեց նրանց կողմնակիցների ավելացմանը։ «Շատ տատանվողներ միացան Մահմուդին,—գրում է հիշյալ իրադարձությունների մասնակից անգլիական սպա Էդմոնդսը։—Նույնիսկ սահմանի մյուս կողմը՝ Պարսկաստանի քրդական ցեղերը ապստամբեցին իրենց կառավարության դեմ, պահանջելով մտնել շեյխի ղեկավարության տակ գտնվող քրդական մեկ պետության մեջ»[66]։ Անգլիական կառավարության պահանջով կտրուկ միջոցներ ձեռնարկվեցին ապստամբությունը ճնշելու համար։ Այդ պարտականությունը դրվեց գեներալ Թեոդոր Ֆրեյզերի վրա, որը Մոսուլում տեղա-

61 L. Rambout, Les Kurdes..., p. 52.
62 D. Kinnane, The Kurds.... pp. 35—36.
63 J. Edmonds, Kurds..., p. 32.
64 Նույն տեղում.
65 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 2, ед. хр. 77, л. 31.
66 J. Edmonds, Kurds..., p. 32.

վորված 18-րդ զորամասի հրամանատարն էր[67]։ Շուտով ապստամբության դրոշը բարձրացրին Սուլեյմանիեի հյուսիսային մասում գտնվող Ջամչամաչի շրջանի մի քանի գյուղեր։ Սրանց օրինակին հետևեցին Բազիանի շրջանի գյուղացիները և Ջաբարի ցեղը[68]։ Մահմուդ Բարզինջանին ակտիվորեն օգնող Մուհամմեդ Ջաբարին իր հսկողության տակ էր պահում մոտ 12 քրդական գյուղ[69]։ Կալա Սեվկայի շրջանում քրդական 10 գյուղերի բնակիչների ապստամբությունը ղեկավարում էր Աբդուլլա Ասկյարին[70]։

Ապստամբությունը ճնշելու գործում անգլիացիներին մեծ ծառայություններ մատուցեցին քրդական դավաճան ֆեոդալները, որոնք թշնամաբար էին տրամադրված շեյխ Մահմուդի իշխանության դեմ[71]։

1919 թ. հունիսի 18-ին Բազիանի կիրճի շրջանում տեղի ունեցավ ճակատամարտ Ֆրեյզերի բանակի և քրդական ապստամբական ուժերի միջև։ Այստեղ ծանր հրետանին մեծապես նպաստեց անգլիացիներին ընկճելու ապստամբների դիմադրությունը։ Ճակատամարտն սկսելուց մի քանի ժամ անց ապստամբների մի մեծ ջոկատ գերի ընկավ։ Ճակատամարտի ելքի վրա ոչ քիչ ազդեցություն թողեց Մահմուդ Բարզինջանի վիրավորվելը։ Անգլիական 32-րդ ջոկատը, որ գրտնվում էր Դենեհինի հրամանատարության տակ, առանց մեծ դժվարության արդեն գրավել էր Սուլեյմանիեն[72]։ Շուտով Մահմուդը ձերբակալվում է և ուժեղ հսկողության տակ ուղարկվում Բաղդադ։ Սակայն ապստամբության հիմնական մարտունակ ուժերի պարտությունից հետո էլ անգլիացիներին

67 Տե՛ս L. Rambout, Les Kurdes..., pp. 52—53.

68 Տե՛ս J. Edmonds. Kurds..., p. 39.

69 Տե՛ս նույն տեղում։ (Ուշագրավ է, որ Ջամչամաչի շրջանի գյուղացիների ելույթի անմիջական առիթը հանդիսացավ հարկերը բարձրացնելու իշխանությունների փորձերը։ Տե՛ս ЦГАОР СССР, ф. 4459, оп. 2, ед. хр. 7, л. 26).

70 Տե՛ս նույն տեղում։

71 Մասնավորապես նկատի ունենք Ջաֆ և Փիշդար ցեղերի ցեղապետերին (Շ. Մ.)։

72 Տե՛ս. L. Rambout, Les Kurdes..., p. 52.

պետք եղավ առնվազն «վեց շաբաթ՝ լեռնային շրջաններում գործող պարտիզանական ջոկատների դիմադրությունը ընկճելու համար»[73]։

Անգլիական պատժիչ արշավախմբերը «սանրման» գործողություններ էին կատարում Քուրդստանում։ Մինչև 1919 թ. վերջերը նրանք շարունակում էին «հանդարտեցնել» Ամադիայի, Աքրայի, Բարզանի շրջանները։ Ընդհարումների ժամանակ նրանք զգալի կորուստներ կրեցին[74]։ Ջնայած ապստամբությունը ճնշվեց, սակայն Քուրդստանում դրությունը կայուն համարել չէր կարելի։ Զավթիչների «կողոպուտի, համատարած դաժան ճնշման և բռնի աշխատանքի ռեժիմը» քրդական զանգվածների տևական դժգոհության հիմնական պատճառներից մեկն էր։ Պատահական չէր, որ «Հընդկաստանի գործերի դեպարտամենտը» 1919 թ. օգոստոսի 24-ին մի պաշտոնաթղթում նույնիսկ հարցնում էր գերագույն կոմիսար Վիլսոնին, թե «ներկա իրադրության մեջ նա նպատակահարմար չի՞ գտնում ետ կանչել մեր քաղաքական ծառայողներին... և ձեռք քաշել քրդերից»[75]։ Անգլիական կառավարությունը, իհարկե, ամենևին մտադիր չէր «ձեռք քաշել քրդերից»։ Ընդհակառակը, որոշ իմաստով շեյխ Մահմուդի ապստամբությունը «հարմար առիթ հանդիսացավ» անգլիացիների համար, որպեսզի արդեն ավելի ազատ պետական ապարատի «վերակառուցման աշխատանքներ կատարեն Քուրդստանում և ընդարձակեն անմիջականորեն Բաղդադի ենթակայության տակ գտնվող գոտին»։ Քրդերի ինք-

---

73 H. Arfa, Kurds..., p. 112։ (Ռազմական հիշյալ գործողությունների մասնակից էդմոնդսը հետաքրքիր մանրամասնությամբ է նկարագրում Մ. Բարզինջանի ձերբակալությունը։ Նշելով, որ իրեն էր հանձնարարված Շեյխ Մահմուդին ձերբակալելու գործը, նա գրում է. «Ես զարմացած էի Ֆրեյզերի կողմից ինձ տրված հանձնարարության վրա։ Եթե Մահմուդի ձերբակալումը այդքան հեշտ բան էր, ապա ինչո՞ւ էր եկել Քուրդստան մի գեներալ մայոր (այսինքն՝ Ֆրեյզերը—Շ. Մ.) հետիոտն զորքով, հեծելազորով, զրահապատ մեքենաներով և այլն)։

74 L. Rambout, Les Kurdes..., p. 54.

75 A. Wilson, Mesopotamia..., p. 142.

նավարական իրավունքների մասին այդ ժամանակ արդեն խոսք լինել չէր կարող։ Այդ առթիվ անգլիական կառավարության ներկայացուցիչը պառլամենտում հայտարարեց. «Կառավարությունը լիովին բավարարված է Միջագետքի «քաղաքական կառավարչության» նախնական միջոցառումներից և ոչ մի անհրաժեշտություն չի տեսնում փոփոխությունների համար»[76]։

Այդ նշանակում է, որ իսպառ վերացվելու էին այն չնչին ինքնավարական իրավունքները, որոնցից կարող էր օգտվել Հարավային Քուրդստանը։ Ապստամբությունը պարտվեց և զինված պայքարով ինքնավարության իրավունք ձեռք բերելու շեյխ Մահմուդի առաջին փորձը վերջացավ անհաջողությամբ[77]։

Ապստամբության պարտության հիմնական պատճառներն էին.

Նախ, թեև ապստամբությունը որոշ թափ ու ծավալ ընդունեց, բայց, այնուամենայնիվ, համաքրդական բնույթ չընտացավ, որին արգելք հանդիսացան Քուրդստանի մասնատվածությունը և վերնախավի հակամարտությունները։ Նույնիսկ Հարավային Քուրդստանի բոլոր շրջանները չէին, որ մասնակցում էին ապստամբությանը։

Երկրորդ. ապստամբության մասնակիցները խայտաբղետ դասակարգային կազմի պատճառով ներքին միասնություն չունեին, նրանց միավորման գործոնը՝ ատելությունը օտարերկրյա տիրապետության դեմ, ժամանակավոր էր։

Վերոհիշյալ երկու հանգամանքների հետ է կապված նաև ապստամբության պարտության երրորդ պատճառը. դա քաղաքական հստակ ծրագրի բացակայությունն էր. պատշաճը հատուցելով Մահմուդ Բարզինջանին այդ պայքարի մեջ ունե-

---

76 Նույն տեղում։

77 Ապաքինվելուց հետո ապստամբության ղեկավար շեյխ Մահմուդ Բարզինջանը կանգնեց անգլիական ռազմական դատարանի առջև։ Դատարանը նրան դատապարտեց մահվան, որը հետագայում Ջորջ Մակ Մահոնի կողմից փոխվեց 10 տարվա բանտարկության։ Շեյխ Մահմուդին և նրա եղբորը՝ շեյխ Կադիրին աքսորեցին Հնդկաստան։

ցած մեծ դերի համար, հարկ է միաժամանակ նշել, որ ինքնավարության նրա ծրագիրը չէր կարող լրիվ համապատասխանել պայքարի հիմնական շարժիչ ուժի՝ գյուղացիության շահերին։ Հիշյալ ժամանակաշրջանում գյուղացիության պայքարը տարերային բնույթ էր կրում, քաղաքական առաջադեմ կազմակերպության բացակայության պատճառով այդ պայքարը երբեմն օգտագործվում էր ֆեոդալների ու ցեղապետերի կողմից։ Ի վերջո, ապստամբության պարտության կարևոր պատճառներից մեկն էլ բրիտանական մեծաթիվ զորքի առկայությունն էր Իրաքում, նրա զինվածության անհամեմատ բարձր մակարդակը։ Զինված ուժերի այդ գերակշռությունը առավել ևս վճռական նշանակություն ունեցավ, մանավանդ որ քրդական ու արաբական պայքարող շրջանների միջև գրեթե կապ չկար։ 1919 թ. Քուրդստանում տեղի ունեցող իրադարձությունների ժամանակ Իրաքի միջին և հարավային շրջաններում դրությունը հանդարտ էր, որը մեծապես նպաստեց Քուրդստանում անգլիական զինված ուժերի ազատ գործողություններին։

Ապստամբությունը պարտվեց, բայց այն ունեցավ որոշակի դրական նշանակություն քրդական ազատագրական շարժումների ծավալման համար։ Ապստամբության բարձրացումը Հարավային Քուրդստանում այն ժամանակ, երբ Իրաքը նոր էր օկուպացվել և բնակչության մեջ դեռ պատրանքներ կային իմպերիալիստների կողմից խոստացվող «ժողովուրդների ինքնուրույնության մասին», նպաստեց ժողովրդական զանգվածների կողմնորոշմանը։ Ապստամբությունը հանդիսացավ Իրաքի ժողովրդի 1920 թ. հուժկու ելույթներին նախորդած լուրջ իրադարձություն, որը զգալի չափով նպաստեց մասսաների ինքնագիտակցության զարգացմանը։ «Այդ ելույթները խոշոր դեր խաղացին զավթիչների դեմ երկրի աշխատավորական զանգվածների (ինչպես քրդերի, այնպես էլ արաբների) հետագա պայքարի գործում»[78]։ Այն մեծ իրադարձություն էր քուրդ ժողովրդի ազատագրական շարժման

---

78 Л. Котлов, Нац.-осв. восстание..., стр. 106.

մեջ, քանի որ «ապստամբությունը համազգային նշանակություն ունեցավ ոչ միայն Իրաքի, այլև Իրանի քրդերի համար, որոնք միացան շեյխ Մահմուդին»[79]։

Շեյխ Մահմուդին կամակատար գործիք դարձնելու և «քրդական ինքնավարությունը» իրենց շահերի համար օգտագործելու բրիտանական իշխանությունների պլանները հեռանկարային չէին։ Քրդական շարժումը «ինքնուրույն զարգանալու և սեփական նպատակներ հետապնդելու»[80] որոշակի տենդենց ուներ։ Այդ փաստը ընդունում էին նաև իրենք՝ անգլիական գաղութային իշխանությունները։ 1919 թ. օգոստոսի 22-ին Հնդկաստանի գործերի գծով անգլիական պետական քարտուղարը Իրաքի ներքաղաքական հարցերին վերաբերող մի հեռագրում, որն ուղղված էր գերագույն կոմիսարին, ուղղակի նշում էր. «Նորին մեծության բրիտանական կառավարությունը կարծում էր, որ Հարավային Քուրդստանի բնակչությունը հավատարիմ է լինելու նրան և այդ պատճառով էլ նա համաձայնվեց քուրդ առաջնորդների գլխավորությամբ ստեղծել քրդական ինքնավար պետությունների գոտի։ Սակայն պարզվում է, որ այս կարծիքը ճիշտ հիմնավորված չէր և բնակիչները բրիտանական ազդեցությունը ողջունելու փոխարեն այնքան դժգոհ են, որ նրանց հսկելու համար հարկավոր են ստրատեգիական երկաթուղիներ»[81]։

Քուրդստանում հնարավոր դժգոհությունները լիկվիդացնելու նպատակով անգլիական իմպերիալիստները մի շարք միջոցներ ձեռնարկեցին։ Այդ նպատակին էր ծառայելու նաև երկաթուղիներ կառուցելու պլանը։ Խոսքը վերաբերում է մասնավորապես Քիզիլ Ռաբաթ-Քիֆրի-Կիրկուկ երկաթգծին։ «Ինչպիսին էլ որ լինի այս գծի օգտակարությունը, նրա շուտափույթ կառուցումը առավելապես թելադրվում է զուտ ստրատեգիական նկատառումներով, որպես գլխավոր գործոն

---

79 «История международного рабочего и национально-освободительного движения», ч. II, М., 1962, стр. 410.

80 Ирандуст, Борьба за Мосул («Международная жизнь», № 4—5, 1924, стр. 99).

81 S. Gavan, Kurdistan..., p. 30.

Հարավային Քուրդստանի պահպանման և խաղաղեցման համար»[82],—գրում էր Վիլսոնը։

Անգլիական իմպերիալիզմի դեմ ուղղված քրդական ապստամբությունը որոշակի հետքեր թողեց Քուրդստանի ժողովրդական զանգվածների տրամադրությունների վրա։ «Նա առաջ բերեց ազգային շարժման ուժեղացում նաև Քուրդստանի մյուս հատվածներում»[83]։ Զանգվածային դժգոհության այս պայմաններում Ռուսաստանում տեղի ունեցող հեղափոխական իրադարձությունները ազդեցության պարարտ հող էին գտնում Իրաքում և Հարավային Քուրդստանում։ Մասնավորապես Հյուսիսային Իրանից և Անդրկովկասից Նաջեֆ ու Քերբելա (Հարավային Իրաք) քաղաքները եկող ուխտավորների միջոցով Իրաքի բնակչությունը տեղեկանում էր Ռուսաստանի հեղափոխական դեպքերին։ «Ուխտավորների բերած այս լուրերը, ինչպես նաև Հոկտեմբերյան հեղափոխության վերաբերյալ այլ տեղեկություններ քննարկվում էին բնակչության ամենատարբեր խավերի կողմից»[84]։ Սովետական Ռուսաստանում օտարերկրյա ինտերվենտների կրած պարտությունները ուժ ու հավատ էին ներշնչում Իրաքի արաբ ու քուրդ ժողովուրդներին իմպերիալիստների դեմ մղած պայքարում։ Ահա թե ինչու գաղութարարներին խորապես մտահոգում էր «բոլշևիզմի գաղափարների տարածումը»։ «Բոլշևիզմի սերմերը,—տագնապով գրում էր անգլիական աստիճանավորներից մեկը,—Միջագետքում և Հնդկաստանում տարածվում են... ոչ պակաս, քան թուրքերի մեջ...»[85]։ Չնայած Հարավային Քուրդստանը համեմատաբար հեռու էր Սովետական Ռուսաստանի սահմաններից, նրա բնակչության մեջ ռուսաստանյան հեղափոխական դեպքերի մասին տեղեկությունների տարածումը և ազդեցությունը ակնհայտ փաստ էր։ Այդ են վկայում Քուրդստանում բրիտանական բարձրաստիճան պաշտոն-

82 A. Wilson, Mesopotamia..., p. 142.

83 S. Ganter, Le mouvement national Kurde, p. 54.

84 Gertrude Bell, The Letters of Gertude Bell, vol. II. L. 1927, p 485.

85 Նույն տեղում։

յանների արտահայտած տագնապը և նրանց խոստովանությունները։ 1919 թ. վերջերին գերագույն կոմիսար Վիլսոնը «այդ ժամանակվա փորձառու քաղաքագետ»[86], Սուլեյմանիեի նահանգապետ Սոնից մի նամակ ստացավ, որտեղ նշվում էր. «...Նկատի առնելով բոլշևիզմի վերջին հաջողությունները... չպետք է տեսադաշտից դուրս թողնել Քուրդստանում արտակարգ վիճակի առաջացման հնարավորությունը»[87]։ Ակնարկելով Հարավային Քուրդստանում շեյխ Մահմուդի ապստամբության պարտությունից հետո նոր ելույթների հնարավորությունները և այդ իմաստով «բոլշևիզմի գաղափարներին» տարածման վտանգը, Սոնը Սուլեյմանիեից գրում էր. «Բոլշևիզմի անունը և սկզբունքները, դժբախտաբար, հայտնի են դառնում (գլխավորապես Կիրկուկի լրագրի միջոցով, որը զգալի տարածում է գտնում)»[88]։

Իրաքը հիշյալ ժամանակաշրջանում հանդիսանում էր այն հենակետերից մեկը, որոնք անգլիական իմպերիալիզմի զինված ուժերի կողմից օգտագործվում էին դեպի Անդրկովկաս և Միջին Ասիա հակասովետական ինտերվենցիա կազմակերպելու համար։ Բաղդադում էր գտնվում այդ զորքերի գերագույն հրամանատարությունը։ Ահա թե ինչու Իրաքի ժողովուրդը Սովետների երկրում ինտերվենտների կրած պարտությունը համարում էր իր ճնշողների պարտություն։ Սովետական Անդրկովկասի հաջողությունները ոգեշնչում էին Իրաքի հայրենասերներին՝ պայքարելու իրենց անկախության համար[89]։

* * *

1920 թ. ապրիլին Սան Ռեմոյում տեղի ունեցավ հաղթող տերությունների կոնֆերանս, որը նորից քննարկման առարկա դարձրեց մանդատային տիրապետության սահմանները

---

86 A. Wilson, Mesopotamia... pp. 144—145.

87 Նույն տեղում։

88 Նույն տեղում։

89 Տե՛ս «Великий Октябрь и народы Востока», М., 1957, стр. 317.

ճշգրտելու հարցը։ Իրաքի, Սիրիայի, Լիբանանի և Պաղեստինի վրա Անգլիայի ու Ֆրանսիայի մանդատային տիրապետության հաստատման մասին կոնֆերանսի ընդունած որոշումը պարզ և որոշակի ցույց տվեց, որ անգլիական իմպերիալիզմը հրաժարվում էր արաբական անկախ պետությունների ստեղծման վերաբերյալ իր խոստումներից։ Իրաքի վրա մանդատային տիրապետություն հաստատելու լուրը զայրույթի մեծ պոռթկում առաջ բերեց։ Ստեղծվեց հատուկ կոմիտե, որը բողոք ներկայացրեց անգլիական իշխանություններին[90]։ Ի պատասխան դրան, վերջիններս սահմանափակվեցին մի դեկլարացիայով, որտեղ ցույց էր տրվում, որ «մանդատի ստեղծումը նկատի ունի իրաքյան ինքնուրույն պետության ստեղծումը Անգլիայի հովանավորության ներքո, որն իր վրա է վերցնում երկրի արտաքին անվտանգությունը և ներքին անդորրության պահպանումը»[91]։ Իրաքը գաղութային կախյալ վիճակի մեջ պահելու անգլիական իմպերիալիզմի քաղաքականությունը, չնայած իր ճկուն ձևերին և նույնիսկ Վիլսոնի հատուկ հայտարարությանը 1920 թ. հունիսի 20-ին այն մասին, թե «Անգլիան օգնելու է Իրաքի անկախ պետության ստեղծման գործին»[92], «չհանգստացրեց հասարակությանը և երկրում ավելի ուժեղացավ ամենուրեք տարածում գտած դժգոհությունը արաբ և քուրդ բնակչության մեջ»[93]։ Նույն՝ հունիս ամսին Վիլսոնը «ուղևորություն կատարեց դեպի Մոսուլ, Կիրկուկ և Սուլեյմանիե և հավաստեց, որ քրդերը կարող են հանգիստ լինել իրենց պահանջների համար»։ Արաբական և քրդական տարբեր շրջաններում տեղի ունեցող անջատ-անջատ ելույթներին հաջորդեց 1920 թ. հուժկու ապստամբությունը, որն ընդունեց համազգային բնույթ։

---

90 Տե՛ս И. Белякевич, Нац.-осв. движение в Ираке и английский империализм («Революционный Восток», 1930, № 9—10, стр. 269).

91 Նույն տեղում։

92 A. Wilson, Mesopotamia..., p. 265.

93 И. Белякевич. Нац.-осв. движение в Ираке..., стр. 269.

Չնայած անգլիական իշխանությունների գործադրած շտապ միջոցառումներին, ապստամբությունը արտակարգ լայն տարածում ստացավ[94]։ Հուլիսի 2-ին Թել Աֆարում բռնկված ապստամբությունը անմիջապես արձագանքներ գտավ ոչ միայն արաբական շրջաններում, այլև Կիրկուկում, Սուլեյմանիեում, Էրբիլում և այլ քաղաքներում[95]։

Իրաքում տեղի ունեցող քաղաքական բուռն իրադարձությունների ընթացքում հանդես եկան և սկսեցին գործել «բուրժուա-կալվածատիրական կազմակերպություններ», որոնցից առավել աչքի ընկնողները երկուսն էին՝ «Ալ-Ահդ ալ Իրաքին» և «Հարաս ալ Իսթիքլյալը»։ Բուրժուական մտավորականության ներկայացուցիչներին, շիա հոգևորականության մի մասին, Միջին Եփրատի վերնախավին միավորող «Հարաս ալ Իսթիքլյալ» կազմակերպությունը, ի տարբերություն առաջինի, որն «Իրաքի անկախությունը կապում էր բրիտանական տեխնիկական և տնտեսական օգնության հետ», հանդես էր գալիս Իրաքի լրիվ և անվերապահ անկախության օգտին և պայքարում էր այդ ծրագրի իրականացման համար։ Ընդունելով այս կազմակերպությունների (հատկապես երկրորդի) որոշակի դերը 1920 թ. ապստամբության կազմակերպման գործում, միաժամանակ անհրաժեշտ է սկզբից ևեթ ընդգծել, որ քրդական ազգային շարժման նկատմամբ նրանց նեղ-ազգայնական, շովինիստական դիրքը երկրորդական դեր չխաղաց այն բանում, որ երկու ժողովուրդների՝ արաբների ու քրդերի ազատագրական պայքարի միջև սերտ կապ չստեղծվեց։ «Ալ Ահդ ալ Իրաքին» և «Հարաս ալ Իսթիքլյալը» լինելով Իրաքի տիրապետող դասակարգերի կազմակերպությունները, հանդես էին գալիս քրդական ազատագրական շարժման դեմ և գտնում էին, որ «քրդերով բնակեցված շրջանները պետք է կազմեն ապագա արաբական Իրաքի պետության մի մասը»[96]։ Այդ էր պատճառը, որ հիշյալ կազմակերպությունների ծրագրերը որևէ պաշտպանություն գտնել չէին կարող Հարավային

94 Նույն տեղում.

95 Նույն տեղում.

96 Նույն տեղում, էջ 318։

Քուրդստանում, որտեղ շարժման ղեկի մոտ գտնվող քրդական վերնախավի ներկայացուցիչները իրենց հերթին հակադիր դիրք էին գրավում Իրաքի արաբական շարժման նկատմամբ։ Այսուհանդերձ 1920 թ. Քուրդստանում անգլիական օկուպացիոն իշխանությունների դեմ տեղի ունեցան մի շարք ելույթներ, որոնք, ճիշտ է, սերտորեն կապված չէին արաբական շարժման հետ և հիմնականում կրում էին տեղական բնույթ, սակայն անգլիական իմպերիալիզմի դեմ մղվող ընդհանուր պայքարի մի մասն էին և նպաստում էին համաիրաքյան ապստամբության ծավալմանը։ Դեռևս մինչև Ռումեիսում տեղի ունեցած դեպքերը, Քուրդստանում պարտիզանական ջոկատները մարտեր էին մղում անգլիական իշխանությունների դեմ, որոնք զանգվածային պատժամիջոցներ էին գործադրում բնակչության նկատմամբ[97]։ Քրդական մի շարք շրջաններ իրենց ելույթներով բավականին դժվարացնում էին գալթիչների դրությունը։ 1920 թ. օգոստոսի կեսերին, երբ ապստամբները իրենց հսկողության տակ առան Դիյալա գետի ավազանի արաբաբնակ մասը, ապստամբությանը սկսեց մասնակցել նաև հարևան քրդական շրջանների բնակչությունը[98]։ Օգոստոսի 14-ին ապստամբություն հայտարարեցին Քիրկիլ Ռաբաթի քուրդ գյուղացիները, որոնք ազատագրեցին իրենց շրջանը։ Շուտով ապստամբությունը ընդգրկեց նաև Խանեկինը։ Օգոստոսի 24-ին քուրդ ապստամբները գրավեցին Քիֆրի քաղաքը։ Պարտիզանները մի քանի անգամ գրոհեցին Նեֆթ-Խանի շրջանի անգլո-իրանական նավթային ընկերության ձեռնարկությունների վրա։ Քրդաբնակ այդ շրջաններում ապստամբության տարածումը լուրջ վտանգ էր օկուպանտների համար ոչ միայն այն պատճառով, որ նա ուժեղացրեց ապստամբների դիրքերը։ Այդ շրջաններից անգլիացիները ստանում էին զինվորական պարենամթերքի զգալի մասը։ Դիյալա գետի ավազանի կորուստով օկուպացիոն զորքերը կանգնեցին սովի մատնվելու վտանգի առջև։ Բացի այդ, կտրվեց

97 Տե՛ս „Times", 2/II 1920.

98 Տե՛ս Л. Котлов, Нац.-осв. восстание..., стр. 137.

անգլիական այն զինված ջոկատների ճանապարհը, որոնք ժամանում էին Իրանից, ինչպես նաև Հարավային Քուրդստանի տարբեր շրջաններից[99]։ Ապստամբությունը գնալով լայն թափ ընդունեց և «եղավ մի պահ, երբ անգլիացիները փակված էին Մոսուլում, Բաղդադում և Բասրայում»[100]։ Նշելով, թե ինչպես է ապստամբական շարժումը տարածվում նաև Հարավային Քուրդստանում, անգլիական «Թայմս» թերթը գրում էր. «Պատերազմի բոցը արաբական շրջաններից փոխադրվել է Հարավային Քուրդստան, Քիֆրիի երկաթուղագրծերը գտնվում են ապստամբների ձեռքում։ Քիֆրիում, Կիրկուկում և Սուլեյմանիեում զինվորական հենակետերը կախված են օդում...»[101]։ «Մոսուլի շրջակայքում դժգոհությունը հասել է իր գագաթնակետին»,—գրում էր ֆրանսիական «Տեմպ» թերթը[102]։ Քրդական պարտիզանական ջոկատները զգալի հարվածներ էին հասցնում օկուպանտներին Քուրդստանի գրեթե բոլոր շրջաններում Զախոյից մինչև Սուլեյմանիե[103]։ Սուլեյմանիեի և Հալաբջայի շրջաններում ապստամբեցին օրամար և դիլո ցեղերը։ Անգլիական կայազորը ի վիճակի եղավ ճնշելու այդ ապստամբությունը միայն այն ժամանակ, երբ «Սոնը փիշդար ցեղի առաջնորդ Բեբեքը աղայից ստացավ զինված ուժեր, որոնք կառավարական ուժերի հետ միասին կարողացան պահպանել կարգը»[104]։ Նշանակալից էր քրդական սուրչի ցեղի ապստամբությունը նրա առաջնորդ շեյխ Օբեյդուլլայի ղեկավարությամբ[105]։ Բավականաչափ մարտունակ և ուժեղ սուրչիների ապստամբությունը զգալի կերպով դժվարացրեց անգլիական օկուպացիոն իշխանությունների վիճակը։ Անգլիացիները որոշեցին ապստամբների դեմ հանել Բաթասի շրջանում հավաքված, այսպես կոչված, «աշխարհա-

99 Տե՛ս նույն տեղում։

100 И. Белякевич, Нац.-осв. движение в Ираке, стр. 270.

101 «Бюллетень Народного комиссариата иностр. дел», 1920, № 34, стр. 29.

102 „Temps", 22/VIII 1920.

103 Տե՛ս „Times", 6/X 1920.

104 Նույն տեղում։

105 W. Hay, Two years in Kurdistan..., p. 300.

զորայիններին», որոնք այնտեղ էին բերվել պրոանգլիական դիրք գրաված քուրդ ֆեոդալների կողմից։ Սակայն անգլիական իմպերիալիստների տիրապետության դեմ գոյություն ունեցող ուժեղ դժգոհության պայմաններում կաշառված շեյխերն ու ֆեոդալները անկարող գտնվեցին զսպել ապստամբության տրամադրված քրդական ժողովրդական զանգվածների տարերային ելույթները[106]։ Բնորոշ է այս տեսակետից հետևյալ փաստը. աշխարհազորայինները սուրչիների ապըստամբության դեմ արշավելու վճռական պահին հրաժարվեցին կատարելու իրենց ցեղապետերի և անգլիական սպաների հրամանը։ 1920 թ. օգոստոսի 25-ին այստեղ ևս սկսվեց ապստամբություն։ Ապստամբները գրավեցին Էրբիլի և Ռևանդուզի միջև ընկած մի շարք բնակավայրեր[107]։ Շուտով անգլիական զինվորական իշխանությունները հարկադրված եղան հեռանալ Ռևանդուզից և Քոյից[108]։ Օգտագործելով քրդական ցեղապետերի ու ֆեոդալների միջև գոյություն ունեցող թշնամանքը, անգլիական գործակալները կարողացան մի շարք դեպքերում միմյանց դեմ հանել նրանց և կոտրել ապստամբների դիմադրությունը։ Անգլիական կապիտան Հեյը խոստովանում է, որ այդ ժամանակ նրա իշխանությունը Էրբիլում պահպանվեց քրդական դավաճան ֆեոդալների վարձկան ջոկատների օգնության շնորհիվ. «Իմ իշխանությունը որպես քաղաքական սպայի,—գրում է նա,—ըստ էության ի չիք էր եղել և միայն Խուրշուդ աղայի ու Ահմեդ էֆենդիի բարի ծառայությունների շնորհիվ ես կարողանում էի ինչ-որ ազդեցություն պահպանել»[109]։ Սակայն դիզայի ցեղի առաջնորդ Խուրշուդ աղայի վերոհիշյալ ջոկատների մեջ ևս հուզումներ բռնկվեցին, որից հետո դրությունը Էրբիլի շրջանում այն աստիճան բարդացավ, որ Բաղդադի անգլիական իշխանությունները արդեն հրամայել էին թողնել քաղաքը։ Սակայն Կիր-

106 Տե՛ս Курд Оглы, Курды и империализм..., стр. 114.
107 Տե՛ս W. Hay, Two years in Kurdistan..., p. 312.
108 Տե՛ս նույն տեղում։
109 Նույն տեղում, էջ 325—326։

կուկից օգնության եկած զինվորական համալրումների շանքերով հնարավոր եղավ մնալ քաղաքում[110]։

1920 թ. օգոստոսի վերջերին և սեպտեմբերի սկզբներին ապստամբությունը Իրաքում հասավ իր գագաթնակետին։ «Իշխանությունները միայն ռադիոյի և ինքնաթիռների միջոցով էին կարողանում կապ պահպանել Բաղդադի և Քուրդստանի միջև»[111]։ Պատահական չէր, որ նույնիսկ անգլիական մամուլի մի շարք օրգաններ այս պահին մեկ անգամ չէ, որ հանդես էին գալիս Իրաքում տարվող քաղաքականության քննադատմամբ։ «Եթե կառավարությունը երբևէ մեղավոր է եղել այնպիսի իրավիճակի ստեղծման համար, որից ինքը դուրս գալ չի կարող, ապա դա հենց ինքը՝ Միջագետքի ավանտյուրան է»[112]։ «Իրադրության ողբերգական վիճակը,— գրում էր անգլիական մեկ այլ թերթ,—ինչ-որ չափով կոմիկական բնույթ է ընդունում, երբ արյան ծովը և էքսպեդիցիայի համար ծախսվող հսկայական գումարները համեմատում ենք այդ անապատային ու ճահճային տեսարանի հետ, որը մենք ուզում ենք «խաղաղեցնել», մեր գլխավոր նպատակը համարելով մեր օրենքներին ենթարկել մի ժողովուրդ, որը միանգամայն պարզ և որոշակի ցույց տվեց, որ ինքը դրա կարիքը չունի»[113]։

Անգլիական գաղութատերերը, օգտագործելով իրաքյան ապստամբության ղեկավարների մի ղգալի մասի համաձայնության գալու տրամադրությունները, կապի թուլությունը կամ բացակայությունը տարբեր շրջանների միջև և ավելացնելով իրենց զինված ուժերի թիվը ևս 30 հազարով, ի վերջո կարողացան աստիճանաբար պարտության մատնել ապըստամբներին։

1920 թ. հոկտեմբերին գաղութարարները ընկճեցին ապստամբության հիմնական օջախների դիմադրությունը։ Թեև 1920 թ. Իրաքում սկսված հուժկու ապստամբությունը

110 Տե՛ս „Times", 25/X 1920.
111 Л. Котлов, Нац.-осв. восстание..., стр. 140.
112 The Morning Post, 21/VIII. 1920.
113 Observer, 24/VIII 1920.

ի վիճակի չեղավ իրագործել Իրաքը անգլիական իմպերիալիզմի լծից ազատագրելու խնդիրը, բայց մեծ նշանակություն ունեցավ այն իմաստով, որ հարկադրեց օկուպանտներին հրաժարվել երկիրը կատարյալ գաղութի վերածելու մտադրությունից։ Հարավային Քուրդստանի մի շարք շրջանների մասնակցությունը հիշյալ ապստամբությանը իր դրական նշանակությունն ունեցավ ժողովրդական զանգվածների ազգային, ինչպես նաև դասակարգային ինքնագիտակցության զարգացման գործում։ Սուլեյմանիեի, Էրբիլի, Ռևանդուզի և մի շարք այլ շրջաններում տեղի ունեցող ելույթները Քուրդստանի ժողովրդական զանգվածների դժգոհության արտահայտությունն էին։ Սակայն այդ պայքարը կազմակերպված բնույթ չուներ, և դեկի մոտ գտնվող ֆեոդալներն ու ցեղապետերը իրենց անհետևողականությամբ ու օկուպանտների հետ համաձայնության գալու տրամադրություններով մեծապես նպաստեցին նրա պարտությանը։ Ապստամբության պարտությունից հետո «գյուղացիական զանգվածների պայքարը շարունակվում էր և վեր էր ածվում մի շարք ապստամբությունների՝ ինչպես Իրաքի հարավում, այնպես էլ իրաքյան Քուրդստանում»[114]։

1920 թ. իրադարձություններից հետո Հարավային Քուրդստանում տեղի ունեցող իրադարձությունները մի փոքր այլ բնույթ կրեցին։ Միաժամանակ անգլիական իմպերիալիզմի դեմ մղվող արաբների ու քրդերի պայքարի միջև կապի թուլությունը կարծես ավելի ակնառու դարձավ։ Դա ուներ իր որոշակի պատճառները։ Անգլիացիների կողմից Իրաքի ազգային ուժերի այդ ժամանակվա ղեկավարների հետ Իրաքի պետության ստեղծման ու նրա ձևի հարցի շուրջը համաձայնության գալը զգալի կերպով հանդարտեցրեց կրքերը արաբական շրջաններում այն դեպքում, երբ դրա հետևանքները միանգամայն հակառակ ռեակցիա առաջ բերեցին Քուրդստանում։ Հարավային Քուրդստանում 1920 թ. հետո տեղի

---

114 «Аграрный вопрос и крестьянское движение». т. IV, М., 1937, стр. 243.

ունեցող դեպքերի ուրույն բնույթը մյուս կողմից պայմանավորված էր պատերազմում հաղթանակած իմպերիալիստական տերությունների, քեմալական Թուրքիայի և նորաստեղծ իրաքյան միապետական ռեժիմի քաղաքականությամբ, որոնք անտեսում էին քրդերի ազգային իրավունքները, բայց միաժամանակ տարբեր խոստումներով աշխատում էին ստեղծել քրդերի ինքնավարական պահանջների բավարարման տպավորություն։

* * *

Օգտագործելով «հաղթողի իրավունքները», արևմտյան իմպերիալիստական տերությունները, առաջին հերթին Անգլիան, ցանկանում էին իրականացնել պարտված Թուրքիայի նկատմամբ ունեցած իրենց պլանները։ Այս գործում անգլիական իմպերիալիզմը օգտագործում էր ոչ միայն իր ռազմական հաղթանակը։ Նա աշխատում էր օգտագործել Թուրքական ճնշման դեմ ազգային փոքրամասնությունների դժգոհությունը։ Դա վերաբերում էր նաև քրդերին։ Ահա թե ինչու իրենց հերթին քեմալականները նախնական շրջանում ամեն կերպ աշխատում էին սիրաշահել քրդական ազգային ուժերին, նրանց իրենց կողմը գրավելու համար[115]։

Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կողմից 1920 թ. հրռչակվեցին կառավարության արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքները, որոնք ճանաչում էին նաև Քուրդիստանի իրավունքը ազգային ինքնորոշման հարցում։ Սովետական կառավարությունը ողջունեց ազգային փոքրամասնություններին ինքնուրույնություն շնորհելու Ազգային Մեծ ժողովի որոշումը[116]։

Քրդերին խոստումներ տալով քեմալականները նպատակ ունեին, նախ, իրենց կողմում պահել Թուրքական Քուրդստա-

---

115 Տե՛ս A. Safrastian, Kurds and Kurdistan, p. 81, Ж. Кайзер, Европа и новая Турция (перевод с французского), М., 1925, стр. 23.

116 Տե՛ս «Документы внешней политики СССР», т. III, М., 1958, стр. 555.

նի աղգայնական ուժերին և, երկրորդ, նախապայմաններ ստեղծել Հարավային Քուրդստանի կամ Մոսուլի շուրջը գոյություն ունեցող կոնֆլիկտը իրենց օգտին լուծելու համար։ Մոսուլի վիլայեթին տիրանալու համար պայքարը սկսեց սուրբնույթ կրել այն պահից, երբ թուրքական բանակը պարտության մատնեց հույներին[117], իսկ Իրաքում անգլիացիները դահին նստեցրին հաշիմյան դինաստիայի ներկայացուցչին։ 1921 թ. մարտի 15-ին Կահիրեում Անգլիայի գաղութների մինիստր Ուինստոն Չերչիլի նախաձեռնությամբ կայացավ մի կոնֆերանս, որը վճռելու էր մերձավոր արևելյան մի շարք կարևորագույն հարցեր[118]։ Կոնֆերանսը քննարկեց Իրաքին վերաբերող հետևյալ խնդիրները. 1. Իրաքի կառավարողի ընտրությունը, 2. վերաբերմունքը Իրաքի քրդերի նկատմամբ, 3. բրիտանական ծախսերի կրճատման հարցը, 4. բրիտանական զորքերի հեռացումից հետո Իրաքի պաշտպանության համար զինված ուժերի կազմակերպման հարցը[119]։ Կոնֆերանսը որոշեց Իրաքը հռչակել մանդատային թագավորություն պրոանգլիական օրիենտացիա ունեցող էմիր Ֆեյսալ ալ Հաշիմիի գլխավորությամբ։ Բնորոշ է այն փաստը, որ Կոնֆերանսը միայն Հարավային Քուրդստանի վերաբերյալ որևէ կոնկրետ որոշման չհանգեց։ Միակ որոշումը այս հարցում այն էր, որ քրդերին Անգլիայի և Իրաքի նոր կառավարության դեմ չդրգռելու համար նախատեսվում էր, որ «քրդական գործերով» զբաղվելու է ինքը՝ գերագույն կոմիսարը»[120]։ 1921 թ. հունիսի 23-ին Ֆեյսալը ժամանեց Իրաք։ Նույն թվականի հուլիսի 21-ին Իրաքի վարչական խորհրդի նիստում նա հրա-

117 H. Arfa, Kurds..., p. 114.

118 Կոնֆերանսի աշխատանքի բնույթը հասկանալու համար ավելորդ չէ հիշատակել նրա մասնակիցների կազմը. Չերչիլ՝ Անգլիայի գաղութների մինիստր. Լոուրենս՝ անգլիական հայտնի լրտես-գործակալ, արաբական երկրների այսպես կոչված «չթագադրված թագավոր», Պերսի Կոքս՝ Իրաքում անգլիական գերագույն կոմիսար, գեներալ Հալդեն՝ Իրաքում անգլիական զորքերի հրամանատար, Գերտրուդ Բելլ՝ անգլիական հայտնի կին լրտես և այլոք։

119 Տե՛ս St. Longrigg. Iraq..., p. 130.

120 Նույն տեղում։

չակվեց Իրաքի թագավոր[121]։ Հետաքրքիրն այն է, որ վարչական խորհրդի որոշումից հետո միայն հիշյալ որոշումը դրվեց, այսպես կոչված, «ժողովրդի քննարկման»։ Ֆեյսալին թագավոր ընտրելու որոշմանը հավանություն տալու համար տեղի ունեցող ժողովներին մասնակցում էին բացառապես վերնախավի ներկայացուցիչները՝ ֆեոդալները և շեյխերը։ Չնայած դրան, այդ որոշումը որոշ լիվաններում փոփոխության էր ենթարկվում, կամ լրացվում էր։ Արաբական շրջաններում հատկապես շեշտը դրվում էր օտարերկրյա (այսինքն՝ անգլիական—Շ. Մ.) վերահսկողության վերացման վրա։ Մի քանի շրջաններում քննարկման ժամանակ պահանջում էին երեք ամսվա ընթացքում հրավիրել սահմանադիր ժողով[122]։

Հարավային Քուրդստանի ժողովրդական լայն զանգվածները բացահայտ թշնամանքով ընդունեցին հաշիմյան միապետական ռեժիմի հաստատումը։ Ֆեյսալին թագավոր ընտրելը և պրոանգլիական օրիենտացիա ունեցող «Ալ ահդ ալ Իրաքի» կազմակերպության կողմնակիցների իշխանության գլուխ անցնելը (վերջիններս հանդես էին գալիս քրդերին ինքնավարություն տալու դեմ) իրավացի կերպով Հարավային Քուրդստանում դիտվում էին որպես քրդերի ազգային իրավունքների անտեսում։ Ահա թե ինչու քրդական շրջանները առավել մեծ վճռականությամբ հանդես եկան Ֆեյսալին թագավոր ընտրելու դեմ[123]։ Սակայն այդ դժգոհությունները քրդական տարբեր շրջաններում զանազան ձևով դրսևորվեցին։ Մոսուլում, որտեղ քրդերը թեև մեծամասնություն էին կազմում, բայց կային նաև շատ այլազգիներ, ընդհանուր առմամբ որոշմանը հավանություն տվեցին, սակայն պայմանով, որ «հարգեն քրդերի և ազգային այլ փոքրամասնությունների իրավունքները»[124]։ Կիրկուկում բնակչությունը քվեարկեց Ֆեյսալի թեկնածության դեմ։ Ինչ վերաբերում է Սուլեյմանիեին,

---

121 Տե՛ս Erskine Beatrice, King Faisal of Iraq... An Authorised and Authentic Staty, London, 1933, p. 178.

122 Տե՛ս St. Longrigg, Iraq..., p. p. 130—131.

123 Տե՛ս E. Beatrice, King Faisal of Iraq..., pp. 178—179.

124 St. Longrigg, Iraq..., p. 133.

ապա այստեղ քվեարկությանը բոյկոտ հայտարարվեց և բնակչությունը բացարձակապես հրաժարվեց մասնակցել քվեարկությանը[125]։ Ավելին, Մահմուդ Բարզինջանի եղբայր շեյխ Կադերը, իր շուրջը համախմբելով հաշիմյան ռեժիմի և անգլիացիների դեմ թշնամաբար տրամադրված քրդական ուժերին, բացահայտ կերպով բնակչությանը կոչ արեց հրաժարվել հանրաքվեին մասնակցելուց և «պահանջեց ստեղծել քրդական ինքնավար մի շրջան շեյխ Մահմուդի ղեկավարությամբ»[126]։ Շեյխ Կադերի և անգլիական ջոկատների միջև տեղի ունեցավ ընդհարում, որը վերջացավ առաջինի պարտությամբ[127]։ Հանրաքվեից հետո, անգլիական իշխանությունները բացահայտ կերպով կեղծելով ստացված տվյալները, հայտարարեցին, թե «էմիր Ֆեյսալին թագավոր ընտրելու օգտին տրված է ընդհանուր ձայների 96%-ը»[128]։ Նշված տվյալները կասկածանքով են ընդունվում նույնիսկ Իրաքում անգլիական նախկին աստիճանավոր Լոնգրիգի կողմից, որն ուղղակի գրում էր. «Հազիվ թե դա համապատասխաներ իրականությանը»[129]։

Իրաքում, մասնավորապես քրդական շրջաններում գոյություն ունեցող խորը դժգոհության պայմաններում կատարվեց Ֆեյսալ 1-ի թագադրությունը։ Բնորոշ է, որ Հարավային Քուրդստանի «ոչ մի ներկայացուցիչ ներկա չէր թագադրությանը»[130]։ «Նա թագադրվեց թաքուն, բարակների միջև գտնվող հրապարակում,—գրում էր անգլիական «Դեյլի հերալդ» թերթը։ Ներկա էր բրիտանական ղեկավարների և նրա կողմնակիցների մի խումբ։ Նրա հետևում կանգնած էր բրիտանական հետևակայինների մի գումարտակ՝ սվինները գլխավերևում պահած։ Դա սիմվոլիկ է։ Ֆեյսալի գահը չի հիմնված

---

125 D. Kinnane, The Kurds..., p. 36; B. Vernier, L'Irak..., p. 181.

126 محمد الدرة ، القضية الكردية ..... ، ص ٧٣

127 Նույն տեղում, էջ 73—74։

128 E. Beatrice, King Faisal of Iraq..., p. 129.

129 St. Longrigg, Iraq..., p. 135.

130 B. Vernier, L'Irak..., p. 120.

Իրաքի ժողովրդի ազատ ընտրության վրա, այլ ստեղծված է բացառապես բրիտանական կայազորի սվինների շնորհիվ։ Ֆեյսալը թագավոր տիկնիկ է, սիրալիր, թույլ մարդ և հարմար է Չերչիլի ու նրա կողմնակիցների կամակատարը դառնալու»[131]։ Անգլիական մի ուրիշ թերթ հեգնանքով գրում էր. «Ֆեյսալը կարգվել է Միջագետքի թագավոր, բայց ցավալի է կարդալ նրա գահին նստելու նկարագիրը»[132]։ Ձևականորեն Իրաքում ռազմական օկուպացիայի ռեժիմին վերջ տալը քաղաքական մի մտածված ու անհրաժեշտ քայլ էր անգլիական իմպերիալիզմի կողմից։ Պետական ապարատը կազմվեց այն խոշոր ֆեոդալներից, շեյխերից ու առևտրականներից, որոնք դրսևորել էին իրենց «հավատարմությունը բրիտանական խնամակալությանը»։ Նախկին վիլայեթների փոխարեն երկիրը բաժանվեց լիվաների, որոնց գլուխ կանգնած էին մութասարիֆները։ Անգլիական նախկին քաղաքական սպաները դարձան «խորհրդականներ», որոնք և վճռում էին բոլոր քաղաքական հարցերը։

Ֆեյսալին թագավոր կարգելով և գահի նախկին հավակնորդ Աբդ ար-Ռահման ալ Գայլանիի գլխավորությամբ Իրաքի նոր կառավարություն կազմելով, Անգլիան մի կողմից հեշտացրեց երկիրը իր տիրապետության տակ պահելու խնդիրը, մյուս կողմից բարդացրեց իրադրությունը Քուրդստանում։ Իրաքի ժողովրդական զանգվածների մեջ, ճիշտ է, դժգոհություն կար միապետական ռեժիմ հաստատելու անգլիական իմպերիալիզմի պլանի դեմ, սակայն Ֆեյսալի գահակալությունը և կառավարության կազմակերպումը զգալի չափով հանդարտեցրեց կրքերը հատկապես արաբական վերնախավի շրջանում։ Անգլիական կառավարությունը այս իմաստով կարող էր Իրաքն իր տիրապետության տակ պահել՝ հենվելով իշխանություն ստացած իրեն հավատարիմ ֆեոդալների ու շեյխերի օգնության վրա, որոնք, բնականաբար, ավելի շատ հնարավորություն ունեին արաբ աշխատավորական զանգ-

131 „Daily Herald", 3. I 1922.
132 „Times", 30/XII 1921.

վածներին ներշնչելու «Իրաքի անկախության գաղափարը»։ Իրաքի անկախությունը, ճիշտ է, ձևական էր, բայց արաբներից կազմված կառավարության և պետական ապարատի գոյությունը փաստ էր։ Բոլորովին այլ էր իրադրությունը Քուրդստանում։ Հաշիմյան միապետական ռեժիմի հաստատումը և քրդական շրջանների անորոշ վիճակը տվյալ պետության կազմում, քրդական հասարակայնության գրեթե բոլոր խավերին հիմք էին տալիս երկյուղ կրելու, որ իրենք կարող են Իրաքում ևս մնալ ճնշվող ազգային փոքրամասնությունների վիճակում։ «Հաշիմյան տիրակալի պանարաբիստական պլանները,—գրում է ֆրանսիացի պատմաբան Բ. Վերնիեն,—խորապես անհանգստացնում էին քրդական փոքրամասնությանը»[133]։ Ահա թե՛ ինչու Քուրդստանում դրությունը շարունակում էր մնալ լարված։ Իրաքի և Իրանի սահմանագլխի շրջանում անգլիական իշխանությունների հետ դինված կոնֆլիկտի մեջ էին քրդական հեվրոման ցեղի պարտիզանական ջոկատները Մահմուդ խանի ղեկավարությամբ։ Շահրիզուրի շրջանում «տեղի բնակիչները վռնդեցին բոլոր անգլիական պաշտոնյաներին, որոնք փորձում էին հավաքել կամ սահմանել հարկերը»[134]։ 1921 թ. սկզբին անգլիական մամուլը հրապարակեց բրիտանական ռազմական մինիստրության պաշտոնական հաղորդագրությունը «Քուրդստանում նոր ըմբոստությունների սկսվելու մասին»[135]։ Ապստամբների մի ջոկատ «Միջագետքի հյուսիս-արևելյան լեռնային շրջաններում հարձակվեց բրիտանական սպաների կողմից ղեկավարվող հեծելազորայինների վրա և լուրջ վնասներ պատճառեց»։ Այդ նույն ժամանակ Մոսուլի մոտակայքում գտնվող Ռանիայի շրջանի շատ գյուղեր հրաժարվեցին հարկեր վճարել և պատրաստվում էին զենքով դիմադրել։ Բրիտանական 1000 հոգուց բաղկացած մի ջոկատ ուղարկվեց տեղի բրիտանական կայազորին օգնելու համար[136]։ Հուզումները ընդգրկել

133 B. Vernier, L'Iraq..., p. 181.
134 J. Edmonds, Kurds..., p. 122.
135 „Observer", 1/I 1921.
136 Տե՛ս նույն տեղում։

Լին նաև Ռևանդուզի շրջանը։ Այստեղ քուրդ ապստամբ գյուղացիները քշեցին անգլիական և իրաքյան զորքերին ու ոստիկանական ուժերին։ Թուրքական սահմանագլխին տեղի ունեցող այս դեպքերը «տագնապ առաջացրին» անգլիացիների մեջ և սրանք առանց հապաղելու ավելի քան հազար հոգուց բաղկացած մի զորամաս ուղարկեցին կարգը պահպանելու համար»[137]։ Դրությունը ավելի լուրջ էր Ռանիայում։ 1921 թ. օգոստոսից սկսած անգլիական քաղաքական սպաները ղեկավարում էին «սանրման» գործողությունները փիշդար, բիլբաս և ակո ցեղերով բնակեցված շրջաններում։ «Եթե մենք կատարեցինք մեր խոստումը և Միջագետքին տվեցինք ինքնավարություն,—Իրաքի այդ ժամանակվա ներքաղաքական վիճակին անդրադառնալով գրում էր անգլիական «Դեյլի Հերալդ» թերթը,—ապա պետք է վաղուց դուրս հանեինք մեր զորքերը, մեզանից հետո թողնելով բարեկամությամբ և ընդհանուր շահերով մեզ հետ կապված արաբական ազատ պետություն։ Մինչդեռ հիմա մենք պետք է այնտեղ թողնենք մեր զորքերը, նրա համար, որպեսզի գահի վրա պահենք տիկնիկ թագավորին... Եվ մեզ անընդհատ ուղեկցում են անկարգությունները, արյունահեղությունը և խոշոր ծախսերը...»[138]։

Անգլիական իմպերիալիզմի համար Հարավային Քուրդիստանում ստեղծված իրավիճակը դժվարին պրոբլեմ էր դարձել ոչ միայն քրդերի զինված պայքարի պատճառով։ Ինչպես նշեցինք, քեմալական Թուրքիան, 1921 թ. սեպտեմբերի 3-ին Սակարյա գետի մոտ հույների դեմ տարած լուրջ հաղթանակից հետո[139], «ոգևորված հաղթանակից պատրաստվեց գործողություններ ծավալել Մոսուլի ճակատում»[140]։ Պայքարելով Անտանտայի երկրների պլանների և առաջին հերթին Սևրի պայմանագրի իրագործման դեմ և հասնելով հաղթանակի հույների դեմ մղած պատերազմում, քեմալականները

137 Бюллетень НКИД, 30/I 1922, стр. 41.
138 „Daily Herald" 3/I 1922.
139 Տե՛ս H. Arfa, Kurds..., p. 114.
140 Նույն տեղում։

ուժեղացրին իրենց «հետաքրքրությունը» Հարավային Քուրդիստանում տեղի ունեցող դեպքերի նկատմամբ։ Թուրքական նացիոնալիստները պարզորոշ կերպով ձգտում էին ըստ հնարավորին վերադարձնել օսմանյան կայսրության նախկին տիրապետությունները[141]։ Արաբական երկրների նկատմամբ Թուրքերի հավակնությունները անհուսալի էին թվում։ Հիմնական պայքարը մղվում էր քրդական այն շրջանները Թուրքիային միացնելու համար, որոնք մտել էին իրաքյան նոր պետության կազմի մեջ։ Հարավային Քուրդստանում անգլիական իմպերիալիզմի ու իրաքյան միապետական ռեժիմի դեմ գոյություն ունեցող դժգոհությունը և քրդական մի շարք շրջանների զինված ելույթները նպաստավոր էին թվում Թուրքերին ակտիվ քաղաքականության անցնելու, «ազգային ուխտին համապատասխան Մոսուլի վիլայեթը որպես նոր Թուրքիայի մի մասը վերստին իրենց միացնելու համար»[142]։ 1921 թ. ընթացքում Թուրքերը անընդհատ ներխուժում էին Մոսուլի վիլայեթի սահմանները[143]։ Շուտով նրանք գրավեցին Քոյ Սանջակը, սկսեցին սպառնալ Աքրային և ուղղվեցին դեպի Ամադիա[144]։ Թուրքական զորքերը կենտրոնացվում էին Մոսուլի վիլայեթի սահմանի վրա։ Նրանց գործակալները ամենուրեք լուրեր էին տարածում «Թուրքական զորքերի մոտալուտ գալստյան մասին» և ժողովրդին տրամադրում «միանալու նոր Թուրքիային»[145]։ Տեղի ունեցող քրդական հուզումների կապակցությամբ Թուրքական կառավարությունը Դիարբեքիր ուղարկեց Ջևադ փաշային, որն «օժտված էր զինվորական արտակարգ կոմիսարի իրավունքներով»։ Հարավային Քուրդստանի նկատմամբ այս գործողությունները Թուրքական կառավարության հանձնարարությամբ ղեկավարում էր գնդապետ Ալի Շաֆիգը, որը հայտնի էր Ցոզ Դեմիր անու-

---

141 էջ 73,۷۳ ص ، ..... القضية الكردية ، محمد الدرة

142 H. Arfa, Kurds..., p. 114—115.

143 Տե՛ս Курд Оглы, Курды и империализм, стр. 115.

144 էջ 74, ۷۴ ص ، ... القضية الكردية ، محمد الدرة

145 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 4, ед. хр. 2, л. 18.

նով[146]։ 1922 թ. գարնանը տեղի ունեցավ թուրքական այսպես կոչված «ոչ կանոնավոր» զինված ուժերի ներխուժումը Հարավային Քուրդստան, «որոնք կազմված էին որոշ զինվորական ստորաբաժանումներից և թուրքական բանակի մեջ մնցնող աշխարհազորայիններից»[147]։ Մայիսի վերջերին ապըստամբեցին Ջեմշեմալի շրջանի գյուղացիները, որոնց շուտով արձագանքեցին մի շարք այլ շրջաններում։ Ջաբարի և Համավենդ ցեղերը համատեղ գործողություններ ծավալեցին անգլիական իշխանությունների դեմ։ 1922 թ. գարնանից Սուլեյմանիեում մի քանի անգամ տեղի ունեցան հուզումներ, որոնց մասնակիցները պահանջում էին Մահմուդ Բարզիջանի ազատումը աքսորից և նրա վերադարձը[148]։ Ուշագրավ է, որ անգլիացիների հետ սերտ հարաբերությունների մեջ գտնվող փիշդար ցեղի առաջնորդ Բաբաքր աղայի ցեղի անդամները չենթարկվելով իրենց «առաջնորդի» կամքին, պայքար սկսեցին անգլիական զորքերի դեմ։ Անգլիական զորքերը նահանջելով հասան Սուլեյմանիե։ Փիշդարները կարողացան հաղթահարել Հնդկաստանից ժամանած անգլիական զորախմբի դիմադրությունը և մտնել Ռանիայի խորքերը։ Սեպտեմբերի 1-ին անգլիական զորքերը թողեցին Ռանիան։ Իրադարձությունների այս եռուն պահին ապստամբած քրդերի ներկայացուցիչ Ահմադ Թաքին օգնություն ստանալու նպատակով մեկնեց իրանական Քուրդստան։ Էդմոնդսը անգլիական գեներալ Գոլդսմիտին այդ առթիվ գրած զեկուցագրում նշում էր, որ «դա ազդանշան կլինի, որպեսզի գործի անցնեն մյուս ղժգոհները, որոնք մինչ այժմ հանգիստ են մնում»[149]։ Օգտըվելով անգլիացիների դեմ սկսված զանգվածային բնույթի զինված ելույթներից, թուրքական զինված ուժերը շարունակում էին խորանալ Հարավային Քուրդստանի տարբեր շրջանները։ Շուտով նրանք «գրավեցին Ռևանդուզը և այնտեղ

146 Տե՛ս St. Longrigg, Iraq..., p. 144.
147 H. Arfa, Kurds..., pp. 113—114.
148 Տե՛ս St. Longrigg, Iraq..., p. 144.
149 J. Edmonds, Kurds..., pp. 123—125, 248.

կազմեցին տեղի կառավարչություն»[150]։ Թուրքերը մեծ ավերածություններ գործեցին գրաված շրջաններում[151]։ Դրությունը ծանր էր նաև Նավդաշտի, Փիշդարի և Շվարթի շրջաններում։ Այստեղի անգլիական հրամանատարությունը Բաղդադից պահանջում էր շտապ օժանդակ զորքեր ուղարկել։

Ապստամբություն բարձրացրած քրդական շրջանների դեմ անգլիական իշխանությունները սկսեցին լայնորեն գործադրել ավիացիան (այդ մասին որոշում կայացրեց 1921 թ. մարտին Կահիրեում տեղի ունեցած կոնֆերանսը—Շ. Մ.)։ Նրանք ստեղծեցին հատուկ ուժեր՝ ինքնաթիռներից կազմված էսկադրիլներ, որոնք ի վիճակի էին ոչ միայն վերևից գընդակոծել ապստամբներին, այլև փոխադրել զինվորական ոչ մեծ խմբեր, որոնց խնդիրն էր լինելու «պահպանել կարգը այնտեղ, որտեղ ապստամբությունը կճնշվեր ինքնաթիռների օգնությամբ»[152]։ Այսպիսով, «Միջագետքի պաշտպանության պարտականությունները Անգլիայի ռազմական մինիստրությունից անցնում էին օդագնացության մինիստրությանը՝ վիցե-մարշալ Ջոն Սալմոնդի անմիջական հրամանատարության տակ»[153]։ Անգլիական ռազմական ինքնաթիռների երկու էսկադրիլա մեկնեց Ռևանդուզի շրջանը փիշդարների բնակեցրած ճամբարները ռմբակոծելու։ Օդային այդ բարբարոսական ռմբակոծումներից խուսափելու համար քուրդ ապստամբները քաշվեցին լեռնային անառիկ վայրերը և շարունակեցին պարտիզանական կռիվները։ Հուլիսի 10-ին և 11-ին տեղի ունեցած ռմբակոծումները, անգլիական հրամանատարության խոստովանությամբ, «ցանկալի արդյունքը չտվեցին»։ «Ես չգիտեի,—գրում է ռազմական այդ գործողությունների ղեկավարներից մեկը՝ Էդմոնդսը,—որ օդային հարձակումը լեռներում քիչ արդյունք է ունենում, և մեծ հույսեր էի կապում Ռևանդուզի ռմբակոծման հետ։ Սակայն շատ հիասթափվեցի,

150 „Times", 20/VIII 1921.
151 Տե՛ս H. Arfa, Kurds..., p. 115.
152 „Daily News", 3/I 1922; „Westminster Gazette". 3/I 1922.
153 Նույն տեղում։

նրբ տեղեկություններ ստացա արդյունքների մասին։ Ռումբերի մեծ մասը նպատակին չէր հասել»[154]։

«Անգլիացիները,—գրում է «Թայմսը»,—ռազմական գործողություններ սկսեցին ինքնաթիռների հարձակման հետ միասին։ Սակայն արդյունքը ոչինչ էր»[155]։ *Հարավային Քուրդիստանի օդային ռմբակոծման լուրը դժգոհությամբ ընդունվեց անգլիական հասարակայնության կողմից։ «Վերջերս մեր ինքնաթիռները երեք օրվա ընթացքում դաժան ռմբակոծման ենթարկեցին քրդական գյուղերը։ Մի՞թե սա կոչվում է քրդերին կառավարել։ Մի՞թե այս խելացնոր քաղաքականությունը այսուհետև նույնպես պետք է շարունակվի»*[156],—*մեկ այլ համարում գրում էր անգլիական նույն թերթը։*

Իրադարձությունների այս եռուն պահին թուրքական զորահրամանատար Ցոզ Դեմիրը իր գործակալների միջոցով մեծ ջանքեր էր գործադրում քուրդ ֆեոդալների և ցեղապետերի հետ կապ հաստատելու և քրդերի հակաանգլիական շարժումից օգուտ քաղելու համար։ Նա մի քանի անգամ դիմեց քուրդ ազգաբնակչությանը՝ կոչ անելով «համագործակցել բարեկամ Թուրքիայի հետ և պայքարել ընդհանուր նպատակների համար»[157]։ *Հուլիսի վերջերին մի բնակավայրում, որը գտնվում էր իրանական Քուրդստանի տերիտորիայում, տեղի ունեցավ «քուրդ առաջնորդների խորհրդակցություն, որի մասնակիցները վճռեցին շարունակել պայքարը իրենց իրավունքների ճանաչման համար»*[158]։ *Էդմոնդսը հետագայում նշում էր, որ իրեն «դժբախտաբար չհաջողվեց համոզել գլխավոր շտաբին ռմբակոծելու այդ բնակավայրը», որտեղ, նրա ասելով, «ներկա էր նաև թուրքական միսիան»։ Ռևանդուզի շրջանում գտնվող անգլիական սպաների պահանջով Պերսի Կոքսը ցամաքային զորքերի մի նոր ջոկատ ուղարկեց ապստամբության շրջանը։ Այնտեղ մեկնած զորքերին հրահանգ*

154 J. Edmonds, Kurds..., p. 248.
155 „Times", 20/VIII 1921.
156 „Times". 18/VIII 1921.
157 Курд Оглы, Курды и империализм, стр. 114.
158 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 7, ед. хр. 3, л. 5.

էր տրվել «դիմադրելու դեպքում բռնագրավել աղաների (այսինքն՝ քուրդ առաջնորդների—Շ. Մ.) գույքը»[159]։ Ինչպես նախորդ իրադարձությունների ժամանակ, անգլիացիների հետ համագործակցում էին քուրդ ֆեոդալ Բաբաքր աղան և Թուրքիայի անհաշտ թշնամի Սեիդ Տահան, որոնք հույս ունեին անգլիացիների օգնությամբ ընդարձակելու իրենց իշխանությունը և առաջատար դեր խաղալու Հարավային Քուրդստանի գործերում։

Անգլիացիները Բաբաքր աղայի միջոցով աշխատում էին բանակցությունների մեջ մտնել ապստամբների ղեկավարների հետ և ժամանակավոր դադարը օգտագործել իրենց ուժերը ի մի բերելու և «արդյունավետ գործողությունների անցնելու համար»[160]։ Խոսելով Բաբաքրի այս միսիայի և անգլիացիների խուսանավելու քաղաքականության մասին, էդմոնդսը գրում է. «Բաբաքրի հետ խորհրդակցելուց հետո մեր ղեկավարներին տեղեկացրինք, որ մեր մի ջոկատը ուղևորվելու է Կալա Դիզա, նպատակ ունենալով դիվանագիտական և սահմանափակ օդային գործողությունների (այսինքն՝ ռմբակոծումների—Շ. Մ.) միջոցով վախեցնել թշնամի ցեղապետերին։ Այսպիսով մենք պետք է դրությունը հսկողության տակ պահեինք և խուսափեինք ընդհարումներից մինչև կհանդիպեինք Սեիդ Տահայի հետ»։ Վերջինիս ջանքերի շնորհիվ հարքի և բրադոստ ցեղերը հիմնականում լոյալ դիրք գրավեցին անգլիական իշխանությունների նկատմամբ։ Անգլիական զորքերը խիստ հոգնած էին, դժվարությամբ էին տանում շոգը, տարածվել էր մալարիան։ Նրանք որոշել էին վճռական գործողությունների անցնել աշնանը[161]։

Թուրքական ուժերը արդեն սպառնում էին Սուլեյմանիային[162]։ 1922 թ. սեպտեմբերի սկզբներին անգլիական զորքերը թողնելով իրենց դիրքերը, նահանջեցին դեպի Էրբիլ և Կիրկուկ։ «Դա փախուստի էր նման և նվաստացնում էր բրիտա-

159 J. Edmonds, Kurds..., p. 250,
160 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 4, ед. хр. 2, л. 5 а.
161 Տե՛ս J. Edmonds, Kurds..., p. 281.
162 Տե՛ս H. Arfa, Kurds..., p. 115.

նական արժանապատվությունը»,— խոստովանում էր Էդ-մոնդսը։ Կիրկուկում և Սուլեյմանիեում հանգրվանելու և ուժերը ի մի բերելու անգլիական զինվորական շտաբի պլանները արդեն մի քանի օր անց ապարդյուն եղան։ Պատճառն այն էր, որ բուն Կիրկուկում և Սուլեյմանիեում դրությունը նույնպես անհուսալի էր թվում։ Գոլդսմիտը և անգլիական մյուս սպաներն ու ծառայողները հազիվ ինքնաթիռներով տեղափոխվել էին Բաղդադ[163]։

Այսպիսով, 1922 թ. Հարավային Քուրդստանում ստեղծված քաղաքական իրավիճակը իր վրա էր բևեռել ոչ միայն այդ ժամանակ դրության տերը հանդիսացող բրիտանական կառավարության և նրա անմիջական ազդեցության տակ գտնվող իրաքյան նորաստեղծ միապետական ռեժիմի, այլև քեմալական Թուրքիայի ուշադրությունը։ Քեմալականները բացահայտ պայքար էին ծավալել Մոսուլի վիլայեթը վերջնական Թուրքիային միացնելու համար։ Ստեղծված բարդ իրադրության մեջ անգլիական իմպերիալիզմը պետք է գտներ դրությունից դուրս գալու ելքը։ Կամ պետք է ստիպեին Հարավային Քուրդստանին անվերապահ կերպով մտնելու իրաքյան նորաստեղծ պետության կազմի մեջ, որը ռազմական տեսակետից որոշակի դժվարությունների հետ էր կապված, իսկ քաղաքական տեսակետից տվյալ պահին աննպատակահարմար էր Անգլիայի համար, կամ էլ անհրաժեշտ էր վերջնական ինքնավարության իրավունք տալ քրդերին, որպեսզի դրժգոհություններին վերջ տրվեին և դրանով իսկ Անգլիան առժամանակ ձեռք բերեր նպաստավոր փաստարկներ Թուրքիայի հետ ունեցած կոնֆլիկտի մեջ։ Վերջին ուղին գերադասելի համարվեց։ Քրդական ինքնուրույն կառավարության ղեկավարի համար անգլիացիները երկու թեկնածություն ունեին։ Դրանք էին՝ Շեյխ Մահմուդ Բարզինջանը և Սեիդ Տահան։ Առաջինը անվիճելի առավելություններ ուներ իր ժողովրդայնության և ազդեցության տեսակետից, սակայն «անհուսալի էր թվում»[164] անգլիական իշխանություններին։

163 J. Edmonds, Kurds..., p, 255.
164 Նույն տեղում.

ենթարկվելու իմաստով։ Երկրորդի թեկնածությունը պաշտպանություն էր գտնում առավելապես նրա հակաթուրքական տրամադրությունների և անգլիացիներին հավատարմորեն ենթարկվելու պատճառով։ Ի վերջո այդ ընտրությունը կատարվեց հոգուտ Մահմուդ Բարզինջանի, որին անգլիացիները համարեցին միակ անձնավորությունը, որ կարող էր կարգավորել դրությունը Հարավային Քուրդստանում։

Այդ ժամանակ շեյխ Մահմուդին Հնդկաստանից արդեն բերել էին Քուվեյթ, իսկ նրա եղբայր շեյխ Կադերը գտնվում էր Սուլեյմանիեում[165]։ Ուշագրավ է այն փաստը, որ չնայած թուրքական գործակալների ծավալած գործունեությանն ու էրդերին «ինքնավարություն շնորհելու» նրանց խոստումներին և հակաանգլիական զինված պայքարի առկայությանը, քրդական ժողովրդական լայն զանգվածները տարբերայնորեն դիմադրում էին թուրքական ներխուժմանը, պարզորոշ դրսևորելով թուրքական տիրապետության վերահաստատմանն կատամամբ ունեցած իրենց թշնամանքը։ 1922 թ. ուշ աշնանը, երբ թուրքական զինված ուժերը ներխուժեցին Ամասիայի շրջանը և փաստորեն անգլիացիները հնարավորություն չունեին դիմադրելու, տեղի քուրդ բնակչությունը վճռական դիմադրություն ցույց տվեց և թուրքերին վտարեց իրենց սահմաններից[166]։

1922 թ. սեպտեմբերի 14-ին շեյխ Մահմուդ Բարզինջանը նշանակվեց Սուլեյմանիեի «Ընտրական խորհրդի նախագահ» կամ «հուկումդար»[167]։ Պատմագիտական մի շարք աշխատություններում այս հանգամանքը հիմք է ծառայել շեյխ Մահմուդին ներկայացնելու որպես «անգլիական իշխանություններ-

---

165 Սուլեյմանիեից հեռանալիս Գոլդսմիտը կառավարման գործը հանձնեց «Ընտրական խորհրդին», որը դեռևս 1921 թ. մայիսի 6-ին ստեղծվել էր գերագույն կոմիսարի հրամանով։ Արդեն Կադերը նշանակվեց «Ընտրական-խորհրդի նախագահ»։ Սակայն դրանով դրությունը չէր կայունացել և թուրքական ուժերը սպառնում էին Սուլեյմանիեին և մոտակա շրջաններին։

166 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 7, ед. хр. 4, лл. 14—15.

167 էջ 74, ۷۴ ص ، القضية الكردية ، محمد الدرة

յի կամակատարի»[168]։ Փաստերը լիովին հերքում են այդ տեսակետը։ Վերը նշվածից կարելի է համարձակ կերպով եզրակացություն անել, որ անգլիացիները շեյխ Մահմուդին Սուլեյմանիեի ինքնավարության ղեկը հանձնեցին որոշ իմաստով հակառակ իրենց բուն իսկ ցանկության. նրանք հարկադրված դիմեցին այդ քայլին, որովհետև դրությունից դուրս գալու միակ հարմար ելքը այդ էր թվում։ Այս առնչությամբ կարելի է վկայակոչել նույնիսկ բուրժուական մի քանի պատմաբանների կարծիքը, որոնք հակակրանքով են վերաբերվել շեյխ Մահմուդի գործունեությանը։ Լոնգրիգը, օրինակ, նշում է, որ անգլիացիները, «իրադարձությունների ճնշման տակ միայն, հարկադրված դիմեցին այդ քայլին»[169]։ Հարավային Քուրդստանի հիշյալ ժամանակաշրջանի իրադարձությունները սխալ և նեղ նացիոնալիստական դիրքերից ներկայացնող արաբ պատմաբան Մահմուդ ադ-Դուրրան իր «Քրդական հարցը» ծավալուն աշխատության մեջ խոստովանում է, որ «անգլիացիները ուրիշ ելք չգտնելով որոշեցին դիմել... շեյխ Մահմուդին և նրան ետ բերեցին Հնդկաստանից, որպեսզի կառավարի Սուլեյմանիեում»[170]։ Համիլտոնի վկայությամբ այդ իրադրության մեջ Սուլեյմանիեի ինքնավար շրջանի ղեկավարի առավել հարմար թեկնածուն շեյխ Մահմուդն էր, որովհետև «միայն նա կարող էր իրեն ենթարկել այդ շրջանը, որպես նրա ավանդական առաջնորդի»[171]։ Համանման կարծիքի է նաև Հասան Արֆան։ Նա նշում է, որ շեյխ Մահմուդին աքսորավայրից ետ բերելը և Սուլեյմանիեում որպես քրդական ինքնավար շրջանի ղեկավար նշանակելը

---

168 *Տե՛ս մասնավորապես* В. А. Гурко-Кряжин, Ближний Восток и державы, М., 1925; К. Васильев, Причины и движущие силы курдских восстаний; Курд Оглы, Курды и империализм; Таги Заде, Горе побежденным («Бюллетень прессы Среднего Востока», 1930, № 8—9.

169 St. Longrigg. Iraq..., p. 203.

170 *Էջ 74,* محمد الدرة ، القضية الكردية ، ص ٧٤

171 A. Hamilton, Road Trough Kurdistan..., p. 201.

թելադրված էր ստեղծված իրադրությամբ[172]։ Պակաս հետաքրքիր չէ անգլիական «Թայմս» թերթի արտահայտած կարծիքը այդ մասին։ Նշելով, որ շեյխ Մահմուդը նոր անախորժություններ կարող էր պատճառել անգլիացիներին, քանի որ նա մտադիր չէր դառնալու նրանց կամակատարը, թերթը գրում էր. «Շեյխ Մահմուդին Սուլեյմանիե վերադարձնելու որոշումը սըր Պերսի Կոքսի միակ սխալն էր Միջին Արևելքում ունեցած ամբողջ երկարատև գործունեության ընթացքում»[173]։

Վերը շարադրվածից, սակայն, չպետք է միակողմանի կարծիքի հանգել, թե Սուլեյմանիե կենտրոնով քրդական ինքնավար շրջանի ստեղծումը հանդիսանում էր Իրաքի անգլիական իշխանությունների «հարկադրական քայլը» միայն։ Ընդունելով, որ քրդական շրջաններում տեղի ունեցող զինված ելույթները քրդերի ազգային ինքնուրույնության պահանջներն ինչ-որ ձևով հաշվի առնելու հիմնական պատճառներից մեկն էր, միաժամանակ չպետք է մոռանալ, որ այս քայլին դիմելիս անգլիական իմպերիալիզմն ուներ նաև իր սեփական պլանները և այս իմաստով, ինչպես ասում են, «մի գնդակով խփում էր երկու նապաստակ»։ Ի դեմս «քրդական ինքնավար շրջանի» նա իր ձեռքի տակ նպաստավոր փաստարկ էր ունենալու Մոսուլի վիլայեթի շուրջը Թուրքիայի հետ ունեցած կոնֆլիկտի մեջ, որը գնալով սուր բնույթ էր կրում։ Մյուս կողմից՝ Սուլեյմանիե կենտրոնով քրդական ինքնավար շրջանի ստեղծումը անգլիական կառավարության ձեռքին միջոց էր Իրաքի նորաստեղծ կառավարության վրա ճնշում գործադրելու, մասնավորապես 1922 թ. անգլո-իրաքյան անհավասար պայմանագրի հաստատման հարցում։

Բավական ուշագրավ է քեմալականների գրաված դիրքը։ Մոսուլի վիլայեթը Թուրքիային վերադարձնելու հայտնի նպատակը նրանց դրդում էր սիրաշահելու քաղաքականություն վարել շեյխ Մահմուդի և նրա կառավարության հետ։ Թուրք կառավարողները խոսում էին «Թուրքերի և քրդերի եղբայրու-

---

172 Տե՛ս H. Arfa, Kurds..., p. 114.

173 Մեջբերումը «Заря Востока»-ից, 28/V, 1931.

թյան», վերջիններիս «իրավունքների ճանաչման» և նույնիսկ «Թուրքիայի հովանավորության ներքո քրդական պետության գոյության» անհրաժեշտության մասին[174]։

Ինչ վերաբերում է բուն Հարավային Քուրդստանի հասարակայնության տարբեր խավերի կարծիքներին, ապա դրանք միանման չէին։ Գյուղացիությունը, մանր արհեստավորներն ու առևտրականները և մտավորականությունը հույս ունեին, որ քրդական «ինքնավար շրջանի» կազմակերպումը կթեթևացնի շահագործման բեռը, խթան կհանդիսանա ազգային տնտեսության ու կուլտուրայի զարգացման համար[175]։ Իսկ քրդական խոշոր հողատերերը և ցեղապետերը երկյուղածությամբ էին նայում շեյխ Մահմուդի իշխանության հաստատմանը։ Նրա իշխանության նկատմամբ նույնպիսի անբարյացակամ դիրք էին գրավել նաև Կիրկուկի և Էրբիլի առևտրականներն ու բուրժուականացող տարրերը, որոնք չէին ցանկանում ենթարկվել «հետամնաց Սուլեյմանիեին»[176]։ Այսպիսով, չնայած Քուրդստանի հասարակայնության գրեթե բոլոր խավերի դժգոհությանը, որն արտահայտվում էր բրիտանական իմպերիալիզմի և Իրաքի միապետական ռեժիմի դեմ մղած պայքարի մեջ և որը ուներ մասսայական, իսկ երբեմն նույնիսկ «համաժողովրդական բնույթ»[177], այդ շարժումն ուներ իր ներքին թուլությունները։ Պայքարի հիմնական շարժիչ ուժը թեև գյուղացիությունն էր, սակայն այն ագրարային շարժման բնույթ չընդունեց։ Տառապելով ոչ միայն արտաքին, այլև իրենց տեղական վերնախավի լծից, գյուղացիական զանգվածները այնուհանդերձ չէին հետապնդում ֆեոդալական ամեն տեսակ շահագործումը վե-

---

174 A. Safrastian, Kurds and Kurdistan, c. 81—82, Лахути, Курдистан и Курды („Новый Восток", № 4, 1923, стр. 5); Ն. Խ. Մախմուդով. Քուրդ ժողովուրդը, Երևան, 1959, էջ 145; „Правда", 28/IV 1923.

175 Տե՛ս Ф. Растопчин, Заметки о курдах (БПСВ, № 13—14, 1932, стр. 93).

176 Նույն տեղում։

177 К. Васильев, Причины и движущие силы курдских восстаний, стр. 103.

բացնելու հստակ նպատակ։ Հասարակայնության պայքարող զանգվածները ներքին սերտ միասնություն չունեին, նրանք ներկայացնում էին տարբեր խավեր և միավորված էին միայն «օտարազգի ճնշման դեմ ունեցած ընդհանուր դժգոհության հիման վրա»[178]։

Շեյխ Մահմուդի կառավարությունը այսպիսով գտնվելու էր ներքին և արտաքին բարդ պայմանների մեջ, որոնք մասամբ սկզբից ևեթ կանխորոշեցին նրա անհաջող վախճանը։

1922 թ. հոկտեմբերին Բաղդադում տեղի ունեցած բանակցություններից և «իր իշխանության սահմանները միայն Սուլեյմանիեի շրջանով սահմանափակելու «խոստումից հետո շեյխ Մահմուդը Իրաքի բանակի սպաների և Նոելի ուղեկցությամբ ժամանեց Սուլեյմանիե[179]։ Նույնիսկ էդմոնդսի վրկայությամբ «նրան ամենուրեք ընդունում էին ցնծությամբ»։ Սուլեյմանիե գալու ժամանակ քրդական շատ շրջաններ իրենց ներկայացուցիչների միջոցով պատրաստակամություն էին հայտնում մտնել «քրդական պետության կազմի մեջ»[180]։ Էդմոնդսը Սուլեյմանիե բերեց անգլո-իրաքյան համատեղ հայտարարություն, որի մեջ մասնավորապես նշված էր. «Նորին մեծության բրիտանական կառավարությունը և Իրաքի կառավարությունը ճանաչում են Իրաքի սահմաններում ապրող քրդերի իրավունքները՝ կազմելու քրդական մի կառավարություն այս սահմաններում և հույս ունեն, որ քրդական զանազան տարրերը որքան կարելի է շուտ համաձայնության կգան այս կառավարության ցանկացած ձևի ու սահմանների մասին և լիազորված պատվիրակներ կուղարկեն Բաղդադ իրենց տնտեսական ու քաղաքական հարաբերությունները Նորին մեծության բրիտանական կառավարության և Իրաքի կառավարության հետ քննարկելու համար»[181]։ Շուտով հայտարարվեց քրդական նորաստեղծ կառավարության կազմը[182]։

178 Նույն տեղում։

179 Տե՛ս A. Hamilton, Road trough Kurdistan, pp. 200—201.

180 J. Edmonds, Kurds..., pp. 290—292.

181 S. Gavan, Kurdistan..., p. 32.

182 Էջ 94, 95 ص ، شورشی کانی کورد ..... ، علاء الدین سجادی

Շեյխ Մահմուդը պետության ղեկավարն էր, մինիստրների խորհրդի նախագահի պարտականությունները դրված էին շեյխ Կադերի վրա։ Մինիստրական պոստերը գրավում էին Աբդ-ուլ-Քյարիմ Հալաքը, Մուստաֆա Ցամուլքին, Շեյխ Համա Ղարիբը, Սալեհ Զաքի Սահեբքրանը, Ահմադ բագի Ֆաթահ-բագը, Սաիդ Ահմադ Բարզինջին, Սադիկ ալ Ղադրին և ուրիշներ։ 1922 թ. նոյեմբերին շեյխ Մահմուդ Բարզինջանը հռչակվեց Քուրդստանի թագավոր[183]։

Կառավարության նման կազմը նշանակում էր, որ Հարավային Քուրդստանում տնտեսական և քաղաքական բոլոր դիրքերը գտնվելու էին բացառապես քրդական վերնախավի ձեռքում, ուստի խոսք լինել չէր կարող ժողովրդական զանգվածների, հատկապես գյուղացիության օգտին արմատական սոցիալական բարեփոխություններ կատարելու մասին։ Ջնայած դասակարգային հակադիր շահերին, Քուրդստանի գյուղացիական զանգվածների պայքարը օգտագործվում էր ունևոր խավերի ներկայացուցիչների կողմից։ Պատճառն այն էր, որ կախյալ վիճակում գտնվող Քուրդստանում զանգվածային բնույթի ազատագրական պայքարը, որն ուղղված էր օտար տիրապետության և իմպերիալիզմի դեմ, դասակարգային հակամարտությունները առժամանակ կարծեք թե հետին պլան էին մղվել։ Քուրդ ֆեոդալների մի մասը և բուրժուականացող խավը հանդես էին գալիս ժողովրդին հուզող ընդհանուր պահանջների պաշտպանությամբ և դրանով իսկ արժանանում լայն զանգվածների աջակցությանը։ Եվ թեև շեյխ Մահմուդը փաստորեն ներկայացնում էր իր դասակարգի շահերը, այսուհանդերձ օբյեկտիվորեն նրա պայքարը ուներ առաջադիմական համազգային բնույթ։ Մի կողմ թողնելով այն փաստը, որ ազգային իշխանության հաստատումով անհամեմատ ավելի նպաստավոր պայմաններ էին ստեղծվում Քուրդստանի տնտեսական և մշակութային զարգացման համար, միաժամանակ պետք է նշել, որ գյուղացիական լայն զանգվածների պայքարը նոր պայմաններում արդեն ուղղված էր լինելու

183 Նույն տեղում։

միայն տեղական շահագործողների դեմ, որը բնականաբար հասցնելու էր դասակարգային ու հասարակական առաջադիմական բնույթի փոփոխությունների և նպաստելու էր Քուրդիստանի ներքին զարգացմանը։ Այսպիսով, քրդական լայն զանգվածների պայքարը նույնիսկ թագավորական իշխանության ձևով ներկայացված ազգային ինքնուրույնության համար պատմականորեն առաջադիմական էր ու արդարացի, քանի որ «յուրաքանչյուր սոցիալական շարժման բնույթը որոշվում է ոչ թե այն բանով, թե ով է այն ղեկավարում, այլ նրանով, թե ինչպիսին է նրա զարգացման օբյեկտիվ արդյունքը, որպիսի նպատակների է նա օբյեկտիվորեն ծառայում»[184],

* * *

Քրդական ինքնավարության հռչակումը համընկավ անգլո-իրաքյան պայմանագրի կնքման հետ։ 1922 թ. հոկտեմբերի 10-ին գերագույն կոմիսար Պերսի Կոքսը և Իրաքի պրեմիեր-մինիստր Աբդ ար-Ռահմանը Բաղդադում ստորագրեցին անգլո-իրաքյան «դաշնակցային պայմանագիրը»։ Հիշյալ պայմանագիրը ոչ միայն փոփոխություն չէր մտցնում Իրաքի կախյալ դրության և Անգլիայի թելադրող դիրքի մեջ, այլև, ընդհակառակը, իրավական տեսակետից օրինականացնում էր այն։ Պայմանագրի առաջին հոդվածում նշված էր, որ «նորին մեծություն Իրաքի թագավորի խնդրանքով Նորին բրիտանական մեծությունը ներկա պայմանագրում նշված պայմաններով պարտավորվում է Իրաքի պետությանը տալ այնպիսի խորհուրդներ և օգնություն, որոնք կարող են անհրաժեշտ համարվել հիշյալ պայմանագրի ժամկետի ընթացքում, առանց Իրաքի ազգային անկախությանը վնասելու։ Նորին բրիտանական մեծությունը Իրաքում ներկայացվելու է գերագույն կոմիսարով»[185]։

---

184 А. Искендеров, Армия, полэитика, народ, «Правда», 17/I 1967.

185 Ю. В. Ключников и А. В. Сабанин, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч., III, М., 1929, стр. 188—189.

Անգլո-իրաքյան պայմանագիրը ընդհանուր դժգոհություն առաջ բերեց Իրաքում։ Նրա դեմ հանդես եկան նույնիսկ անգլիական տիրապետության նկատմամբ լոյալ դիրք գրաված ազգայնականները։ Բաղդադում ժողովրդական հուզված զանգվածները ծեծեցին Իրաքի պառլամենտի այն դեպուտատներին, որոնք քվեարկել էին անգլո-իրաքյան ստրկացուցիչ պայմանագրի օգտին[186]։

Անգլիայի և Իրաքի միջև կնքված նոր պայմանագրի դեմ հանդես եկավ նաև Քուրդստանի ազգաբնակչությունը։ Պայմանագրի երրորդ հոդվածը, որտեղ խոսվում էր Իրաքում «խղճի ազատության և ազգությունների իրավահավասարության մասին», չէր կարող բավարարել ժողովրդին։ Նրանում ոչինչ չէր ասված այն «ինքնավարության» մասին, որ անգլիական իշխանությունները և Իրաքի կառավարությունը տվել էին քրդերին։

1922 թ. վերջերին շեյխ Մահմուդի կառավարությունը իր ներկայացուցիչներին ուղարկեց Բաղդադ՝ քրդական ինքնավարության հետ կապված հարցերը քննարկելու համար։ Անգլո-իրաքյան կողմը քուրդ պատվիրակների պահանջները անընդունելի համարեց, և բանակցությունները կանգնեցին փակուղու առաջ[187]։ Նույնպիսի վախճան ունեցան նաև էդմոնդսի հանդիպումները Սուլեյմանիեի կառավարության պատվիրակներ Թևֆիգ բեգի, Աբդ ար-Ռահման աղայի, Իզետ բեգ Ջաֆի և Մուստաֆա փաշայի հետ[188]։ Անգլո-իրաքյան պայմանագրի մեջ «քրդական ինքնավարության» վերաբերյալ որևէ կետի բացակայությունը և քուրդ պատվիրակների՝ ինքնավարության իրականացման հետ կապված պահանջների մերժումը պատահական երևույթ չէին։ Անգլիական իմպերիալիզմը Սուլեյմանիեին տրված ինքնավարությունը փաստորեն համարում էր տակտիկական մի քայլ և լրջորեն չէր մտածում նրա իրականացման մասին։ Ահա թե ինչու Սուլեյմանիեի

186 ЦГАОР СССР, оп. 2, ед. хр. 7, л. 26.

187 Նույն տեղում։

188 J. Edmonds, Kurds..., p. 296.

ինքնավար կառավարության պահանջները անուշադրության էին մատնվում կամ արհամարհվում անգլիական իշխանությունների ու Բաղդադի կառավարության կողմից։ «Ես զարմացած էի,—ցինիկաբար գրում է Էդմոնդսը,—որ նրանք (քուրդ պատվիրակները—Շ. Մ.) իրենց ներկայացնում էին որպես քրդական ժամանակավոր ազգային կառավարության անդամներ։ Ցեղապետերը արդեն խոսում էին մի Քուրդստանի մասին, որը պետք է տարածվեր մինչև Ջեբել Համրինի հարավը»[189]։

Քրդական ինքնավար կառավարությունը գործում էր ներքին և արտաքին խիստ աննպաստ պայմաններում։ Երկարատև պատերազմը քայքայել էր տնտեսությունը և նա ի վիճակի չէր ձեռնարկելու սոցիալ-տնտեսական շոշափելի որևէ միջոցառում։ Առավել մեծ վտանգը ներկայացնում էին անգլիական և թուրքական կառավարությունները։ Երկուսն էլ հանդես գալով քուրդ ժողովրդի «շահերի պաշտպանության» դիմակի տակ, ամեն կերպ աշխատում էին ինքնավարության քրդական շարժումը ծառայեցնել իրենց նպատակներին։ Պետք է նշել, որ ռազմական ու դիվանագիտական անվիճելի ընդունակություններ դրսևորող շեյխ Մահմուդը իր հերթին ձգտում էր օգտագործել անգլո-թուրքական հակասությունները քրդական անկախ պետություն ստեղծելու իր ծրագիրը իրականացնելու համար։ Եվ ահա նա պայքարի սուր սլաքը ուղղեց առաջին հերթին անգլիական իմպերիալիզմի դեմ[190], դրա հետ մեկտեղ չմոռանալով պայքարել ընդդեմ թուրքական վտանգի։ Ուշագրավ է այս տեսակետից այն փաստը, որ նա իր կառավարման հենց սկզբից ոչ միայն թույլ չտվեց «թուրքերին մտնել Սուլեյմանիե, այլև նրանց վտարեց հարևան բոլոր շրջաններից»[191]։ 1922 թ. վերջերին Բաղդադի և Սուլեյմանիեի հարաբերությունների մեջ ակնհայտ էր բացահայտ լարվածությունը։ Շեյխ Մահմուդը արդեն կռահում էր, որ անգ-

189 Նույն տեղում։

190 Ирандуст, Борьба за Мосул, стр. 99—100.

191 J. Edmonds, Kurds..., p. 260.

յիացիները նրա հետ վերաբերվելու են այնպես, ինչպես 1919 թ.[192], և սկսեց դաշնակիցներ փնտրել անգլիական ճնշման դեմ պայքարելու համար[193]։ Իր շուրջը համախմբելով «հակաբրիտանական տարրերին, շեյխ Մահմուդը աշխատում էր ընդարձակել ինքնավար շրջանի սահմանները, միևնույն ժամանակ նախապատրաստվելով հնարավոր հարձակման դեպքում դիմադրելու»[194]։ Հաշվի առնելով իրանական և թուրքական կառավարությունների լարված հարաբերությունները Անգլիայի հետ, շեյխ Մահմուդը ձգտում էր նրանցից օգնություն ստանալ անգլիական իմպերիալիզմի դեմ իր գլխավորած պայքարում։ Այդ նպատակով նա հատուկ նամակներով դիմեց Թուրքիայի ազգային մեծ ժողովին և իրանական կառավարությանը, որտեղ նշում էր քրդերի ազատագրական պայքարի նպատակները և օգնություն խնդրում։ Սակայն, թուրքական կառավարությունը շարունակում էր իր երկդիմի քաղաքականությունը[195]։ Նա պատրաստակամություն հայտնեց «օգնել շեյխ Մահմուդի գլխավորած շարժմանը»[196]։ Թուրքական դիվանագետները կանգ չառան նույնիսկ այնպիսի խոստման առաջ, ինչպիսին էր «Հարավային Քուրդստանի անկախության ճանաչումը և նրա ներքին գործերին չմիջամտելը»[197]։ Ուշագրավ են արաբական շրջաններին հակաանգլիական պայքարի մեջ ներքաշելու շեյխ Մահմուդի ջանքերը։ 1923 թ. սկզբներին նա մի քանի անգամ պատգամավորություն ուղարկեց Իրաքի հարավային շրջանները՝ մասնավորապես Քարբալա և Նաջեֆ, առաջարկելով համատեղ պայքարել անգլիական տիրապետության դեմ[198]։

Այսպիսով, ինքնավարության համար քրդերի մղած պայքարը և շեյխ Մահմուդի գործունեությունը այս ուղղությամբ

---

192 محمد الدرة ، القضية الكردية ... ، ص ٦٧

193 Տե՛ս, H. Arfa, Kurds..., p. 115.

194 Նույն տեղում։

195 Տե՛ս «Правда», 28/IV 1923.

196 БПСВ, № 13—14, 1932, стр. 115.

197 «Заря Востока», 5/VIII 1923; Курд Оглы, Курды и империализм, стр. 116.

198 Տե՛ս St. Longrigg, Iraq..., p. 145.

սկզբից ևեթ դուրս եկան այն շրջանակներից, որոնք Անգլիային թույլ կտային այդ ամենը օգտագործելու իր նպատակների համար։ «Ինչ վերաբերում է Մոսուլին,—այդ առթիվ գրում է սովետական արևելագետ Իրանդուստը,—ապա այստեղ ևս անգլիական քաղաքականությունը հարկադրված եղավ շրջադարձ կատարել իր նախատեսած գծից։ Քրդական ազգային շարժումը, որի վրա հույս էր դրել լորդ Քերզոնը, սկսեց զարգանալ ինքնուրույն կերպով, հետապնդելով իր սեփական նպատակները և միանգամայն առանձնանալով Մոսուլի հարցում բրիտանական շահերի պաշտպանության ուղուց»[199]։ «Քրդական ազգային շարժումը,—նշում է Լահուտին,—այնքան բարդ և ինքնուրույն գտնվեց, որ անգլիացիները չէին կարող այն օգտագործել իրենց շահերի համար»[200]։ Իրաքում անգլիական ռազմա-օդային ուժերի պետ Սալմոնդը 1923 թ. մայիսին բրիտանական ռազմա-օդային ուժերի մինիստրին Հարավային Քուրդստանի դրության մասին գրած զեկուցագրում նշում էր, որ «քրդերը ոչ միայն համագործակցում են Իրաքի ազգայնականների հետ, որպեսզի միաժամանակ ամբողջ Իրաքում ապստամբություն բարձրացվի, այլև կապ են հաստատել թուրքերի հետ»։ Երկյուղ կրելով «արաբների և քրդերի ընդհանուր ճակատի ստեղծումից», անգլիական իմպերիալիստները սկսեցին ձեռնարկել մի շարք ռազմական բնույթի գործողություններ շեյխ Մահմուդի իշխանությունը լիկվիդացնելու համար[201]։ Վերջինս զգուշացվեց, որ նա «պետք է ենթակայի դրություն ունենա թե՛ արաբական Իրաքի, թե՛ բրիտանական իշխանությունների հետ ունեցած իր հարաբերությունների մեջ»[202]։ Անգլիական ռազմական շտաբը շեյխ Մահմուդին կանչեց Բաղդադ։ Հրավերը մերժվեց։ Այդ ժամանակ Սուլեյմանիեում որպես անգլիական քաղաքական սպա գտնվող Կլարկը ներկայացավ շեյխ Մահմուդին և հայտարարեց, որ ինքը մեկնելու է Բաղդադ, «իսկ դա կնշանակի, որ

199 Ирандуст, Борьба за Мосул, стр. 99.
200 Лахути, Курдистан и курды, стр. 58.
201 Տե՛ս Ирандуст, Борьба за Мосул, стр. 99.
202 A. Hamilton, Road trough Kurdistan, p. 203.

դուք դիտվելու եք որպես խռովարար»[203]։ Անգլիական զորքերը և ավիացիան վերստին սկսեցին ռազմական գործողությունները քրդերի դեմ[204]։ 1923 թ. սկզբներին արդեն հրապարակվեցին հաղորդագրություններ անգլիական ռազմաօդային ուժերի կողմից Հարավային Քուրդստանի «ըմբոստ շրջանները ռմբակոծելու մասին»։ Անգլիական իշխանությունների հաղորդագրություններում իսկ ասվում էր, որ «ռազմաօդային ուժերը անընդհատ ռմբակոծման են ենթարկում Էրբիլի մոտակայքի շրջանները և ռմբակոծման հետևանքով այրվել է Ռևանդուզի զգալի մասը։ «Դերբանդի շրջանում անգլիական ինքնաթիռները չէին թողել ոչ մի ամբողջական (այսինքն՝ չվնասված—Շ. Մ.) քրդական գյուղ»[205]։ Իրաքի բանակին հրաման էր տրվել շարժվել դեպի Սուլեյմանիե և օկուպացնել այդ շրջանը[206]։ Սակայն «արաբական զորքը անմիջապես ծուղակի մեջ ընկավ լեռնաբնակների (այսինքն՝ քրդերի—Շ. Մ.) շարժուն ջոկատների կողմից»[207]։ Անգլիացիները որոշեցին գործողության մեջ դնել ասորական գնդերը, «որոնք քրդերի նման լեռնային մասերում իրենց զգում էին ինչպես իրենց տանը»[208]։ Ցամաքային ուժերի բոլոր գործողությունները ուղեկցվում էին ռազմական ավիացիայի բարբարոսական ռմբակոծումներով։

1923 թ. փետրվարի 16-ին անգլիական գերագույն կոմիսարը Բաղդադում հրավիրեց զինվորական և քաղաքացիական իշխանությունների ներկայացուցիչների խորհրդակցություն Սուլեյմանիեի նկատմամբ կիրառվելիք միջոցառումների պլանը մշակելու համար, որտեղ որոշվեց.

1. Փետրվարի 21-ին գերագույն կոմիսարը Մահմուդին ուղարկելու էր հեռագիր, որով հրամայվում էր նրան անհապաղ ներկայանալ Բաղդադ։

---

203 Նույն տեղում։

204 Տե՛ս Ирандуст, Борьба за Мосул, стр. 100.

205 «Правда», 8/I 1923.

206 Տե՛ս A. Hamilton, Road trough Kurdistan..., p. 203.

207 Նույն տեղում, էջ 206։

208 Նույն տեղում, էջ 205—206։

2. Հիշյալ հրամանը չկատարելու դեպքում անգլիական ռազմա-օդային ուժերը պետք է թռչեն Սուլեյմանիեի վրայով և գցեն թռուցիկներ, որտեղ նշվելու է շեյխ Մահմուդին պաշտոնանկ անելու մասին և հինգօրյա ժամկետ է տրվելու նրան ու կառավարության («վարչական խորհրդի») մյուս անդամներին Բաղդադ ներկայանալու համար։

3. Միաժամանակ զինվորական երկու ջոկատ շարժվելու է դեպի Սուլեյմանիե. անգլիական սպաների մի խումբ մեկնելու է Կիրկուկ՝ հանկարծակի հարձակմանը դիմադրելու համար։

4. Եթե շեյխ Մահմուդը հրաժարվի հեռանալ Սուլեյմանիեից, նրա շտաբը, բանակը ռմբակոծվելու են անգլիական ռազմա-օդային ուժերի կողմից[209]։

Ստանալով հեռագիրը, շեյխ Մահմուդը էդմոնդսից պահանջեց «լրացուցիչ բացատրություն» տալ Բաղդադի կողմից ներկայացված վերջնագրի մասին։ Այդ պահանջը չկատարվեց։ Չնայած դրան, մինչև մարտի 3-ը անգլիացիները հեռագրերի և պատվիրակությունների փոխանակություններ էին կատարում շեյխ Մահմուդի հետ։ Այս երկակի խաղի նպատակը ոչ թե կոնֆլիկտը խաղաղ ճանապարհով լուծելու հնարավորություններ գտնելն էր, այլ ժամանակ շահելը։ Իրականում այդպես էլ եղավ. անգլիացիները կարողացան այդ ժամանակվա ընթացքում զորքեր կենտրոնացնել Սուլեյմանիեի, Կիրկուկի և Ռևանդուզի շրջաններում։ 1923 թ. մարտի 3-ին սկսվեց Սուլեյմանիեի ռմբակոծումը[210]։ Շեյխ Մահմուդը բնակչությանը կոչ արեց «սրբազան պատերազմ մղելու անգլիական իմպերիալիստների դեմ»[211]։ Օդային բարբարոսական ռմբակոծությունները տագնապ առաջացրին բնակչության մեջ։ Ականատեսների վկայությամբ «տեսարանը զարհուրելի էր, բնակիչները զայրույթով կոչ էին անում վրեժխնդիր լինել»[212] անգլիական իմպերիալիստներից։ Շեյխ Մահմուդը

209 Edmonds, Kurds..., p. 315.
210 D. Kinnane, The Kurds..., p. 38.
211 Նույն տեղում։
212 A. Hamilton, Road trough Kurdistan, p. 167.

իր կողմնակիցների և զինված ուժերի հետ միասին հարկադրված թողեց Սուլեյմանիեն և նահանջեց դեպի լեռնային դժվարամատչելի վայրերը։ Նա շարունակում էր ջանքեր գործադրել Քուրդստանի մյուս հատվածներից օգնություն ստանալու և նրանց բնակչությանը ևս պայքարի մեջ ներգրավելու համար։ Սակայն նրա հակառակորդները այդ ծրագրերը ձախողելու համար լուրեր էին տարածում, թե իբր նա «անգլիական գործակալ է»։ Քրդական մի շարք ցեղերի առաջնորդներ իրանական Քուրդստանում մերժեցին շեյխ Մահմուդի պատվիրակների առաջարկները միասնական պայքար սկսելու մասին, հայտարարելով. «Մենք ուզում ենք անկախ Քուրդստան, բայց առանց անգլիացիների»[213]։ Հարավային Քուրդստանում տեղի ունեցող պայքարը արձագանք էր գտնում նաև Թուրքիայի քրդական շրջաններում։ Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Իրաքում «քրդական շարժումը պաշտպանող» քեմալականները միանգամայն որոշակի հանդես եկան նրա տարածման վտանգի դեմ։ Թուրքական իշխանությունները մի ամբողջ կամպանիա ծավալեցին շեյխ Մահմուդի ու նրա կողմնակիցների դեմ և նույնիսկ «ջոկատներ կազմակերպեցին ընդդեմ նրա ղեկավարած շարժման համակրողների»[214]։ Հարավային Քուրդստանում տեղի ունեցող այս իրադրությունների թեժ պահին՝ 1923 թ. մարտին Պերսի Կոքսը Անգլիայի կառավարությանը ներկայացրել էր «Իրաքի ապագայի և պայմանագրի (1922 թ.—Շ. Մ.) հաստատման հարցերը»[215]։ Իրաքում գոյություն ունեցող դժգոհության, ինչպես նաև բուն Անգլիայում կառավարության քաղաքականության ճնշման տակ[216] անգլո-իրաքյան պայմանագրին կցվեց մի արձանագրություն, ըստ որի պայմանագրի ժամկետը սահմանափակվում էր 4 տարով։ Սակայն ամենակարևորն այն է, որ ընդառաջելով Իրաքի կառավարության պահանջներին, անգլիական իմպերիալիզմը «որոշեց Սուլեյմանիեն ևս միաց-

213 «Правда», 17/II 1923.
214 «Правда», 26/I 1923.
215 E. Beatrice, King Faisal of Iraq..., p. 168.
216 Տե՛ս նույն տեղում։

նել Իրաքին»՝ վերապահումով միայն, որ «այնտեղ պետք է ստեղծվեր քրդերի ազգային իրավունքները հարգող վարչություն»[217]։

1923 թ. մարտի 23-ին անգլիական գերագույն կոմիսար Հենրի Դոբսը ժամանեց Կիրկուկ, իսկ այնուհետև Էրբիլ՝ քուրդ ապստամբների դեմ ռազմական գործողությունների հետագա պլանը մշակելու համար։ Անգլիական բարձրաստիճան սպաների և Ֆեյսալ թագավորի եղբայր Էմիր Զայդի մասնակցությամբ տեղի ունեցած այս հանդիպումներից[218] հետո անգլիական զորքերը գրավեցին Էրբիլի և Ռևանդուզի միջև ընկած շրջանների մեծ մասը[219]։ Շուտով նրանք գրավեցին նաև Ռևանդուզը, որը ուներ ռազմա-ստրատեգիական կարևոր նշանակություն մասնավորապես Թուրքական ուժերին դիմադրելու տեսակետից[220]։ Մայիսի սկզբներին Հենրի Դոբսը անգլիական մի խումբ սպաների ուղարկեց քրդական, այսպես կոչված, «տատանվող» շրջանները, նրանց իրենց կողմը գրավելու համար։ Մայիսի 5-ին անգլիական զինված ուժերի գլխավոր շտաբը քուրդ ապստամբների դեմ նոր գործողություններ սկսելու հրաման արձակեց, որի մեջ ասված էր. «Քոյի զորախմբի գլխավոր նպատակն է վերականգնել տեղական իշխանությունների գործունեությունը և պայմաններ նախապատրաստել Սուլեյմանիեի գրավման համար։ Այդ նպատակով զորքը մայիսի 14-ին մեկնում է Կիրկուկից։ Սուլեյմանիեի գրավումից հետո ըստ անհրաժեշտության ավելի փոքր գործողություններ կծավալվեն շեյխ Մահմուդի հեղինակությունը գցելու և նրան պարտության մատնելու համար։ Միաժամանակ պատժվելու են այն ցեղերը, որոնք համագործակցում էին Թշնամու հետ»[221]։ Մայիսի 8-ին Սուլեյմանիեի պաշտպանների ուժերը չլատելու համար անգլիական

217 Էջ 77, « ..... محمد الدرة ، القضية الكردية
218 Տե՛ս, E. Beatrice, King Faisal of Iraq, p. 168.
219 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 7, ед. хр. 15, л. 12.
220 Նույն տեղում։
221 J. Edmonds, Kurds..., p. 227.

ինքնաթիռները թռուցիկներ տարածեցին քաղաքի վրա, նշելով, որ քաղաքը գրավվելու է կառավարության կողմից և պատժվելու են նրանք, ովքեր կդիմադրեն զորքերին[222]։ Մի շաբաթ անց անգլիացիների հետ համագործակցող Ամին Ռաշիդը և Մուշիր աղան իրենց ջոկատներով հետախուզական արշավ կատարեցին դեպի Բազիանի հայտնի կիրճը։ Ստանալով տեղեկություններ իրադրության մասին, անգլիական զորքերը անցան Բազիանի, իսկ այնուհետև՝ Թասլուջայի կիրճերը և ընդհուպ մոտեցան Սուլեյմանիային։ Շեյխ Մահմուդը մեծ ջանքեր էր գործադրում դիմադրությունը կազմակերպելու համար, սակայն նրան խանգարում էին քրդական ազգադավ տարրերը։ Մասնավորապես Բաբաքր աղան կարողացավ ձախողել փիշդարների շրջանում շեյխ Մահմուդի կողմից ձեռնարկած կամպանիան Քոյի անգլիական զորախմբին դիմադրելու համար։ Մայիսի 16-ին շեյխ Մահմուդը մի ջոկատով Ջասունայի իր շտաբից հատուկ մեկնեց Սուլեյմանիեի շրջանը վերահաս հարձակմանը դիմադրելու համար։ Բայց արդեն ուշ էր։ Անգլիական գերակշիռ զինված ուժերի ճնշման տակ նա ստիպված ետ վերադարձավ ու պարտությունից խուսափելու համար իր ուժերի հետ նահանջեց դեպի Իրաք՝ իրանական սահմանի քրդական շրջանները։ Շեյխ Մահմուդը իր կողմնակիցների հետ միասին կանգ առավ իրանական Քուրդիստանի Մարիվանի շրջանի Փիրան գյուղում։ Սուլեյմանիեի գրավումից հետո Իրաքի պրեմիեր-մինիստր Աբդուլ Մահսին բեգ աս-Սաադունը և Բաղդադի քաղաքագլուխ Սաբիհ բեգ Նաշաթը (որը էդմոնդսի վկայությամբ՝ էրբիլցի քուրդ էր) ժամանեցին քաղաք «կարգ ու կանոնը վերահաստատելու համար»։ Սակայն Իրաքի անգլիական իշխանությունները դրությունը կայուն համարել չէին կարող։ Պատճառն այն էր, որ նույնիսկ իրենց հսկողության տակ գտնվող քրդական շրջաններում անգլիական իշխանությունների հետ համագործակցող անգլոֆիլ տարրերի իշխանությունը պահպանվում էր բացառապես բանակի ու ոստիկանության օգնության շնորհիվ։

222 Նույն տեղում։

Նույն նպատակով Սուլեյմանիեում ևս զինված ուժեր տեղադրվեցին։

Հավանաբար անգլիական հրամանատարությունը որևէ սպառնալիք չէր սպասում շեյխ Մահմուդի կողմից և 1923 թ. հունիսի 17-ին նրա կարգադրությամբ զորքի երկու հազարանոց ջոկատը հեռացավ Սուլեյմանիեից[223]։ Օգտվելով այդ հանգամանքից, շեյխ Մահմուդի ջոկատներից մեկը անսպասելի կերպով գրավեց Սուլեյմանիեն[224]։

Շուտով, սակայն, շեյխ Մահմուդը գերագույն կոմիսարից ստացավ հատուկ հայտարարություն, որի մեջ ասված էր. «Գերագույն կոմիսարը լսել է, որ դուք վերադարձել եք Սուլեյմանիե և հրամայում է տեղեկացնել ձեզ, որ միջոցներ են ձեռնարկվել Ռանիայի, Կալա Դիզայի, Ջեմշեմալի, Հալաբջայի, Կարադաղի և Մավաթի շրջաններում վարչական ղեկավարությունը կազմակերպելու համար և դուք ոչ մի իրավունք չունեք միջամտելու հիշյալ շրջանների գործերին։ Եթե դուք գործեք այս կարգադրություններին հակառակ և միջամտեք հիշյալ շրջանների գործերին, կամ դավեր լարեք կառավարության դեմ, ապա ձեր դեմ կկիրառվեն ամենախիստ միջոցներ...»[225]։ Այդ ժամանակ Իրաքի կառավարությունը պատրաստվում էր սահմանադիր ժողովի ընտրություններին, ուստի «Անգլիան և Իրաքը համաձայնության եկան, որ Իրաքի կառավարությունը հայտարարություն անի քրդերի նկատմամբ բարյացակամ քաղաքականություն վարելու մասին»։ Եվ ահա 1923 թ. հուլիսի կեսերին Իրաքի մինիստրների խորհուրդը արեց հետևյալ հայտարարությունը. 1) Իրաքի կառավարությունը նպատակ չունի քրդական շրջաններում նշանակելու իրաքցի պաշտոնյաներ, բացի տեխնիկական կադրերից, 2) նա նպատակ չունի նաև այդ շրջանի բնակիչներին ստիպելու, որպեսզի արաբերեն լեզուն օգտագործեն պաշտոնական գրագրություններում, 3) քրդական շրջաններում ապա-

223 «Правда», 6/VII 1923.
224 J. Edmonds, Kurds..., p. 346.
225 Նույն տեղում։

հովվելու է կրոնական համայնքների ազատությունը[226]։ Այս հայտարարության հրապարակման հետ մեկտեղ անգլո-իրաքյան մեծաթիվ զինված ուժեր կենտրոնացվեցին «շեյխ Մահմուդի իշխանությանը վերջ տալու համար»։ Ուստի քրդական շարժման ղեկավարները հիշյալ հայտարարությունը իրավացիորեն համարեցին անգլիացիների տակտիկական հերթական մի քայլ, որը կապված էր նրանց ներքին ու արտաքին դրժվարությունների հետ։ Շեյխ Մահմուդը պատրաստվում էր դիմադրելու անգլիական զորքերի հարձակմանը։ Ջիլի և Կարա Դաղի քրդական ներկայացուցիչները պատրաստակամություն հայտնեցին օգնելու նրան։ Համանման դիրք էին գրավել Հալաբջայի բեգզադաները· վերջիններիս ներկայացուցիչներ Ահմադը, Իզզեթը և Համիդը մեկնեցին Սուլեյմանիե՝ հայտնելով իրենց համերաշխությունը շեյխ Մահմուդին։ «Գերագույն կոմիսարը,—նշում է Էդմոնդսը,—տեղյակ էր այդ մասին, և սկսվեց Սուլեյմանիեն ռմբակոծելու նախապատրաստությունը»[227]։ Ընդհարումը նորից դառնում էր անխուսափելի։

1923 թ. օգոստոսի 16-ին Սուլեյմանիեն նորից ռմբակոծվեց անգլիական ռազմա-օդային ուժերի կողմից, որը ահավոր աղետներ բերեց ազգաբնակչությանը։ Զոհվածների մեջ մեծ թիվ էին կազմում երեխաները, կանայք և ծերերը։ Հրկիզող ռումբերը այրել էին հսկայական ցանքատարածություններ։

Ինչպես վերը նշվեց, շեյխ Մահմուդի գլխավորած պայքարը դուրս էր գալիս այն շրջանակներից, որոնք շահագրգռված տերություններին պիտի թույլ տային այդ պայքարն օգտագործելու իրենց նպատակների համար։ Ահա թե ինչու Թուրքիայի կառավարությունը, չնայած Անգլիայի հետ ունեցած իր լարված հարաբերություններին, նույնպես օգնում էր քրդական շարժման լիկվիդացման գործին։ 1923 թ. ձմռանը Թուրքիան ավելացրեց իր զորքերի թիվը Մոսուլի սահմանում։ Զորակոչվեցին մինչև 38 տարեկան բոլոր ռազմունակ տղա-

---

226 էջ 77, « القضية الكردية » محمد الدرة

227 J. Edmonds, Kurds..., p. 347.

մարդիկ։ Ռազմական նախապատրաստությունների շրջանը ուղարկվեցին տխրահռչակ «անկախության դատարանները»՝ դասալքության դեմ պայքարելու համար։ Թուրքական կառավարությունը Իրանի կառավարության հետ համաձայնության եկավ «Հարավային Քուրդստանում պատերազմական գործողությունների ժամանակ իր թևերի ու թիկունքի պաշտպանությունը ապահովելու վերաբերյալ»[228]։ «Թուրքիան մի շարք միջոցառումներ ձեռնարկեց Քուրդստանի ինքնավարությունը լիկվիդացնելու համար»[229]։ Իմպերիալիստական երկրների և Մերձավոր ու Միջին Արևելյան ռեակցիոն շրջանների թշնամական դիրքը քուրդ ժողովրդի ազատագրական շարժման նկատմամբ պատմական դաս հանդիսացավ նրա մասնակիցների համար։

Մյուս կողմից, Քուրդստանի հասարակայնության առաջավոր խավերը իրազեկ էին հեղափոխական Ռուսաստանի իրադարձություններին, որոնք նպաստում էին նրանց ազատագրական տրամադրությունների ուժեղացմանը։ Դրա վկայություններից մեկը «բոլշևիզմի ներթափանցման վտանգի դեմ» անգլիական գաղութարարների գործադրած ջանքերն էին։ Ուշագրավ է այս իմաստով բրիտանական քաղաքական սպայի պաշտոնական մի հաշվետվությունը, որտեղ ասված է. «1921 թ. Խանեկինի շրջանում հայտնաբերվել է բոլշևիկյան գործունեություն»[230]։ Քուրդ բուրժուական պատմաբան Աբդուլ Ազիզ Ցամուլքին իր «Քրդերը և քրդական ապստամբությունները» աշխատության մեջ նշում է, որ «միմիայն Ռուսաստանից է, որ փչում է վաղորդյան թարմ զեփյուռը և նշմարվում է պայծառ լույսը»[231]։

Այս և նման մի շարք այլ փաստերի առկայության պայմաններում պատահական չէ քրդական ազատագրական շարժման ղեկավար Մահմուդ Բարզինջանի պատմական նամակ-

228 «Заря Востока», 5/VII 1923.

229 Նույն տեղում։

230 М. А. Камаль, Национально-освободительное движение в Иракском Курдистане, Баку, 1967, стр. 116.

231 Նույն տեղում, էջ 117։

ները ուղղված Լենինի գլխավորած սովետական կառավարությանը։ 1923 թ. Թավրիզի սովետական հյուպատոսի միջոցով դիմելով ՍՍՀՄ կառավարությանը, նա գրում էր. «Երբ 1917 թվականին աշխարհը լսեց իսկական ազատագրության ձայնը և իմացավ ճնշողների ու հանցագործների ճանկերից ազատագրված ժողովրդի մասին, երկրագնդի բոլոր ճնշված ու հալածված ազգերն ու ազգությունները ուրախության մեծ զգացում ապրեցին, ողջունեցին այդ ձայնը և ունենալով ռուս ժողովրդի բարյացակամությունը, ոտքի ելան հանուն ազատության, հույս ունենալով իրագործելու իրենց իղձերն ու ցանկությունները։

Ինչ վերաբերում է մեր իրավունքներին, ապա թերթերի մեծ մասից հայտնի է, թե ինչպես արնածարավ անգլիացիները հրազենով ու ռումբերով արհավիրքներ են բերում քուրդ ժողովրդին, չխնայելով ո՛չ կանանց, ո՛չ երեխաներին, ո՛չ տղամարդկանց։ Այդ տեղի ունեցավ 1919 թվականին... Սակայն, երբ ճնշված ու հալածված քուրդ ժողովուրդը ցանկացավ Սուլեյմանիեում իրագործել իր օրինական իրավունքներն ու պահանջները, ապա ի դժբախտություն քուրդ ժողովրդի, սովետական պետության ներքին դրությունն այնպիսին էր, որ նրան հնարավորություն չէր տալիս հետևելու արտասահմանի ճնշվող և շահագործվող ժողովուրդների վիճակին։

Այդ շարունակվեց մինչև այն պահը, երբ ռուս հզոր ժողովուրդը ցույց տվեց իր բարյացակամությունն ու բարեկամական վերաբերմունքը և գտավ իր ուժն ու մեծությունը։

Կեղեքման ենթարկվող քուրդ ժողովուրդը պատիվ ունի խնդրելու հետևյալը.

«Հարավային Քուրդստանի ողջ ժողովուրդը մեծապես հակված է բարեկամություն հաստատելու սովետական փառավոր պետության հետ, նա պատրաստ է ամեն տեսակ զոհողությունների գնալ հանուն այդ բարեկամության, պատրաստ է այն պաշտպանելու բարոյապես և նյութապես։ Դրա հետ մեկտեղ մենք մեր կողմից որպես գլխավոր պայման առաջադրում ենք մեր օրինական իրավունքների պաշտոնական ճանաչումը։ Եվ որպեսզի համաշխարհային հասարակա-

կան կարծիքին ցույց տանք մեր հարաբերությունները, մեծացնենք մեր հզորությունն ու հեղինակությունը, թուլացնելով հակառակորդի ուժը, մեր կողմը կարիք ունի գնդացիրների, թնդանոթների, ինքնաթիռների, զենքի և փամփուշտների։ Մանրամասնությունները բանավոր կերպով ձեզ կհայտնի հնձելաղորայինների հրամանատար գնդապետ Ռաշիդ էֆենդին և իր անձնական քարտուղար Արիֆ էֆենդին։

Մենք հույս ունենք, որ վերջապես, կիրագործվեն քուրդ ժողովրդի ազգային իրավունքները, որին անհապաղ բարեկամության ու եղբայրության ձեռք կմեկնվի բարեկամություն, եղբայրություն և դաշինք ձեզ հետ, որին մենք սրտանց և անսահման ձգտում ենք։

Ձեզ հայտնի է ամեն ինչ հաշտության վերաբերյալ, ինչպես նաև այն մասին, թե ում դեմ է ուղղված հեղափոխությունը Հարավային Քուրդստանում։ Բոլորին հայտնի է նաև հարևան պետությունների վերաբերմունքը այս ամենին։ Իհարկե հնարավոր չէ մեր բոլոր միջոցառումների ու նպատակների մասին գրել ձեզ, քանի որ մեր և սովետական պետության միջև, որին մենք ապավինել ենք և որին մենք համարում ենք մեր հենարանը, մինչև այժմ դիվանագիտական կապեր չեն հաստատվել։ Այնուհանդերձ ես կարող եմ ասել հետևյալը. ամբողջ քուրդ ժողովուրդը ռուս ժողովրդին նայում է որպես Արևելքի ազատարարի, ուստի մենք որոշել ենք մեր բախտը կապել ռուս ժողովրդի բախտի հետ։ Այժմ միակ բանը, որ մտահոգում է, մեզ օգնություն ցույց տալու հարցն է։ Քուրդ ժողովուրդն անհամբերությամբ սպասում է մեր երկու կողմերի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը։ Եթե այս հարաբերությունները հաստատվեն և ստեղծվի մեր համագործակցությունը, որին ես ձգտում եմ այդ ժամանակ մեր ժողովուրդը կազատագրվի։ Պետք է ասել, որ եթե բաղձալի ու փառավոր գործը իրականանա, մեր բոլոր մաքառումները և պայքարը ոսկե տառերով կգրվեն պատմության մեջ»[232]։

232 1960 թ. № 1, روناهی (Սովետական լրագրող Պ. Դեմչենկոն 1959 թ. Սուլեյմանիևում եղած ժամանակ անձամբ տեսել էր հիշյալ նամակի պատ-

Հիշյալ նամակը պատմական արժեքավոր փաստաթուղթ է և մեծապես նպաստում է քրդական ազգային շարժման, նրա ներքին բնույթի, միջազգային ասպեկտների ճիշտ գնահատմանը։

Սուլեյմանիեից հեռանալուց հետո, մասնավորապես Իրանում գտնվելու ժամանակ շեյխ Մահմուդը շարունակում էր մեծ ջանքեր գործադրել համաշխարհային առաջադեմ հասարակայնության, մասնավորապես ՍՍՀՄ կառավարության ուշադրությունը Հարավային Քուրդստանի դեպքերի վրա բևեռելու համար։ Սովետական ներկայացուցչության միջոցով ՍՍՀՄ կառավարությանը ուղղված 1923 թ. հունիսի 10-ի նամակում Մահմուդ Բարզինջանը գրում էր. «Համաշխարհային պատերազմը սկսվելուց ի վեր մենք, Հարավային Քուրդստանի բնակիչներս, անընդհատ պահանջում ենք անգլիացիներից բավարարել մեր ազգային պահանջները։ Սակայն անգլիական զորքերը և օդանավերը շարունակում են ավերել մեր երկիրը, սպանել մարդկանց և մեզ հնարավորություն չեն տալիս նույնիսկ արտահայտել մեր բողոքն ու դժգոհությունը։ Սկսած 1922 թ. անգլիական իշխանությունները իրենց զորքերի օգնությամբ բոլոր ջանքերը գործադրում են, որպեսզի բռնի կերպով Հարավային Քուրդստանը միացնեն Արաբստանին։ Քուրդստանի էվակուացիայից և մաքրումից հետո անգլիացիները ոչ մի օրենքի հետ հաշվի չեն նստում։ Հանուն մարդասիրության խնդրում ենք ուղարկել անաչառ պատվիրակություն, որպեսզի նա կարողանա անձամբ ականատես լինել անգլիական ճնշմանն ու ավերածություններին»[233]։

Նամակը ստորագրել էին շեյխ Մահմուդը, Սուլեյմանիեի քաղաքագլուխ Սաիդ Քերիմը, Բեկբաշ Ռիզան, Աբդուլ Քերիմը, Հաջի Ռասուլը և քրդական մի շարք այլ գործիչներ[234]։ Սովետական Միությունը, որտեղ «մեկընդմիշտ վերջ տրվեց

ճենը, որը նրա խոսքերով ասած՝ «պահպանվում է շեյխ Մահմուդի ընտանիքում, որպես ընտանեկան մասունք») (Տե՛ս «Современный Восток», 1960, № 1, стр. 15).

233 «Правда», 22/VI 1923.

234 Տե՛ս նույն տեղում։

փոքր ազգերի, այդ թվում քրդերի փոքր հատվածների ճնշումանը»[235], մեծ հույսեր էր ներշնչում քրդական ժողովրդական ամենալայն զանգվածներին՝ ազգային ինքնորոշման համար մղած պայքարում։ 1923 թ. հուլիսի 27-ին շեյխ Մահմուդը նոր հեռագրով դիմելով սովետական կառավարությանը, գրում էր. «Անգլիական զորքերի արտակարգ ճնշումը ուժեղանում է օրըստօրե։ Ամբողջ Քուրդստանի բնակչությունը ենթարկվում է ոմբակոծման և զորքերի հարձակմանը։ Մոտավորապես երկու հարյուր ընտանիք բռնի կերպով հեռացվել են Սուլեյմանիից։ Գերի վերցված տասնյակ մարդիկ անմիջապես ուղարկվել են Բաղդադ։ Կողոպտված է հսկայական չափով ունեցվածք։ Այսպիսով ավերածության է ենթարկվել երկիրը։ Խնդրում ենք արդար վճիռ և ձեր մարդասիրական վերաբերմունքը այդ ճնշման դեմ»[236]։

Սովետական կառավարությանն ուղղված շեյխ Մահմուդի նամակները «Հոկտեմբերյան հեղափոխության արձագանքների վկայությունն էին Քուրդստանում, ինչպես նաև այն բանի վկայությունը, որ քուրդ ժողովուրդը, որպես անկախության համար պայքարող ժողովուրդներից մեկը, մեծապես դնահատում էր Սովետական Միության աջակցությունը և դերը ազատության ու ազգերի ինքնորոշման համար մղվող պայքարում»[237]։

Իմպերիալիստական պատերազմը, օտարերկրյա ռազմական ինտերվենցիան և քաղաքացիական կռիվները սովետական երկիրը կանգնեցրել էին տնտեսական ու այլ կարգի մի շարք դժվարությունների առջև և նա այդ պատճառով չկարողացավ նյութական օգնություն ցույց տալ քուրդ ժողովրդին։ Սակայն, ինչպես մյուս ճնշված ժողովուրդների, այնպես էլ քուրդ ժողովրդի ազատագրական պայքարը արժանանում էր Սովետական Միության բարոյական աջակցությանը։ Ահա

---

235 7/11 1960, خەبات

236 «Правда», 27/VII 1923.

237 7/XI 1960, خەبات

թե այդ առթիվ ինչ է գրել Քրդական դեմոկրատական կուսակցության օրգան «Խաբաթ» թերթը. «Եթե իմպերիալիստների մեղքով Սովետական Միության համար ստեղծված դրժվարին կացությունը նրան հնարավորություն չտվեց նյութական ուղղակի օգնություն ցույց տալ քուրդ ժողովրդին, ապա Իրաքում երկու ժողովուրդների՝ արաբների և քրդերի պայքարը թշնամու լծից հայրենիքի ազատագրման և երջանիկ կյանքի ստեղծման համար վայելում էր Սովետական Միության մըշտական համակրանքը և պաշտպանությունը»[238]։

1924—25 թթ. ընթացքում շեյխ Մահմուդը փոփոխակի հաջողություններով շարունակում էր զինված պայքարը անգլիական իմպերիալիզմի և Իրաքյան միապետական ռեժիմի դեմ, հանուն քուրդ ժողովրդի ազգային իրավունքների ճանաչման։ 1924 թ. հուլիսի 19-ին նա վերստին գրավեց Սուլեյմանիեն, սակայն անգլիական զինված ուժերը, մասնավորապես ավիացիան, հարկադրեցին նահանջել[239]։ Ինքնավարության համար նրա ղեկավարած շարժումը այսպիսով դատապարտված էր անհաջողության։ Մի շարք այլ պատճառների հետ միասին, որին մենք կանդրադառնանք, այդ շարժման ճանապարհին կանգնած գլխավոր խոչընդոտներից մեկը Մոսուլի վիլայեթի շուրջը ծավալված պայքարն էր, մի պայքար, որտեղ առհասարակ ուշադրություն չէր դարձվում քուրդ ժողովրդի ազգային իրավունքների վրա։ Ավելին· պայքարող կողմերը, չնայած նրանց միջև առկա հակասություններին, ընդհանուր շահագրգռվածություն ունեին քրդական ազգային շարժման զարգացմանը դիմագրավելու գործում։ «Անկենդանության դատապարտված»[240] Սևրի պայմանագրին փոխարինեց Լոզանինը։ Թուրք նացիոնալիստները հաջողության հասնելով իմպերիալիստների դեմ մղած պայքարում, ինչպես և պետք էր սպասել, վճռականորեն կանգնեցին քուրդ ժողո-

---

238 Նույն տեղում։

239 էջ 77, « القضية الكردية » محمد الدرة

240 B. Vernier, L'Irak..., p. 89.

վրդի և ազգային մյուս փոքրամասնությունների իրավունքները ճանաչելու դեմ[241]։

1924 թ. մայիսի 19-ին Կոստանդնուպոլսում հրավիրվեց կոնֆերանս Մոսուլի հարցի կարգավորման համար։ Լոզանից հետո Անգլիան շարունակում էր մնալ Մոսուլը իր ազդեցության ոլորտում թողնելու տեսակետին։ Սևրի պայմանագրի ձախողումից հետո թուրքական նացիոնալիստները նպաստավոր էին համարում շարունակելու պայքարը՝ Մոսուլի վիլայեթը Թուրքիային վերադարձնելու համար։ Կոնֆերանսը սկզբից ևեթ դատապարտված էր անհաջողության, քանի որ կողմերը փոխադարձ զիջումների գնալու մտադրություն չունեին։ Չնայած դրան, անգլիական կառավարությունը կարողացավ կոնֆերանսը օգտագործել անգլո-իրաքյան պայմանագրի հաստատման համար։ Հանդես գալով «Իրաքի շահերի պաշտպանի» դերում, Անգլիան հասավ պայմանագրի հաստատմանը։ Պայմանագրի հաստատման պահին Իրաքի սահմանադիր ժողովի 100 դեպուտատներից ներկա էր միայն 69-ը, ընդ որում 27 դեպուտատներ քվեարկեցին նրա հաստատման դեմ[242]։ Ինչպես պայմանագրի կնքման, այնպես էլ հաստատման ժամանակ Քուրդստանի ժողովրդական լայն զանգվածները հանդես էին գալիս նրա դեմ[243]։ Պայմանագրի հաստատման ժամանակ անգլիական «Թայմս» թերթի վկայության համաձայն, Իրաքի պառլամենտում ներկա չէր Կիրկուկի և Սուլեյմանիեի և ոչ մի ներկայացուցիչ[244]։ Իրաքի կառավարությունը պայմանագրին կցեց մի հավելում, ըստ որի ամբողջ պայմանագիրը ընդունելի էր համարվում միայն այն

---

241 1923 թ. հուլիսի 24-ին կնքված Լոզանի պայմանագրում, որը «սրբագործեց» Մուստաֆա Քեմալի հաղթանակը, «այլևս չկար քրդական», այդ մոռացված ժողովրդի (Բեռնար Վեռնիե) հարցը։ Շեյխ Մահմուդը հուշագրով դիմեց Լոզանի կոնֆերանսի մասնակիցներին՝ քրդերի ազգային պահանջները ուշադրության առնելու համար (D. Kinnane, Fhe Kurds..., p. 39), սակայն նրա դիմումն անպատասխան թողնվեց։

242 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 2, ед. хр. 7, л. 26.

243 „The Near East and India" 25/III 1925.

244 Տե՛ս «Международная жизнь, 1924, № 4—5, стр. 101.

դեպքում, եթե Մոսուլի վիլայեթը մնար Իրաքի կազմում[245]։ Անգլիացիները չէին կարող իրավական տեսակետից այդ հարցը մտցնել պայմանագրի մեջ, քանի որ Մոսուլի վերաբերյալ հարցը դեռևս քննարկվելու էր Ազգերի լիգայում։ Ուստի նրանք ձևականորեն չհամաձայնեցին Մոսուլի վերաբերյալ այդ կետը մտցնել անգլո-իրաքյան պայմանագրի մեջ, բայց գերագույն կոմիսար Հենրի Դոբսը գրավոր կերպով պարտավորվեց Իրաքի կառավարության առջև, որ Անգլիան կձգտի Մոսուլի վիլայեթը մտցնել Իրաքի պետության կազմի մեջ։

Այսպիսով, անգլիական կառավարությունը պարզ և որոշակի կերպով Հարավային Քուրդստանի ազգաբնակչության իրավունքների ոտնահարման քաղաքականություն էր վարում։ Մոսուլի վիլայեթը միացնելով Իրաքին ոչ Անգլիան և ոչ էլ իրաքյան միապետական ռեժիմը «երբեք չունկնդրեցին ազգային ինքնավարության վերաբերյալ քրդերի պահանջներին»[246]։ Լոզանի պայմանագրի երկրորդ և երրորդ կետերին համապատասխան, քանի որ Անգլիան և Թուրքիան համաձայնության չէին եկել, վիճելի հարցը հանձնվեց Ազգերի լիգայի քննարկմանը[247]։ 1924 թ. սեպտեմբերին Ազգերի լիգայի խորհուրդը, որպես ժամանակավոր բնույթի միջոցառում, որոշում կայացրեց ստեղծել ապառազմականացված գոտի՝ Թուրք-իրաքյան սահմանին։ Չնայած դրան, վիճաբանող երկու կողմերը շարունակ բողոք էին ներկայացնում Ազգերի լիգային սահմանների խախտումների վերաբերյալ[248]։ Ազգերի լիգան որոշում կայացրեց ստեղծել հատուկ հանձնաժողով, որը պետք է այցելեր Մոսուլի շրջանը և լիգային ներկայացներ վիճելի տերիտորիային վերաբերող տնտեսական, ազգային և անհրաժեշտ այլ տվյալներ, որոնք հիմք էին հանդիսանալու կոնֆլիկտի կարգավորման համար։ Հանձնաժողովը կազմված

245 „Daily Telegraph", 2/IX 1925.

246 „Times of India", 26/VIII 1956.

247 Տե՛ս D. Kinnane, The Kurds..., p. 39.

248 Տե՛ս Л. Перлин, Борьба за Мосул (Социалистическое хозяйство, кн. II. М., 1925, стр. 257).

էր երեք հոգուց՝ շվեդացի Վիրսեն (հանձնաժողովի նախագահ), Հունգարիայի նախկին պրեմիեր-մինիստր, իրավաբան և աշխարհագրագետ Կոմս Թելեքի և բելգիացի պաշտոնաթող սպա գնդապետ Բաուլիս[249]։ Վիճաբանող կողմերին՝ Լոնդոնին և Անկարային լսելուց հետո հանձնաժողովը 1925 թ. փետրվարին այցելեց Մոսուլի վիլայեթը։ Բնորոշ է, որ Ազգերի լիգայի հանձնաժողովը իր աշխատանքներն սկսեց այնպիսի պայմաններում, երբ Հարավային Քուրդստանում շարունակվում էր քրդական ազգային պայքարը։ Սակայն քրդերի ազգային իրավունքների անտեսումը սկզբից ևեթ ակնբախ էր, քանի որ վիլայեթի բնակչության բացարձակ մեծամասնություն կազմող քրդերը[250] չունեին իրենց ներկայացուցիչը ո՛չ Ազգերի լիգայում և ո՛չ էլ նրա հատուկ հանձնաժողովում։ Նույն՝ 1925 թ. Ազգերի լիգայի հանձնաժողովը ավարտեց իր աշխատանքը և ներկայացրեց մեծածավալ մի զեկուցագիր[251]։

Պետք է նշել, որ Ազգերի լիգայի հիշյալ հանձնաժողովի զեկուցագրի մեջ կային բավականաչափ օբյեկտիվ տվյալներ, որոնք, ի տարբերություն անգլո-թուրքական տվյալների[252], անհամեմատ ճիշտ պատկերացում էին տալիս վիճելի տերիտորիայի մասին։ Սակայն այդ կարգի օբյեկտիվ տվյալները առավելապես վերաբերում էին տնտեսական բնույթի հարցերին։ Ինչ վերաբերում է ազգային և քաղաքական բնույթի այլ խնդիրներին, որոնք տվյալ ժամանակաշրջանում առաջնահերթ նշանակություն ունեին, ապա հանձնաժողովը դուրս չեկավ այն շրջանակներից, որոնք առաջադրվել էին Ազգերի լիգայի գերիշխող տերությունների կողմից։ Քուրդ ժողովրդին հուզող հիմնական հարցում՝ ազգային ինքնավարության խնդրում, Լիգայի հանձնաժողովը ըստ էության կանգնած էր քրդերի

---

249 St. Longrigg, Iraq..., p. 153.

250 Տե՛ս John de Vere Loder, The trouth about Mesopotamia, Palestine and Surie, London, 1923, p. 214.

251 «Международная жизнь», 1926, № 1, стр. 135.

252 Այս հարցի վերաբերյալ Անգլիայի և Թուրքիայի կողմից բերված տնտեսական, քաղաքական, ազգային, ռազմական և այլ փաստարկները տրված են Ջ. Լոդերի վերոհիշյալ աշխատության մեջ։

ազգային իրավունքները անտեսելու դիրքերում։ Չնայած Հարավային Քուրդստանում տեղի ունեցող պայքարին, հանձնաժողովը փաստորեն այդպիսի հարց չէր էլ դրել իր առջև։ Նա իր եզրակացություններով պետք է «հիմնավորեր» Մոսուլի վիլայեթի անցումը կամ Թուրքիային, կամ էլ Անգլիայի տիրապետության տակ գտնվող Իրաքին, մի հանգամանք, որի ո՛չ առաջին և ո՛չ էլ երկրորդ տարբերակը չէր համապատասխանում ազատագրական պայքար մղող քրդական ժողովրդական զանգվածների շահերին։ Ազգերի լիգայի զեկուցագրի առաջին հայացքից ճիշտ թվացող մի շարք եզրակացություններ մակերեսային բնույթ էին կրում և չէին արտահայտում իրերի խակական դրությունը։ Նրանցում ոչինչ չէր ասված քրդական ժողովրդական զանգվածների ազգային անկախության հասնելու ձգտումների մասին։ Քրդական ազատագրական պայքարը, ժողովրդական զանգվածների հակաիմպերիալիստական, ինչպես նաև հակաթուրքական տրամադրությունները զեկուցագրի մեջ ներկայացված էին սոսկ որպես «քրդերի ազգային ինքնագիտակցության աճ» (հանձնաժողովի եզրակացության երկրորդ կետը)[253]։

Զեկուցագրի մեջ Անգլիայի հասցեին արված մի քանի քննադատական «դրույթները»[254] չէին կարող սքողել այն փաստը, որ հանձնաժողովը ի վերջո հարցը վճռում էր հօգուտ անգլիական իմպերիալիզմի։ Այդ բանը առավել ակնառու կերպով դրսևորվեց հանձնաժողովի վերջնական եզրակացությունների մեջ, որից ավելին անգլիական կառավարությունը, ըստ երևույթին, չէր էլ սպասում։ Հանձնաժողովի վերջնական եզրակացությունների մեջ նշված էր, որ վիճելի տերիտորիան կարող է միացվել Իրաքին պայմանով, որ 1) Իրաքը մնա Ազգերի լիգայի մանդատի տակ ևս 25 տարի, 2) քրդական շրջաններին իրավունք պետք է տրվի ունենալ քուրդ աստիճանավորներից կազմված վարչակարգ, իսկ քրդերեն լեզուն համարվելու է տվյալ շրջանի պաշտոնական լեզուն[255]։ «Ազգերի լիգայի

253 «Международная жизнь», 1926, № 1, стр. 136—137.

254 Տե՛ս նույն տեղում։

255 Տե՛ս նույն տեղում։

հանձնաժողովի զեկուցագիրը,—գրում էր անգլիական մամուլը,—Բաղդադում ընդունվեց շատ հանգիստ կերպով։ Բնակչության մեծ մասը համոզված է, որ Մոսուլը անցնելու է Իրաքին...»[256]։ Այսպիսով, քրդական ազգային շարժման մասնակիցները իրենց իրավունքների պաշտպանության հարցում ոչ մի կողմի վրա հույս դնել չէին կարող։

1925 թ. սեպտեմբերի սկզբներին Ազգերի լիգան ձեռնամուխ եղավ Մոսուլի հարցի քննարկմանը։ Լիգայի առաջին խսկ նիստում սուր բանավեճ սկսվեց անգլիական և թուրքական պատվիրակությունների միջև։ Թուրքական կառավարական շրջանները և մամուլը ամեն կերպ ճգնում էին «հիմնավորել, որ ոչ միայն Մոսուլը, այլև Իրաքը իրավական տեսակետից պատկանում է Թուրքիային»[257]։ Թուրքական պատվիրակությունը պահանջում էր Մոսուլի վիլայեթի մասին այնպիսի որոշում կայացնել, որը ապահովեր նրա անցումը Թուրքիային, հակառակ դեպքում սպառնում էր ընդհատել բանակցությունները։ Քրդական հարցի առնչությամբ թուրքական պաշտոնական մամուլը արդեն բացե ի բաց գրում էր, որ «Քրդական հարցը արհեստականորեն ստեղծվել է անգլիացիների կողմից...»[258]։ Թուրքական կառավարությունը 1925 թ. արյան մեջ խեղդեց շեյխ Սաիդի գլխավորած ապստամբությունը, որը լայն թափ էր ստացել Քուրդստանի թուրքական հատվածում։ Ապստամբությունը արդեն ճնշված էր, սակայն Թուրքիան Ազգերի լիգայի նիստում՝ քրդական շարժումների դեմ ընդհանուր ճակատ կազմելու նպատակով արեց հետևյալ առաջարկությունը, որ Մոսուլի վիլայեթը վերադարձվի իրեն, սակայն, նա կհամաձայնվեր «որոշակի պայմանների դեպքում Իրաքին զիջել Դիալայի գավառը, որն անհրաժեշտ է Եփրատի հովտի ոռոգման համար։ Դրա փոխարեն պայմանագիր պետք է կնքվի փոխադարձ երաշխիքների մասին Թուրքիայի, Իրաքի, Պարսկաստանի և Անգլիայի միջև»[259]։ Չնայած իր

256 „The Morning Post", 13/VIII 1925.
257 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 2, ед. хр. 5, л. 7.
258 Նույն տեղում։
259 Նույն տեղում, թ. 14։

«դիրքի վճռականությանը» Թուրքիան քիչ հույս ուներ Մոսուլը անգլիական ազդեցության ոլորտից հանելու և իրեն միացնելու համար։ Թերևս դա էր պատճառներից մեկը, որ «Թուրքիան ծայրահեղ դժգոհ էր հարցի լուծումը ձգձգելուց և այն Հաագայի միջազգային դատարանին հանձնելուց»[260]։ Հետաքրքրությունից զուրկ չէ նաև ֆրանսիական պատվիրակության դիրքը։ Նա իր հերթին երկյուղ էր կրում հարցի լուծման անչափ ձգձգումից, որը կարող էր հասցնել քրդերի հուզումների նոր ալիքի, այն պահին, երբ դրուզների ապստամբությունը դեռևս չէր ճնշված։ «Չպետք է աչքաթող անել այն փաստը,— գրում էր ֆրանսիական մի մեկնաբան,—որ Սուլեյմանիեի շրջանում է գտնվում անգլիացիների թշնամի շեյխ Մահմուդը, որին նրանք ապարդյուն կերպով հետապնդում են դեռևս 1920 թվից»[261]։

Ազգերի լիգան այնպես էլ որոշում չկայացրեց, և հարցը հանձնվեց Հաագայի միջազգային դատարանին[262]։ Անգլիան այժմ աշխատում էր մինչ միջազգային դատարանի վճիռը Իրաքում «կարգավորել» քրդական պրոբլեմը։ Սակայն այդ գործում դեռ գոյություն ունեին հայտնի դժվարություններ։ Շեյխ Մահմուդի պարտիզանական ջոկատների դեմ անգլիացիները շարունակում էին պայքարը, երբ 1925 թ. սեպտեմբերի 25-ին ժողովրդական հուզումներ բռնկվեցին Ջիբարի, Ջախոյի և Աքրայի շրջաններում[263]։ Բողոքելով հարկային քաղաքականության և պետական պաշտոնյաների կամայականությունների դեմ, Ջախոյի շրջանում անգլիական զինված ուժերի հետ լուրջ ընդհարում ունեցան շեյխ Աբդուլ Քերիմի գլխավորած քրդական ջոկատները։ Իրաքյան կառավարությունը և անգլիական գերագույն կոմիսարը 10 օր պայմանաժամ տվեցին ապստամբներին անձնատուր լինելու համար։

260 Նույն տեղում, թ. 5։
261 Նույն տեղում։
262 Նույն տեղում, թ. 12։
263 Նույն տեղում, թ. 15, «Ցառաջ», Փարիզ, 29/IX 1925։

Կառավարությունը խոստանում էր այդ պայմանով ներում շնորհել ապստամբներին[264]։

Մի կողմից քրդական շարժման, մյուս կողմից Մոսուլի վիլայեթի սահմանների խախտումների վտանգը պատճառ դարձան, որպեսզի Թուրքիան և Անգլիան մեծաթիվ զինվորական ստորաբաժանումներ կենտրոնացնեն հիշյալ շրջանում։ Թուրքիայի մինիստրների խորհուրդը իր հատուկ նիստում քննարկեց Մոսուլի սահմանում ստեղծված դրության հարցը[265]։ Թուրքական ծանր հրետանին կենտրոնացվեց Դարդանելի ասիական եզերքի շեղոք գծից 15 կիլոմետր հեռավորության վրա[266]։ Թերթերի հաղորդումների համաձայն այդ ժամանակ «բոպե առ բոպե սպասվում էր Դարդանելի փակումը»[267]։ Նույն՝ 1925 թ. Իրաքյան կառավարությունը «ստեղծեց հատուկ բանակային սահմանամերձ գումարտակներ հյուսիսային Քուրդստանի սահմանի մոտ»[268]։

Ստացվեց այնպես, որ սահմանային կոնֆլիկտի առիթով Քուրդստանի թուրքական և իրաքյան հատվածներում կենտրոնացված զինված ուժերը օգտագործվեցին մի կողմից Թուրքիայում շեյխ Սաիդի ապստամբության հետևորդների հետ հաշվեհարդար տեսնելու, մյուս կողմից Իրաքում Մահմուդ Բարզինջանի դիմադրությունը վերջնականապես ընկճելու համար։

1926 թ. սկզբներից ազատագրական շարժումը Հարավային Քուրդստանում առժամանակ նահանջի մի շրջան ապրեց։ Չնայած դրան, անգլիական իմպերիալիզմը դարձյալ առերեվույթ հանդես էր գալիս որպես քրդական ազգաբնակչության «պահանջները հաշվի առնելու կողմնակից»։ Իրաքի մինիստրների խորհուրդը, գերագույն կոմիսարի պահանջով, պաշտոնական մի հայտարարություն արեց, ըստ որի «քրդական լեզուն պետք է քաջալերվեր քրդաբնակ շրջանների

264 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 2, ед. хр. 5, л. 14.

265 Նույն տեղում։

266 «Ցառաջ», Փարիզ, 25/IX 1925։

267 Նույն տեղում։

268 Lord Birdwood, Nuri as Said, London, 1959, p. 141.

դպրոցների և պետական հիմնարկությունների մեջ։ Քրդական շրջաններում պետք է նշանակվեին քուրդ պաշտոնյաներ»[269]։ Միաժամանակ անգլիական իշխանությունները սկսեցին բանակցությունների մեջ մտնել արդեն շատ քիչ ուժ ունեցող շեյխ Մահմուդի հետ[270]։ Այս ձևով անգլիական կառավարությունը նախադրյալներ էր պատրաստում Ազգերի լիգայի կողմից իրեն ձեռնտու որոշում ընդունելու համար։

1926 թ. մարտի 11-ին Ազգերի լիգայի խորհուրդը որոշեց վերջնականապես հաստատել այսպես կոչված «Բրյուսելյան գիծը», որը դարձավ Մոսուլի և Թուրքիայի սահմանը[271]։ Ինչպես Լոզանի կոնֆերանսում, որտեղ «Քերզոնը ըստ էության գործարք կնքեց Թուրքերի հետ ի հաշիվ քրդերի»[272], այստեղ ևս անգլիական պատվիրակությունը «չմոռացավ քրդերին»։ Լիգայի խորհուրդը միաժամանակ մի որոշում ընդունեց, որի մեջ նշված էր, թե «Իրաքին անցնող քրդական շրջանների վերաբերյալ հարցը հանձնվում է մանդատների գծով մշտական հանձնաժողովի տնօրինությանը»[273]։ Սա, իհարկե, դատարկ մի հայտարարություն էր։

Միապետական Իրաքի կազմի մեջ Մոսուլի վիլայեթի մտցնելը բրիտանական իմպերիալիզմի «քրդական քաղաքականության» վերջնակետն էր։ Այդ կետը կատարվեց ի ոտնահարումն քուրդ ժողովրդի ազգային իրավունքների։ Բնական է, որ Քուրդստանի նոր անդամահատումը ծանրացրեց քուրդ ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակը, իսկ ազգային անկախության պայքարի ճանապարհին ստեղծվեցին նոր դժվարություններ։ «Մոսուլի վիլայեթի խնդիրը այսպիսով լուծվեց... քուրդ ժողովրդի ցանկությանը հակառակ»[274]։ «Այս կցումի պատճառները ակնհայտ են,—գրում է Սերժ Գանտերը։ —Մոսուլի շրջանը նավթով հարուստ է, և Անգլիան տեսավ, որ

---

269 «Ճառագ», 5/II 1926։

270 էջ 78 ص ٧٨ ، القضية الكردية ، محمد الدرة

271 Նույն տեղում։

272 „Thn Economist", 11/V 1946, p. 21.

273 «Заря Востока», 9/IV 1926.

274 S. Ganter, Le mouvement national Kurde, p. 47.

վերջ ի վերջո իր նավթային շահերը ավելի լավ ապահովված կլինեն, եթե Մոսուլը կապված լինի Հաշիմյան ընտանիքի կողմից ղեկավարվող մի պետության հետ, որովհետև շեյխ Մահմուդը ցույց էր տվել իր անհնազանդությունը»[275]։

Անգլիական խնամակալության տակ գտնվող Իրաքը պետք է «երախտապարտ լիներ» առաջինին Մոսուլի վիլայեթը իրեն միացնելու համար, և իսկապես անգլիական իմպերիալիզմը որոշ չափով ամրապնդեց իր դիրքերը Իրաքում։ Սակայն նա ձեռքից բաց չթողեց Իրաքի գործերին միջամտելու և կառավարության վրա ճնշում գործադրելու մի գործոնևս։ Քրդերը, անգլիական դիվանագետների ենթադրությամբ, Իրաքի միապետական ռեժիմի և արաբական ռեակցիոն շովինիստական շրջանների ասիմիլյատորական քաղաքականության պայմաններում հարկադրված պետք է հանձին անգլիացիների տեսնեին իրենց «շահերի պաշտպաններին», իսկ Իրաքի արաբական կառավարությունը շարունակ ահաբեկման էր ենթարկվելու «քրդական վտանգով»։ Անգլիական իմպերիալիզմի այդ խարդախ ու երկերեսանի քաղաքականության մասին Անգլիայի առաջադեմ պատմաբան Մայքլ Բրուքսը գրում է· «...կայսերական դիվանագետները չէին մտածում բնակչությանը ինքնավարություն տալու այնպիսի կարևոր շրջանում, ինչպիսին Մոսուլն է (Հարավային Քուրդստանը— Շ. Մ.)։ Սակայն այդ գաղափարը Իրաքի կենտրոնական կառավարությանը պետք է ստիպեր մտածելու»[276]։ Ազգերի լիգայի նոր որոշումը ոչ մի փոփոխություն չմտցրեց իրերի դրության մեջ։ Նա ըստ էության օրինականացրեց այն քայլերը, որոնք փաստորեն արդեն կատարված էին անգլիական իմպերիալիզմի կողմից։ Բնորոշ է, որ չնայած Թուրքիայի հետ ունեցած հակամարտություններին, անգլիական իմպերիալիզմը Լոզանի կոնֆերանսից հետո «երկրորդ գործարքը» կնքեց քրդական ազատագրական շարժումների դեմ։ «Անգլո-Թուրքական անդրկուլիսյան բանակցությունների ընթացքում

275 Նույն տեղում։

276 Майкл Брукс, Нефть и внешняя политика, М., 1949, стр. 101.

ընդհանուր համաձայնություն ձեռք բերվեց քրդական շարժումների վտանգը վերացնելու հարցում»։ Այս իմաստով խիստ բնորոշ է հետևյալ փաստը։ 1926 թ. ապրիլին Լոնդոնից մեկնելուց առաջ Իրաքում անգլիական գերագույն կոմիսար Հենրի Դոբսը Իրաքի քրդերի ապագայի վերաբերյալ հարցին պատասխանելիս ուղղակի հայտարարեց. «Ոչ մի խոսք չկա և չի կարող լինել քրդական անկախության մասին»[277]։ «Թուրքիան,—այնուհետև հայտարարեց Դոբսը,—կարող է լիովին վստահ լինել, որ չնայած Ազգերի լիգան խորհուրդ է տվել հաշվի առնել Իրաքի քրդերի ազգային և այլ առանձնահատկությունները, քրդական անկախության վերաբերյալ հարցը երբեք հանդես չի գալու»[278]։ Անգլիական իմպերիալիզմի գաղութային քաղաքականության ջատագովի հայտարարությունը իր սեփական կարծիքը չէր միայն։ Նա լիովին արտահայտում էր բրիտանական կառավարության դիրքորոշումը քրդական հարցում։

1919—1925 թթ. ընթացքում Հարավային Քուրդստանում տեղի ունեցած ազատագրական շարժումը, այսպիսով, պարտություն կրեց։ Այդ պայքարի անհաջող վախճանը պայմանավորված էր ներքին և արտաքին հետևյալ հիմնական պատճառներով։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո տեղի ունեցավ քուրդ ժողովրդի ազգային ինքնագիտակցության որոշակի զարգացում։ Քուրդստանի բոլոր հատվածներում հանդես էին գալիս ուժեր, որոնք իրենց առջև խնդիր էին դնում հասնել քրդերի ազգային ինքնուրույնության իրավունքների նվաճմանը։ Այդ պայքարի առավել ակտիվ շրջանը Հարավային Քուրդստանն էր։ Սակայն պայքարի ղեկը ֆեոդալական վերնախավի ձեռքում էր, որը հետևողականություն հանդես չէր կարող բերել ազգային անկախության համար մղվող պայքարում։ Բանվոր դասակարգը խիստ սակավաթիվ էր և ինքնուրույն ուժ չէր ներկայացնում։ Չկար քաղաքական որևէ կազմակերպություն, որը ապահովեր շարժման ղեկա-

277 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 4, ед. хр. 2, л. 2; «Заря Востока», 9/IV 1926.

278 Նույն տեղում։

վարությունը։ Նրա հիմնական ուժը՝ գյուղացիությունը, գտնըվում էր ոչ միայն ֆեոդալական դասակարգի տնտեսական, այլև քաղաքական խիստ ազդեցության տակ։ Ահա թե ինչու նրա պայքարը ազգային շարժման չվերածվեց։ Շարժումը ղեկավարող վերնախավի ներկայացուցիչների միջև միասնություն չկար։ Ավելին, նրանք, հաճախ պայքարելով միմյանց դեմ, մեծապես թուլացնում էին ազատագրական շարժման թափը։ Բաբաքր աղայի, Ադիլա խանումի, Խուրշուդ աղայի և նմանների թշնամանքը շեյխ Մահմուդի նկատմամբ մեծապես վնասեց անգլիական իմպերիալիստների և իրաքյան միապետական ռեժիմի դեմ Քուրդստանի լայն հասարակայնության ընդհանուր ճակատ ստեղծելու գործին։ Նույնիսկ Սուլեյմանիեի ինքնավար կառավարության նախկին ղեկավար, Մահմուդի եղբայր շեյխ Կադերը այն ժամանակ, երբ Քուրդստանում սահմանադիր ժողովի ընտրություններին բոյկոտ էր հայտարարված և շարունակվում էր պայքարը ինքնավարության համար, համաձայնվել էր իր թեկնածությունը առաջադրել դեպուտատության համար[279]։ Էդմոնդսը հետևյալ բնորոշ գնահատականն է տվել շեյխ Կադերի դեպուտատ ընտրվելուն. «Նրա ընտրվելը բավական էր ապացուցելու համար, որ ըմբոստ «թագավորը» (շեյխ Մահմուդը—Շ. Մ.) իրականում քրդական կարծիքը չի ներկայացնում»[280]։

Քրդական ազգային շարժման հաջողության ճանապարհին մեծ խոչընդոտ էր Քուրդստանի մասնատվածությունը։ Ճիշտ է, «Քուրդստանի տարբեր մասերում տեղի ունեցած ազգային շարժումները մշտապես կապված են եղել և կրել են փոխադարձ ազդեցություններ»[281], սակայն այդքանը միայն։ Հարավային Քուրդստանում սկսված ազգային-ազատագրական պայքարը հնարավորություն չստացավ տարածվել կամ լայն օգնություն ստանալ մասնատված Քուրդստանի մյուս մասերից։ Իսկ Քուրդստանը մասնատած տերությունները, չնայած իրենց մի շարք հակասություններին, հանդես

279 D. Kinnane, The Kurds..., p. 39.
280 J. Edmonds, Kurds..., p. 366.
281 S. Ganter, Le mouvement national Kurde, p. 54.

էին բերում ընդհանուր շահագրգռվածություն քրդական ազատագրական շարժումները ճնշելու գործում և հասան շարժման պարտությանը։ «Կարելի էր կարծել,—այդ առթիվ դիպուկ գրում է Գավանը,—որ քրդերը գոնե իրենց թշնամիներից որևէ բան կսովորեն և կմիավորեն իրենց ուժերը։ Դժբախտաբար այդ բանը տեղի չունեցավ...»[282]։

Ոչ քիչ նշանակություն ունեցավ քրդական ազատագրական շարժման և արաբ ժողովուրդների հակաիմպերիալիստական պայքարի միջև կապի բացակայությունը։ Արաբական շարժման ղեկավարությունը, որն իսպառ մերժում էր քրդերի ազգային իրավունքների ճանաչման անհրաժեշտությունը, և քուրդ ազգայնականների ազգային սահմանափակվածությունը, անշուշտ, բացասական հետևանքներ թողեցին անգլիական իմպերիալիզմի դեմ 1919—1925 թթ. Իրաքի ժողովրդի մղած պայքարի ելքի վրա։

Քրդական ազատագրական պայքարի մասնակիցները զենքի, ռազմամթերքի, պարենի և այլ նյութերի խիստ կարիք էին զգում, մինչդեռ նրանց դեմ կռվում էր անգլո-իրաքյան անհամեմատ գերակշիռ և լավ զինված զորքը, անգլիական ռազմական ավիացիան։ «Ինչպես նախկին ապստամբության ժամանակ,—գրում է Համիլտոնը,—քրդական այս պայքարը պարտության մատնվեց ոչ թե հարավային կառավարության (այսինքն՝ իրաքյան կառավարության—Շ. Մ.) զորքերի, այլ բրիտանական օդային ուժերի կողմից»[283]։ Իրաքի կառավարությունը «մշտապես կարող էր ստանալ բրիտանական օդային ուժերի օգնությունը, եթե դրա կարիքը կար»[284]։

Քրդական ազատագրական շարժումը արտահայտում էր Քուրդստանի ամենալայն խավերի շահերը և արժանանում նրանց աջակցությանը։ Իր զարգացման տարբեր էտապներում քրդական ազատագրական պայքարի նկատմամբ շահագրգռված այս կամ այն տերությունը տակտիկական նկատառումներով վարել է «սիրաշահելու» քաղաքականություն, որը,

282 S. Gavan, Kurdistan..., p. 37.
283 A. Hamilton. Roud through Kurdistan..., p. 237.
284 L. Birdwood, Nuri as Said, p. 142.

սակայն, ամենևին չի կարող նսեմացնել ո՛չ շարժման նշանակությունը, ո՛չ էլ նրա ղեկավար շեյխ Մահմուդի անվիճելի մեծ երախտիքը։ Թեև դժվար է մատնացույց անել շեյխ Մահմուդի գլխավորած շարժմանը Թուրքիայի կամ անգլիական կառավարությունների կողմից ցույց տրված օգնությունը (ի բացառություն խոստումների), այսուհանդերձ, այս առընչությամբ տեղին ենք համարում կատարել հետևյալ մեջբերումը ֆրանսիացի արևելագետ Սերժ Գանտերի՝ քրդական ազգային դաղափարների զարգացման պատմությանը նվիրված ուշագրավ աշխատությունից։ Նա գրում է. «Այն աջակցությունը, որ ազգային որևէ շարժում կամ հեղափոխություն ստանում է օտար մի պետությունից, չի կարող ելակետ հանդիսանալ տվյալ ազգային շարժման կամ հեղափոխության պատճառների մեկնաբանման համար։ Օտարերկրյա աջակցությունը շարժման մեջ է դնում արդեն գոյություն ունեցող ուժերը, բայց դրանք չի ստեղծում»[285]։ Նույնիսկ է. Բեատրիսը «Իրաքի Ֆեյսալ թագավորը» ստվարածավալ աշխատության մեջ, որտեղ անվերապահորեն պաշտպանության տակ է առնվում անգլիական իմպերիալիզմի գաղութային քաղաքականությունը և մեծարվում Ֆեյսալ առաջին թագավորը, հարկադրված է ընդունել, որ չնայած «ազգային անկախության հասնելու քրդերի ձգտումները վերագրվում էին խռովարարներին, իրականում դրանք առաջ էին գալիս ազատություն ձեռք բերելու այն տենչանքից, որի համար իրենք՝ արաբները մտորում, պայքարում և տանջահար էին լինում մի շարք տարիներ...»[286]։

Չնայած պարտությանը 1919—1925 թթ. քրդական ազատագրական շարժումները խոշոր նշանակություն ունեցան քուրդ ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրացման գործում։ Նրանք պատմական մեծ դաս էին քուրդ ժողովրդի ամենալայն զանգվածների համար և ցույց տվեցին արաբների ու քրդերի պայքարի միջև սերտ կապ

285 S. Ganter, Le mouvement national Kurde, p. 70.
286 E. Beatrice, King Faisol of Iraq, p. 140.

ստեղծելու հրամայական անհրաժեշտությունը, որպես իմպերիալիզմի և ներքին ռեակցիայի դեմ մղվող պայքարի հաջողության հիմնական նախապայմանի։ Եվ ահա «չնայած ուժեղ կերպով արտահայտված ազգային, կրոնական ու ցեղային տարբերություններին, այսուհանդերձ երևան եկան տարբեր ազգությունների, դավանանքների ու ցեղային միավորումների ժողովրդական զանգվածների մերձեցման տենդենցներ։ Այդ էին վկայում երկրի արաբ և քուրդ ազգաբնակչության միաժամանակյա և փոխադարձաբար միմյանց վրա ազդեցություն գործող ելույթների փաստերը»[287]։

Քուրդ ժողովրդի ազատագրական պայքարի ղեկավար, Մեհաբադի քրդական հանրապետության պրեզիդենտ Ղազի Մուհամեդը իր ելույթներից մեկում նշել է. «Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից և առաջին սոցիալիստական պետության ստեղծումից հետո քուրդ ժողովրդի պայքարի մեջ տեղի ունեցան արմատական փոփոխություններ։ Հոկտեմբերյան հեղափոխության արշալույսը լուսավորեց քուրդստանյան երկնակամարը։ Իմպերիալիզմը մշտապես աշխատեց մեր ժողովրդին հեռու պահել այդ արշալույսից, սակայն նա մեզանից ոչինչ չստացավ...»[288]։

Նույնիսկ իր կողմից գլխավորած շարժման պարտությունից հետո շեյխ Մահմուդը խորապես համոզված էր, որ իր ժողովրդի ազատագրական գործում մեծ երախտիք կարող է ունենալ Սովետական Միությունը։ Այս առնչությամբ ուշագրավ է Ղազի Մուհամեդին ուղղված նրա հետևյալ նամակը. «Ես նախանձում եմ Ձեզ և մեծապես ուրախ եմ, որ Դուք երջանիկ գտնվեցիք և մերձեցաք հարազատ Սովետական Միության հետ։ Իմ եղբայր քրդեր, արյունակիցներ, նախազգուշացնում և աղերսում եմ Ձեզ, ոչ մեկին մի՛ք հավատա, բացի Սովետական իշխանությունից, չհավատաք այլևս քաղցր խոստումներին, ինչպես նաև Սովետական Միության հասցեին արվող տարբեր պրովոկացիաներին։ Ամուր կապ պահպանե-

287 Л. Котлов, Нац.-осв. восстание..., стр. 193.

288 8 IV 1960. خەبات

ցեք Սովետական իշխանության հետ, քանզի նա է միայն հանդիսանում հենարանը և ազատարարը բոլոր ժողովուրդների»[289]։

* * *

Ռուսաստանում լենինիզմի գաղափարների հաղթանակը բարերար մեծ ազդեցություն թողեց Արևելքի ժողովուրդների ազգային ինքնագիտակցության զարգացման վրա։ Նա Արևելքի բոլոր ժողովուրդներին, այդ թվում և քուրդ ժողովրդին ոգեշնչեց իր արդար ազատագրական պայքարում ընդդեմ իմպերիալիզմի և ռեակցիայի, հանուն ինքնորոշման իրավունքի, երջանիկ և դեմոկրատական կյանքի։ Նա ոչ միայն մեծ հարված հասցրեց համաշխարհային իմպերիալիզմին, այլև իր բոցով լուսավորեց Արևելքի ժողովուրդների հեղափոխական պայքարի ուղին, որոնք առաջին անգամ ի դեմս Սովետական Միության գտան իրենց անշահախնդիր բարեկամին և օգնականին։ Ռուսաստանում հաղթանակած «հոկտեմբերի գաղափարները և ազգային հարցի լուծման լենինյան սկզբունքները լայն արձագանք էին գտնում քրդական ժողովրդական լայն զանգվածների մեջ»[290]։ Պատահական չէր, որ իրանական Քուրդստանում գտնվող ռուս հեղափոխական զինվորները մեծաթիվ գաղափարակիցներ էին գտնում տեղի ազգաբնակչության մեջ։ Քերմանշահ քաղաքում ստեղծվեց միացյալ մի կոմիտե, որի մեջ մտան բանկային դեպուտատները և տեղի հեղափոխական ուժերը[291]։

Քրդական դեմոկրատական կուսակցության «Խաբաթ» («Պայքար») թերթը «Հոկտեմբերյան հեղափոխությունը և քուրդ ժողովուրդը» խմբագրական հոդվածում գրում էր. «Քուրդ ժողովուրդը առաջին համաշխարհային պատերազմից դուրս եկավ վիրավոր և ընկավ անգլիական իմպերիալիզմի թաթի տակ. ինչպես Արևելքի մյուս ժողովուրդները նա ևս

---

289 Партархив Азербайджанской ССР, оп. 4, л. 160 (մեջբերումը, М. Кемаль, Нац. осв. движение в Иракском Курдистане, стр. 154).

290 7.XI 1960, خەبات

291 A. R. Ghassemlou, Kurdistan and Kurds, p. 45.

ոտքի կանգնեց՝ պահանջելով իր ազգային արդար իրավունքները։ Այդ պայքարում նա իր հայացքը հառել էր Սովետական Միությանը՝ ճնշված ժողովուրդների ազատության ջահակիրին, այն պետությանը, որ չեղյալ հայտարարեց ու մերկացրեց ռազմական դաշինքները և դատապարտեց օկուպացիան...»[292]։

Սակայն Հոկտեմբերյան հեղափոխության նշանակությունը չի սահմանափակվում սոսկ քուրդ ժողովրդի տվյալ ժամանակաշրջանի ազատագրական պայքարի վրա ունեցած ազդեցությամբ։ Նրա բարերար ազդեցության տակ Իրանում, Թուրքիայում և Իրաքում բանվոր դասակարգը և աշխատավորության հեղափոխական տարրերը շուտով կազմակերպեցին իրենց մարքսիստական կուսակցությունները, որոնք առաջին անգամ հստակ կերպով հայտնեցին քուրդ ժողովրդի ազգային ինքնորոշման իրավունքների պաշտպանության իրենց վճռականությունը։ Քուրդ ժողովրդի ինքնորոշման իրավունքը հետևողականորեն պաշտպանվում է Իրաքի կոմունիստների կողմից։ Իրաքի կոմունիստական կուսակցության 1956 թ. ընդունած որոշումներից մեկում ասված է. «Արաբ ժողովրդի կողմից բնակեցված տերիտորիան Իրաքում արաբիզմի ընդհանուր տերիտորիայի մի մասն է... Իրաքը կազմում է արաբական պետությունների ընտանիքի էական մասը...

Սակայն իմպերիալիզմի կողմից ստեղծված աշխարհագրական սահմաններով Իրաքն իր մեջ ներառնում է նաև Քուրդիստանի մի մասը։ Դրա համար էլ Իրաքը կազմված է էթնիկական երկու հիմնական խմբերից՝ արաբներից և քրդերից... Քրդերը կազմում են մեկ ազգ, որը պատմականորեն հաստատված է ընդհանուր մի տերիտորիայի վրա, չնայած իմպերիալիստների կողմից նրա մասնատմանը... նա ունի ընդհանուր լեզու և անհրաժեշտ հիմք միատարր ազգային տնտեսություն ունենալու, ազատություն ստանալու և ազգային անկախ գոյության համար»[293]։

---

292 7. IX. 1960, خەبات

293 „Orient", № 32—33, 1964—1965, p. 54.

Ազգային ինքնավարության համար պայքարը Հարավային Քուրդստանում ընդհատումներով շարունակվում է առ այսօր։ Այդ պայքարը արժանանում է Սովետական Միության և սոցիալիստական երկրների ջերմ պաշտպանությանը։ Ահա թե ինչու ազգային իրավունքներ ձեռք բերելու համար պայքարող քուրդ ժողովուրդը լենինիզմի գաղափարների հետագա հաջողություններն ու ամրապնդումը համարում է իր ազգային պայքարի հաղթական վախճանի հիմնական գրավականներից մեկը։

Հ. Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐՔԵՐԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Դեռևս համաշխարհային կոմունիստական շարժման արշալույսին պրոլետարիատի մեծ առաջնորդներ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը, պատմական կոնկրետ պայմաններում ուսումնասիրելով ազգային-ազատագրական շարժումները, հիմնավորեցին դրանց ստրատեգիական ու տակտիկական սկզբունքները և ցույց տվեցին համաշխարհային հեղափոխական շարժման տարբեր հոսանքների օրգանական միասնությունը։ Պատմական զարգացման այն ժամանակաշրջանում, երբ բուրժուական հասարակության դասակարգային հակասությունները այնքան սուր չէին, ինչպես մեր օրերում, երբ պրոլետարական և ազգային-ազատագրական շարժումները դեռևս համաշխարհային բնույթ չէին կրում, նրանք հանճարեղ խորաթափանցությամբ կարողացան տեսնել համաշխարհային հեղափոխական շարժման հիմնական ջոկատները և նշել այդ շարժման զարգացման մայրուղիները։ Գիտական կոմունիզմի հիմնադիրների առաջ քաշած այն դրույթը, որ ազատ չի կարող լինել այն ժողովուրդը, որը ճնշում է ուրիշ ժողովուրդների, դարձավ ազգային-ազատագրական պայքարի հիմնական մեկնակետերից մեկը։

Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի գործի մեծ շարունակող, Սովետական Միության կոմունիստական կուսակցության և աշխարհում առաջին սոցիալիստական պետության ստեղծող, ամբողջ աշխարհի աշխատավորների ու ճնշված ժողովուրդների առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Լենինը ապրել, պայքարել և

ստեղծագործել է այնպիսի դարաշրջանում, երբ կապիտալիստական երկրներում հասունացել էին օբյեկտիվ նախադրյալները սոցիալիստական հեղափոխության համար, իսկ կախյալ երկրներում ու գաղութներում, որտեղ ապրում էր երկրագնդի բնակչության մեծագույն մասը, սկսվում էր ազգային-ազատագրական պայքարը իմպերիալիզմի դեմ։

Վ. Ի. Լենինը հասարակական զարգացման պատմական օրինաչափությունների հիման վրա մշակեց հեղափոխական մի կուռ տեսություն, որի բոլոր հարցերն էլ մեծագույն նշանակություն են ունեցել և այժմ էլ ունեն Արևելքի ժողովուրդների համար, որոնք պայքարում են հանուն ազգային անկախության և սոցիալական առաջադիմության։ Նա ստեղծեց ազգային-գաղութային հարցի տեսությունը և գաղութների ու կախյալ երկրների ազգային-ազատագրական հեղափոխությունների ուսմունքը։

Իր հեղափոխական գործունեության սկզբից մինչև վերջը Վ. Ի. Լենինը զբաղվել է գաղութների և կախյալ երկրների ճնշված ժողովուրդների կյանքի ու ազատագրական պայքարի հետ կապված հարցերով։ Հենվելով մարքսիզմի հիմնական դրույթների վրա, նա բացահայտեց իմպերիալիզմի զարգացման հիմնական օրինաչափությունները և տվեց բոլոր այն կարևոր պրոբլեմների գիտական վերլուծությունը, որոնք կապված են գաղութների ու կախյալ երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման հետ։

XIX դարի վերջին—XX դարի սկզբին սկսվում է Արևելքի, այդ թվում նաև Օսմանյան կայսրության ժողովուրդների քիչ թե շատ կազմակերպված պայքարը գաղութարարների դեմ։ Մի շարք երկրներում ծնունդ առած բուրժուական ազգային-ազատագրական շարժումների ներկայացուցիչները առաջադրում էին առաջադիմական ծրագրեր և ազատագրական պայքարի լոզունգներ, որոնց մեջ, սակայն, խիստ զգացվում էին պատմական կոնկրետ պայմաններից կտրված, զուտ ուտոպիական բնույթի դրույթները։ Այդ հանգամանքը իր արտահայտությունը գտավ XX դարի սկզբի ասիական հեղափոխու-

թյունների և ազատագրական շարժումների ընթացքի ու հետևանքների մեջ։ Այդ հեղափոխությունների ու շարժումների փորձը ցույց տվեց, որ բուրժուազիան չի կարող լինել ժողովրդական մասսաների հետևողական ղեկավարը, որ նա ընդունակ չէ մինչև վերջը հասցնելու ազգային անկախության և ֆեոդալական ճնշման վերացման համար մղվող պայքարը։

Կապիտալիզմի զարգացման մոնոպոլիստական ստադիայում ուժեղանում է իմպերիալիստական տերությունների՝ նոր գաղութներ նվաճելու ձգտումը։ Դրա հետևանքով Արևելքի բազմաթիվ երկրներ, կորցնելով իրենց քաղաքական անկախությունը, վերածվում են գաղութների։ Այդ երկրների կողքին մի շարք երկրներ էլ, ինչպես, օրինակ, Չինաստանը, Թուրքիան, Իրանը, ձևականորեն պահպանելով իրենց քաղաքական անկախությունը, իմպերիալիզմի դարաշրջանում դառնում են կիսագաղութներ։ Առաջին համաշխարհային պատերազմի շրջանում, բնութագրելով Պարսկաստանում, Չինաստանում և Թուրքիայում տիրող դրությունը, Վ. Ի. Լենինը նշում էր, որ «այդ երկրներից առաջինը համարյա-համբողջապես արդեն գաղութ է դարձել, իսկ երկրորդը և երրորդը դառնում են»[1]։

Վ. Ի. Լենինի բազմաթիվ խորաթափանց կանխատեսումների լույսի տակ հետաքրքրությունից զուրկ չէ այն փաստը, որ ասիական առաջին հեղափոխությունները, որոնք իրենցով նշանավորեցին «Ասիայի զարթոնքը», տեղի ունեցան հենց կիսագաղութային երկրներում։ Բայց Չինաստանում, Թուրքիայում և Պարսկաստանում ազատագրական պայքարը գլխավորող բուրժուական հեղափոխականները պարզ չէին պատկերացնում, որ հենց օտարերկրյա իմպերիալիզմն է ֆեոդալական ռեակցիայի հենարանը իրենց երկրներում։ Թուրքիայում «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխները նույնիսկ առաջ չէին քաշում հակաիմպերիալիստական խնդիրներ։ Թուրքական բուրժուական

---

1 Վ. Ի. Լենին, Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա, Երկեր, հատ. 22, էջ 341։

գործիչները չէին հասկանում հետևողական հակաիմպերիալիստական պայքարի անհրաժեշտությունը և, ինչպես իրավացիորեն նշում է սովետական արևելագիտ-պատմաբան Ա. Ն. Խեյֆեցը, բոլորովին էլ պատահական չէ, որ դրանց մեծ մասը՝ 1908 թվականի հեղափոխական իրադարձություններում աչքի ընկնող դեր կատարելով հանդերձ, հեղափոխությունից արդեն մի քանի տարի հետո ըստ էության դարձան գերմանական իմպերիալիզմի գործակալներ[2]։ Երիտասարդ Թուրքերի ծրագրի «հեղափոխական» բնույթի մասին պատկերացում կազմելու համար բավական է նշել թեկուզ այն փաստը, որ նրանք միապետությունը վերացնելու պահանջն անգամ առաջ չէին քաշել։ Թուրքիան նրանք չէին պատկերացնում առանց միապետ սուլթանի։ Իսկ տվյալ հեղափոխության մեջ նրանք ցանկանում էին միայն բռնակալ սուլթան Աբդուլ Համիդի փոխարեն օսմանյան գահին նստացնել ավելի հնազանդ և իրենց կամքը կատարելու պատրաստ սուլթանի։

Ինչպես հայտնի է, Թուրքիան Արևելքի այն երկրներից մեկն է, որը շատ շուտ է կորցրել իր տնտեսական անկախությունը։ Այդ բանին մեծապես նպաստել է այսպես կոչված կապիտուլյացիաների սիստեմը Թուրքիայում, որը գոյություն է ունեցել երկու հարյուրամյակ և խիստ սահմանափակել պետության գործունեությունը՝ տնտեսական բնագավառում։ XIX դարի վերջերին եվրոպական իմպերիալիստական տերությունների հարկադրանքով Թուրքիայում ստեղծվել էր այսպես կոչված «օսմանյան պարտքի» վարչությունը, որը յուրահատուկ կառավարություն էր կառավարության մեջ։ XX դարի սկզբին, նշելով Օսմանյան կայսրության կախումը աշխարհի զարգացած երկրներից, Վ. Ի. Լենինը մատնանշում էր, որ նա խճճված է ստրկացուցիչ համաձայնագրերով ու փոխառություններով, որոնք օտարերկրյա վարկատուներին հնարավորություն են տալիս «իրենց հսկողությունը սահմանելու

2 Տե՛ս А. Н. Хейфец, Ленин—великий друг народов Востока. М., 1960 стр. 17.

այն գույքը տնօրինելու վրա, որը պետք է ապահովի նրանց փոխ տված դրամների վերադարձը»[3]։ Թուրքիայի կիսագաղութային վիճակը, գրում էր Վ. Ի. Լենինը մի այլ տեղ, նրա ժողովրդին դատապարտում էր ծանր տանջանքների ու տառապանքների։ Իմպերիալիզմի պայմաններում Թուրքիային սպասում է «տևական, տանջալից անկում և քայքայում, տանջալից մանավանդ ժողովրդի բոլոր աշխատավոր և շահագործվող մասսաների համար»[4]։

Առանձնապես ծանր էր Օսմանյան կայսրության կազմի մեջ մտնող ոչ թուրք ժողովուրդների վիճակը։ Հունաստանը և Բուլղարիան, որտեղ կապիտալիզմի զարգացումը ընթանում էր ավելի արագ, բազմիցս պայքարի են ելել իրենց ազգային անկախության համար։ Ուժեղ շարժում էր նկատվում նաև մյուս ժողովուրդների, առանձնապես հայերի մեջ։ «Բրոնապետական Թուրքիայի»[5] դեմ ուղղված այդ շարժումները գլխավորում էր ազգային բուրժուազիան։ Վ. Ի. Լենինը տվել է այդ շարժումների ճիշտ բնութագիրը, նշել դրանց առաջադիմական նշանակությունը։ Նա գրել է. «Ոչ միայն 1855, 1859, 1864, 1866, 1870 թվականների, այլև 1877 թվականի (ռուս-թուրքական) և 1896—1897 թվականների պատերազմների (Հունաստանի դեմ Թուրքիայի պատերազմի և հայկական հուզումների) ժամանակ պատմական երևույթների հիմնական օբյեկտիվ բովանդակությունն են եղել ազգային-բուրժուական շարժումները կամ ֆեոդալիզմի տարբեր ձևերից ազատագրվող բուրժուական հասարակության «ջղաձգումները»»[6]։

Ինչպես Արևելքի բոլոր երկրներում, այնպես էլ Թուրքիայում, ազգային-ազատագրական շարժման խնդիրներն ու նրա բովանդակությունը մեծապես կախված են եղել այդ երկրներում տիրող սոցիալ-տնտեսական հարաբերություններ-

---

3 Վ. Ի. Լենին, Պետական ելևմտացույցի առթիվ, Երկեր, հատ. 5, էջ 440։

4 Վ. Ի. Լենին, Պրոլետարիատի պայքարը և բուրժուազիայի ստորաքարշությունը, Երկեր, հատ. 8, էջ 696։

5 Վ. Ի. Լենին, Մարտնչող մատերիալիզմը, Երկեր, հատ. 15, էջ 232։

6 Վ. Ի. Լենին, Ուրիշի դրոշակի տակ, Երկեր, հատ. 21, էջ 175։

րից։ Վ. Ի. Լենինը բազմիցս նշել է, որ XX դարի սկզբին ծավալված ազատագրական շարժումները կրել են հակաֆեոդալական, բուրժուա-դեմոկրատական բնույթ։ XX դարի առաջին տասնամյակում Արևելքի երկրներում ծավալված ազատագրական շարժումների ու բուրժուական հեղափոխությունների մեջ Վ. Ի. Լենինը տեսնում էր 1905 թվականի ռուսական առաջին հեղափոխության խոր ազդեցությունը։

1905 թվականի հեղափոխության մասին 1917 թվականին կարդացած զեկուցման մեջ նա նշել է. «Ռուսական հեղափոխությունը շարժում է առաջ բերել ամբողջ Ասիայում։ Հեղափոխությունները Թուրքիայում, Պարսկաստանում, Չինաստանում ապացուցում են, որ 1905 թվականի հուժկու ապստամբությունը խոր հետքեր է թողել և որ անջնջելի է նրա ազդեցությունը, որ արտահայտվում է հարյուր և հարյուր միլիոնավոր մարդկանց վերընթաց շարժման մեջ»[7]։

XX դարի սկզբի ազգային-ազատագրական շարժումների աշխուժացումը Արևելքի երկրներում և դրան հաջորդած բուրժուական հեղափոխությունները Վ. Ի. Լենինը դիտում էր որպես կապիտալիզմի զարգացման և դասակարգային պայքարի սրման անխուսափելի հետևանք։ «Համաշխարհային կապիտալիզմը և 1905 թվականի ռուսական շարժումը,— գրել է նա 1913 թվականին,—վերջնականապես արթնացրել են Ասիան։ Տրորված, միջնադարյան անշարժության մեջ վայրենացած բնակչության հարյուր միլիոններն արթնացել են նոր կյանքի և նոր պայքարի՝ հանուն մարդկային տարրական իրավունքների, հանուն դեմոկրատիայի»[8]։

Խոսելով Արևելքի երկրների հեղափոխությունների մասին, Վ. Ի. Լենինը մատնանշում է այն առաջադիմական ու հեղափոխիչ դերը, որ Արևելքի ժողովուրդների կյանքում կատարում են դրանք։ «Արևելյան Եվրոպայում և Ասիայում,— գրել է նա,—բուրժուա-դեմոկրատական հեղափոխություննե-

---

7 Վ. Ի. Լենին, Զեկուցում 1905 թվականի հեղափոխության մասին, Երկեր, հատ. 23, էջ 333։

8 Վ. Ի. Լենին, Ասիայի զարթոնքը, Երկեր, հատ. 19, էջ 84։

րի դարաշրջանը 1905 թվականին է միայն սկսվել։ Հեղափոխություններ Պարսկաստանում, Թուրքիայում, Չինաստանում, պատերազմներ Բալկաններում՝ ահա մեր «արևելքի» մեծ դարաշրջանի համաշխարհային իրադարձությունների շղթան։ Եվ իրադարձությունների այդ շղթայի մեջ միայն կույրը կարող է չտեսնել մի ամբողջ շարք բուրժուա-դեմոկրատական ազգային շարժումների արթնացում, ազգային-անկախ և ազգային-միասնական պետություններ ստեղծելու ձգտումներ»[9]։

Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների Համառուսաստանյան II համագումարում կարդացած զեկուցման մեջ Վ. Ի. Լենինը, վերստին անդրադառնալով 1905 թվականի հեղափոխության նշանակության հարցին և նշելով Արևելքի ժողովուրդների ակտիվ դերը համաշխարհային պատմության կերտման գործում, ասում էր. «Այդ մեծամասնությունը, որը մինչև այժմ պատմական պրոգրեսից բոլորովին դուրս էր կանգնած, որովհետև ինքնուրույն հեղափոխական ուժ ներկայացնել չէր կարող, մենք գիտենք, որ XX դարի սկզբին դադարեց այդպիսի պասսիվ դեր խաղալուց։ Մենք գիտենք, որ 1905 թվականին հետևեցին Թուրքիայի, Պարսկաստանի, Չինաստանի հեղափոխությունները»[10]։

Ուսումնասիրելով Արևելքի ժողովուրդների հասարակական մտքի զարգացման հետ կապված հարցերը, Վ. Ի. Լենինը վճռականորեն հանդես եկավ բուրժուական այն գիտնականների դեմ, որոնք բարբաջում էին արևելյան մտքի «հետամնացության», «կղզիացածության» ու «անշարժության» մասին։ Նա համոզիչ կերպով ցույց տվեց, որ 1905—1907 թթ. ռուսական առաջին հեղափոխությունը այնպես ալեկոծեց Արևելքի ժողովուրդներին, որ այդ երկրների պատմական զարգաց-

---

9 Վ. Ի. Լենին, Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին, Երկեր, հատ. 20, էջ 505—506։

10 Վ. Ի. Լենին, Զեկուցում Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների Համառուսաստանյան II համագումարում, Երկեր, հատ. 30, էջ 186։

մամբ ջախջախիչ հարված հասցվեց այդ անհիմն պնդումներին։

«Լ. Ն. Տոլստոյը և նրա դարաշրջանը» հոդվածում Վ. Ի. Լենինը գրում էր. «1905 թ. «արևելյան» անշարժության վախճանի սկիզբն էր»[11]։ Նա ցույց տվեց, որ կապիտալիզմի զարգացումն ու հեղափոխական շարժումը լուրջ ազդեցություն ունեցան իրենց ազգային ու սոցիալական ազատագրության համար պայքարի ելած Արևելքի ժողովուրդների գիտակցության վրա։ Դարավոր հետամնացությունը, գաղութային ծանր ճնշումը, արդյունաբերության ցածր մակարդակը և հատկապես պրոլետարիատի դասակարգային ինքնագիտակցության թույլ զարգացումը Արևելքի երկրներում նախադրյալներ ստեղծեցին, որ ազգային-ազատագրական շարժման գլուխ կանգնի ազգային բուրժուազիան։ Այդ բանը տեղի ունեցավ նաև Օսմանյան կայսրությունում, որտեղ երիտասարդ թուրքերի 1908 թվականի հեղափոխության մեջ ղեկավար դեր կատարեց ազգային բուրժուազիան։ Այս պատմական իրողությունը մատնանշելու հետ միաժամանակ Վ. Ի. Լենինը նախազգուշացնում էր, որ ազգային բուրժուազիայի հեղափոխական թափը սահմանափակված է նրա դասակարգային շահերով ու կոնկրետ պատմական պայմաններով, որ նա չի կարող լինել իր երկրի ազգային շահերի հետևողական պաշտպանը, որ հեղափոխության առաջին հաջողություններից հետո նա աշխատելու է բթացնել աշխատավորների հեղափոխական զգոնությունը և շեղել նրանց սոցիալական արմատական վերափոխումների համար մղվող ակտիվ պայքարից։

Արևելքի ժողովուրդների հեղափոխական շարժման հետևանքների համար կարևոր նշանակություն ունի երիտասարդ թուրքերի 1908 թվականի հեղափոխության իրադարձությունների խոր վերլուծությունը, որ Վ. Ի. Լենինը տվել է իր բազմաթիվ աշխատություններում։ Նա գտնում էր, որ թուրքական հեղափոխության հաջողությունը կարող էր մեծ ազ-

---

11 Վ. Ի. Լենին, Լ. Ն. Տոլստոյը և նրա դարաշրջանը, Երկեր, հատ. 17, էջ 42։

դեցություն գործել Արևելքի մյուս երկրների հեղափոխական շարժման վրա։ Դա «անխուսափելիորեն պետք է նշանակեր մի կողմից ավտոնոմիայի և իսկական դեմոկրատիայի ձգտման զարգացում բալկանյան բոլոր ժողովուրդների մեջ, մյուս կողմից՝ պարսկական հեղափոխության հաղթանակ, դեմոկրատական շարժման նոր խթան Ասիայում, ինքնուրույնության համար պայքարի ուժեղացում Հնդկաստանում...»[12]։

Երիտասարդ թուրքերի 1908 թվականի հեղափոխությունը կատարվեց գրեթե անարյուն։ 1908 թվականի հուլիսին, երբ սահմանադրության վերականգնման համար պայքարող երիտասարդ թուրքերի շարժումը ընդունեց սպառնալի բնույթ և վերածվեց զինված ապստամբության, թուրքական կառավարությունը զգաց, որ հետագա դիմադրությունը անօգուտ է, և հուլիսի 24-ի գիշերը սուլթան Աբդուլ Համիդ II-ը ստիպված եղավ ստորագրել իրադե (հրամանագիր) 1876 թվականի սահմանադրության վերականգնման և դեպուտատների պալատի ընտրությունների մասին։ Երիտասարդ թուրքերի շարժման նըման ելքը, որը, ֆրանսիացի սպա Ա. Սարրուի արտահայտությամբ, ժամանակակիցներին զարմացրեց «իր անակնկալությամբ և խաղաղ բնույթով»[13], կայսրության ժողովուրդների կողմից ընդունվեց մեծ խանդավառությամբ։ Հեղափոխությունը հռչակեց ազատության, հավասարության, եղբայրության և զուտ թուրքական սպեցիֆիկ արդարության լոզունգները։

Սակայն, հեղափոխության հետագա ընթացքի վրա խիստ բացասաբար ազդեց երիտասարդ թուրքերի «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության վարած քաղաքականությունը։ «Թուրքիայում հաղթանակեց հեղափոխական շարժումը զորքերի մեջ՝ երիտասարդ թուրքերի ղեկավարությամբ,—գրում է Վ. Ի. Լենինը։—Ճիշտ է, այդ հաղթանակը

---

12 Վ. Ի. Լենին, Իրադարձությունները Բալկաններում և Պարսկաստանում, Երկեր, հատ. 15, էջ 267։

13 Տե՛ս А. Ф. Миллер, 50-летие младотурецкой революции, М., 1958. стр. 36.

կեն հաղթություն է կամ նույնիսկ հաղթության մի փոքր մասն է, որովհետև թուրքական Նիկոլայ Երկրորդը առայժմ միայն խոստացել է վերականգնել թուրքական հռչակավոր սահմանադրությունը։ Սակայն այդպիսի կիսահաղթությունները հեղափոխություններում, հին իշխանության այդպիսի հարկադրական հապճեպ զիջումները ամենահաստատ գրավականն են բաղաքացիական պատերազմի նոր, անհամեմատ ավելի վճռական, ավելի սուր, ժողովրդական ավելի լայն մասսաներ գրավող իրադարձությունների»[14]։

Հայտնի է, որ Վ. Ի. Լենինը երիտասարդ թուրքերի հեղափոխությունը դասում էր «ոչ-պրոլետարական բնույթի» շարժումների շարքը[15]։ Եվ, իրոք, հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո նրա ղեկավարները վերցրին հեղափոխությունը կոծկելու, նրա հետագա զարգացումն ու խորացումը կասեցնելու կուրս, իրենց ձենքը ուղղելով նաև բանվորական շարժման դեմ։ Վ. Ի. Լենինը համոզիչ կերպով ցույց տվեց, որ երիտասարդ թուրքերի չափավորությունն ու վախկոտությունը հանգեցրին այն բանին, որ թուրքական հեղափոխությունը չլուծեց իր առջև դրված խնդիրները և մնաց որպես վերնախավային հեղափոխություն։ «Եթե օրինակի համար վերցնենք XX դարի հեղափոխությունները,—գրել է Վ. Ի. Լենինը,—ապա հարկ կլինի, իհարկե, պորտուգալական և թուրքական հեղափոխություններն էլ բուրժուական համարել։ Բայց նրանցից ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը «ժողովրդական» չեն, որովհետև ժողովրդի մասսան, նրա վիթխարի մեծամասնությունը ակտիվ, ինքնուրույնորեն իր սեփական տնտեսական ու քաղաքական պահանջներով նկատելի կերպով հանդես չի եկել այդ հեղափոխություններից և ոչ մեկի մեջ»[16]։

---

14 Վ. Ի. Լենին, Դյուրավառ նյութը համաշխարհային քաղաքականության մեջ, Երկեր, հատ. 15, էջ 216—217։

15 Տե՛ս В. И. Ленин, Тетради по империализму, М., 1939, стр. 637.

16 Վ. Ի. Լենին, Պետություն և հեղափոխություն, Երկեր, հատ. 25, էջ 537։

Դեռևս այն ժամանակ Վ. Ի. Լենինը հանճարեղ խորաթափանցությամբ կարողացել է նկատել երիտասարդ թուրքերի հեղափոխության թույլ կողմերն ու նրա անհետևողականությունը։ Թուրքական հեղափոխության այդպիսի ընթացքը լիովին բավարարում էր միջազգային ռեակցիային ի դեմս իմպերիալիստական տերությունների, որոնց ղեկավար շրջանները առանց թաքցնելու իրենց գոհունակությունն էին հայտնում հեղափոխության այդ վարընթաց զարգացումից։ Հեղափոխության ղեկավարները շափազանց շուտ մոռացության տվեցին իրենց իսկ հռչակած լոզունգները և հարձակման անցան ինչպես բանվոր դասակարգի, այնպես էլ ոչ-թուրք ժողովուրդների կենսական շահերի դեմ։ «Երիտասարդ թուրքերին գովում են չափավորության և զսպվածության համար,— գրել է Վ. Ի. Լենինը,—այսինքն՝ գովում են թուրքական հեղափոխությունը այն բանի համար, որ նա թույլ է, նրա համար, որ նա չի արթնացնում ժողովրդի ստորին խավերին, չի հարուցում մասսաների իսկական ինքնուրույնություն, նրա համար, որ այդ հեղափոխությունը թշնամի է Օսմանյան կայսրության մեջ սկսվող պրոլետարական պայքարին (ընդգծումը մերն է—Հ. Մ.) և միաժամանակ շարունակում են առաջվա նման կողոպտել Թուրքիան։ Գովում են նրա համար, որ հնարավոր է առաջվա նման կողոպտել թուրքական տիրապետությունները։ Գովում են երիտասարդ թուրքերին և շարունակում մի քաղաքականություն, որը ամենաակներև կերպով հանդիսանում է Թուրքիայի բաժանում»[17]։

1908 թվականի թուրքական հեղափոխության առանձնահատկությունների վերաբերյալ Վ. Ի. Լենինի արտահայտած խոր մտքերից բխում է այն կարևոր եզրակացությունը, որ ժողովրդական լայն մասսաների ակտիվ մասնակցությունը ազգային-ազատագրական շարժումներին վերջիններիս հաջողության վճռական պայմանն է։ Ընդսմին այդ եզրակացությունը կարևոր է ոչ միայն Թուրքիայի, այլև Ասիայի ու Աֆ-

17 Վ. Ի. Լենին, Իրադարձությունները Բալկաններում և Պարսկաստանում, Երկեր, հատ. 15, էջ 268—269։

ռիկայի մյուս երկրների ազգային-ազատագրական շարժումների համար։

Հայտնի է, որ XX դարի սկզբի ասիական հեղափոխություններից ոչ մեկը հաղթանակի չհասավ։ Հեղափոխական շարժումների ժամանակավոր պարտությունը վհատեցրեց Ասիայի երկրների բուրժուական հեղափոխությունների ղեկավար որոշ գործիչների։ Ազգային կուսակցություններում և կազմակերպություններում ամենուրեք ուժեղացավ լիբերալ-համաձայնողական, աջ տարրերի, իսկ Թուրքիայում՝ ազգայնական, շովինիստական ռեակցիոն տարրերի ազդեցությունը։ «Միասնություն և առաջադիմություն» կուսակցությունը վերածվեց կալվածատիրական-կոմպրադորական ռեակցիոն կուսակցության[18]։

Ահա ինչ էր գրում Թիֆլիսում լույս տեսնող բոլշևիկյան «Բորբա» թերթը 1908 թվականի ամռանը երիտասարդ Թուրքերի հեղափոխության մասին. «Արդեն այժմ երիտասարդ Թուրքերը ցույց են տալիս իրենց ռեակցիոն էությունը։ Գործադուլավոր բանվորների դեմ նրանց ձեռք առած միջոցները, օտարերկրացի ագիտատորներին արտաքսելու և տեղական պրոլետարներին պատժելու մասին տված խոստումները, Կոստանդնուպոլսի թերթերին տված դեկրետներն այն մասին, թե ինչ գրել և ինչ տոնով գրել,—ցույց են տալիս, որ պս. երիտասարդ Թուրքերը», որոնք հիացմունք էին պատճառում մեր կադետներին, «հին բարի ժամանակների» ամեն տեսակի գրաքննիչներից հեռու չեն գնացել»[19]։

Իշխանության գլուխ անցնելուց հետո երիտասարդ Թուրքերը իրենց ներքին և արտաքին քաղաքականության հիմքում դրեցին արյունարբու սուլթան Աբդուլ Համիդի քաղաքական զինանոցից վերցրած և փաստորեն արդեն սնանկացած պանիսլամիզմի ու պանթուրքիզմի մոլի շովինիստական, ագրեսիվ սկզբունքները, որոնք նախատեսում էին Օսմանյան կայսրությունում ապրող ոչ Թուրք ժողովուրդների բռնի Թուր-

---

18 Տե՛ս А. Н. Хейфец, Ленин — великий друг народов Востока, стр. 54.

19 Газ. «Борьба», № 2—4, июль—октябрь, Тифлис, 1908.

քացում, մահմեդականություն դավանող բոլոր ժողովուրդների միավորում Թուրքերի գերիշխանության ներքո։ Ազգային քաղաքականության բնագավառում երիտասարդ Թուրքերի կիրառած այդ խիստ ռեակցիոն գիծը նրանցից վանեցին կայսրության ոչ Թուրք ժողովուրդներին, խթան հանդիսանալով ազատագրական պայքարի ուժեղացմանը վերջիններիս մեջ։ 1911—1912 ԹԹ. իտալա-Թուրքական պատերազմի և 1912—1913 ԹԹ. բալկանյան պատերազմների հետևանքով Թուրքիան կորցրեց իր բոլոր տիրապետությունները Հյուսիսային Աֆրիկայում և հողերի մեծագույն մասը՝ Բալկաններում, իսկ նույն երիտասարդ Թուրքերի մեղքով առաջին համաշխարհային պատերազմին ունեցած մասնակցությունը որպես իմպերիալիստական Գերմանիայի դաշնակից հանգեցրեց այն բանին, որ Թուրքիան դաժան պարտություն կրեց պատերազմում, այս անգամ կորցնելով բոլոր արաբական երկրները։

Սակայն երիտասարդ Թուրքերի մարդատյաց, մոլի շովինիստական էությունը իր բոլոր կողմերով դրսևորվեց առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ նրանք նախապես մանրամասն մշակված պլանով սկսեցին սիստեմատիկ կերպով կոտորել կայսրությունում ապրող հայ բնակչությանը։ Այդ վայրագ քաղաքականությանը զոհ գնաց մոտ մեկ և կես միլիոն անմեղ հայ։ «Երիտասարդ Թուրքերի հեղափոխությունը,—գրում է Հ. Ինճիկյանը,—պահպանեց իրերի գոյություն ունեցած վիճակը. նա ստեղծեց զինվորական դիկտատուրա, որը իր կարճատև տիրապետության շրջանում անջնջելի արյունալի հետքեր Թողեց ինչպես Թուրք ժողովրդի, այնպես էլ Թուրքական լծի տակ գտնվող մյուս ժողովուրդների մարմնի վրա»[20]։

Երիտասարդ Թուրքերի «Միասնություն և առաջադիմություն» կուսակցությունը, որը այնքան դժբախտություններ բերեց Թուրքիային ու նրա բնակչությանը, ցրվեց առաջին համաշխարհային պատերազմից հետո, իսկ նրա ղեկավար գոր-

---

20 «Արևելագիտական ժողովածու», II, Հ. Գ. Ինճիկյանի «К оценке младотурецкого движения» հոդվածը, էջ 231։

ծիշները, խուսափելով պատասխանատվությունից, ապաստան գտան տարբեր երկրներում, գլխավորապես Գերմանիայում։

Բոլշևիկյան «Պրավդա» թերթը 1912 թվականին դիպուկ գնահատական է տվել երիտասարդ թուրքերի բռնապետական ռեժիմին։ Նա գրել է. «Երիտասարդ թուրքերը իրենց չափից ավելի վարկաբեկեցին կայսրության բնակչության աչքում։ Նրանց իշխանությունը հիմնվում էր բացառապես կոպիտ ֆիզիկական ուժի վրա։ Թուրք չքավորությունը և Թուրքիային ենթակա ժողովուրդները առաջվա նման ճնշվում ու ոչնչացվում էին չնայած «պառլամենտի» գոյությանը։ Նոր ռեժիմի գազանությունները, կաշառումներն ու կաշառակերությունը դրեթե ոչնչով չէին տարբերվում «կարմիր սուլթանի» ժամանակաշրջանից»[21]։

---

21 «Պրավդա», № 93, 1912 թվականի օգոստոսի 17։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5
Հ. Գ. Ինճիկյան, Վ. Ի. Լենինը Արևելքի նշանակության մասին . . 9
Ն. Հ. Հովհաննիսյան, Հոկտեմբերը և ազգային-ազատագրական շարժման վերելքը Արաբական արևելքում 43
Հ. Մ. Եգանյան, Քաղաքական շարժումների վերելքը Իրանում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո և իրանական պատմագրությունը 113
Ե. Խ. Մեռյի, Քուրդ ժողովրդի պայքարը ազգային ինքնուրույնության համար (1918—1925 թթ.) 178
Հ. Հ. Մարտիրոսյան, Երիտասարդ թուրքերի հեղափոխությունը Վ. Ի. Լենինի գնահատմամբ 263

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
արևելագիտության սեկտորի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատ. խմբագիր Ժ. Մ. Ադոնց
Նկարչ. ձևավորումը Ն. Հ. Խանզադյանի
Տեխ. խմբագիր Մ. Ա. Կափլանյան
Սրբագրիչ Ի. Ս. Բրուտյան

ՎՖ 05689, Եջ 1201, հրատ. 3132, պատվեր 191, տպաքանակ 2000

Հանձնված է արտադրության 19/III 1969 թ., ստորագրված է տպագրության 17/X 1969 թ., տպագր. 17,37 մամուլ, հրատ. 17,24 մամուլ, թուղթ № 1, 60×90¹/₁₆, Գինը 1 ռուբ.

Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչության տպարան, Երևան, Բաբեկյան 24.

ԳԻՆԸ 1 ՌՈՒԲ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1969

327.2
d-45
h2.